Էջմիածին



Ժ–ԺԱ
1998

ԾԴ ՏԱՐԻ

Է.ՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. Է.ՋՄԻԱԾՆԻ

Հոկտեմբեր – Նոյեմբեր
1998

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆԹ

Հայրապետական տնօրինութիւն 3
Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան 4
Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընտրվեց Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամ 5
Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի շնորհավորական գրերը Թուրքիայի հայոց նորընտիր Պատրիարքին և ընտրողական ու ազգային պատգամավորական ժողովների ատենապետերին 8
ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կ. Պոլսո Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի գահակալության առիթով 11
Ընտրվեց Կոստանդնուպոլսի հայոց 84-րդ Պատրիարքը 13
Կոստանդնուպոլսո հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյան 16
ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆ – Կ. Պոլսի հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Գեր. Տեր Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի գահակալությունը 18
Ամենապատիվ Տ. Մեսրոպ Պատրիարքի անդրանիկ քարոզը՝ խոսված անդրանիկ պատրիարքական Պատարագին 26
ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հորդանանի առաջնորդ Վահան եպիսկոպոս Թոփալյանին արքության պատիվ շնորհելու մասին 28
Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնության գիրը Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանին ծննդյան 50-ամյակի առիթով 29
Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնության գիրը Օրենբուրգի հայկական համայնքին և բարեբար տիար Սեյրան Խաչատրյանին՝ քաղաքում հայկական եկեղեցի կառուցելու առիթով 30
Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնության գիրը Մոսկվայի հայ համայնքին՝ տեղի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու օծման առիթով 31
Հայրապետական գնահատություն 32

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

Միքայել ծայրագույն վարդապետ Աջապահյանի քարոզը՝ խոսված Երևանի Ս. Զորավոր եկեղեցում, նոյեմբերի 15-ին 34
Հոգեշնորհ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում, նոյեմբերի 29-ին 38

Գալուստ վարդապետ Դարբինյանի քարոզը՝ խոսված
Մայր Տաճարում, հոկտեմբերի 25-ին 43
Վազգեն վարդապետ Միրզախանյանի քարոզը՝ խոսված
Մայր Տաճարում, նոյեմբերի 15-ի կիրակի օրը 47
Տ. Արշակ արեղա Խաչատրյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի
Մայր Տաճարում, նոյեմբերի 17-ի կիրակի օրը 50
Թորգոմ արեղա Տոնիկյանի քարոզը՝ խոսված Երևանի առաջնորդանիստ
Ս. Սարգիս եկեղեցում, հոկտեմբերի 17-ին 54
Մակար արեղա Հովհաննիսյանի քարոզը՝ խոսված Մայր Տաճարում,
նոյեմբերի 1-ի կիրակի օրը 58
ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԴԸ ՍԱԼԻ – Ուղեցույց բարեպաշտ կյանքի 60

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ – Շարականների ժանրային տիպաբանությունը
արևելաքրիստոնեական հիմներգության համակարգում 82
ՎԱՐԱԴ ԱՌԱՔԵԼՅԱՆ – Հայերենի ներքին տվյալներով էլ կարելի է
վերականգնել բնիկ հնդեվրոպական բառերը 89
ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ – Խորհրդանշանը Ստեփանոս Սյունեցու
եկեղեցաբանական ժառանգության մեջ 94
ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ – Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսի նամակա-
գրությունը Շահամիր Շահամիրյանի հետ 103
ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ – Բարկէն Աթոռակից Կաթողիկոսի
գիտական նամականին 114
ԱՐՓԵՆԻԿ ՂԱՋԱՐՈՍՅԱՆ – Ուսումնասիրություն՝ նվիրված
Մեծոփավանքի գրչության կենտրոնին 120

ԳՐԱԿԱՆ

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ – «Կեանքիս մէջ այնքան վար նայած չունէի ես՝
այնքան վեր տեսած ըլլալու համար» 124
ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – Ընտանեկան անդառնալի կորուստներ 129
ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ – Նախո Քեռին չպետք է մնա մոռացության մեջ . 138

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Ներսես արքեպս. Պոզապալյանը Հումանիտար գիտությունների
ռուսական ակադեմիայի իսկական անդամ 142
ՎԱՀԷ ԴՊԻՐ ԲԵԳՈՅԱՆ – Եկեղեցիների օծում Կոտայքի թեմում 143
Հ. ՄԿՐՏՉՅԱՆ – Օշականում բացվեց Սբ. Մեսրոպ Մաշտոց դպրատունը . . . 147
Ցորելեանական հանդիսութիւններ Ամմանի մէջ. Տ. Վահան եպս. Թօփալեան
կը ստանայ արքութեան աստիճան 150
Քահանայական ձեռնադրութիւն եւ վեղարի տուչութիւն
Գերմանիոյ հայոց թեմում 151

Կենսագրութիւն Արմաշ աբեղայ Նալպանտեանի 154
Հելսինկիում բացվեց «Հայ եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը 155

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Եվրոպական եկեղեցիների Կոնֆերանս

ՀՈԳԵՇՆՈՐՀ ՋԻՆ ՄԵՑԸԼԵՆԴ. ՊՐՈՖ. ՌԵՑՆՀԱՐԴ ՖՐԻԼԻՆԳ.
ՊՐՈՖ. ՎԻՈՐԵԼ ՑԻՆԻՏԱ – Հաշտություն Եվրոպայում.
Աստվածաբանական. էկումենիկ և բարոյական բնագավառներ 156
Հանդիսություններ՝ նվիրված Բարիի ժողովի 900–ամյակին 164
Համաեվրոպական համաժողով Վատիկանում 165

Սբ. Էջմիածնում տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝
ի հիշատակ Գալինա Ստարովոյտովայի 166
ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ – եկեղեցական բեմ. լուրեր 167
ԽՈՐԵՆ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – «Էջմիածին» ամսագրի
մատենագիտությունը (1974–1983) 170
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата 183
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 186
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 189

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

Տրուած ըլլալով, որ քաղցկեղի վիրահատութեան հետեւանքով Մենք մեր առողջութիւնը վերագտնելու համար կարիք ունինք որոշ ժամանակի ապաքինման եւ հետեւաբար ի վիճակի պիտի չըլլանք ամբողջականօրէն կատարելու Կաթողիկոսական Մեր պարտականութիւնները եւ հարկադրաբար բացակայ պիտի ըլլանք Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն զուտ բժշկական խնամատարութեան պատճառով,

Տրուած ըլլալով, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունէութիւնը պէտք չէ որեւէ թուլացում, դանդաղեցում եւ թերացում արձանագրէ այդ շրջանին,

Մենք պարտք համարեցինք, ի սէր Մայր Աթոռի պայծառութեան, նշանակել ***Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ*** *(Vicar General of the Catholicos), որպէսզի ան վարէ վարչական գործունէութիւնը, համախոհրդակցաբար Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի:*

Ուստի, այսու Հայրապետական Գիրով կը նշանակենք Այրարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ ***Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Ներսիսեանը,*** *որպէսզի կատարէ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդի այդ պաշտօնը լիագոյն յաջողութեամբ: Հետեւաբար, Մեր ժամանակաւոր բացակայութեան իրեն պէտք է դիմել Մայր Աթոռի հետ առնչութիւն ունեցող գործի կամ հարցի կապակցութեամբ:*

Արտանց կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ զօրացնէ զինք եւ արդիւնաւէտ գործունէութիւն պարգեւէ իրեն: Կոչ կ'ուղղենք մեր Միաբանութեան բոլոր անդամներուն, եպիսկոպոսաց դասուն, թեմակալ Առաջնորդաց, վարդապետաց, աբեղայից, սարկաւագաց, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի յարգարժան անդամներուն եւ Մայր Աթոռոյ անձնակազմին եւ պաշտօնէութեան լիովին գործակցիլ իրեն հետ ի սէր եւ ի բարգաւաճումն Մայր Աթոռոյ:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

30 Նոյեմբեր 1998
Նիւ Եորք

ԳԵՐԱՇՆՈՐՀ
Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը ծնվել է 1951 թվականին, Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի հանրակրթական դպրոցում եւ ապա ընդունվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգեւոր ճեմարան՝ գերազանց առաջադիմությամբ այն ավարտելով 1971-ին:

Սրբազան Հայրը 1970 թ. Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

Հոգեւոր ճեմարանն ավարտելուց հետո, մեկ տարի պաշտոնավարել է նույն հարկի տակ որպես վերակացու՝ միաժամանակ դասավանդելով Նոր Կտակարան:

1972 թ. հոկտեմբերին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Տիրան արքեպս. Ներսոյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ 1972 թ. մեկնել է Վիեննա (Ավստրիա)՝ ուսանելու տեղի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում, ուր եւ մնացել է մինչեւ 1975 թ.:

1975 թ., դարձյալ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Գարեգին Սրբազանը, հայոց հոգեւոր հովվի պարտականություններով, ծառայության է մեկնել Գերմանիա՝ համաժամանակյա իր աստվածաբանական գիտելիքները խորացնելով Բոնների համալսարանում:

Գերմանիայում մնալով չորս տարի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է վերադարձել 1979-ին եւ նույն տարում էլ մեկնել Զագորսկ՝ ուսանելու Ռուս Ուղղափառ Եկեղեցու Հոգեւոր Ակադեմիայի ասպիրանտուրայում:

1980 թ. նշանակվել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի օգնական, իսկ երեք տարի անց, 1983 թ. ապրիլին, Հայրապետական կոնդակով նշանակվել նույն թեմի առաջնորդական փոխանորդ:

1983 թ. հոկտեմբերի 23-ին, Մայր Տաճարում, ձեռամբ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս: Արքության պատվի է արժանացել 1992 թ. նոյեմբերին:

Առաջնորդ Սրբազանի անմիջական նախաձեռնությամբ 1989 թ. Սեւանում կյանքի է կոչվել Վազգենյան հոգեւոր դպրանոցը, ուր հոգեւոր կրթություն են ստանում Հայ Եկեղեցու ապագա սպասավորները:

Սրբազան Հոր նախաձեռնությամբ Երեւանի երեք պիոներպալատները վերափոխվել են հայորդյաց տների, ուր իրենց հոգեւոր կրթությունն ու գեղագիտական դաստիարակությունն են ստանում բազում դպրոցականներ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության անդամ է: Ունի երկու եղբայր եւ երեք քույր:

Սրբազան Հայրը Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ է:

1998 թ. նոյեմբերի 30-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ, Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը նշանակվել է Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆՏՐՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՆԴԱՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի ընդհանուր ժողովը ընտրել է ակադեմիայի պատվավոր անդամ: Այս առիթով Վեհափառ Հայրապետը հոկտեմբերի 10-ին Նյու Յորքից շնորհակալական հեռագիր է հղել Ազգային Ակադեմիայի նախագահ տիար Ֆադեյ Սարգսյանին: Հեռագրում ասվում է.

«ՄԵԾԱՐԳՈՅ
ՏԻՐ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍԵԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԵՐԵՒԱՆ

Սիրելի Պրն. Սարգսեան,

Այսօր սրտի խոր գոհունակութեամբ ստացանք Ձեր գիրը, որով կը յայտնէք, որ ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիան 29 Սեպտեմբերի իր նիստին մէջ Մեզ ընտրած է Պատուաւոր Անդամ Ակադեմիայի:

Խորապէս ազդուած ենք Ձեր այս բարձր գնահատութեան և բացառիկ պատուին համար: Հաճեցէք ընդունել և ընդհանուր ժողովի յարգարժան անդամներուն փոխանցել Մեր ջերմ շնորհակալութիւնները:

Եւ ի՜նչ իմաստալից զուգադիպութիւն...: Այսօր Սրբոց Թարգմանչաց Վարդապետաց Տօնն է մեր ազգային Առաքելական եկեղեցու մէջ: Ինձ համար մեր ազգի առաջին «ակադեմական կաճառ»ը եղել է Թարգմանչաց Վարդապետաց հոյլը 5-րդ դարում՝ գլխաւորութեամբ անզուգական զոյգին՝ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի:

Մեր առողջական ապաքինումէն յետոյ Ձեզ և Ձեր պաշտօնակիցները վերստին տեսնելու և Ձեզ հետ աւելի սերտօրէն գործակցելու քաղցր յոյսով և աղօթքով:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ի Նիւ Եորք
10 Հոկտեմբերի 1998»:

***

Աշխարհի տարբեր համալսարանների և գիտական հաստատությունների պատվավոր դոկտոր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամ ընտրվելու լուրը հատկապես հոկտեմբեր ամսին

ծանուցելը հոգևոր մի մեծ խորհուրդ ունի, քանի որ հոկտեմբերը Հայոց Եկեղեցու համար Թարգմանչաց ամիսն է և, Վեհափառ Հայրապետի բնորոշմամբ, «մեր ազգի առաջին «ակադեմական կաճառը» եղել է թարգմանչաց վարդապետաց հոյլը»:

Հայոց եկեղեցական ավանդույթի շրջագծում այս ամիսը, սակայն, անձնապես ապրված առանձնակի մի խորհուրդ ունի և Գարեգին Վեհափառի համար:

Ավելի քան կես դար առաջ Կիլիկյան Աթոռի գահակալության իր տարիներին Գարեգին Ա Հովսեփյանը հոկտեմբերը հռչակեց հայ մշակույթի ամիս Կիլիկյան Աթոռի համար: Սփյուռքի դժվարին պայմաններում իր գահակալության առաջին իսկ տարուց՝ 1977 թ., Գարեգին Վեհափառը վերակենսավորեց այս ավանդույթը և այն, չնայած համընկավ Լիբանանյան պատերազմի ծանր շրջանին, անխափան կանոնավորությամբ շարունակվեց հաջորդող տարիներին, բացառությամբ 1978 թ. դժոխային հոկտեմբերի, Նորին Սրբության բնորոշմամբ՝ «հոկտեմբեր ամսուն հոգևոր և իմացական վայելքի սփոփիչ և գոտեպնդիչ պահեր ընծայելով մեր ժողովրդին»:

1994 թ. ընտրվելով Հայոց Ընդհանրական Աթոռի Գահակալ, Գարեգին Վեհափառը Հայաստանյան պայմանների հաշվառմամբ շարունակեց այս ավանդույթը, որի նյութական արտահայտությունը դարձավ Թարգմանչաց տոնի օրը Ս. Մաշտոց դպրատան բացումը և այնտեղ հոկտեմբեր ամսին կազմակերպվող գիտա-մշակութային հանդիսությունները, որոնք մնացյալ ամիսներին էլ Մայր Աթոռում և ողջ Հանրապետությունում շարունակվելու էին տարբեր ձեռնարկումներով՝ հայագիտական ուսումնասիրությունների հրատարակության հայրապետական հովանավորումից մինչև գիտության և մշակույթի հետ հավատի ունեցած փոխկապակցվածության մասին այնքան ուսանելի խորհրդածություններն ու հրապարակային դասախոսությունները:

Հիշենք ակադեմիայի պատվավոր անդամ ընտրվելու նախօրեին Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքը Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայում գումարված «Հայաստանը և քրիստոնյա Արևելքը» գիտաժողովում, ուր սեղմ և ընդգրկուն կերպով աշխարհագրական, մշակութային և եկեղեցական տեսանկյուններից ներկայացնելով արևելաքրիստոնեական աշխարհը և Հայոց Եկեղեցու կապը վերջինիս հետ, այնուհետև հոգևոր դիտարկումով անդրադարձավ եկեղեցա-պատմական և ընդհանրապես գիտական խնդիրներին՝ խոսքը խարսխելով Սուրբ Գրքի, Ընդհանրական ու Հայոց եկեղեցու հայրերի վկայությունների վրա:

1965 թ. Լոնդոնում լույս տեսավ Գարեգին Վեհափառի՝ որպես Օքսֆորդյան ուսումնառության շրջանի ավարտաճառ գրված «Քաղկեդոնի ժողովը և Հայ եկեղեցին» գիրքը, որին այնուհետև հաջորդեցին համանման մի շարք այլ գործեր ևս: Եկեղեցական բոլորանվեր ծառայության պատճառով թեև Գարեգին Վեհափառը հաջորդող տարիներին հնարավորություն չունեցավ գիտական այսօրինակ խնդիրների քննությանը պարբերաբար անդրադառնալու, սակայն քանի որ գիտությունը միայն անմիջական հետազոտական աշխատանքներով չի սահմանափակվում, այլև վեր բարձրանալով փորձառական (էքսպերիմենտալ) աստիճանից հանգում է տարբեր գիտակարգերի համադրական քննությանը, առանձնակի կարևորություն ընծայելով արդի

աշխարհում մարդու կեցության կերպին ու գոյաբանական խնդիրներին, որով զբաղվում է նաև ժամանակակից աստվածաբանությունը, հարցեր, որոնք միշտ էլ քննության նյութ ու հոգևոր մտածում են եղել Գարեգին Վեհափառի համար թե՛ մեր ներքին ազգային-եկեղեցական կյանքի և թե՛ միջեկեղեցական հարաբերությունների ու էկումենիկ շարժման շրջագծում:

Դարեր շարունակ հայկական գիտությունը ժամանակի բոլոր գիտաճյուղերի ներառմամբ զարգացել է մեր միջնադարյան վարդապետարաններում, և Գարեգին Վեհափառին Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամ ընտրելով՝ Նորին Սրբության հոգևոր-գրական վաստակի միջոցով Հայկական Ակադեմիան գնահատանքի ու երախտիքի իր վերաբերմունքն է արտահայտում նաև Հայոց Եկեղեցու հանդեպ:

Այսօր գիտության առջև ծառացած մեծագույն հիմնախնդիրը կատարված հետազոտությունների արդյունքների համար գիտնականի բարոյական պատասխանատվության գիտակցումն է, թե՛ իր երկրի ու ժողովրդի և թե՛ մարդկության ընդհանուր տան՝ երկիր մոլորակի առջև:

«Էջմիածին» ամսագրի խմբագրության կողմից շնորհավորելով Վեհափառ Հայրապետին՝ Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամ ընտրվելու կապակցությամբ, լիահույս ենք, որ Նորին Սրբության և իր անձի միջոցով Հայոց Եկեղեցու ներկայությունը հայկական գիտության կաճառում կնպաստի գիտական հետազոտությունների արդյունքների հոգևոր վերիմաստավորմանը, որն արդեն կարևորագույն նախապայմանն է գիտական հետազոտությունների հնարավոր հետևանքների հանդեպ բարոյական պատասխանատվության մեծացման ու ճշմարտությանը հասու լինելուն, այն ճշմարտությանը, որի մասին Երկնառաք Վարդապետը պատգամում է. «եւ ծանիջիք զճշմարտութիւնն, եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ» (Յովհ. Ը 32):

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՎ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՏԵՆԱՊԵՏԵՐԻՆ

Հոկտեմբերի 14-ին Թուրքիայի Ստամբուլ քաղաքի Սուրբ Աստվածածին Աթոռանիստ Մայր եկեղեցում գումարված Ազգային պատգամավորական ժողովը՝ քվեների բացարձակ մեծամասնությամբ Ամենապատիվ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանին ընտրեց Թուրքիայի հայոց Պատրիարք:

Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Նյու Յորքում տեղեկանալով ընտրության արդյունքներին, հետևյալ շնորհավորական գրերն է հղել և իր բարեմաղթանքները տվել նորընտիր Պատրիարքին և ընտրողական ու ազգային պատգամավորական ժողովների ատենապետերին.

«ԱՄԵՆԱՊԱՏԻՒ
Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆ
ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ.
ՅԻՍԹԱՆՊՈՒԼ

Սիրելի Սրբազան եղբայր.

Ընտրողական Յանձնախումբի և Ազգային Պատգամաւորական ժողովի Ատենապետներուն 14 Հոկտեմբեր 1998 թուակիր նամակէն իմացանք, որ այսօր Ս. Աստուածածին Աթոռանիստ Մայր եկեղեցւոյ մէջ գումարուած Պատգամաւորական ժողովը զՁեզ ընտրած է Պատրիարք Թուրքիոյ Հայոց:

Սրտանց կը շնորհաւորենք զՁեզ և կը մաղթենք Ձեզի քաջառողջութիւն և իմաստութիւն առաջնորդելու Ձեր հօտը Հայց. Եկեղեցւոյ կարգ ու կանոնին համաձայն: Ձեր կարողութիւնները և աշխոյժ գործունէութիւնը ծանօթ են Մեզի և միշտ արժանացած Մեր գնահատանքին: Դուք Ձեր ուժերուն զգաստ-կէտին վրայ գտնուելով կրնաք ակնկալուած առաջնորդութիւնը տալ մանաւանդ նորահաս երիտասարդութեան, որ մեծապէս կարիքը ունի հոգևոր դաստիարակութեան:

Մեր բաղձանքն է որ ըլլաք գորովագութ հայր մը Ձեր հօտին՝ սիրցնելով նոր սերունդներուն մեր սրբազան աւանդութիւնը և մանաւանդ Սրբութիւն Սրբոց Էջմիածինը, որուն հանդէպ հիմնէ մեծ սէր ու հաւատարմութիւն կը տածէ թրքահայ մեր սիրելի և հաւատացեալ ժողովուրդը:

Թող Տէրը ըլլայ Ձեզի հետ և պարգևէ Ձեզի համբերութիւն հովուապետական Ձեր պաշտօնին մէջ:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

14 հոկտեմբեր 1998
ի Սուրբ Էջմիածին»:

*«ՄԵԾԱՅԱՐԳ
ՏԻՍՐՔ ՓԻԼՕ ԱՔԱՆ ԵՒ ՍԵՂՐԱՔ ԹՈՔԱՏ
ԱՊՏԵՆԱՊԵՏՔ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԵՒ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
ԻՍԹԱՆՊՈՒԼ, ԹՈՒՐՔԻԱ*

Յարգելի Պարոնայք,

Ձեր 14 Հոկտեմբեր 1998 թուակիր նամակէն իմացանք, որ ազգային Պատգամաւորական ժողովը քուէից բացարձակ մեծամասնութեամբ Թուրքիոյ Հայոց Պատրիարք ընտրած է Գերշ. Տ. Մեսրոպ Արքեպս. Մութաֆեանը: Սրտի գոհունակութեամբ ընդունեցանք այս բերկրալի լուրը և Աստուծոյ փառք տուինք, որ սգոյ քօղը վերացաւ Կ. Պոլսոյ պատմական պատրիարքական Աթոռին վրայէն:

Խորապէս կը գնահատենք արգոյ պատգամաւորներուն, և մանաւանդ Պատգամաւորական ժողովի Դիւանին աշխատանքները և ձեռք բերած արդիւնքները: Ուրախ ենք, որ մեր թրքահայ ժողովուրդը աւանդական կարգին հետևելով իր ձայնը լսելի դարձուց այս ընտրութեան մէջ և՝ որպէս ներկայացուցիչ ընտրելով ազգասէր և եկեղեցասէր անձնաւորութիւններ: Կը շնորհաւորենք ամենուդ ժողովին կարգապահ ընթացքին համար և կ'օրհնենք Ձեր նուիրումը:

Մեր ակնկալութիւնը որպէս Հայրապետ Ամենայն Հայոց այն է, որ թրքահայ աւանդապահ ժողովուրդը շարունակէ պահել և պահպանել մեր Ս. Եկեղեցւոյ և սրբազան Հայրապետաց կարգն ու կանոնը՝ գործակցելով իր նորընտիր երիտասարդ և կորովի Պատրիարքին և իր հաւատարմութեան զգացումները պահելով հանդէպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

«Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա, զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր» (Եբր. ԺԳ. 17):

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

14 հոկտեմբեր 1998
ի Սուրբ Էջմիածին»:

***

Հանուն Մայր Աթոռի միաբանության ու Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի պաշտոնեության և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաների

Նորընտիր Պատրիարքին շնորհավորական գիր է հղել նաև Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես Արքեպս. Պոզապալյանը.

«ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖՅԱՆ
ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ
ՍՏԱՄԲՈՒԼ

Արտի անհուն ուրախությամբ տեղեկացանք Մայր Աթոռում Ձեր ընտրության մասին մեծամասնության քվեով՝ իբրև Պատրիարք Հայոց Թուրքիո: Ջերմորեն շնորհավորում ենք հանուն Մայր Աթոռի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհուրդի, վանքի Ձեզ ծանոթ պաշտոնեության և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաների և սրտագինս մաղթում ենք Ձեզ քաջառողջ տարիների հովվապետություն՝ իբրև գլուխ Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցու Նվիրապետական հոգևոր Աթոռներից մեկի՝ Թուրքիո Հայոց Պատրիարքության:

Թող Աստված արդեն իսկ Ձեզ պարգևած շնորհները առատաբուխ բազմապատկի: Հովվեցեք Ձեր ժողովրդի գուրգուրանքով և սիրով շրջապատված Աստծո կողմից Ձեզ հանձնված հավատավոր հոտը:

Եղբայրական սիրով ի Քրիստոս,

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ

Դիվանապետ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

15-ը հոկտեմբերի, 1998թ.»:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Կ. ՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖՅԱՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

«ԳԱՐԵԳԻՆ Ա ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՍԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ՍՐՍՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՍԻՐԵՑԵԱԼ ԵՂԲՕՐ ՄԵՐՈՅ ԵՒ ՀԱՐԱՔԱՏԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆԻՆ

ՈՐ Ի ՅԻՍԹԱՆՊՈՒԼ, Ի ԹՈՒՐՔԻԱ

Այսօր, Աստուծոյ կամքով կը կատարուի Ձեր՝ գահակալութեան հանդիսաշուք արարողութիւնը: Այսօր կը յանձնուի Ձեզի պատրիարքական Ասա՛ խորհրդանիշ Ձեր հովուական իշխանութեան ի սպասաւորութիւն Թուրքիոյ մեր սիրեցեալ եւ հաւատացեալ ժողովրդեան ընդ հովանեաւ Հայց. Առաքելական Ա. Եկեղեցւոյ:

Հոգեւոր ցնծութեան օր է այս օրը մեր Եկեղեցւոյ եւ մեր ժողովուրդի համար: Նուիրապետական Մեր Աթոռներէն Կ. Պոլսոյ պատմական Աթոռին Ձեր անձով կը բազմի երիտասարդ, եռանդուն, գործունեայ եւ զարգացեալ հոգեւորական մը, որ վստահաբար նոր եւ լուսաւոր էջ մը պիտի աւելցնէ պատմական այն հարուստ ժառանգութեան վրայ, որ կը յատկանշէ եւ կը փառաւորէ Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռը:

Քրիստոնէական պատմութեան երկրորդ հազարամեակի աւարտին եւ երրորդի արշալոյսին, մեր Հայոց Եկեղեցին, հնագոյն ազգային եկեղեցին ողջ աշխարհի մէջ, պէտք ունի հոգեւոր վերանորոգութեան եւ Ա. Հոգւոյ ներգործութեան ի վայելումն մեր պատուական ժողովուրդին:

Ձեր գահակալութեան երջանկաբեր առիթով, Մենք կը յայտնենք Ձեզի, Կ. Պոլսոյ Պատրիարքութեան հոգեւորական դասուն, աշխարհական ժողովականութեան եւ հաւատացեալ ժողովուրդին Մեր խոր համոզումն ու կենդանի յոյսը, որ Ձեր նուիրումով Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը առաւել պտղալից

արդիւնաւորութեամբ իր բաժինը պիտի բերէ մեր Եկեղեցւոյ՝ իսկական բարեկարգութեան եւ բարեմորոգութեան շարժումին:

Մեր Եկեղեցւոյ հոգեւոր սրբազնասուրբ կեդրոնէն՝ հայ ժողովուրդի հոգիին մէջ խորանացեալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Չեզի կ'ուղղենք Մեր եւ ամբողջ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան սիրոյ սրտագգած ողջոյնները: Թող Ս. Էջմիածնով մարմին առած Աստուծոյ Միածին Որդւոյն այցելութիւնն ի Հայաստան եւ հայ ժողովուրդին դառնայ ներշնչող մնայուն աղբիւր զօրութեան եւ ծառայութեան. մանաւանդ մեր Մայր Հայրենիքի անկախութեան այս նոր շրջանին եւ հայութեան վերազարթօնքի այս ժամանակին ի սփիւռս աշխարհի:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն. եւ յաւէտ օրհնեալ ի Մենք. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 20 Նոյեմբերի
Յամի Տեառն 1998 և ի Թուին Հայոց ՌԼԽԷ
ի Մայրաւանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/202

ԸՆՏՐՎԵՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ 84-ՐԴ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Սույն թվականի հոկտեմբերի 14-ին, շուրջ յոթ ամիս թափուր մնալուց հետո, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքական Աթոռը, հանձին Գեր. Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի, ունեցավ իր 84-րդ գահակալը: Ընտրությունների քննիչ հանձնաժողովի ատենապետ Սեդրակ Թոքատի հայտարարությունը եւ հայտարարությանը հետեւող զանգերի ուրախ դողանջը ազդարարեցին Հովակիմյան Աթոռի նոր գահակալի ընտրությունը:

Պատրիարքական ընտրության նախաձեռնարկ մարմինը, երկար ձգձգումից հետո, միայն սեպտեմբերի 1-ին Թուրքիայի կառավարության եւ Ներքին Գործոց Նախարարության կողմից ստացավ ընտրությունների կազմակերպման թույլտվությունը եւ անմիջապես ձեռնամուխ եղավ նախապատրաստական աշխատանքներին:

Որոշվեց եկեղեցական պատգամավորների ընտրությունն անցկացնել հոկտեմբերի 9-ին, աշխարհական պատգամավորներինը՝ նույն ամսի 11-ին, իսկ Պատրիարքի ընտրությունը նշանակվեց հոկտեմբերի 14-ին:

Պատրիարքական Աթոռի 28 հոգեւորականների մասնակցությամբ համագումարն ընտրեց 10 հոգեւորական պատգամավորներ: Աշխարհական պատգամավորների ընտրությունը գերազանցեց բոլոր սպասելիքները. շուրջ 15810 հայորդիներ մասնակցեցին քվեարկությանը, եւ ընտրեցին 79 պատգամավորներ: Նրանցից 64-ը, որոնք ստացել էին ավելի քան 10 հազար ձայն, պայմանականորեն անվանվում էին մանուշակագույն պատգամավորներ, որոնք որպես Պատրիարքական Աթոռի արժանի գահակալ ցանկանում էին տեսնել Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանին, իսկ մնացյալ 15-ը (ճերմակ պատգամավորներ)՝ Գեր. Տ. Շահան արքեպս. Սվաճյանին:

Հոկտեմբերի 14-ի առավոտյան Կ. Պոլսո պատգամավորական ժողովը գումարվեց Աթոռանիստ Ս. Աստվածածին Մայր եկեղեցու մեջ: Ժողովը համանախագահում էին Գեր. Տ. Մեսրոպ եւ Գեր. Տ. Շահան արքեպիսկոպոս Սրբազանները: Բացման խոսք ասաց Գեր. Տ. Շահան արքեպս. Սվաճյանը: Հակիրճ խոսք ասաց նաեւ Գեր. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը: Այնուհետեւ Սրբազան Հայրերը, հաջողություն մաղթելով պատգամավորներին, դուրս եկան նրանց մենակ թողնելով:

Գաղտնի քվեարկությունից հետո, ժամը 12.30-ին, հայտնի դարձան արդյունքները. 79 ձայն ստացել էր Գեր. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, 15 ձայն՝ Գեր. Տ. Շահան արքեպս. Սվաճյանը:

Ատենապետ Սեդրակ Թոքատը խոսք վերցրեց եւ ծանուցեց Գեր. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ընտրությունը որպես Կ. Պոլսո Աթոռի 84-րդ գահակալ: Այնուհետեւ Պատրիարքարանից Մայր եկեղեցի հրավիրվեց նորընտիր Պատրիարքը: Եկեղեցական թափորը «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ առաջնորդվեց եկեղեցու ատյան, եւ Սեդրակ Թոքատի կողմից վերցվեց Պատրիարքական Աթոռի սեւ քողը:

Ապա նորընտիր Պատրիարքը սրտի խոսք ասաց ներկաներին: Նախ փառք տվեց Աստծուն, որ հնարավոր դարձրեց այս ընտրությունը, իր

շնորհակալությունը հայտնեց հոգեւոր դասին եւ Ազգային Պատգամավորական ժողովի բոլոր մասնակիցներին. որոնք իրեն արժանի տեսան Պատրիարքական Աթոռին: «Իմ յարգանքի առաջին խօսքս կ'երթայ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Աթոռին. որ մեր հաւատքի հայր Ս. Գրիգոր Լուսաւորչի լոյսի շտեմարանն է եւ ի հոգեւոր, աստուածային եւ հոգեւոր ոլորտի մէջ աշխարհի բովանդակ հայութեան հոգեւոր կեդրոնն է».- ասաց Սրբազան նորընտիր Պատրիարքն իր խոսքում:

Արարողությունն ավարտվեց Նորին Ամենապատվության «Պահպանիչ» աղոթքով:

Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքի ընտրության ուրախ առիթով Նորին Ամենապատվությանը շնորհավորական գրեր հղեցին Ս.Ս.Ս.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը (տե՛ս էջ 8), ինչպես նաև Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Վեհափառ Հայրապետը և Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ Մանուկյանը:

Ստորեւ ներկայացնում ենք Հայաստանյայց Եկեղեցու այս երկու Նվիրապետական Աթոռների Գահակալների շնորհավորական գրերը:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱՐԱՄ Ա
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Ամենապատիւ
Տ. Մեսրոպ Արքեպիսկ. Մութաֆեան
Պատրիարք Կ. Պոլսոյ Հայոց

Ատամբուլ

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,

Այս առաւօտ ուրախութեամբ իմացանք Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Ազգ. Ժողովի եւ Ընտրողական Յանձնախումբի Ատենապետներուն Մեզի ուղղուած նամակի ճամբով, թէ 14 Հոկտեմբերին, 1998, կայացած Պատգամաւորական ժողովին ընտրուած էք Պատրիարք Կ. Պոլսոյ Հայոց:

Քրիստոնէական ջերմ սիրով եւ անհուն ուրախութեամբ կ'ողջունենք Ձեզ այս առիթով: Ձեր ունեցած կարողութիւններն ու փորձառութիւնները մօտէն ճանչցած ըլլալով վստահ ենք, որ նոր կենսունակութիւն ու նոր փայլք պիտի տաք Կ. Պոլսոյ Պատրիարքութեան ընդհանրապէս Հայց. Եկեղեցւոյ եւ մասնաւորաբար Թուրքիոյ մեր սիրելի ժողովուրդի կեանքէն ներս: Որեւէ ժամանակէ աւելի այսօր մեր ժողովուրդը կարիքը ունի մեր Եկեղեցւոյ Քրիստոնէական կենսատու հաւատքին եւ մեր հոգեմտաւոր արժէքներուն ու սրբութիւններուն ազդու ներկայութեան: Հետեւաբար, մեր Եկեղեցւոյ Նուիրապետական չորս Աթոռները կոչուած են միասնական ոգիով, ծրագրուած ու ներդաշնակ գործունէութեամբ Հայ Եկեղեցին տանելու մեր ժողովուրդին, որպէս հաւատքի աղբիւր, որպէս միասնական շաղախ ու մեր գոյութեան ու ամրութեան խարիսխ:

Վստահ ենք, որ Ձեր իմաստուն առաջնորդութեամբ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը վերանորոգ յանձնառութեամբ պիտի բերէ իր գործօն մասնակցութիւնը մեր Եկեղեցւոյ հաւաքական առաքելութեան առաւել կենսագործման:

Ցերմօրէն կը շնորհաւորենք Ձեզ եւ կը հայցենք Աստուծմէ, որ Ձեզի շնորհէ առաւել իմաստութիւն, կորով ու համբերութիւն, որպէսզի կարենաք Կ. Պոլսոյ Պատրիարքական պատմական Աթոռը դարձնել իր եկեղեցաշէն ծառայութեամբ կենդանի ներկայութիւն մեր Եկեղեցւոյ եւ ժողովուրդի կեանքին մէջ:

Եղբայրական սիրոյ ողջունիւ,

Աղօթակից՝

ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՍԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
ՇՆՈՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Գերաշնորհ
Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան
Ընտրեալ Պատրիարք Կ. Պոլսոյ

Ատամբուլ

Սիրելի Սրբազան,

Գոհունակութեամբ տեղեկացանք Պատգամաւորական ժողովին մէջ կատարուած Պատրիարքի ընտրութեան արդիւնքի մասին: Մտահոգութիւն պատճառող կարգ մը իրադարձութեանց բարի եզրակացութիւնը հանդիսացող Ձեր ընտրութիւնը, իբրեւ Պատրիարք Կ. Պոլսոյ Նուիրապետական Աթոռին, Հայց. Եկեղեցւոյ զաւակներուն հոգիները կը զուարթացնէ սգոյ շղարշը բարձած տեսնելով, եւ յուսալից սրտով ապագային նայելով:

Կ'աղօթենք, որ Տիրոջ օգնականութեամբ Ձերդ Ամենապատուութիւնը իբրեւ Քրիստոսի քաղցր լուծը կրէ ծանրութիւնը բազմերես ծառայութեան Ձեզ կոչող այս պաշտօնը: եւ Դուք Քրիստոսի Անդաստանի անխոնջ մշակը մնաք միշտ, Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակներուն բաշխելով շնորհը Ս. Հոգւոյն, որպէսզի բարգաւաճին կրօնական, մշակութային, եկեղեցանուէր, հայրենանուէր եւ մարդասէր գործունէութեամբ:

Աստուած Ձեզի միշտ օգնական:

Սիրոյ ողջունիւ՝

ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖՅԱՆ

Ծնվել է Ստամբուլում 1956 թվականին: 1957 թ. Բերայի Ս. Հարություն եկեղեցում մկրտվելով՝ անվանվել է Մինաս-Վարդան:

Սկզբնական կրթությունն ստացել է նախ Եսայան Ազգային Վարժարանում, ապա Ստամբուլի Անգլիկան քոլեջում, որի բարձրագույն բաժինն ավարտել է 1972 թվականին: Նույն թվականին էլ մեկնել է Արեւմտյան Գերմանիա՝ Շտուտգարդի Ամերիկյան քոլեջի գեղարվեստի եւ պատմության բաժնում ուսանելու: Երկու տարի անց համալսարանական ուսումը շարունակել է ԱՄՆ-ի Թենեսի նահանգի Մեմփիսի Պետական համալսարանում, որտեղ հետեւել է կրոնների ընկերաբանության եւ փիլիսոփայության դասընթացներին՝ միաժամանակ մասնակցելով Թենեսի նահանգի Անգլիկան (էփիսքեփել) թեմի քահանաների համար կազմակերպված աստվածաբանության եւ եկեղեցագիտության հատուկ դասընթացներին:

1977 թ. Բերայի Ս. Երրորդություն եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Շահան եպիսկոպոսի, ստացել է սարկավագակպն աստիճան:

Այնուհետեւ Բարեշնորհ Սարկավագը վերադարձել է Միացյալ Նահանգներ՝ իր ուսումը շարունակելու: Այս ընթացքում Միացյալ Նահանգների Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի արտոնությամբ ստանձնել է Մեմփիսի հայ համայնքի հոգեւոր գործունեությունը՝ կազմակերպելով համայնքային կյանքը եկեղեցական խորհրդի հովանու ներքո:

1979 թ., ավարտելով համալսարանական ուսումը, վերադարձել է Ստամբուլ եւ Բերայի Ս. Երրորդություն եկեղեցում, Երեւման Խաչի տոնին, ձեռամբ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի, ձեռնադրվել կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Տ. Մեսրոպ աբեղա:

1979 թ. ամռանը մեկնել է Երուսաղեմ՝ տեղի համալսարանում ուսանելու աստվածաշնչական հնագիտություն եւ լեզու առարկաները: Երուսաղեմում ուսումնառության տարիներին հետեւել է նաեւ Ս. Գրքի պատմության դասընթացներին՝ Ամերիկյան հիմնարկության մեջ, միաժամանակ անգլերեն լեզու եւ Հին Կտակարանի ներածություն առարկաներն է դասավանդել Երուսաղեմի ժառանգավորաց Վարժարանի Ընծայարանի բաժնում:

1982 թ. Տ. Մեսրոպ աբեղա Մութաֆյանը, Մագիստրոսի գիտական աստիճանով, Երուսաղեմից վերադարձել է Ստամբուլ եւ աշխատանքի անցել Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանում՝ որպես քարտուղար Թուրքիայի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպս. Գալուստյանի:

Ստամբուլում Հայր Սուրբը կազմակերպել է հայ երիտասարդների Ս. Գրքի ուսուցման եւ շարականների երգեցողության դասընթացներ, հովվել Գնալը կղզու Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հավատացյալ համայնքին:

1983 թ. Պատրիարքարանի Դիվանին է ներկայացրել «Ս. Գիրք եւ Ավանդություն» աշխատասիրությունը, որի համար Ամենապատիվ Տ. Շնորհք Պատրիարքից ստացել է մասնավոր վարդապետական իշխանություն: Նույն տարում Հայր Սուրբը Պատրիարք Տ. Շնորհք արքեպս. Գալուստյանի կողմից նշանակվել է Պատրիարքարանի դիվանապետ՝ անդամակցելով նաեւ Կրոնական ժողովին եւ Պատրիարքարանի Խորհրդակցական Մարմնին:

Հայր Մեսրոպը ձեռնհասությամբ վերակազմավորել է Պատրիարքարանի դիվանը. աշխույժ հարաբերություններ են սկսվել Պատրիարքարանի եւ քույր եկեղեցիների միջեւ: Միաժամանակ պատրաստել է սարկավագներին ու քահանայացուներին եկեղեցական առաքելության՝ հանուն հուսալի սերնդափոխության:

1986 թ. ապրիլ ամսին Հայր Սուրբը «Նահապետաց Կրոնքը Եգիպտոս մուտքեն առաջ» աշխատասիրության համար Գնալը կղզու Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Շնորհք Ամենապատիվ Տ. Պատրիարքի, ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան:

1986 թ. ապրիլի 30-ին Ստամբուլի հայ Համայնքային Մարմինները խնդրագիր են ներկայացրել Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Տ. Շնորհք արքեպս. Գալուստյանին՝ միջնորդելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ Տ. Մեսրոպ Ծ. Վրդ. Մութաֆյանին շնորհվի եպիսկոպոսական աստիճան: Մայիսի 5-ին Ստամբուլի Կրոնական ժողովն իր բացառիկ նիստում միաձայնությամբ համաձայնեց Տ. Մեսրոպ Ծ. Վրդ. Մութաֆյանին եպիսկոպոսական աստիճան շնորհելուն, եւ դիմեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, խնդրելով որ Տ. Մեսրոպ Օ. Վարդապետին եպիսկոպոս ձեռնադրի Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանի համար:

Նույն թվականի սեպտեմբերի 21-ին Տ. Մեսրոպ Ծայրագույն Վարդապետ Մութաֆյանը Մայր Տաճարում, ձեռամբ Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի, ստացել է եպիսկոպոսական ձեռնադրություն եւ օծում:

Սրբազան Հայրը 1998 թվականի օգոստոսի 3-ին, եկեղեցական համագումար-ժողովի կողմից, 23 ձայնով ընտրվել է Պատրիարքական Փոխանորդ:

Թուրքիայի Հայոց 84-րդ Պատրիարք է ընտրվել նույն թվականի հոկտեմբերի 14-ին Կ. Պոլսո պատգամավորական ժողովի կողմից, փակգաղտնի քվեարկությամբ ստանալով 79 ձայն:

Ամենապատիվ Պատրիարք Հոր գահակալության արարողությունը տեղի է ունեցել նոյեմբերի 21-ին:

Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏԱՎՈՒԹՅՈՒՆ ԳԵՐ. ՏԵՐ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒԹԱՖՅԱՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի նոյեմբերի 21-ին, Ս. Աստվածածնի ընծայման տոնի օրը, Կ. Պոլսում տեղի ունեցավ նորընտիր Պատրիարք Գեր. Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի գահակալության արարողությունը:

Նոյեմբերի 20-ին, առավոտյան, Մայր Աթոռի դիվանապետ Գեր. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի գլխավորությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատվիրակությունը մեկնեց Ստամբուլ՝ մասնակցելու եւ Մայր Աթոռը ներկայացնելու գահակալության արարողությանը: Սրբազան Հորը ընկերակցում էին Գուգարաց թեմի առաջնորդ Գեր. Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Մայր Աթոռի միաբան Տ. Արշեն աբեղա Սանոսյանը եւ Կրոնից Գործոց Խորհրդի նախագահ պրն. Լազար Սուքյանը:

ԺԱՄԱՆԱԿ

Տեղական ժամանակով ժ. 10.30-ին պատվիրակությունը հասավ Ստամբուլ եւ ուղեկցվեց Կ. Պոլսո Հայոց Պատրիարքարան: Կ. Պոլսո միաբանները Հայաստանից ժամանած պատվիրակությանը Գումգափուի Աթոռանիստ Ս. Աստվածածին եկեղեցի առաջնորդեցին «Հրաշափառ» շարականի երգեցողությամբ: Սրբազան Հայրերը եկեղեցում կարդացին գոհաբանական աղոթք, որից հետո Պատրիարքարանում ընդունվեցին նորընտիր Պատրիարքի կողմից: Ողջույնի կարճատեւ խոսքերից հետո պատվիրակությունը ուղեկցվեց «Ցիտադել» (CITADEL) ծովափնյա հյուրանոց:

Երեկոյան Ստամբուլ ժամանեցին նաեւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ Գեր. Տ. Եփրեմ արքեպս. Տաքադյանը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչներ՝ Հորդանանում հոգեւոր տեսուչ Գեր. Տ. Վահան արքեպս. Թոփալյանը եւ Սրբոց Հրեշտակապետաց վանքի տեսուչ Գեր. Տ. Սեւան եպս. Ղարիբյանը, Ռումինիայի եւ Բուլղարիայի թեմերի առաջնորդ Գեր. Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը, Գեր. Տ. Դավիթ արքեպս. Սահակյանը, Իրաքի թեմի առաջնորդ Գեր. Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանը, Նիցցայի (Ֆրանսիա) շրջանի հոգեւոր տեսուչ Գեր. Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Վառնայի (Բուլղարիա) հոգեւոր հովիվ Հոգեշնորհ Տ. Սիոն վրդ. Ադամյանը եւ Բաթումի (Վրաստան) հոգեւոր հովիվ Հոգեշնորհ Տ. Աբգար աբեղա Հովակիմյանը, քահանա հայրեր Կանադայից եւ Շվեյցարիայից:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Նոյեմբերի 21-ին, շաբաթ առավոտյան, ողջ հոգեւոր դասը Ամենապատիվ Պատրիարքի գլխավորությամբ այցելեց նախկին Աթոռանիստ Դալաթիո Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ խոնարհվելու եւ Հոգեհանգստի կարգ կատարելու Ս. Խորանի տակ ամփոփված Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի Պատրիարքի հիշատակին:

Հոգեհանգստի արարողությունը նախագահեց Գեր. Տ. Դավիթ արքեպս. Սահակյանը:

ՍՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՇԻՇԼԻԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

Այստեղից ներկաները ուղեւորվեցին Շիշլիի գերեզմանատուն, ուր ամփոփված են Մաղաքիա Օրմանյան Պատրիարքի, Գարեգին Խաչատուրյան Տրապիզոնցի Պատրիրաքի, Շնորհք Պատրիարք Գալուստյանի և նորոգ հանգուցյալ Գարեգին Գազանճյան Պատրիարքի, ինչպես նաև Գալֆայան Ուխտի միաբանության կույսերի մարմինները: Ի հանգիստ բոլոր հանգուցյալ գահակալների հոգիների՝ երջանկահիշատակ Պատրիարքների շիրիմների առջեւ կատարվեց Հոգեհանգստյան արարողություն՝ Գեր. Տ. Սեւան եպս. Ղարիբյանի հանդիսապետությամբ: Արարողությանը ներկա էին նաեւ Գալֆայան Տան խնամակալության անդամները՝ ատենապետ պրն. Տիգրան Փիլիպոսյանը եւ Առաքինազարդ քույր Հռիփսիմե Սասունյանը:

ՍՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ՓՐԿԻՉ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

Շիշլիի գերեզմանատնից ներկաներն ուղեւորվեցին դեպի Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոց, ուր հոգեւոր դասը դիմավորվեց հիվանդանոցի հոգաբարձության կողմից՝ գլխավորությամբ ատենապետ Փիլո Աթանի: Վերջիններս հյուրերին ուղեկցեցին հիվանդանոցի հարեւանությամբ գտնվող Ս. Ամենափրկիչ եկեղեցի, որտեղ աղոթք մատուցվեց հիվանդների ապաքինման համար, որից հետո բժշկապետ դոկտոր Արման Չաքրյանի ուղեկցությամբ հյուրերը շրջեցին հիվանդանոցի զանազան բաժինները: Վերջում նորակառույց հանգստարանի սրահում սիրո սեղան բացվեց՝ ի պատիվ հյուր հոգեւորականների: Հընթացս ճաշկերույթի հիվանդանոցի հոգաբարձության անդամներին ու բժիշկներին գնահատանքի ու քաջալերանքի խոսքեր ասացին Գեր. Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը եւ Գեր. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍԱՅԻ ՏԿՈՒԹՅՈՒՆ

Երեկոյան ժամը 16-ին Գումգափուի Աթոռանիստ Ս. Աստվածածին եկեղեցում զանգերը զվարթ դողանջով ազդարարեցին երեկոյան ժամերգության սկիզբը, որին պետք է հաջորդեր Գահակալության արարողությունը: Պատմական օր էր ապրում կրոնաշունչ պոլսահայությունը: Խուռներամ բազմություն էր հավաքվել եկեղեցու ներսում եւ բակում: Հավատացյալները խանդավառությամբ դիմավորում էին իրենց ընտրյալ Պատրիարքին

Նորընտիր Պատրիարքը եկեղեցական թափորով եւ «Հրաշափառ»-ի երգեցողությամբ առաջնորդվեց տաճար: Առաջին անգամ լինելով Կ. Պոլսո Հայոց Պատրիարքի գահակալության արարողությանն էր մասնակցում Կ. Պոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Ն.Ս.Տ.Տ. Բարթողոմեոս Ա-ը: Ժամերգությանը ներկա էին նաեւ քույր եկեղեցիների ներկայացուցիչներ՝ Դպտի Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ Աբբա Սերապիոն Մետրոպոլիտը, Անտիոքի Ասորի եկեղեցու ներկայացուցիչ Մոր Յուլիոս Մետրոպոլիտը (Միջին Եվրոպա), Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչ Կարդինալ Պիեր Դյուբրեն, Հույն Ուղղափառ եկեղեցու Անգլիո ներկայացուցիչ Գեր. Աբբա Սերաֆիմ Մետրոպոլիտը, Թուրապտինի Մոր Տիմոթեոս Մետրոպոլիտը, Պոլսո Հայ Կաթոլիկ համայնքի Վիճակավոր Տ. Հովհաննես արքեպս. Չոլաքյանը եւ ուրիշներ:

Ժամերգության ավարտին «Ուրախ լեր Սուրբ եկեղեցի» շարականի

ներկայացողությամբ Հայց. Եկեղեցու զգեստավորված Սրբազան Հայրերի կողքին Ս. Խորան քարձրացան նաեւ դավանակից Եկեղեցիների ներկայացուցիչները:

Ընթերցվեց Հովհաննու Ավետարանի (Ի 19-23) հատվածը, որից հետո Նորին Ամենապատվությունը ծունկի եկավ դեպի ժողովուրդը եւ կարդաց իր Ուխտի թուղթը.

«Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի ծառայ Մեսրոպ Արքեպիսկոպոս. միաբան Պատրիարքական Աթոռոյս Պոլսոյ, կամօքն Աստուծոյ եւ ընտրութեամբ Ազգիս կոչեցեալ յԱթոռ Պատրիարքութեան Պոլսոյ՝ ապաւինեալ յօգնականութիւն շնորհաց Բարձրելոյն եւ ի ներկայութեան հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորաց՝ հրապարակաւ ուխտեմ բոլորապտուղ նուիրմամբ եւ հաւատարմութեամբ ընծայել զանձն իմ յառաջնորդութիւն մերազն ժողովրդեան ի ճանապարհս առաքինութեան եւ արդարութեան, ըստ Աստուածադիր օրինաց եւ Թուրքիոյ Հանրապետութեան Սահմանադրութեան եւ ուղղափառ վարդապետութեան Քրիստոսական կրօնից, ըստ մերոյս Եկեղեցւոյ դաւանութեան, ի պահպանութիւն եւ ի պաշտպանութիւն կրօնական, համայնքային, ընկերային եւ բարեսիրական ընկերութեանց հրաւանց: Օգնեսցէ ինձ Աստուած: Ամէն»:

Այնուհետեւ Գեր. Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը կարդաց «Գոհանամք զՔէն, Աստուած Մշտնջենաւոր» գոհաբանական աղոթքը, որի մեջ Բարձրյալից հայցեց հովվապետական շնորհ, ուղղափառ հավատի ճշմարտությունների քարոզության շնորհ եւ անսայթաք պաշտոնավարություն: Արևշատություն եւ կենաց երկար օրեր խնդրեց նաեւ Ամենայն Հայոց Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառի և Եկեղեցու միաբանության համար:

Աղոթքից հետո Գեր. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակը (տե՛ս էջ 11-12):

Սրբատառ Կոնդակի ընթերցումից հետո Սրբազան Հայրը, հանուն Վեհափառ Հայրապետի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Նորին Ամենապատվությանը նվիրեց ասա: Այնուհետեւ Կ. Պոլսո միաբանության ավագ հոգեւորական Գեր. Տ. Շահան արքեպս. Սվաճյանը Նորընտիր Պատրիարքին հանձնեց պատրիարքական իշխանությունը խորհրդանշող Պոլսո Աթոռի պատմական ասան, որից հետո Սրբազան Հայրը Նորին Ամենապատվությանը ուղղված խոսքում շնորհավորեց ընտրությունը եւ գահակալությունը եւ, «ի վերջո բանին», մասնավորապես ասաց.

«Կ՚ուզեմ յիշեցնել ամէնէն առաջ մեր համայնքի զաւակներուն, յետոյ հոգեւորական դասուն, եւ Ձեզի Պատրիարք Սրբազան Հայր, Սուրբ Գիրքէն երեք թանկագին համարներ, որոնք եթէ յարգենք ու գործադրենք, անոնք հնազանդութեան, կարգապահութեան, սիրոյ եւ համերաշխութեան հրաշանորոգ ազդակները պիտի ըլլան մեր ժողովուրդին, մեր եկեղեցականութեան եւ Ձեզի, Ամեն. Սրբազան Հայր, այսուհետեւ կրօնա-համայնքային հոգեւոր ու բարոյական կեանքին մէջ:

«Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց եւ հպատակ կացէք նոցա» (Եբր. ԺԳ 17),

«Աղաչեմ զՁեզ ճանաչել զվերակացուս Ձեր: Համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ» (Ա Թես. Ե 12),

«Առաջնորդ կացուցի զքեզ. մի՛ հպարտանար. լե՛ր ի միջի նոցա իբրեւ զմի ի նոցանէ» (Սիր. Լե 1):

ԿՈՂՈՄՈՒ Վ-«ՇԿՂՈՒԱԷՈՒ» ՆՍԻՈՈ ՑՎՈՆՍԿ
ՎՀԳՂՂՈՒԿՈՀՍՍԻԳԵՍԷ ՂՈՑՎՏՈՈՀՇՄՈՀ ՅՀԵՈԷ ԺՄՈՎՀՏՈՈ ՀՎՏՂՅՀՄՂ

Եւ հիմա մենք ալ միաբերան եռամեծ ու մեծիմաստ Վարդան վարդապետ Արեւելցիի պէս երգենք.

«Ս. Հոգի Աստուած շնորհազարդ պայծառացո՛ զգաւազան իշխանութեան մերոյ Պատրիարքին, զի օրհնեսցուք զքեզ Տէր այժմ եւ յաւիտեան: Ամէն»:

Ասայի տվչությունից հետո Կ. Պոլսո Հայոց Պատրիարքը ծունկի եկավ, եւ բեմ բարձրացած եպիսկոպոսաց դասը միասնաբար «Պահպանիչ» աղոթքը կարդաց Սրբազան Պատրիարքի վրա, որին հաջորդեցին նվիրապետական Աթոռների ներկայացուցիչների խոսքերը:

Նախ խոսք առավ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ Գեր. Տ. Եփրեմ արքեպս. Տաքատյանը եւ, հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի, շնորհավորեց Նորընտիր Պատրիարքին ընտրության եւ գահակալության առիթով եւ մաղթեց արդյունաշատ հովվապետություն: Խոսքի ավարտին Սրբազան Հայրը Նորին Ամենապատվությանը նվիրեց Պանակ:

Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի ուղերձը կարդաց Գեր Տ. Սեւան եպս. Ղարիբյանը.

«Սիրելի Սրբազան եղբայր,

Գոհունակութեան եւ ուրախութեան զգացումներով կը լեցուին սիրտերը Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն, իմանալով, որ ձեր ընտրութիւնը իբրեւ Պատրիարք Կոստանդնուպոլսոյ, իր լրումը կը գտնէ պսակումովը ձեր գահակալութեան:

Կը վերնայ սուգի շղարշը: Եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմական եւ նուիրապետական Աթոռը Կոստանդնուպոլսոյ, կը զգենու ցնծութեան քողը անձին վայելչութեամբը իր արժանընտիր գահակալին:

Մեր ծանօթութիւնը ուսումնատենչ այն երիտասարդին հետ, որ դուք էիք, Միացեալ Նահանգաց հայահոծ կեդրոններէն հեռու Մեմֆիս քաղաքի մը համալսարանին մէջ, երաշխիքը տուած էր մեզի ձեր մէջ տեսնելու, կեանքի դժուարին պայմաններուն հակառակ, հաւատարիմ մնալու կամքը առաքադրուած ազնուագոյն նպատակներու, եւ Աստուածատուր շնորհներու շահարկումով անդեղեւ ընթանալու: Եւ իբրեւ զաւակ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, ընդունեցիք նաեւ Քրիստոսի ծառայութեան քաղցր լուծը:

Այսօր, պատասխանատուութեանց աւելի ծանր լուծ մը դրուեցաւ ձեր ուսերուն: Եւ սակայն անոր հետ միախառնուած կայ ձեր հովուական խնամքին յանձնուած բանաւոր հօտին, հոգեւոր զաւակներուն, խղճմտանքին եւ աղօթքին ձայնը, բարի մաղթանքներով առլցուն: Այս նոր լուծին ծանրութիւնը պիտի կրէք իբրեւ ծառայ Քրիստոսի, որուն կոչին կ'ընդառաջէք Անոր պատգամախօսը դառնալու, Անոր լուծը կրելու, որ Իր խոստումին համաձայն, միշտ «քաղցր ու թեթեւ» պիտի կշռէ:

Քրիստոսի անձին եւ կեանքին յիշատակներով նուիրականացած սրբավայրերէն Երուսաղէմի, մեր եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան սրտի մաղթանքն է, որ Տէրը ձեր անձին մէջ «անհատ եւ աննուազ արասցէ զշնորհս Հոգւոյն Սրբոյ», եւ ձեր խնամքին յանձնուած մեր հաւատաւոր ժողովուրդին հաւատքը անսասան, եւ ձեր հայրական հովանիին ներքեւ, անոր կրօնական,

մշակութային եւ մարդասիրական այլ գործունեութեանց արգասիքը բարգաւաճ պահէ միշտ, սերունդէ սերունդ երախտաւոր հոգիներու վայելումին համար:

Աստուած ձեզ օգնական, եւ առողջ մնաք միշտ հոգիով ու մարմինով:

Սիրոյ Ողջունիւ.

ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԵԼԵԱՆ
Հայ Պատրիարք Երուսաղէմի»

Սրբազան Հայրը ուղերձի վերջում, հանուն Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Միաբանության եւ Ամենապատիվ Պատրիարքի, Պոլսո Հայոց Պատրիարքին նվիրեց Սկիհ:

Այնուհետեւ շնորհավորական ու մաղթանքի խոսքեր ասացին քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Տվչության եւ գահակալության արարողությունն իր ավարտին հասավ Կ. Պոլսո Հայոց 84-րդ Պատրիարքի խոսքով.

«Սիրելի Հոգեւոր Եղբայրներ,

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ մեր,

Կեանքիս անդրանիկ ուխտը կնքաւորս կատարեց մկրտութեանս պահուն, իմ անունովս Աստուծոյ Եկեղեցիէն խնդրելով «հաւատք, յոյս, սէր եւ մկրտութիւն եւ ծառայել Աստուծոյ»: Հոգելոյս մկրտիչս Տ. Պետրոս Աւագ Քահանայ Տէր-Պետրոսեան կնունքէս յետոյ իր առաքելութիւնը աւարտած չհամարեց եւ որպէս ճշմարիտ հովիւ, իմ ծնողքիս հետ եղաւ առաջին հոգեւոր դաստիարակս, հազիւ վեց տարեկանիս Հայ Եկեղեցւոյ դպրութեան պատուական շաւիղը հագուեցուց ինձի եւ մանկական տատամսոտ քայլերս առաջնորդեց դէպի երկինք բարձրացող խորհրդաւոր ճամբուն մէջ:

Կեանքիս երկրորդ ուխտը կատարելու ժամանակ երիտասարդական խանդով տոգորուած էի: Շնորհք Պատրիարքի հրամանաւ եւ Գերշ. Տ. Շահան Սրբազանի ձեռամբ սարկաւագ ձեռնադրուեցայ: Մկրտութեան ուխտիս Աստուծոյ ծառայելու խոստումը տարբեր իմաստ մը առած էր այլեւս: Քրիստոսի ճշմարիտ վկայ Ս. Ստեփանոս Նախասարկաւագի տիպարն էր հիմա զիս առաջնորդողը: Եւ որքան, այո՛ որքան, անարժան կը նկատէի ինքզինքս սարկաւագութեան վսեմ կոչումին: Յետոյ հոգեւոր հայրերս սորվեցուցին. «Որդեակ, անարժանութեան այդ ներքին զգացումը չըլլայ որ մոռնաս, սակայն քո արժանիքդ այնքան կարեւոր մի նկատեր, որքան Աստուածային եւ երկնաւոր շնորհները, որոնք, եթէ թոյլատրես, պիտի ներգործեն ներսիդիդ: Թէկուզ անարժան, սակայն միշտ հաւատարիմ մնա՛ Աստուծոյ եւ Եկեղեցիին ծառայութեան մէջ»:

Երրորդ ուխտս կատարելու կոչուեցայ երջանկայիշատակ Շնորհք Պատրիարքի կողմէ, որ զիս քահանայ ձեռնադրեց, սրբալոյս Միւռոնով ճակատս օծեց եւ վեղարս տուաւ: Խորէն Պատրիարք Աշրքեանի «Կենցաղ Եկեղեցականաց»ը հոգեւոր ծնողիս թելադրութեամբ ապաշխարութեան քառասունքիս ընթացքին կարդացի առաջին անգամ: Այսօրուան պէս կը յիշեմ այն սարսուռը, զոր զգացի երբ Անդրանիկ Ս. Պատարագս կը մատուցէի սարկաւագութիւն կատարող Տէր Պետրոս մկրտիչ քահանայ հօրս առընթե-

ռակայութեամբ, ոչ ոք, խորհեցայ, զսպելով զգացումներս եւ բարձրացնելով զաչս ի յերկինս. այո «ոչ ոք արժանի է սպասաւորել արքունական փառաց քոց. քանզի պաշտել զքեզ մեծ եւ միաւոր՝ երկնային զօրութեանցդ իսկ է»: Համակուած էի նորէն մեղաւորութեան, անպիտանութեան զգացումներով, մինչ Հայրերը ինձ հետ կը շարունակէին աղօթել. «Սակայն անչափ բարերարութեանդ պատճառաւ, Հայր Աստուծոյ անպարագրելի Բանդ, մարդացար եւ իբրեւ մեր քահանայապետը երեւեցար. եւ քահանայութիւնը աւանդեցիր մեզի»:

Չորրորդ ուխտս կատարեցի Միածնէջ Ս. Սեղանին առջեւ, բիբլիական Արարատի պայծառատեսիլ հովանիին ներքեւ: Ս. Թադէոս եւ Ս. Բարթողոմէոս Առաքեալներու, եւ մեր հաւատքի հայր Ա. Գրիգոր Լուսաւորչի յաջորդը երանաշնորհ Վազգէն Հայրապետը զիս եպիսկոպոս ձեռնադրեց. երրորդ անգամ օծուեցայ սրբալոյս Միւռոնով, Ս. Պատարագի մատուցմամբ վարդապետական ուխտս նորոգեցի Հացեկացիի գերեզմանին վրայ Օշականի մէջ, դող մը զգացի յիշելով մեծ Արմաշական՝ երջանկայիշատակ եղիշէ Պատրիարք Դուրեանի խօսքը. «Կեանքիս մէջ այնքան վար նայած չունէի ես՝ այնքան վեր տեսած ըլլալու համար, որքան ցած ու անշուք այդ դամբանը»: Ցած ու անշուք այդ դամբանին մէջ հանգչող սուրբի առաքելութիւնն էր սակայն որ մեզ պայծառակերպեց սերունդէ սերունդ: Օրինակ լինի յիշատակը բոլոր այն վարդապետներուն եւ հայրապետներուն, որոնց մեծ մասը այդպիսի ցած ու անշուք դամբարաններ ունին միայն, եթէ այդ ալ ունին. սակայն մեզ փոխանցեցին փրկարար աւանդը Քրիստոնէական հաւատքի, յոյսի եւ սիրոյ, եւ սրբութիւնները Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ: Անոնց օրինակին հետեւիլ փորձեցի եպիսկոպոսական ծառայութեանս մէջ, եւ որպէս հոգեւորական եւ խղճի ազատութեամբ ամէն բանէ վեր նկատեցի հոգեւոր ուխտերս:

Միաւասիկ ապաւինելով Ամենասուրբ Երրորդութեան եւ Մի Աստուածութեան օգնականութեան, եւ բարեխօսութեամբ Ս. Կոյս Աստուածածնին եւ ամենայն սրբոց, օրհնութեամբ Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարքին եւ Կաթողիկոսին, ընտրութեամբ Ազգիս՝ որուն ծառայելը միշտ պատիւ համարեցի, ի ներկայութեան Հայ Առաքելական Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու եւ քոյր Եկեղեցիներու ներկայացուցիչներուն եւ ձեռամբ սիրելի Շահան Սրբազանին, քիչ առաջ կատարեցի հինգերորդ ուխտս եւ պաշտօնապէս ստանձնեցի Պոլսոյ Պատրիարքութեան պաշտօնը եւ հովուապետական ասան: Ինչպէս առիթով մը ըսած էր երջանկայիշատակ Հոգեւոր Ծնողս. ինծի այնպէս կը թուի սակայն. թէ Պատրիարքական ասան ես այս պահուն կը ստանամ մեր հանգուցեալ հովուապետներու ձեռքէն. որոնց գէթ անունները բնականաբար կը խոնարհեցնեն իմ անձս:

Շուրջ քսան տարիէ ի վեր աշխատակից լինելով երկու երջանկայիշատակ Պատրիարքներու, քաջ գիտակից եմ սոյն պաշտօնին տարողութեան եւ դժուարութեանց: Աստուծոյ եւ, սիրելի հոգեւոր եղբայրներ եւ սիրեցեալ ժողովուրդ մեր, ձեր օգնականութեան կը՝ կարօտիմ, որպէսզի ես տրուպս դոյզն յաջողութիւն արձանագրեմ իմ նոր կոչումիս մէջ:

Հայ Առաքելական Եկեղեցւոյ տառապեալ, փշոտ եւ ամենահամեստ Աթոռն է Պոլսոյ Պատրիարքութիւնը այսօրուան տուեալներով, եւ մեր շրջանին ալ այդպէս կը մնայ: Սակայն Եկեղեցիի մը փառքը իր շքեղ շէնքերուն, իր նիւթական գանձերուն մէջ պէտք չէ փնտռուի, այլ իր ժողովուրդի հոգեւոր կեանքի

խորութեան, հաւատքի կեանքի ջերմեռանդութեան եւ Ս. Աւանդութեանց պահպանման մէջ: Եւ այդ, փառք Աստուծոյ, Պոլսոյ համայնքը առ այժմ դեռ ունի:

Նախ ի խորոց սրտի գոհութիւն եւ փառք կը մատուցանեմ Աստուծոյ, որ մինչեւ իսկ երբ չզգացի, խնամք տարաւ ինծի: Պիտի շարունակեմ օրհնել Իր Անունը յամենայն աւուրս կենդանութեան իմոյ: Շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզի, սիրեցեալ հաւատացեալ ժողովուրդ մեր, որ ճշմարիտ Հայ Եկեղեցին էք. ձեզի Հայ հոգեւորականաց պատուական դասը Պոլսոյ, որ Տէր Յիսուս Քրիստոսի այս ժառանգ յարմար տեսաք պատրիարքութեան պատասխանատու պաշտօնին: Շնորհակալութիւններ Ազգիս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսին, Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին Մեծի Տանն Կիլիկիոյ, Ն.Ա.Տ. Թորգոմ Բ. Պատրիարքին Ա. Երուսաղէմի, զիրենք ներկայացնող Հայրերուն, բոլոր Գերաշնորհ, Հոգեշնորհ եւ Արժանապատիւ Հայրերուն, որոնք այս պատմական հանդիսութեան առիթով տեսանելի կերպով ցոյց տուին Հայ Առաքելական Եկեղեցւոյ միութիւնը: Տէրը օրհնէ եւ վերանորոգէ, Իր այս ժառայէն սկսեալ, բոլորիս կոչումը Աստուծոյ եւ Եկեղեցւոյ ծառայութեան մէջ: Ամէն»:

Պատրիարք Հայրը խոսքի ավարտին իջավ Բեմից եւ արժանավորապես բազմեց իր Գահին: Արարողության ավարտին Նորին Ամենապատվությունը եւ Կ. Պոլսո Հունաց Տիեզերական Պատրիարքը ամպհովանիով, եկեղեցական թափորով եւ «Այսօր Քահանայապետ» շարականի երգեցողությամբ ուղեկցվեցին Պատրիարքարան: Պատրիարքարանում Գահակալության առիթով, ի պատիվ հյուրերի, կազմակերպվեց ընդունելություն եւ տրվեց սիրո ճաշ: Հյուրերի թվում կային մտավորականներ, դիվանագետներ, արվեստագետներ եւ հասարակական գործիչներ:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Կիրակի առավոտյան Պատրիարք Հայրը մատուցեց իր անդրանիկ Ս. Պատարագը: Սրբազան Պատրիարքը զգեստավորված Պատրիարքարանից ամպհովանիով եւ եկեղեցական թափորով ուղեկցվեց Մայր եկեղեցի: Սրբազան Պատարագչին առընթերակա էին Գեր. Տ. Սեւան եպս. Ղարիբյանը եւ Գեր. Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը:

«Հայր մեր»-ից առաջ իր անդրանիկ պատգամը փոխանցեց Նորին Ամենապատվությունը:

Ս. Պատարագի վերջում կատարվեց Հոգեհանգստյան կարգ՝ Կ. Պոլսո Հայոց 83 Պատրիարքների հիշատակին:

Ս. Պատարագին ներկա էին հրավիրյալ բոլոր բարձրաստիճան հոգեւորականները, ինչպես նաեւ բազմաթիվ հավատացյալ հայորդիներ:

Ս. Պատարագից հետո Նորին Ամենապատվությունը ամպհովանիով ուղեկցվեց Պատրիարքարան, ուր մեծ դահլիճի մեջ իրեն հյուր հոգեւորականներին պատվեց սիրո սեղանով:

Կ. Պոլսո Հայոց պատմության էջերը եւս երկու անմոռանալի օրերով զարդարվեցին:

Գահակալության հանդիսությանց պաշտոնական մասը իր լրումին հասավ կիրակի երեկոյան՝ հայտնի ճարտարապետներ Պալյանների ձեռակերտ «Չրաղան» կոչված հյուրանոց-ռեստորանի շքեղաշուք սրահներում կազմա-

ՍՏՁԵ ՑԿՂԻՍԵՑԻՍՏՈՒՄԸ

ԿԱԹՈՂԻԿՈՍ Գ ՄԻՐՈՒՄՆԻ Գ. ԽՈՍՐՈՎԻՄԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՍՈՒՐԻՈՅՈՎ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՎԱՎՈՐՈՒՄԸ

կերպված համայնքային հավաքույթում, որին մասնակցում էին շուրջ 700 հայորդիներ: Հնչեցին շնորհավորական խոսքեր, մաղթանքներ: Ուշագրավ էր Գեր. Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանի ելույթը, որի ավարտին Սրբազան Հայրը Նորին Սմենապատվությանը նվիրեց եւ այդպիսով Կ. Պոլիս վերադարձրեց Մաղաքիա Օրմանյան Պատրիարքին պատկանած եւ երկար ճանապարհ անցած մատանին:

Երեկույթին փակման խոսք ասաց Պատրիարք Սրբազանը: Նորին Սմենապատվությունը շնորհակալություն հայտնեց բարեմաղթությունների, շնորհավորական խոսքերի ու նվերների համար եւ մասնակիցներին ներկայացրեց բարձրաստիճան հյուր հոգեւորականներին:

Հաջորդ օրվանից սկսյալ Ն. Ա. Տ. Մեսրոպ Սրբազան Պատրիարք Հայրը իր անդրանիկ հովվապետական այցելությունները շնորհեց Սամաթիայի Ս. Գեւորգ, Ֆերիգյուղի Ս. Վարդանանց, Պագրգյուղի Ծնունդ Ս. Աստվածածնի, Եշիլգյուղի Ս. Ստեփաննոս եկեղեցիների հավատացյալներին: Պատրիարք Հորը ընկերակցում էին հյուրաբար Կ. Պոլսում գտնվող Սրբազան Հայրերը եւ Հայր Սուրբերը: Պատրիարք Հայրը ամենուրեք ընդունվում էր մեծ խանդավառությամբ եւ հավատացյալների հոծ խմբերով:

Երկուշաբթի առավոտյան Պատրիարք Հայրը, հոգեւոր դասի ուղեկցությամբ, այցելություն տվեց Կ. Պոլսո Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն Բարթողոմեոսին: Պատրիարք Հայրը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբության ցուցաբերած եղբայրական սիրո արտահայտության համար: Նորին Սրբությունը Ֆեներիի Աթոռանիստ Պատրիարքարանում ընդունելով հյուրերին՝ ողջույնի եւ շնորհավորական պատասխան խոսք ասաց, որից հետո փոքրիկ հուշանվերներ հանձնեց.իր հյուրերին:

Նոյեմբերի 27-ին Կ. Պոլսից Մայր Աթոռ վերադարձավ Ս. Էջմիածնի պատվիրակությունը: Պատվիրակությանը միացավ նաեւ Մայր Աթոռի միաբան, Վառնայի հոգեւոր հովիվ Տ. Սիոն վրդ. Ադամյանը:

ԱՐՇԵՆ ԱԲԵՂԱ ՍԱՆՈՅԱՆ

***

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄԱՍԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄԸ ՄԻԱՆԱԿ Է ԲՈԼՈՐ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐԻՆ Ն. Ա. Տ. ՄԵՍՐՈՊ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԱՀԱԿԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ԵՒ ՄԱՂԹՈՒՄ ԱՐԵՒՇԱՏ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱՇԱՏ ՀՈԳԵՒՈՐ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ Ի ՎԵՐՍ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԹՈՌԻ:

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(22 Նոյեմբեր 1998)

«Յամենայն ժամ ուրախ լերուք. անդադար աղօթս արարէք. յամենայնի գոհացարուք. զի այս են կամք Աստուծոյ Քրիստոսիւ Յիսուսիւ 'ի ձեզ»:

(Ա ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ Ե 16-18)

Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ Հայր Սուրբեր, Արժանաշնորհ Քահանայ Հայրեր, սիրելի ժողովուրդ.

Այսօր մեր Եկեղեցւոյ տօնացոյցին մէջ Ս. Ծննդեան տօնի պատրաստութեան շրջանի, այսինքն Յիսնակի առաջին Կիրակին է: Ասիկա ակնկալութեան շրջան մըն է. ակնկալութեամբ կը լեցուինք. ինչպէս լեցուած էր Հին Ուխտի ժողովուրդը, որ սպասեց Փրկչի գալստեան: Մարգարէները ըսած էին, որ Տիրոջ սերունդէն մէկը պիտի գայ ու պիտի ջախջախէ սատանային գլուխը: Տիրոջ խօսքը պետք է անպայման իրականանայ, ինչպէս որ Տէրը «եղիցի» ըսաւ, ու տիեզերքը ստեղծուեցաւ, եղիցի լոյս ըսաւ, ու տիեզերքը լոյսով լուսաւորուեցաւ: Եթէ ըսաւ, որ սատանային գլուխը պիտի ճզմուի, ուրեմն ատիկա անպայման պիտի իրականանար:

Եկեղեցին կ'ապրի ոչ միայն այսօրը, այլ նաեւ գալիքը: Խաղաղութեան նաւահանգիստը, որ խոստացուած է մարդուն, ունի երկու իմաստ: Նախ երկրաւոր իմաստը, այս աշխարհի մէջ խաղաղութեան նաւահանգիստը, որուն պէտք ունինք: Բայց նաեւ Աստուծոյ Արքայութիւնը, որ բուն խաղաղութեան նաւահանգիստն է: Ուրեմն այդ է, որ պիտի գայ, ինչպէս խոստացուած է հաւատացեալ մարդուն: Յիսնակը այսպիսի ակնկալութեամբ մը կը լեցնէ մեր հոգիները:

Պօղոս Առաքեալ երբ Թեսաղոնիկէ կը գտնուէր, կը տեսնէր, որ հաւատացեալներուն մէկ մասը այնքան խանդավառ էր, որ կարծես հողին վրայ չէր կոխեր, իսկ մէկ մասն ալ յուսախաբ ու յոռետես էր: Պօղոս Առաքեալը իր նամակին մէջ անոնց ըսաւ. դուք պիտի ապրիք Փրկիչին գալուստը, ձեզի տրուած չէ գիտնալ ժամանակը, բայց պիտի գիտնաք, որ անպայման Փրկիչը պիտի գայ: Յուսով պիտի տոգորուիք, հոգեւոր ուրախութեան մէջ պիտի ապրիք, պիտի աղօթէք, որովհետեւ այս է Աստուծոյ կամքը:

Բայց բոլոր անոնք, որոնք Պօղոս Առաքեալը այնքան յարգանքով դիմաւորած էին, շատ չանցած խանգարեցին Եկեղեցին, այնքան, որ Առաքեալը ստիպուեցաւ խոյս տալ դէպի Աթէնք: Ահա թէ ինչու Պօղոս Առաքեալ գրեց. շնորհակալ եմ, զիս յարգանքով դիմաւորեցիք, բայց ասիկա չի բաւեր: Պէտք չէ արտօնէք, որ խանգարիչներ ձեր մէջ մտնեն ու խանգարեն մեր Եկեղեցին:

Ես ալ հիմա շնորհակալ եմ ձեզի, սիրելի ժողովուրդ, երկու օրէ ի վեր ինձի հետ կ'ապրիք հոգեւոր ուրախութիւն, երկու օրէ ի վեր կը պատուէք զիս: Մեր Եկեղեցին այլեւս սուգի մէջ չէ, որովհետեւ այժմ ունի սպասաւորներու սպասաւոր մը: Բնականաբար ես մարդկօրէն պէտք ունիմ այսպիսի սիրոյ արտայայտութիւններու, բայց ասիկա ամէն ինչ չէ: Ինձի ու իմ միջոցաւ Հայաստանեայց Եկեղեցիին շատ աւելի թանկագին նուէր մը ըրած պիտի ըլլաք, եթէ, Պողոս Առաքեալին ըսածին պէս, աւելի խոր լոյսով ու հաւատքով կապուիք ձեր եկեղեցիին: Ասիկա, ամենէն մեծ նուէրը պիտի ըլլայ: Ես պիտի ուզեմ տեսնել ձեր հաւատքը: Այս Աթոռը ունի իր լաւ ու վատ կողմերը: Վատ կողմերը կը թողունք պատմութեան դատաստանին: Որպէս լաւ կողմեր, Պոլսոյ Աթոռը յատուկ տեղ ունեցած էր մեր հոգեւոր մշակութային կեանքէն ներս: Այո՛, չենք մոռնար միւս Աթոռները: Մայր Աթոռը մեր աչքին լոյսն է, սրտով կապուած ենք լոյսի այդ օճախին: Մեզի համար նոյնքան յատուկ տեղ ունի Երուսաղէմի Աթոռը, որ կարեւոր է ո՛չ միայն մեր Եկեղեցիին, այլեւ ամբողջ քրիստոնեայ աշխարհի համար: Տիրոջ օրհնութեան վայրն է ան. եւ հակառակ որ բնաւ խաղաղութիւն չունեցաւ, մեր Եկեղեցիին համար խաղաղութեան վայրն է ան: Հոն է, որ ի խաչ հանուեցաւ Քրիստոս: Ասիկա մեծագոյն Պատարագն է, եւ անոր շնորհիւ Քրիստոսի արիւնը կը շրջի մեր մարմինին մէջ: Ամէն քրիստոնեայ, եթէ կարելիութիւն ունի, կեանքին մէջ գոնէ մէկ անգամ այցել է Երուսաղէմ: Նոյնպէս, մեզի համար յատուկ տեղ ունի Կիլիկիոյ Աթոռը, որուն շարականները սիրով կ'երգենք մենք: Այո՛, բոլոր այս Աթոռները մերն են, բայց մեզի համար մասնաւոր նշանակութիւն ունի Պոլսոյ մեր Աթոռը: Այս Աթոռը, Յովակիմ Պատրիարքէն ասդին, ունեցած է իր տառապալից շրջանները, բայց հոգեւոր ջերմեռանդութիւնը երբեք չէ պաղած: Միայն հոս է, որ Մեծ Պահքի ամբողջ տեւողութեան արարողութիւններ ունինք, ծոմապահութիւնը կը յարգուի: Հիմա իմ բեռս անշուշտ շատ աւելի թեթեւ ու տանելի պիտի ըլլայ, եթէ նոյն հոգեւոր կապուածութիւնը շարունակէք Աթոռին նկատմամբ: Շարտօնենք, որ քանի մը խանգարիչներ խանգարեն մեր հոգեւոր կեանքը:

Ես այսօր, այս Սուրբ Խորանին վրայ, կ'ուզեմ իմ որդիական երախտիքը յայտնել իմ հոգեւոր ծնողքիս՝ Շնորհք Պատրիարքին, Տիրան Ներսոյեանին, Վազգէն Ա Հայրապետին, կը խոնարհիմ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին, Երուսաղէմի Թորգոմ Պատրիարքին, Առաքնորդ Սրբազաններուն, նաեւ հիւր հոգեւորականներուն, որոնք այսքան երկար ճամփորդութիւններ ընելով, եկան մեզի հետ բաժնելու մեր ուրախութիւնը: Շնորհակալութիւն Յունաց Պատրիարքին, Ասորիներու Շէնուտա Պատրիարքին, Հռոմի Սրբազան Պապին, Ամերիկեան ու Գերման Կաթոլիկ Եկեղեցիներուն:

Միշտ պիտի կրկնենք Պողոս Առաքեալին ըսածին պէս՝ «Առաջ Աստուած» կամ «կամօքն Աստուծոյ» ասոյթները: Այս մաղթանքն է, որ մեզ պիտի առաջնորդէ, Աստուածն է, որ մեզ պիտի նախախնամէ:

Իսկ վերջին շնորհակալութիւնս ձեզի՛ է, սիրելի ժողովուրդ, որ զիս արժանի նկատեցիք այս Աթոռին եւ ուսերուս վրայ դրիք այս ծանր ու պատասխանատու պարտականութիւնը:

Աստուած օրհնի մեզ բոլորս այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՈՐԴԱՆԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՓԱԼՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՓԱԼԵԱՆԻՆ
Ի ԱՄՍԱՆ, Ի ՅՈՐԴԱՆԱՆ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Երուսաղէմի Հայոց Պատրիարքէն՝ Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանէն, որ այս տարի արժանավայել կերպով պիտի նշուի Ձեր քահանայական ձեռնադրութեան 35-ամեակը, Յորդանանի Հայութեան Ձեր ընծայած հոգեւորական ծառայութեան 20-ամեակը եւ եպիսկոպոսական ձեռնադրութեան 10-ամեակը:

Քաջածանօթ ենք Ձեր անսահման սիրոյն եւ անձնուէր աշխատանքներուն յատկապէս Յորդանանի հայութեան որպէս Առաջնորդ եւ Պատրիարքի փոխանորդ: Ձեր կազմակերպական տոկուն եւ բեղուն ջանքերով, Ձեր շինարարական աշխատանքներով նոր թափ տուիք հայ ազգային-եկեղեցական կեանքին եւ կրթական գործունէութեան:

Ընդառաջելով Պատրիարք Հօր եւ Տնօրէն Ժողովի խնդրանքին եւ անոր միացնելով Մեր անձնական գնահատանքը, այսու Հայրապետական Կոնդակով Ձեզի կը շնորհինք

ԱՐՔՈՒԹԵԱՆ տիտղոս եւ պատիւ:

Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ քաջառողջ կեանք, որպէսզի Ձեր հոգեւորականի կոչումը առաւել եւ յարաճուն պտղաբերութեամբ արժեցնէք բազում տարիներ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 1 Սեպտեմբերի
Յամի Տեառն 1998 եւ ի թուին Հայոց ՌՆԽ է
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/194

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՅՈՒՐԵՂՅԱՆԻՆ ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏՆՔԻ

ԲԱՐՁՐԱԳՈՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՒՐԵՂԵԱՆԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Սրտի անհուն ուրախութեամբ, 50-ամեայ Ձեր յոբելինական տարեդարձի առթիւ, բերում ենք Մեր սրտագին շնորհաւորանքները և բարի մաղթանաց օրհնութիւնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լոյսի խորաններից:

Սիրելի Սրբազան, Դուք արժանաւորապէս, գիտակցուած նուիրումով, երկար տասնամեակներ անմնացորդ ծառայեցիք Հայց. Առաքելահաստատ մեր Եկեղեցուն, դառնալով Ձեզ հանձնուած հսկայածաւալ Թեմի ճշմարիտ Առաջնորդը և այսպիսով դարձաք Բանին Կենաց սպասաւորը:

Սհաւասիկ թևակոխեցիք մի տարիք, որը կոչւում է ամբողջական հասունութեան տարիք: Դարձաք 50-ամեայ յոբելեար: Աստուած արժանացնի Ձեզ բազում յոբելինական տարեդարձների: Մեր սպասումն է, որ Ձեր կեանքի երկրորդ յիսնամեակը ևս դառնայ առաջինի նման արդիւնաւէտ, լեցուն գործունէութեամբ, հայրենանուէր և ծառայական մի շրջան: Այս առթիւ մաղթում ենք, որ հնարաւոր դառնայ Մոսկուայում և Ռուսաստանի հայաբնակ բոլոր քաղաքներում Հայ Եկեղեցու զանգերի ղողանջը Ռուսաց Պրաւոսլաւ Մեծ Եկեղեցու զանգերի ղողանջների կողքին հնչի: Թող Ռուս Պրաւոսլաւ Եկեղեցու և յատկապէս նրա սիրեցեալ Պատրիարք Նորին Սրբութիւն Ալեքսիյ Բ-ի հետ մեր կապերը ուղղակի և Ձեր միջոցով լինեն սերտ և եղբայրական, էլ աւելի ամրանան մեր երկու ժողովուրդների համերաշխութեամբ և համագործակցութեամբ:

Ձեր յոբելինական 50-ամեակի առթիւ, իբրև գնահատանք, Ձեզ ընծայաբերում ենք Ս. Աստուածածնի և Մանուկ Յիսուսի օրհնաբեր նկարով մի պանակէ, մաղթելով, որ միշտ այն կրեք, և այն բերի Ձեր կեանքում օրհնութիւն, ծառայականութիւն և զոհողութիւն:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան»: Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 9 Հոկտեմբերի 1998
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ է/149

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՕՐԵՆԲՈՒՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԵՎ ԲԱՐԵՐԱՐ ՏԻԱՐ ՍԵՅՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ՝ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք մեր սրտագին շնորհավորանքները Օրենբուրգի հայ քրիստոնյա համայնքի եկեղեցական Խորհրդի բոլոր անդամներին անխտիր:

Թող Բարին Աստված օրհնի և բազմապատկի ձեր եռանդը եկեղեցաշեն, ազգանվեր և կրթական ասպարեզներում: Թող Աստված օրհնի սրբազան հողը Ռուսաստանի, ռուս մեծ ժողովրդի հետ միասին, և ռուս-հայ բարեկամության դաշինքը բազմադարյան միշտ մնա ամուր և անխախտ ձեր միջոցներով ևս:

Օրհնում ենք ձեզ ձեր աշխատանքի մեջ, որը ուղղված է դեպի կառուցումը Հայ Առաքելական մի եկեղեցու Օրենբուրգ քաղաքի կենտրոնական զբոսայգում: Օրհնում ենք ձեզ Կիրակնօրյա վարժարանի, ռադիոժամի, ինչպես նաև հայ համայնքի կյանքի կազմակերպման օրհնյալ գործին ձեր բերած նպաստի համար: Չմոռանաք հայ ազգի պատվական զավակ քաղցրահունչ բանաստեղծ Վահան Տերյանի շիրիմը և հաճախ այցելեցեք մեր օրհնությամբ:

«Ողջ լերուք զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ. ամէն»:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
5 հոկտեմբերի 1998 թ.

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՄԱՅԱՄԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՏԵՂԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՀԱԻԱՏԱՑԵԱԼՍ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՈՐ Ի ՄԱՅԱՄԻ, ՖԼՈՐԻՏԱ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Արտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Ամերիկահայոց Արևելեան Թեմի բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեանէն, որ յառաջիկայ Դեկտեմբեր 13-ին Ֆլորիտա Նահանգի Մայամի քաղաքին մէջ տեղի պիտի ունենայ օծումը Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցւոյ:

Տարիներ շարունակ սքանչելի և գովելի նախանձախնդրութեամբ դուք և ձեր հայրերն ու մայրերը գիտցաք ձեր հաւատարմութիւնը յայտնել հանդէպ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ և Ս. Յովհաննէս Մկրտիչ անուամբ կնքուած համայնքի կեանքով կրցաք մնալ ի հաղորդութեան Հայց. Եկեղեցւոյ հոգևոր բարիքներուն հետ: Թող Աստուած օրհնէ յիշատակը բոլոր անոնց, որոնք ծառայեցին Ս. Յովհաննէս Մկրտիչ համայնքին և որոնք այժմ Աստուծոյ երկնային խաղաղութեան մէջ կը հանգչին:

Մեր հայրական գնահատանքի ջերմ խօսքը կ'ուղղենք նորակառոյց Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցւոյ կառուցման համար իրենց բաժինը բերած բարերարներուն, նուիրատուներուն և աշխատողներուն:

Եկեղեցի կառուցանելը Աստուծոյ գործն է, մենք Աստուծոյ ձեռքին մէջ գործիքներ ենք: Աստուծոյ հետ գործակցիլը մեր ամենէն մեծ պատիւն է և առաջնահերթ պարտականութիւնը:

Օծումէն ետք եկեղեցին լեցուն, կենսունակ և գործօն պահելն է կարևորը: Կոչ կ'ընենք ձեր բոլորին որ սիրոյ և համերաշխութեան ոգիով, ձեր Առաջնորդ Սրբազանի վերին հսկողութեան ներքև բարգաւաճ պահէք նորաշէն եկեղեցին, որպէսզի դուք և ձեր զաւակները և գալիք սերունդները վայելէք անոր անփոխարինելի գոհար բարիքները:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 12 Հոկտեմբերի 1998
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է/151

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանից, ինչպես նաև Հարավային Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանից սրտի մեծ գոհունակությամբ տեղեկանալով մեր ազգանվեր հայրենակիցների տասնամյակներ շարունակ կատարած եկեղեցանվեր, ազգապահպան ու հայրենաշեն գործունեության մասին, թե ինչպես նրանք երկար տարիներ իրենց նյութական ու բարոյական օժանդակությունն են ի սպաս բերել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառության, մայրենի լեզվի ու ավանդույթների պահպանության աստվածահաճ գործին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, թեմական երկու առաջնորդների ներկայացմամբ, հայրապետական գնահատության է արժանացրել այս թեմերի եկեղեցական, ազգային և համայնքային կյանքին իրենց գործուն մասնակցությունն ու աջակցությունը բերած հետևյալ աշխարհական անձանց և հոգևոր հայրերին.

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» շքանշանով պարգևատրվել են.

1. Տեր և տիկին Հայկ և Վարդուհի Թութակները (ԱՄՆ)
2. Տիկին Ջուլիա Կոբոյանը (ԱՄՆ)

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» շքանշանով պարգևատրվել են.

1. Տեր և տիկին Ջորջ և Նոյեմի Դավթյանները (ԱՄՆ)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԻ են արժանացել.

1. Արժանապատիվ Տ. Ղևոնդ ավագ քահանա Աղաջանյանը (Հարավային Ռուսաստան)
2. Արժանապատիվ Տ. Սամիկոն ավագ քահանա Ոսկանյանը (ԱՄՆ)
3. Տիկին Օտրի Փիլաֆյանը (ԱՄՆ)
4. Տիկին Գրեյս Կարագոզյանը (ԱՄՆ)
5. Տիկին Լուիզ Սահաքյանը (ԱՄՆ):

ԱՐՈՒՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՋԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՁՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(15 նոյեմբերի. կիրակի. 1998 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:
«Վասն ձեր ամենեցուն առնել աղօթս խնդութեամբ»:
«Ձեզ բոլորիդ համար աղոթում եմ խնդությամբ»:

(Փիլիպ. Ա 4)

Այսօր. սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր. այս տողերն ընթերցվեցին Պողոս Առաքյալի՝ Փիլիպեցիներին ուղղված նամակից. որում Առաքյալը բազմիցս ասում է. թե ինքը խնդությամբ և ցնծությամբ է լցված: Ընդամենը չորս գլուխ պարունակող այս նամակում Պողոս Առաքյալը տասն՝ անգամ. տարբեր առիթներով. տարբեր զգացումներով և տարբեր հույզերից բխող իր ապրումներով. շեշտում է. որ ինքը ցնծության. խնդության և ուրախության մեջ է: Այս տողի մեջ նաև շեշտում. ընդգծում է. որ աղոթում է բոլորի համար. ամենքի համար և աղոթում է խնդությամբ. ցնծությամբ և ուրախությամբ: Իզուր չէ. որ այս նամակն անվանվում է նաև «խնդության պատգամ»:

Այսօր մեր նյութապաշտ աշխարհում շատերի համար տարօրինակ պիտի թվա Պողոս առաքյալի այս արտահայտությունը: Նրանց. ովքեր Մուրք Գրքին կամ Պողոս առաքյալի կյանքին ու գործունեությանը այնքան էլ ծանոթ չեն. առաջին հայացքից պիտի թվա. թե Պողոս Առաքյալը անհուգ պալատական կյանքի մեջ. փառքի և ապրուստի անհոգության մեջ ուրիշ բան չուներ անելու. քան աղոթել ուրիշների համար: Եվ քանի որ չուներ ոչ մեկ հոգս. ոչ մեկ տրտմություն. ոչ մեկ նյութական կարիք. ցնծությամբ էր լցված և այդ ցնծությունը վոխանցում էր ուրիշներին: Սակայն չարաչար կսխալվեն նրանք. ովքեր որպես այսօրվա մարդիկ. այսպես կմտածեն և այդպես կկարծեն Պողոս Առաքյալի մասին. և սխալված կլինեն իրապես և ճշմարտապես: Առավել ևս զարմանալի պիտի թվա այսպես մտածողներին. եթե իմանան. որ Պողոս Առաքյալն այս խոսքերը գրում է Հռոմից՝ բանտարկված. շղթայված. կապանքների մեջ: Եվ նույնիսկ շղթայված. կապանքների մեջ ինքն իր ձեռքի աշխատանքով ապրում և իր ապրուստն էր հայթայթում և. որ կարևորն է. կապանքների մեջ սպասում էր մահվան. սպասում էր մահապատժի: Եվ ահա մի տարօրինակ երևույթ. որ մահապատժի սպասող մարդը. որ կապանքների և շղթաների մեջ է. մտածում է ուրիշների համար. աղոթում է ուրիշների համար և աղոթում է խնդությամբ. ցնծությամբ և ուրախությամբ: Այսօրվա մեր մարդկային մտածելակերպի համար կարող է տարօրինակ թվալ այս երևույթը՝ նման մի խնդություն և

նման մի ցնծություն, երբ մենք, մեզանից յուրաքանչյուրս ցնծություն և խնդություն ունենում ենք ցավոք այն ժամանակ, երբ ինչ-որ նյութական ակնկալիք և ինչ-որ մի նյութական գործ կարողանում ենք հաջողությամբ ավարտել: Խնդում և բերկրում ենք միայն այն ժամանակ, երբ դժբախտություններն ու տառապանքները մեզ շրջանցում են, ցնծում և ուրախանում ենք այն ժամանակ, երբ մեր հարազատներին, մեր բարեկամներին նյութական հարստություն և նյութական ապահովություն է բաժին ընկնում այս աշխարհում: Սակայն, որպես քրիստոնյաներ, պետք է փորձենք հասկանալ իրոք, թե ինչի՞ մեջ է կայանում Պողոս Առաքյալի այս ցնծությունը և ուրախությունը, մահապատժի սպասող մարդու ցնծությունը և ուրախությունը՝ ուրիշների համար աղոթելիս:

Դրա համար մեկ անգամ ևս ակնարկ նետենք Պողոս Առաքյալի կյանքին և գործունեությանը: Մեզանից թերևս ոչ մեկի համար Պողոս Առաքյալն իր Սողոսյան կերպարով չի կարող ներկայանալ որպես խնդումներս, զվարթագին անձնավորություն: Մեզանից թերևս ոչ մեկը չի պատկերացնում քրիստոնյաներին հալածող Սողոսին որպես զվարթ և ուրախ անձնավորություն, որովհետև հալածիչը չի կարող զվարթ լինել: Պատմությունից գիտենք, որ հալածողները, բռնակալները, նրանք, ովքեր իրենց կյանքը և ապրուստը հոգում են ուրիշի դժբախտության գնով, երբեք զվարթ չեն և երբեք չեն կարող զվարթ լինել: Ուրեմն, գիտենք, որ Պողոս Առաքյալն իր կյանքի մի հատվածում բնավ ուրախ չէր, թեև իր իշխանության բարձրության գագաթնակետին էր, իր փարիսեցի լինելն արժևորելու գագաթնակետին էր, սակայն ուրախ չէր: Եվ վստահ ու համոզված ենք, որ առաջին ուրախությունն ու առաջին խնդությունը Պողոսն ապրեց այն ժամանակ, երբ հավատքի եկավ, երբ հավատաց Դամասկոսի ճանապարհին իրեն հայտնված Հիսուս Քրիստոսին: Հավատաց, և թեև կուրացած, թեև իր առաջին օրերը դժբախտության մեջ անցկացնելով՝ ապաշխարեց, և այդ ապաշխարությանը հավատալով՝ ուրախացավ և ցնծաց: Ուրեմն, իր առաջին ուրախությունը, իր առաջին ժպիտը, իր առաջին ներքին ցնծությունը վստահ ենք, որ ունեցավ այն ժամանակ, երբ Դամասկոսի ճանապարհին գտավ Հիսուս Քրիստոսին: Գտավ հավատքով, ընդունեց Հիսուս Քրիստոսին որպես իր Տեր և որպես իր Թագավոր և որպես իր Բարեկամ, ընդունեց, և այդ իսկ պատճառով է, որ ավելի քան հարյուր անգամ Պողոս Առաքյալն իր նամակների մեջ միշտ խոսում է ի Տեր, ի Տեր Հիսուս Քրիստոս լինելու, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի մեջ լինելու մասին: Որովհետև ինչ է նշանակում լինել մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մեջ, եթե ոչ՝ շրջապատված լինել Նրանով, մեր կյանքում, մեր գործունեության մեջ, մեր առօրյա իրականության մեջ մշտապես զգալ Նրա ներկայությունը: Եվ ինչպես թռչունը երկնքում է ապրում, և ձուկը՝ ծովում, այնպես էլ մարդ պետք է ապրի Քրիստոսի մեջ և Քրիստոսի ներկայության մեջ: Եվ ինչպես ծառն իր արմատներից, հողից է սնվում և ստանում իր կենարար ավիշը, այնպես էլ մարդ պետք է իր արմատներն ունենա Քրիստոսի ճշմարտության մեջ խրված: Եվ եթե ունի այդ ճշմար-

տությունը. և եթե ապրում է Քրիստոսով. եթե ապրում է Քրիստոսի մեջ. ի՞նչ կարող է անել. եթե ոչ՝ ուրախանալ. բերկրել ու ցնծալ: Եվ քրիստոնյան երբ ընդունում է Քրիստոսին և ապրում Քրիստոսով. չի կարող լինել տրտում. չի կարող լինել տրտմության. թախծի ու տխրության մեջ. այլ կարող է լինել միայն ուրախ. ցնծալ և բերկրել այնպես. ինչպես Մովսեսը. որ երբ բարձրացավ և Սինա լեռան վրա տեսավ Աստծո լիառքը. իջնելիս իր երեսը շողում էր. շողում էր ոչ միայն Աստծո տեսությունից. այլ նաև Աստծուն տեսնելու իրողության մեջ թաքնված ցնծությունից և ուրախությունից:

Եվ երբ Պողոս Առաքյալն ունեցավ այդ ուրախությունը՝ ուրախությունը Քրիստոսին ունենալու. չէր կարող այդ գանձը պահել միայն իր համար: Եվ եկավ հաջորդ ուրախությունը՝ քարոզելու ուրախությունը. իր ունեցածը բաժանելու ուրախությունը. որովհետև քրիստոնյան չի կարող իր ունեցածը պահել իրեն ո՛չ նյութական և ո՛չ հոգևոր իմաստով. որովհետև քարոզելը ոչ թե պարտականություն է քրիստոնյայի համար. այլ՝ կյանք և ուրախություն: Եվ Պողոս Առաքյալն սկսեց քարոզել:

Ունեցավ այդ քարոզելու ուրախությունը. և քարոզելու ուրախությանն անմիջականորեն հաջորդեց դեպի Քրիստոս մարդիկ շահելու ուրախությունը: Եվ երբ տեսավ. թե ինչպես հյուսիսում և հարավում. արևելքում և արևմուտքում ունեցավ հետևորդներ. որոնց հայացքը դարձրեց դեպի Աստված և դեպի Քրիստոս. ուրախացավ. ցնծաց և բերկրեց մեկ անգամ ևս՝ տեսնելով. որ կարողացել է որոշակի մարդկանց. որոշակի հավատացյալների դարձնել դեպի Աստված: Եվ իր ամբողջ ճանապարհորդությունների ընթացքում հյուրընկալվեց և հյուրընկալեց. մտավ ուրիշների բաց դռներից և իր դուռը միշտ բաց եղավ ուրիշների առջև: Հյուրընկալության և հյուրընկալվելու ուրախությունը նույնպես վայելեց՝ քրիստոնյա համայնքներ հաստատելով. քրիստոնյաների հետ լինելով. մշտապես շփվելով և համայնք հիմնելով. քրիստոնեական եղբայրական մթնոլորտ ստեղծելով. ցնծաց և ուրախացավ միասիրտ լինելու իրականությամբ՝ ըստ սաղմոսերգուի խոսքի. թե՝ ի՞նչ բարի է և վայելուչ. երբ եղբայրները բնակվում են միասին: Եվ մենք կավելացնենք՝ որքա՞ն գեղեցիկ է. երբ եղբայրներն ու քույրերը ապրում են միասին՝ Քրիստոս Հիսուսով:

Եվ տեսավ Պողոս Առաքյալն այդ ամենը. տեսավ և ուրախացավ: Եվ երբ հասավ Հռոմ արդեն որպես դատապարտյալ. որպես մեղադրյալ՝ կանգնելու համար կայսեր ատյանի առջև. լսեց իր ցանած սերմերից ստացված արդյունքի մասին. լսեց. որ իրենից հեռու ստեղծված քրիստոնյա համայնքներն ապրում են քրիստոնեական ոգով. իմացավ նրանց լավ. բարի լուրերը. իմացավ նաև. որ իր ցանած սերմերը պտուղ են տալիս մեկի փոխարեն վաթսուն և մեկի փոխարեն հարյուր: Իրենից մոռոններով հեռու հաստատված համայնքները ծաղկում էին. պտղաբերում էին. մեծանում էին Քրիստոսով. և դարձյալ Պողոս Առաքյալը ցնծալու և ուրախանալու առիթ ունեցավ: Եվ այսքանից հետո. երբ իր ամբողջ գործունեության մեջ իրեն նաև տառապանքը. հալածանքը և նախատինքը բաժին ընկավ. երբ Հռոմում սկսեց սպասել իր մահվան դատավճռի իրականաց-

մանը, այդ բոլոր ուրախություններին ու ցնծություններին եկավ գումարվելու նաև Քրիստոսի համար հալածվելու և տառապելու ուրախությունը:

Պողոս Առաքյալի նամակների մեջ բազմիցս կարդում ենք, որ ինքն ուրախ է և ցնծում է հանուն Քրիստոսի հալածվելու և տառապելու համար, որովհետև այդ տառապանքի և հալածանքի միջոցով է, որ իրապես ինքն իր մեջ կարողանում է հաստատել և վավերացնել Քրիստոսի նկատմամբ իր սերը, իր նվիրումը և իր հավատարմությունը: Եվ կարողանում է հալածանքով ու տառապանքով նույնպես ուրախանալ, ցնծալ և բերկրել: Եվ այս բոլոր ուրախություններից ու ցնծություններից ոչ մեկը, սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր, երկրային չէին, նյութական չէին, կապված չէին այս աշխարհին և այս նյութին, այլ վերերկրային էին և երկնային, որովհետև այս բոլոր ուրախությունները հիմնված էին անանցանելի, անանձնական, երկնային իրողության վրա, որ է՝ Աստված: Որովհետև Պողոս Առաքյալի հույսը երբեք այս աշխարհը չէր, այլ այս աշխարհից դուրս գտնվող մի իրականություն, որին մենք անվանում ենք Աստված, և Ով մեզ հայտնվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով: Այս ուրախությունն ունենալով և այս ամբողջ ուրախության, խնդության փորձառությունն ունենալով, ի՞նչ պետք է աներ Պողոս Առաքյալն իր շղթաների մեջ, եթե ոչ մեկ անգամ ևս ցնծար, խնդար և բերկրեր, և այո՛, աղոթեր ուրիշների համար: Աղոթեր իր հավատացյալ եղբայրների և քույրերի համար և իր սրտում երբեք կսկիծ ու դառնություն չունենար, այլ ուրախանար, խայտար և ցնծար իր հոգու մեջ, որովհետև բարվոք պատերազմը պատերազմել էր, հաղթել էր, և իրեն մնում էր միայն փառքի պսակը:

Ուրեմն, սիրելի եղբայրներ և քույրեր, ի՞նչ է քրիստոնեական խնդությունը, եթե ոչ այն ամենը, ինչ որ թվարկեցի Պողոս Առաքյալի կյանքի հետ կապված: և ուրեմն սա է քրիստոնեական խնդությունը, քրիստոնեական խնդությունը չի կարող կապված լինել ժամանակավոր, անցողիկ երևույթների հետ, քրիստոնեական խնդությունը չի կարող միայն առարկայական և նյութական իրողությունների հետ կապված լինել: Եթե կապված լինի միայն նյութի և առարկայականի հետ, անցողիկ է: Ինչպես նյութն է անցնում, այնպես էլ կանցնի մեր խնդությունը և մեր ուրախությունը: Ուրեմն, Սուրբ Պողոս Առաքյալի օրինակով՝ ապրենք այս քրիստոնեական խնդությունն իրապես, որ հաստատված է Աստծո և հաստատված է մեր Տեր Հիսուս Քրիստոսի վրա: Ապրենք, և թող Աստված Իր անսպառ բարիքները, երկնային շնորհները բաշխի մեզ, որպեսզի այդ երկնային բարիքներով նույնպես ուրախանանք, ցնծանք և հրճվենք:

Շնորհք, սեր և խաղաղություն եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեսյանդ ամեն:

ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ Ե. ՎՐԴ ՆԱՋԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(29 Նոյեմբերի, կիրակի, 1998 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:
«Գնացէք այսուհետեւ. աշակերտեցէք զամենայն հեթանոսս»:

ՄԱՏԹ. ԻԸ 19

Սրանից հետո գնացեք եւ քարոզեցեք աշխարհի բոլոր ժողովուրդներին. քարոզեցեք Քրիստոսի հարության ավետիսը. քարոզեցեք. թե Աստված մարդիկ այնքան սիրեց. որ Իր Միածին Որդին իսկ տվավ նրանց համար. քարոզեցեք. որ լույսը ավելի զորավոր է. քան խավարը. եւ հոգին՝ քան մարմինը:

Քրիստոս Իր առաքելության շատ կարճ ընթացքում. շուրջ երեք տարի. փորձեց ուշի կանգնեցնել ժողովրդի թեկուզ մեկ փոքրիկ հատված՝ բացատրելով նրանց Իր Աստվածային կենաց պատգամները: Եվ ահա նրանցից շատ փոքր մի խումբ իսկապես վերջիվերջո հասկացավ եւ ըմբռնեց Քրիստոսի բերած Աստվածային Պատգամը: Առաքյալները. որ թվով ընդամենը տասներկուսն էին. մեզ պես սովորական մարդիկ էին. ոչ շատ բարձրագույն կրթություն ստացած: Նրանցից շատերը ձկնորսներ էին. ոմանք՝ մաքսավորներ: Սակայն այս պարզ մարդիկը Հիսուս ընտրեց. որովհետեւ Աստված. ինչպես երբեմն մեր Հայրերից ոմանք կըսեն. ամենապարզ մարդիկը մասնավորաբար կվերցնե. որպեսզի ցույց տա Իր հզորությունը. թե սովորական մարդոց միջոցով ինչ մեծ գործեր Տերը կրնա կատարել տալ: Եվ այս նույն առաքյալները. որոնք տկարացած մարդկային իրենց տկարություններով. թոյլ եւ փախած էին. հատկապես խաչելության ժամանակ. տակավին չասած. որ ինչքան չէին հասկացել Հիսուսի բերած պատգամը այդ միջոցին. երբ Հիսուս քանիցս գտնում եւ բացատրում էր նրանց: Սակայն այդ նույն առաքյալները հանկարծ. հարության լույսով հետզհետե զորացած եւ հզորացած. սկսան քով-քովի գալ եւ ապրիլ այն. ինչ Քրիստոս իրենց ասել էր:

Քրիստոս համբարձման այդ օրը տվավ առաքյալներին այդ իշխանությունը. քանի որ հասել էր ժամանակը այլեւս տալու: Նրանք վերցրել էին այնքան. ինչքան կարողացել էին. եւ ժամանակը հասել էր այլեւս՝ գնալու եւ պատգամելու քրիստոնեական հավատքը բոլոր ժողովուրդներին: Ինչքան կարեւոր է ղեկավարի համար. երբ իր շուրջ ընտրում է անձինք. որոնք իր գործակիցները պիտի լինեն: Պատկերացրեք մի պահ. եթե Քրիստոսի շուրջ եղած տասներկուսը. մի քանի կանայք եւ Յուր յոթանասներկու աշակերտները. թվով ոչ ավելի. քան որքան մարդ կա այսօր Տաճարում. հարյուրից ոչ ավելի: Եթե այս մարդիկ ճախողվեին իրենց

առաքելության մեջ. Քրիստոսի պատգամը այսօր երկու հազար տարիներ շարունակ. սերունդե-սերունդ չէր փոխանցվելու ամբողջ աշխարհով մեկ. աշխարհի չորս ծագերով բոլոր ժողովուրդներին: Հետեւաբար ինչքան կալուեւոր է. որ Հիսուս ընտրել էր ճիշտ մարդկանց. ճիշտ առաքյալների. եւ դրա համար նրանք գնացին՝ քարոզելու Քրիստոսի բերած պատգամը:

Երեկ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում էր նրանցից Թադեոսի եւ Բարդողիմեոսի հիշատակը: Մենք զմեզ կոչում ենք Առաքելական Եկեղեցի: Դրանով ուզում ենք շեշտած լինել եւ ընդգծած. որ Քրիստոսի Աստվածային լույսը Հայաստան աշխարհ մուտք գործեց առաջին իսկ դարուց՝ Թադեոս եւ Բարդողիմեոս առաքյալների միջոցով: Եթե Նոր Կտակարանը բանալու լինեք. այնտեղ շատ քիչ բաներ կան այս առաքյալների մասին եւ ընդհանրապես նրանց գործունեության մասին գրեթե բան չկա: Սակայն մեր ավանդությունը քաջաբար գիտե. թե Թադեոս եւ Բարդողիմեոս առաքյալները ուղղակի Քրիստոսի աստվածախոս բերնից եւ հոգուց լսված պատգամները առին եւ բերին. բերին այն երկիրը. որ իր Արարատով Նոյյան տապանի համար կառջեւեր հույս մարդկության փրկության համար: Աստված չմոռացավ նաեւ այս երկիրը: Թադեոս եւ Բարդողիմեոս շատ ուրիշ երկիրներ էլ քարոզեցին: Նրանք ի վերջո եկան այս երկիրը՝ Աստուծո ձեռքով որդեգրելու. մեզ ճշմարիտ Աստուծո որդիներ եւ զավակներ դարձնելու համար: Թադեոս եւ Բարդողիմեոս իրենց արյունը տվին: Հայաստանում այդ օրերուն խառնակ վիճակ էր առաջին դարուն: Կրոնական իմաստով Արեւելքի եւ Արեւմուտքի կրոնները խառնվել էին իրար. սակայն առաքյալները չվախեցան: Նրանք քաջ գիտեին պատգամախոսը լինել Աստուծո. որովհետեւ գիտեին. թե ինչպես զգենուլ զՔրիստոս. գիտեին ինչպես Քրիստոսի համար իրենց կյանքը տալ: Եվ այդ իրենց արյունը իզուր չանցավ: Գտնվեցին զավակներ եւ դուստրեր. որոնք որդեգրեցին. վերցրին այդ կրոնքը. իրենց կյանքին ուրույն ձեւը դարձրին: Սանդուխտներ եւ Ռգուհիներ եւ շարքը նրանց բավականին երկար է՝ մինչեւ Գրիգոր Լուսավորիչ: Եվ կուգար այստեղ. ուր արդեն Թադեի Աթոռը գոյություն ուներ: Այնպես որ բոլորովին խոպան հողի վրա չէր. որ Քրիստոս իջեցրեց Իր տեսիլքով Գրիգոր Լուսավորիչ այս հողի վրա: Այս տեսիլքը հասկնալու եւ ըմբռնելու համար նախապատրաստված հող պետք է լիներ Հայաստան աշխարհում: Եվ շուրջ երեք դարեր. կամաց-կամաց. կաթիլ առ կաթիլ հայ ժողովրդի մեջ ծաղկեց քրիստոնեական լույսի պատգամը:

Հայ ժողովուրդը երկար ճանապարհ է անցել. կրոնական հավատքի փորձառության մի ճանապարհ. որը երկու հազար տարի է լինելու շուտով. սիրելի ժողովուրդ: Եվ եթե նայեք. ի՜նչ հերոսապատում կյանք է եղել մեր ժողովուրդի կյանքը. հոգեւոր կյանքը: Ոչ միայն Գրիգոր Լուսավորիչ Քրիստոս Միածին Որդին իջեցրեց այս հողը սրբագործելու. այլ ժողովուրդը նվիրագործելու համար: Տակավին Նարեկացին Աստվածամայրը իջեցրեց Վանա լճի ափին. Քրիստոսին կառքով վայր բերավ Մասյաց սարից: Ի՜նչ տեսիլքներ. ի՜նչ թռիչքներ ունեցան մեր Հայրերը. եւ սերունդե-սերունդ վկաների հերոսական դրվագներով պատմության մի ոսկի շղթա. մինչեւ

այս դարի սկիզբը: Եվ տակավին ես պիտի ավելացնեի եղեռնի օրերին. երկու սերունդ առաջ ընդամենը մեր նախնիքի մեջ հավատքը այնքան զորավոր էր. որ ամեն ինչ զոհեցին հանուն հավատքի. հանուն քրիստոնեական ճշմարտության եւ արդարության եւ չվախեցան մահից. որեւէ մեկ տեսակ մահից՝ ջուր էր. թե կրակ. սուր էր. թե շղթա. թե նիզակ:

Այսօր մենք նշում ենք Թադեոս եւ Բարդողիմեոս առաքյալների տոնը: Պարզապես անցյալի մի իրողությո՞ւն է. ինչ-որ երկու հազար տարիներ առաջ եղած մի դե՞պք է. դրա համա՞ր ենք հիշում: Եթե պարզապես դրա համար ենք հիշում. մենք մեզ ենք խաբում: Մենք հիշում ենք նրանց եւ նրանց միջոցով քրիստոնեական այն հավատքը. որ մեզ հասցրեց երկու հազար տարվա այս շեմին: Մենք. հիշելով նրանց. ուզում ենք ասել. որ մենք հարազատ զավակներն ենք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո: Բայց մի՞թե այդպես է: Այսօր եթե դուրս նայենք մի պահ. կտեսնենք. որ կյանքը բոլորովին տարբեր պատկեր է ներկայացնում: Մենք նույն ժողովո՞ւրդն ենք արդյոք. նույն Եկեղեցի՞ն ենք արդյոք: Մենք պետք է որ ահազանգ հնչեցնենք այսօր: Գուցե նույնիսկ որոշ չափով էլ ուշ է՝ այս ահազանգը հնչեցնելու: Հարատեւորեն պետք է հնչի այդ ահազանգը՝ հանուն մեր ժողովուրդի հոգեւոր արքնության. մի ժողովուրդը. որ ամեն ինչ զոհեց հանուն հավատքի: Արդո՞ք մենք այսօր նույն ժողովուրդն ենք: Նայե՛ք. ամեն ինչ վաճառքի է հանված՝ ամենավերին իշխանությունից մինչեւ ամենահասարակ մարդը՝ փողը տվեր եւ ամեն ինչ վաճառքի է հանված: Այդպիսի քրիստոնյա ժողովուրդ չի կարող գոյություն ունենալ: Պետք է մենք արթնանանք մեր թմբիրից: Չգիտեմ. երբեմն ժողովուրդներ կան. որոնք ապրում են: Ինչպես մարդը ծերանում է. ժողովուրդներն էլ ծերանում են: Ի՞նչ է. ծերացե՞լ ենք այլեւս. այլեւս հոգեւոր ապրում չունե՞նք. տալիք չունե՞նք այլեւս: Եթե իսկապես այդպես է. ուրեմն մենք այլեւս մեռած ժողովուրդ ենք. դատապարտված ենք մահվան: Ինչքան գեղեցիկ շենքեր ծնվեն. ինչքան էլ հզոր բանակ ունենանք. եթե հոգեւոր ներքին ապրումը գոյություն չունի. եթե մենք ուրացած ենք զԱստված. ուրեմն մեր վերջը եկել է այլեւս: Ես չեմ ուզում հավատալ. որ այսօրվա առակի նման չորացած մի թզենի ենք մենք: Եթե չորացած ենք. ուրեմն պետք է կտրվենք. այրվենք. մոռացվենք այլեւս:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ. պետք է. որ մենք անդրադառնանք մեր քրիստոնեական արմատներին: Հեռուստատեսիլը քացեք. լուրերը նայեցեք: Ի՞նչ ահավոր վիճակ է: Ո՞ւր է այս ժողովուրդի հոգեւոր այն ամուր խարիսխը. ընտանեկան սրբությունները: Ի՞նչ պատահեց ընդամենը երկու սերունդի ընթացքում: Մայրը իր զավակին է սպանում. հայրը իր որդին է սպանում. չգիտեմ. այսպիսի հասկացողություններ. որոնք անհասկնալի են. ո՞ւր են այս սրբությունները. ո՞ւր է Աստծո վախը մեր մեջ: Չի կարելի այսպիսի սերունդ դաստիարակել. չի կարելի անտարբեր անցնել. երբ մեզ մոտ մեր հարազատ եղբայրները. մեզ պես հայ մարդիկ. որոնք տարրական կյանքի պետքերը չունեն. իսկ ուրիշներ մսխումների մեջ են: Մենք երբեք հարստության. ունեցվածքի դեմ չենք: Բայց այդ ունեցվածքը

մսխելու դեմ ենք. երբ կարելի է այդ ունեցվածքով բարիք կատարել: Վերջի-վերջո այս ժողովուրդը եթե գնա, հարուստն էլ կգնա հետը. զորավորն էլ կգնա. բոլորն էլ կգնան: Հեղեղը կքշի եւ կտանի մեզ բոլորիս: Սակայն պետք է, որ մենք արթնանանք՝ եթե կուզենք, որ իսկապես որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի նշենք երկու հազար ամյակը. էլ չեմ ասում 1700-ամյակի համար, և թե ամեն մի չնչին բան, չգիտես թե ինչի համար 1700-ամյակին է նվիրվում այն աստիճան, որ էժանացնում են այդ իրողությունը: Սակայն կարեւոր է, որ մենք բանանք մեր սրտի խորանները. սակայն կարեւոր է, որ մենք անդրադառնանք, թե ի՞նչ պետք է անենք որպես քրիստոնյա, ինչպե՞ս պետք է ապրենք: Ո՞վ է ասում, որ հեշտ է քրիստոնեավայել կերպով ապրելը. ո՞վ է ասում, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զավակ լինելը հեշտ է: Բոլորս էլ մկրտվել ենք մեր մանկության շրջանում: Սակայն դա միայն անդամագրվելու մի տոմս է մեզ համար: Մեր կյանքով պետք է մենք փաստենք, որ մենք նույն ժողովուրդն ենք. նույն հավատացյալ ժողովուրդը, որուն համար ո՞չ հուրը, ո՞չ սուրը եւ ո՞չ թուրը չեն կարող խախտել մեր նախնիների հավատքից, որ մեր հավատքը կենդանի հավատք է, միայն մեր նախնիների հավատքը չէ, Սուրբ Սահակի, Սուրբ Մեսրոպի, Գրիգոր Լուսավորչի, անցյալ օրերի հավատքը չէ, այսօրվա ապրող մեր հավատքն է:

Այսօր ոչ բոլորովին պատահական կերպով Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի սաներ կուգան՝ Ս. Հաղորդություն առնելու, ավելի քան հարյուր սաներ հաղորդվելու, վերանորոգելու իրենց քրիստոնեական ուխտը: Վերջիվերջո Գեւորգյան Ճեմարանը այն սիրտն է, այն դարբնոցն է, որից պետք է ելնեն հովիվներ: Մենք պետք է աղոթենք առ Աստված ի խորոց սրտի, որ մեզ քաջ, նվիրված, երիտասարդ հովիվներ նվիրի: Նրանք ձեզի պիտի գան վերջիվերջո, նրանք ձեր ամեն մեկի զավակներն են վերջի-վերջո: Դուք եք առաջին դաստիարակությունը տվել նրանց, սիրելի մայրեր, իրենց ծնված օրից ձեր կաթով, եւ ինչպես որ դուք սնուցել եք, միայն այդ ձեւով մենք կարող ենք ավելացնել: Եթե առաջին քարը ծուռ դրված է, այդ շենքը ծուռ կմեծնա եւ կփլի: Եկեղեցին առանձին, ուրույն կառույց մը չէ, Եկեղեցին ժողովուրդի հայելին է, անդրադարձնում է այն, ինչ մեր ժողովուրդն է այսօր: Եվ մեր հոգեւորականներն էլ նույնն են: Մեր ժողովուրդի վերջը չի եկել, աղոթենք եւ մաղթենք, որ Աստված մեզ կտա, ինչպես հին ժամանակներում հրեա ժողովրդին Երեմիա մարգարեներ՝ Իր խոսքը ասելու, տանելու եւ սփռելու ժողովուրդին, արդարությունը եւ ճշմարտությունը ասելու, ինչքան էլ դժվար լինի, ինչքան էլ որ ուրիշների համար հաճելի չլինի դա: Մենք քաղցրությունը պետք է ունենանք եւ այդ քաղցրությունը կարող է գալ մեզ Քրիստոսի Խաչից, այն Խաչից, որ առաքյալները բերեցին Հայաստան աշխարհ, այն Խաչից, որով զորություն ստացան մեր բոլոր Սրբերը՝ հայտնի եւ անհայտ, շուրջ 2000 տարիներ: Հետեւաբար, սիրելի հավատացյալներ, ես աղոթում եմ ի խորոց սրտի, որ Աստված իսկապես մեզ քաջ հովիվներ տա, որովհետեւ Սոդոմ-Գոմորի նման եթե մի քանի տասնյակ հավատացյալներ չլինեն, մարդիկ չլինեն,

որոնք իրենց կյանքը պատրաստ լինեն տալու քրիստոնեական հավատքի համար. այն ատեն քրիստոնեությունը այլևս գոյություն չի կարող ունենալ. եւ Հայ Առաքելական Եկեղեցին առաքելություն ունենալուց դադրած կլինի այլևս: Ես ձեզ մարտահրավերի եմ մղում. մարտակոչ եմ անում՝ զինվեցեք եւ պատսպարվեցեք Աստվածային խոսքերով: Թող Աստված ձեզ միշտ զորավիգ լինի. որպեսզի ձեր դժվարությունների մեջ չկքեք: Միշտ հիշեցեք. մեր ամեն առաքյալներն էլ. մեր բոլոր Սուրբերն էլ իրենց դժվարությունները ունեցան. իրենց կքելու. իրենց սայթաքելու առիթները ունեցան. սակայն նայեցին այդ Խաչին եւ այդ Խաչից զորություն վերցրին: Աղոթեցին հավատքով եւ ոտքի կանգնեցին: Բայց ոչ միայն իրենք ոտքի կանգնեցին. այլ նաեւ ոտքի կանգնեցրին իրենց շրջապատի ժողովուրդին իրենց ժամանակաշրջանում եւ իրենցից հետո նաեւ: Հետեւաբար. դուք որպես քրիստոնյաներ ոչ միայն Խաչին ապավինելով ոտքի պիտի կանգնեք հավատալով լույսի հաղթանակին ընդդեմ խավարի. եւ արդարության հաղթանակին՝ ընդդեմ անարդարության, այլև նայեք ձեր շուրջինների. նրանց պետք է լուսավորեք այդ նույն լույսով: Ես մաղթում եմ. որ դուք ունենաք այդ քաղցրությունը: Ես ուզում եմ տեսնել. որ Հայ Առաքելական Եկեղեցին 2000-ամյակը կմտնե ոչ որպես հեթանոս ժողովուրդ: Վերջի-վերջո Եկեղեցին ձեզանից ամեն մեկն է. Եկեղեցին միայն այս կառույցը չէ եւ ոչ էլ եկեղեցականները: Վա՜յ մեզ. վա՜յ մեզ. եթե մենք ակարանանք. սայթաքինք եւ մեր հույսը կորսնցնենք: 2000 տարվա այդ ամբողջ զոհողությունները. մեր Սուրբերի չարչարանքները. տեսիլքները. մտքի եւ հոգու թռիչքները իզուր կլինեն: Ոտարի համար միայն պատմություն կարող է լինել հայ ժողովուրդի անցյալը: Միայն մենք կրնանք հայորեն եւ հայաբար զգալ Հայ Առաքելական Եկեղեցու հավիտենականությունը. եւ այդ հավիտենականության ոսկե շղթան դուք եք եւ ձեզանից ամեն մեկը:

Կմաղթեմ. որ Աստված մեզ բոլորիս զորավիգ լինի այս դժվարին օրերին: Որպես քրիստոնյաներ. հավատացեք. անելիք շատ-շատ բաներ կան. բայց ամենեն տարրականից պետք է սկսել: Նախ մենք զմեզ մաքրենք: Ամեն մեկ անձը իր անձ-խորանը բանա. սրտի խորանը: Թող առաքյալների քարոզը նախ իրենց հոգիների մեջ հնչի եւ հետո անդրադառնա բոլոր իրենց շրջապատող այն մարդկանց. ում իրենք հանդիպում են:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեսնդ. ամէն»:

ԳԱԼՈՒՍՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(25 հոկտեմբերի, կիրակի, 1998 թ.)

ՀԱՒԱՏՔ

Կրօնքը իր էութեան մէջ խտացուած հաւատքի ոյժն է, որու կեանք տուողը եւ կենսատրողը Սէրն է: Հաւատք եւ Սէր, այս երկուքի հաղորդակցութիւնէն բխող ճառագայթներն են, որ կը լուսաւորեն աշխարհն ու կեանքը: Առանց հաւատքի, կեանքը կը դառնայ լոյնուն, անիմաստ, անհամ, աւելորդ: Իսկ հաւատքը պայմանաւորուած է Սիրով, առանց սիրոյ հաւատքը կը դառնայ անիմաստ, որովհետեւ Սէրն է, որ կ'արդարացնէ Անոր ներկայութիւնը եւ կը զօրացնէ Անոր գոյութիւնը: Որեւէ անհատի մէջ, երբ այդ երկու ոյժերը չեն միացած, միաձուլուած կրօնական եւ հոգեւոր կեանքի մէջ, անոր զարգացումը կը մնայ թերի, հեռու լրացնելէ Աւետարանի մէջ պատգամուած հոգեւոր կեանքի պատրաստութիւնը:

Հաւատքը կեանքի մեծագոյն ոյժն է, այս անյաղթ ոյժով է, որ աշխարհը տեսած է յաղթութիւններ, կատարուած են մեծ, սխրալի գործեր: Հաւատքի ոյժով է, որ մեծ մարդիկ կատարած են մեծ գործեր, որոնք ամբողջ մարդկային ընկերութեան ճակատագրին վրայ ունեցած են բարերար ազդեցութիւն: Ներկայիս մեր առօրեայ կեանքին մէջ մեզի պարգեւուած դիւրութիւնները ու գիտական բարիքները արդիւնք են հաւատքի իրականութեան, որ ուղղակի կը խօսի հոգիին ու սրտին:

Խորհիլը ու տեսնելը՝ մէկ խօսքով տրամաբանելը առանձին երբէք պիտի չկարենար ստեղծել հասարակաց կեանքը եւ կանոնաւորել ընկերային յարաբերութիւնները: Եթէ կրցած է մարդս հանգոյց առ հանգոյց քակել բնութեան գաղտնիքները եւ օգտագործել անոր բարիքները, եթէ կրցած է տիրապետել երկրագունդին, այդ արդիւնք էր ոչ միայն իր ջանքին կամ մտքի թռիչքին, այլ մանաւանդ անոր ունեցած ամուր, հաստատ հաւատքին:

Մեր ապրած կեանքը խորհուրդ մըն է, ուր մեր զգայարանները երբեմն կը խաբեն մեզ, մեր միտքը, բանականութիւնը երբեմն անկարող կ'ըլլան տիեզերական կեանքի շարժումները ամբողջութեամբ պարզել մեր առջեւ: Այս պարագային մտքին օգնութեան կուգայ հաւատքը, որ անկէ տարբեր, բայց շատ աւելի ապահով կ'ընդգրկէ ճշմարտութիւնը: Հաւատքն է, որ հոգիի նուիրումով կ'աւարտէ բանականութեան սկսած գործը:

Սուրբ Գրոց Հին Ուխտին մէջ մեր աչքերուն առջեւ կը բարձրանայ Աբրահամը, որ կոչուած է Հայր Հաւատոյ: Աստուծոյ վրայ խոր հաւատք ու սէր սնուցանող այս նահապետը չվարանեցաւ իր սուրը մխելու իր սիրտին՝

իր սիրոյն մէջ Բարձրեալին կամքին հնազանդելու համար: Աբրահամ առանց վարկեան մը իսկ դողդողալու. հաւատոյ սեղանին վրայի դանակը մատեցուց իր որդւոյն պարանոցին: Հին ու Նոր Ուխտին մէջ մենք կը հանդիպինք հաւատքի դիւցազուններու. «Որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդարութիւն, հասին աւետեաց, խցին զբերանս առիւծուց, շիջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան ի բերանոյ սրոյ, զօրացան ի տկարութենէ, եղեն զօրաւորք ի պատերազմի» (Եբր ԺԱ 33-34): Քարկոծուեցան, սղոցուեցան, փորձուեցան, սրով սպաննուեցան, բայց մնացին կենդանի հաւատացեալք Աստուծոյ:

Քրիստոնէական վարդապետութիւնը հիմնուած է հաւատքի վրայ. որու հիմնաքարն է Սէրը: Յիսուս Իր ամբողջ քարոզչութիւնը հիմնած էր հաւատքի հասկացողութեան եւ կարեւորութեան վրայ. անհաւատներ կոչած էր բոլոր անոնք. որոնք արտաքին առարկաներու տեսանելի նշաններու վրայ կ'ուզէին հիմնել իրենց հաւատքը. «Եթէ Մովսիսի եւ Մարգարէից ոչ լսեն. եւ ո՛չ եթէ ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւանեսցին» (ՂՈՒԿ. ԺԶ 31):

«Կենդանի եմ այսուհետեւ ո՛չ ես. այլ կենդանի է յիս Քրիստոս» (ԳԱՂԱՏ. Բ 20). կ'ըսէ առաքեալը. որ կը նշանակէ. թէ ով որ Յիսուսի հետ ներքնապէս միացած է. անոր հաւատքը ժայռի մը նման հաստատուն է. որու ստորոտը պիտի գան ու փշրուին տարակոյսի եւ մոնչող կիրքերու վայրագ ալիքները: Կեանքը պէտք ունի. նորոգութեան. հոգեւոր այս նորոգումի հիմը Տիրոջ հետ եղած կենդանի հաղորդակցութիւնն է. անկեղծ սիրով եւ ճշմարիտ հաւատքով: Քրիստոնեան պարտի Յիսուսի պատկերը դրոշմել իր հոգիին մէջ. որպէսզի փորձութիւնը չկարենայ հոն մտնել:

Մկրտութեամբ մեզի Աւազանին շնորհած քրիստոնեայ անունը արժէք չունենար ու չարդարացներ իր բուն հասկացողութիւնը. եթէ մենք Քրիստոսի ոգիով եւ օրինակով չպայմանատրենք մեր ներքին հոգեկան կեանքը: Փարիսեցիին ու մաքսաւորին դրուագը եւ մեր Տիրոջ տուած վճիռը կասկած չեն ձգեր այդ մասին:

Փարիսեցին. հակառակ իր օրինապահութեան. չկրցաւ արդարանալ. մինչ անդին մեղաւոր մաքսաւորը կուրծքը կը ծեծէր. կը խոստովանէր իր մեղքերը՝ զղջումի տաք արցունքներ թափելով:

Հաւատքը սակայն իմաստ չունի եւ անարժէք է. երբ անոր չրկերանար գործը. քրիստոնէի մը կեանքը կը ծաղկի. կը պտղաբերի. երբ հաւատքի լոյսը կը ճառագայթէ անոր բարի գործերու մէջէն: «Հաւատք առանց գործոց մեռեալ են». ինչպէս կ'ըսէ Սուրբ Գիրքը:

Իսկապէս. ի՞նչ իմաստ ունի. երբ «կը հաւատամ» կ'ըսես. բայց անդին եղբայրդ. քոյրդ կամ ազգականդ մերկ է. կամ անօթի. երբ բարեկամդ կամ դրացիդ տառապանքի մէջ է. ու դուն արցունք մը չունիս անոր հանդէպ: Երբ աղքատին. տնանկին. հիւանդին չես երկարեր ձեռքդ. գոնէ բարոյական օգնութիւն մը կամ մխիթարելու խօսք մը չունիս: Ի՞նչ արժէք ունի հաւատքդ. երբ քո բոլոր գործերը անձնասիրութեանդ ու շահախնդրութեանդ կը ծառայեն: Հաւատքի կեանքը երբ զարգանայ իր հոգեւոր ճամբուն մէջ. կ'ընդարձակուին ու կը լայննան իր պաբտականութեան սահմանները:

Գերագոյն բարիին հասնելու համար պէտք է գիտակցութեան մէջ խօսող բարոյական օրէնքը իրականացնել: Ներքին հոգեկան ազնուացման, բարոյական կատարելութեան նախապայմանն է սիրոյ եւ հաւատքի յարատեւ, եռանդուն պայքարը նոյն ինքն մեր եսասիրութեան դէմ: Հաւատքը առանց գործի կը դառնայ փափաք մը՝ առանց կամքի, որովհետեւ տարբեր բան է կամենալը, ու շատ տարբեր բան մըն է կարենալը կամ կատարելը: Մարդիկ ընդհանուր առմամբ բարիին կը ցանկան, նոյնիսկ չարերն ալ ուզիղ կը դատեն իրենց դիտատրութիւնները, սակայն քիչերն են, որ կ՚իրագործեն ու կը կենսատրեն իրենց ազնիւ փափագները:

Հոգեւոր կեանքը յարատեւ պայքարի դաշտ մըն է, պատերազմական ճակատ մը, որ պարտութիւն չի տեսներ այնքան ատեն, որ սուրբ սիրտը զրահապատուած հաւատքով կը մղէ չարին դէմ տեւական պայքարը: Աստուծոյ ընդունելի զոհերը տառապած եւ խոնարհ էակներն են, խաւարի դէմ վշտացած, խորտակուած սիրտերն են: Ասոնցմով է, որ Տէրը բարիք պիտի ընէ իր ընտրեալ ժողովուրդին, որովհետեւ սրբութեան եւ խոնարհութեան մէջ կը ծլի, կը հասուննայ այն երկնային զօրութիւնը, որ մարդը կարողանայ հրեշտակային աշխարհ փոխադրել:

Քրիստոնէական կեանքը իր լրիւ հասկացողութեան մէջ աշխարհը յաղթահարելու չափ հզօր կը զգայ ինքզինք: Անով կ՚իրագործուի բարիի յաղթութիւնը, ու հաւատքը իր խոր արմատները կը նետէ ներքին գիտակցական հաստատուն եւ իրական բարձրութիւն մը նուաճելու համար: Քրիստոնէական լոյսի աղբիւրէն կը բխի այն անշէջ ջերմութիւնը, այն ներքին կրակը, որ համբերութեան եւ արդարութեան կողքին ոյժ կը ներշնչէ մարդուն եւ ուրիշին օգնելու նուիրումի եւ զոհողութեան ոգի: Ստեղծագործութենէն մինչեւ այսօր շատ բան փոխուած է, փոխուած են աշխարհն ու բնութիւնը, փոխուած է ինքն ալ՝ մարդը: Աշխարհի, կամ աւելի ճիշտը կեանքի ներկայ իրականութիւնը յուսահատեցնելու չափ կը տագնապեցնէ ու կը խռովէ մարդու սիրտը: Ամէն տեղ, ուրկէ ճակատագրի դժբախտութիւն մը դուրս կուգայ, հոն խաւարը կը ծածկէ հոգին, կեանքին կորովը եւ հաւատքը: Կեանքը շրջափակուած է փորձութիւններով, աշխարհը չարին որսն է, կեանքը կարճ, ազազուն ու դիւրաբեկ, ուր մահը որքան իրական, նոյնքան ալ անողորմ՝ կը քաշէ, կը բաժնէ քեզմէ ինչ որ սիրելի է, տուն, ընտանիք, բարեկամ, ու արժանաւորը կը դառնայ անարժէք, ուր առաքինութիւնը չի պսակուիր, ուր բարին եւ գեղեցիկը չեն տիրեր իրենց ամբողջ ոյժովը:

Հաւատքն է, որ պիտի արժանանայ Աստուծոյ տեսութեան, «Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք՝ զի նոքա զԱստուած տեսցեն» (ՄԱՏԹ. Ե 8), Լերան քարոզին «երանի»-ներուն գոհարն է այս պատգամը, որ իր մէջ կը խտացնէ յաւիտենական կեանքի ճառագայթող լոյսի ճամբան: Մաքուր սիրտն է Աստուծոյ հայելին ու գերագոյն երանութիւնը՝ Աստուածատեսութիւնը տրուած է սուրբ սիրտերուն միայն: Գութ, նուիրում, ողորմութիւն, խոնարհութիւն, ասոնք հաւատքէն սնած քաղցրահամ պտուղներ են, երկնային պարգեւներ ու արդար վարձատրութիւն մաքուր սիրտերուն:

Ոչ հարստութիւնը. ոչ ոսկին. ոչ ալ գիտութիւնը փրկութիւն կրնան տալ մեզի. այլ մեր ապրած կեանքը՝ քրիստոնէական ոգիով: Աշխարհային բարիքները ի վերուստ տրուած պարգեւներ են. միջոցներ՝ Աստուծմէ ծնած բարձրագոյն կեանք մը շինելու համար:

Քրիստոնէական հաւատքը իր Աստուածային շունչով հոգեկան եւ բնրոյական բարեշրջութեամբ մը կերպարանափոխեց աշխարհը. ազատեց մարդը իր մարդկային անկումէն. ստեղծեց ընկերային. ընտանեկան եւ անհատական բարձր բարոյական գիտակցութիւն. ու հնչեցուց աւետիսը մարդկային եղբայրութեան:

Կեանքի ներդաշնակ զարգացման անհրաժեշտ ոյժն է հաւատքը. որ միաձուլուած սիրոյ գործունէութեան. կը նախապատրաստէ մեզ՝ յաւիտենական կեանքին:

Յիշեցնենք. որ անապատին մէջ ան. ով հաւատքով նայեցաւ պղինձէ օձին. ան միայն կը բուժուի օձի խայթոցէն:

ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(15 Նոյեմբերի, կիրակի, 1998 թ.)

«Երկիւղ Տեառն սկիզբն իմաստութեան»

«Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է»:
(ԱՌԱԿ Ա 7):

«Երկյուղը Աստծո հանդեպ իմաստության սկիզբն է». սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, ահա այսպիսի բնաբանով ենք սկսում այսօրվա մեր քարոզը, որ վերցված է Աստվածաշունչ մատյանից: Ամեն ինչի սկիզբն Աստված է, որ Արարիչն է բոլոր էակների, որ ստեղծեց մարդուն և տվեց նրան հնարավորություն տերը լինելու, և վայելելու իր ամբողջ արարչությունը: Հնարավորություն տվեց սիրելու, հավատալու և հուսալու առ Աստված և իր ամբողջական գիտակցական կյանքն ապրելու այդ իմաստությամբ, այդ նույն երկյուղով, չհեռանալով Աստծուց, մերձ լինելով իր Արարչին, որպեսզի առատապես նրա շնորհները ստանալով, երկքի վրա ապրելով, իր իսկ կյանքը դարձներ աստվածային դրախտ, իր ճիշտ ապրելակերպով, իր հոգևոր ներաշխարհը դարձներ երկնքի արքայություն:

«Երկյուղն» Աստվածաշունչ մատյանում համարվում է իմաստության սկիզբը: Եթե երբևէ մենք քննենք ու տեսնենք, թե գիտնականների համար անհրաժեշտ սկիզբ է որևէ մի նյութ, որը քննության պիտի ենթարկվի, վարպետի համար անհրաժեշտ է փայտ, կավ կամ որևէ այլ նյութ, որպեսզի այդ սկզբից կերտի մի ինչ-որ նոր բան, ապա այստեղ իմաստության համար որպես հոգևոր գոյացություն Սուրբ Գիրքն առաջ է քաշում Աստծու նկատմամբ երկյուղը: Այդ երկյուղն է, որ մարդուն մերձեցնում է իր Արարչին, այդ երկյուղն է, որ նրան հեռու է պահում ամեն չարիքներից, որովհետև որքան մարդ ճանաչում է Աստծուն ու աստվածայինը, այնքան Աստծու նկատմամբ սերը և հավատը նրա ներսում ավելի են ջերմանում և կենդանանում: Ահա այս առումով է Նոր Կտակարանում Հակոբոս առաքյալը իմաստությունը բաժանում երկու տեսակի՝ անվանելով դրանք երկրավոր և երկնավոր իմաստնություն: Երկրավոր իմաստությունը թեև կարող է լինել գիտություն, բայց նա իր մեջ պարունակում է նախանձ, չարիք և խաբեություն: Իսկ երկնային իմաստնությունն առաքյալը տեսնում

է ազնվության մեջ, տեսնում է առաքինության մեջ, տեսնում է սիրո. ողորմածության մեջ: Եվ ահա, այս երկու բաժանումների մեջ մարդուն հնարավորություն է տրվում դառնալու դեպի Աստված՝ խորագիտությամբ ճանաչելով իր Արարչին և հնազանդվելով Նրան:

Աստծու նկատմամբ երկյուղը, սիրելիներ, նաև սկիզբն է բոլոր առաքինությունների, ինչպես որ բարի կյանքի սկիզբը արդարությունն է, նույնպես երկյուղն Աստծու նկատմամբ՝ սկիզբն է առաքինությունների, ինչպիսիք են ողջախոհությունը, արդարությունը և հեզությունը: Երկյուղը նաև սկիզբն է ստացական առաքինությունների, որոնք մենք ձեռք ենք բերում պահքի, աղոթքի, ողորմածություններ կատարելու միջոցով. և դրանով շատանում է մեր շնորհը: Եվ երրորդ. երկյուղն Աստծու հանդեպ՝ սկիզբն է աստվածային առաքինությունների: Դրանք են հույսը, հավատքը, սերը: Այս ամենն է, որ դառնում է հոգևոր գոյացություն և սկիզբ, որի նկատմամբ ունեցած զգուշությունը, երկյուղը մարդուն տանում է դեպի Աստված, էլ ավելիով մերձեցնելով իր իսկ Արարչին:

Սիրելի հավատացյալներ, Աստծու նկատմամբ երկյուղը նաև մարդու կրոնական կյանքն է՝ փոխհարաբերությունը մարդու և իր Արարչի: Այսինքն, կրոնի միջոցով, մարդը հաղորդակից է լինում իր Արարչին, իր ներքին էությամբ, իր ներքին էությունից բխած մի կյանքով, քանզի այդ հաղորդակցությունը՝ մարդ-Աստված. հնարավոր է միայն մարդու կողմից հնազանդության, իսկ Աստծու կողմից նրա խնամատարության և նախախնամության միջոցով: Սակայն, եթե կարծենք, որ միայն հնազանդությունը բավարար է, կտեսնենք, որ թերի է, որովհետև հնազանդվելը դեռևս բավարար չէ, անհրաժեշտ է ճանաչել նաև Աստծո կամքը. այդ կամքը մեզ տրվում է հայտնության միջոցով: Ամենամեծ և շոշափելի հայտնությունը, հենց ինքը՝ Սուրբ Գիրքն է: Սուրբ Գրքի միջոցով Աստված մեզ թելադրում է Իր կամքը, ցույց տալով. թե Իր հետևորդներն ինչ կերպ պիտի ապրեն: Եվ. եթե Հին Կտակարանում Տասնաբանյա պատվիրանների Աստված հանդես եկավ, ներկայացավ մարդուն. տվեց նրան տարբեր-տարբեր կանոններ և օրենքներ, ապա Նոր Կտակարանում այդ ամբողջն այլևս բավարար չէր: Ուստի, եթե հնում տրվում էր պաշտել Աստծուն ամբողջ հոգով, ամբողջ մտքով և ամբողջ զորությամբ, Նոր Կտակարանում դրան արդեն ավելացվում է այդ ամբողջով հանդերձ նաև «սիրիր քո ընկերոջը» (Մատթ. Ե 43): Եվ ոչ միայն մերձավորին, այլ նաև հեռավորին, ընդհուպ մինչև նույնիսկ սեր հանդեպ թշնամին: Եվ տեղին է. սիրելի քույրեր և եղբայրներ, այստեղ տեսնելու, թե որքան ենք մենք այսօր իրականացնում Աստծու կամքը մեր քրիստոնեական կյանքում: Որքանով ենք կարողանում ներողամտորեն վերաբերվել մեզ նեղացնողներին: Ինչպես է մեր սիրտը բաբախում, երբ տեսնում ենք, որ ողորմածության կարիք ունի մեկը, ինչպես կարող ենք մենք անտարբեր լինել մարդկային

ամեն չարաշահումների և անարդարությունների հանդեպ: Եվ ահա, եթե այսօր հայ նոր իրականության մեջ կարծեք թե մեր սրտերը դարձել են քարացած, տեղին է հիշել նաև մեր երանավետ Հայրապետ Ներսես Շնորհալու աղոթքը. «Սէր անուն Յիսուս. սիրով քով ճմլիա սիրտ իմ քարեղէն»: Եվ ահա այդ քարեղեն սիրտը պիտի փափկի, պիտի դառնա այնքան նուրբ, որպեսզի մենք միմյանց նկատմամբ լինենք բարի: Եվ այսօր Աստծու նկատմամբ երկյուղը, այսինքն իմաստնության սկիզբը պիտի դառնա միմյանց նկատմամբ բարյացակամ լինելու, ներելով ներված լինելու, սիրելով սիրված լինելու, ողորմածությամբ ողորմածության արժանանալու հիմնական գործոնը: Ահա այս է Աստծու կամքը, որպեսզի մեր սրտերը երբեք չկարծրանան փարավոնի սրտի պես, այլ միշտ լեցուն լինեն ջերմությամբ ու կյանքով: Ինչպես որ Աստծու միջից է բխում իր Կյանքը, նույնպես և մեր կյանքն էլ թող շաղախված լինի մեր Տեր Հիսուս Քրիստոսով: Եվ թող ամեն ինչի սկիզբը՝ Ինքը Քրիստոս, շնորհների և երկյուղի տվիչը, թող առաջնորդի մեզ դեպի երկնային արքայություն. և մենք մեր քրիստոնեական կյանքով երկնային արքայությունը դարձնենք մեր հոգուց ներս, ապրելով ապրեցնենք: Այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Տ. ԱՐՇԱԿ ԱԲԵՂԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(18 հոկտեմբերի, կիրակի, 1998 թ.)

«Եւ ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս»:

«Ես էլ ձեզ չեմ ասի, թե ինչ իշխանությամբ եմ այս անում»:
(ՄԱՐԿ. ԺԱ 33)

Դժվար չէ պատկերացնել այն մարդու զայրույթն ու զինաթափությունը, որը, ի պատասխան իր սադրիչ հարցման, լսում է նույնքան սրամիտ և տրամաբանական մեկ ուրիշ հարց, հարց, որով մերկացվում է իր ենթադրությունը: Ահա այսպիսի անակնկալի առջև կանգնեցին հրեական վերին իշխանության պատվիրակները՝ քահանայապետերից, դպիրներից և ծերակույտի անդամներից ոմանք, որոնք փորձում էին իրենց մեկ հարցով համբավազրկել Քրիստոսին:

Արդեն բավականաչափ աճել էր Հիսուսի հեղինակությունը, նա հասարակությանը հայտնի էր դարձել որպես սքանչելագործ այր: Եվ այս հանգամանքը, բնականաբար, Քրիստոսի նկատմամբ հակազդեցության բուռն ալիք էր առաջ բերել հրեական վերնախավի շրջանակներում: Նրանք չէին կարող անտարբեր կենալ ու ականատես լինել, թե ինչպես է Հիսուս տաճարից քշում լումայափոխներին, որոնցից նրանք զգալի հարկեր էին ստանում:

Այս իսկ պատճառով, ցանկանալով ազատվել Հիսուսից ու միաժամանակ ձգտելով ժողովրդի առջև արդարացի ներկայացնել իրենց գործելակերպը, հրեա կրոնական ընտրանու ներկայացուցիչները Հիսուսի հրապարակային քարոզչության վերջին օրը, երեքշաբթի, տաճարում մոտեցան քարոզող Քրիստոսին և ասացին. «Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ» (Մարկ. ԺԱ 28) այսինքն, թե ի՞նչ իշխանությամբ ես լիակատար ազատություն շնորհում քեզ մի ոլորտում, որն իրականության մեջ մեզ է պատկանում: Ինչպե՞ս ես համարձակվում տաճարից դուրս վռնդել առևտրականներին, որոնք մեր արտոնությամբ էին այնտեղ գտնվում: Ո՞ւմ թույլտվությամբ ես տաճարում և այլուր քարոզություն ծավալում: Սակայն ընդամենը մեկ պահ դադար տալով հավաքված ժողովրդին ուղղված իր խոսքին, Հիսուս անվրդով և, վստահաբար, հեգնախառն մի ժպիտով պատասխանում է նրանց.

- Մեկ հարց էլ ես տամ ձեզ,- ասում է նա.- Հովհաննես Մկրտչի մկրտությունը երկնքի՞ց էր. թե երկրից:

Առաջին հայացքից հարցին չառնչվող մի պատասխան. սակայն, որը հարց տվողներին անակնկալի է բերում, և վերջիններս հարկադրված են լինում պատասխանել, որ չգիտեն, այդ վեր է իրենց գիտակցությունից: Անկեղծ չէր, սակայն, հրեա պատվիրակի պատասխանը: Նրանք պարզապես խուսափում էին հստակ պատասխան տալուց: Ժողովրդի մեջ միանշանակորեն ամրապնդված էր Հովհաննեսի մարգարե լինելը, բայց իրենց կաստայական շահերը չէին կարող համահունչ լինել նրա՝ մեկի մարգարե լինելու հետ, որին հենց իրենք էին մահվան դատապարտել: Միաժամանակ ժողովրդից սպասվելիք հուզումը հեռու է պահում հրեաներին ասելու, թե Հովհաննես Մկրտիչը սովորական մի անձ էր և հետևաբար՝ խաբեբա:

Ահա այս պահին հնչում է նաև Հիսուսի խոսքը, որը, ի տես խղճուկ մորթապաշտների, վախն ու անարիությունը, սեփական կարծիքն ու գաղափարները հայտնելու մեջ, ասում է. «Ես էլ ձեզ չեմ ասի, թե ինչ իշխանությամբ եմ կատարում այս ամենը»: Պատասխան, որը նման մի իրավիճակում կբարձրացներ ցանկացած պատասխանողի, քանզի Քրիստոս չասաց, թե չեմ ասի, որովհետև չգիտեմ, այլ չպատասխանեց, քանզի հարց տվողներին պատասխանն անհրաժեշտ էր լինելու սոսկ որպես շահարկման միջոց: Այդ իսկ պատճառով, «Չեմ ասի» ժխտական պատասխան հնչեց ունկնդիրների ականջին:

«Չեմ ասի»: Որքան դառը ու միաժամանակ անցանկալի մի պատասխան, սիրելի հավատացյալներ, որից խորշում ենք ամենքս, որից թունդ է գալիս մեր հոգին:

Մենք բորբոքվում ենք, երբ լսում ենք մեզ ուղղված մերժող ու բացասական մի պատասխան: Որդին չի հանդուրժում նույնիկ հոր մերժումը, դուստրը՝ մոր, սակայն որքա՞ն բազմապատիկ է դառնությունը, երբ մենք «չեմ ասի» պատասխանն ենք լսում մեկի, որն ամենքի հյուրընկալողն է, որքա՞ն սաստիկ է վիրավորությունը մեր, երբ նիզակակ ենք գտնում ամենքի համար բաց դռները և ընդամենը անվստահություն ենք տեսնում մեր նկատմամբ Այն Մեկի կողմից, որը վստահում է ամենքին ու բոլորին:

Այո, սիրելի հավատացյալներ, հազար կասեմ, բայց դուք բազմապատկեք, այդքան անչափ անգամներ մենք անարդարություններ ենք տեսել կյանքում ու աշխարհում: Տեսել ենք, որ մեկը դառը դատում ու տխուր մխում է, տեսել ենք «մեկին հազար ձի ու ջորի, մեկին՝ ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի», տեսել ենք ու տեսել և վիրավել ենք, բախել ենք Աստծու դուռը, սակայն՝ լռություն... «Չեմ ասի» պատասխանին համարժեք մի լռություն:

Տեսել ենք պարտիզպանններ. որոնք կոչված են խնամելու ծաղիկները. հետևելու նրանց բնականոն զարգացմանը. փխրեցնելու հողը. մշակելու. սակայն...

Սակայն կարծես ճիշտ հակառակը. նրանք իրենց առաքելությունը ըմբռնել են սոսկ ծիլ ու ծաղիկ ոչնչացնելու. կարգ ու սարք խորտակելու իմաստով: Եվ խորտակում են ու խորտակում: Եվ մենք տեսնում ենք ու սոսկալով. անհամբերությամբ վրեժ պահանջում երկնքից այս ստահակների համար. բայց զուր... Երկինքը լուռ է: «Չեմ ասի»-ին համարժեք մի լռություն: Մենք տեսել ենք բարոյախոսներ ու բարոյական մաքրամոլության մոլեռանդ ջատագովներ. որոնց խոսքերը մնում են «ի շրթունս». և իրենք նույնիսկ բարոյախոսելիս հարճախնդիր մտահոգությամբ են տառապում. բարոյականության մեջ իսկ անբարոյականին փարվում: Տեսել ենք և. երևույթը փիլիսոփայորեն անկարող լինելով ըմբռնել. ավաղել և ափսոսել ենք մարդկային պատկերի եղծման համար:

Տեսել ենք կեղծ երաժշտագետներ ու թատերասերներ. որոնց համար արվեստի երեկույթը անարժեք մի բան է եղել՝ առանց հեղինակավոր ու բարձրաստիճան մի պաշտոնյայի. և ուղղակի մի մեծ իրադարձություն. երբ երեկույթին բացման խոսքով հանդես է եկել ազդեցությամբ օժտված մի անձ. թող որ նա ստահակ էլ լինի:

Տեսել ենք ու երես դարձրել սոսկալի կեղծիքից. հայացքներս մխրճելով ամպերից անդին. սպասել բաղձալի պատասխանին: Սակայն կրկին. վերստին ու վերստին՝ մաշող լռություն: «Չեմ ասի»-ին համարժեք մի լռություն:

Եվ մենք հուսաբեկ բազմաթիվ ապարդյուն փորձերից՝ անխոհեմությամբ հայացքներս դարձրել ենք նույնիսկ երկնքից՝ փորձելով հարմարվել երկրային տրամաբանությամբ կարգավորվող. կամ ավելի ստույգ՝ փոշիացող հարաբերություններին ու պայմանականություններին և այդպես լճացել ու լճացել ենք:

Սակայն ինչո՞ւ է երկինքը լուռ մնում մեր տառապանքների նկատմամբ. ինչո՞ւ է մեր հառաչանքներին ի պատասխան անընդհատ սպանող լռություն խուժում ականջներիցս ներս ու խուլ արձագանքում մեր հոգիներում: Ինչո՞ւ. ինչո՞ւ և կրկին ինչո՞ւ... Հարցերի մի տարափ: Երկար ենք մտածում. սակայն՝ կրկին լռություն: Եվ մենք չենք անդրադառնում. որ ինքներս ենք մեղավոր այս ամենի համար: Մեղավոր ենք ոչ թե նրա համար. որ ամեն կեղծիք ու անհամապատասխանություն ընդունել ենք հիվանդագին. այլ պարզապես այն պատճառով. որ ցուցաբերել ենք այնպեսի մի մոտեցում. որը հատկանշական էր Քրիստոսին սաղդիչ հարց ուղղած հրեա աստիճանավորների գործելակերպին:

Մեղավոր ենք. որովհետև կարծել ենք. թե մեր ամեն մի դժգոհությանն ի պատասխան Աստված մի բան պետք է փոխի այս աշխարհում. կարծել

ենք. թե ամեն ինչ մեր շուրջ է պտտվում: Սակայն մեզնից երբեմն հեռու է մնում այն իրողության ըմբռնումը. թե Աստված Հայր է բոլորի համար: Մենք երբեմն էլ չենք ուզում հասկանալ. որ բոլոր մարդկանց էլ փրկվելու, բարեշրջվելու հնարավորություն է տրվում: Նրանք. ովքեր «բարեշրջվել» ասելով նկատի են ունենում երկրավոր մխիթարություններով լիանալը, այլևս կարք չունեն իրենց նկատմամբ հակակրանք ստեղծելու մարդկանց կողմից. քանզի արդեն իսկ դատապարտված են Աստծու կողմից՝ զրկված լինելով երկնային իղձեր ունենալու հաճույքից: Իսկ նրանք. ում ձգտումներն ու ապրումներն անխառն մաքրությամբ երկինք են մղվում, պետք է հոգ տանեն «զանձինս՝ զմիտս, զխորհուրդ սրտից սրբել»՝ արժանանալու համար Աստծու ունկնդրությանը, և անդադար աղոթեն այն վստահությամբ. թե «ամենայն որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝ բացցի նմա» (Ղուկաս ԺԱ 10):

Աստված, երկինքը գիտի Իր անելիքը. և արդարները մի օր լսելու են Նրա պատասխանը: Եվ այդ պատասխանը խորտակելու է խաբեբաներին ու կեղծավորներին, կարծեցյալ բարոյախոսներին ու ապաշնորհ պարտիզպաններին, որոնք Աստծու ներողամտությունը իբրև ամենաթողություն են ընկալում: Հայցում ենք Աստծուց, որ նրանց շնորհի մաքրաշուրթ վարդապետ Մամբրե Վերծանողի պատգամի ընկալումը, որ թեև «Աստուած ոչ երբէք մոռանայ.- բայց և.- զմոռացեալսն ոչ երբէք յիշէ»: Ամեն:

ԹՈՐԳՈՄ ԱԲԵՂԱ ՏՈՆԻԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(18 հոկտեմբերի, կիրակի, 1998 թ.)

«Կատարեալ է ժամանակ. և հասեալ է արքայութիւնն Աստուծոյ. ապաշխարեցէք և հաւատացէք յԱւետարանն»:

«Ժամանակը հասել է. և մոտեցել է Աստծու արքայությունը. ապաշխարեցեք և հավատացե՛ք Ավետարանին»:

(ՄԱՐԿ. Ա 15)

Անցավոր կյանքի էջեր են թերթվել հազարամյակներ շարունակ: Ժամանակը մարդկանց, աշնանային տերևաթափի նման, «սփռել» է գետնին և, ապա, Աստվածային պատվեր-հրահանգի համաձայն՝ «զի հող էիր և ի հող դարձցիս» (ԾՆՆԴ. Գ 19), սերունդ առ սերունդ, որպես ճամփորդ, բնակեցրել Երկիր մոլորակում:

Ո՞վ էր Հիսուս Քրիստոս: Արդյո՞ք նա ևս մի ճամփորդ էր կամ հերթական մարգարե, որ Երկիր էր իջել որպես Աստծու կոչնակ՝ մատնանշելու մարդկանց մոլորությունները, բացահայտելու մեղքն ու մահվան կապանքները: Սակայն Նա, լինելով լրումն օրենքների ու մարգարեությունների, նաև թևաթափ ու հոգնած մարդկանց արբեցնում էր Իր կենաց ջրով, որով մահը պարտվում էր կյանքից, իսկ մարմինը՝ հոգուց: Ճշմարիտ Աստծու Որդին, ինչպես շողարձակ մի կանթեղ, բոցավառվում էր աշխարհային մեղքի ու հիվանդության անեզր խավարում՝ չորս դին սփռելով կյանք ու երանություն:

Քրիստոս Իր երկրավոր կյանքի ընթացքում Աստվածային սերը փոխանցեց մարդ արարածին, ամոքեց նրա հոգու ցավն ու կսկիծը: Իր Աստվածաշնչի ոգորմածությամբ, որպես Քաջ Հովիվ մտած յուր հոտի մեջ, կույրին լույս էր պարգևում, անդամալույծին՝ քայլելու կարողություն, գոսացածին՝ առողջ ձեռք, մահամերձին՝ կյանք և հորդորում մշտապես, թե «Ապաշխարեցեք, որովհետև մոտեցել է երկնքի արքայությունը» (ՄՏԹ. Դ 17):

Քրիստոս վարդապետում էր մարդկանց ամենուր՝ թե՛ անապատում, թե՛ բարձունքներից, թե՛ մաքսավորների հետ սեղան նստելիս, որպեսզի ունկնդիրներին խավարից ի լույս դարձնի և ապականությունից՝ դեպի անապականություն: Իշխանությամբ ու ճշմարտությամբ ավետարանելով՝

լուսավորում էր մարդկանց հոգիները, կյանքի հարատևության վարդապետությամբ Երկնքի Արքայության անանց պարգևներ խոստանում և Իր մեկնումի ճանապարհին, խաչն ուսած, փառքի բարձունքն էր ելնում՝ մարդկության մեղքերը պատարագելու:

Փորձությունը, որ ուղեկցում է մարդկանց բոլոր ժամանակներում, անհանգստության և ինքնատիրապետման վիճակից դուրս գալու պահեր է ստեղծում, որի արդյունքում անխուսափելի է դառնում բախումը տհաճ ու անցանկալի երևույթի հետ, և մարդը, կորցնելով հոգեկան անդորրը, տրվում է մռայլ թախծի իշխանությանը:

Հիսուս Ինքն է բազմաթիվ փորձություններ հաղթահարում Իր երկրավոր կյանքի ընթացքում, բայց և անձնական օրինակով վստահեցնում, որ հավատքով վահանավորված մարդն անկոտրում է, ցանկացած փորձության՝ դիմագրավող:

Հավատքը, որպես Աստվածաճանաչության առաջին նախապայման, մաքրագործում, կենդանացնում է մարդուն, երբ վերջինս, ցանկանալով թոթափվել մեղքի իշխանությունից, ապաշխարությամբ և սրտի խոնարհությամբ դեպի վեր է հառնում, իսկ նրա հոգին ու միտքը ձգտում են դեպի Անհասանելին:

Քրիստոսի ապաշխարության քարոզությունն անվանվում է նաև զղջման ու զոհողության, որը խրտնեցնում է անհավատներին, կորստյան մատնվածներին: Սակայն այլ է ճշմարիտ քրիստոնյայի կյանքը, ոչ նման տարուբերվող եղեգի կամ դաշտում աճած խոտի, որ այսօր կա, իսկ վաղը կրակն է նետվելու: Այն անսասան վեմ է՝ հավիտենականությանն ապավինած: Երբ անձրևները թափվում են, հողմերը՝ փչում, նա անկործան է իր հավատքի մեջ՝ ապաշխարությամբ գոտեպնդված, բազմապատկյալ քանքարներով: Նա պատրաստ է մաքուր սրտով, առանց ամոթո ներկայանալու Աստծու դատաստանին, որովհետև գրված է. «Երանի՝ նրանց, որ սրտով մաքուր են, քանզի Աստծուն պիտի տեսնեն» (ՄԱՏԹ. Ե 8):

Քրիստոնեական բոլոր Եկեղեցիներում ապաշխարության գաղափարը հոգևոր փրկության մեջ ուրույն նշանակություն ունի: Յուրաքանչյուր անհատ իր սահմանափակ կյանքի ընթացքում բազում անգամներ ինքնամփոփման, ներքին հաշվետվության կամ պատասխանատվության կարիք է զգում, որը և հանդիսանում է հոգեբորոգության հիմնական առիթը: Ապաշխարությամբ մարդն իր հոգի ընթացքից դառնում է դեպի հոգևոր կյանքի լավագույն պահին, երբ սկսում է ինքն իրեն զարդարել առաքինություններով: Ապաշխարության սկիզբը սրտի խոնարհությունն է և Աստվածային պատվիրաններով ապրելը:

Մեղքի գիտակցությունն ինքնին փրկության սկիզբ է, իսկ աղոթքը՝ մաքրագործման պատճառ, որը հաղորդ է դարձնում մարդուն իր Արարչի ու Նախախնամողի հետ:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ. այս տարվա օգոստոսի 30-ին մեր ոիմում-խնդրանքների համաձայն՝ ուղղված Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ապա Նորին Սրբության կարգադրությամբ, ութ սարկավագ եղբայրներով ծունկի իջանք Միածնաէջ Սուրբ Սեղանի առջև և ուխտեցինք լինել Աստծու հավատարիմ ծառաներն ու սպասավորները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, ինչպես նաև հավատավոր մեր ժողովրդի: Ձեռամբ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, քահանայական սուրբ օծում ստանալով, մեր Եկեղեցու Հայրերի սահմանած կանոնի համաձայն, 40-օրյա, պահեցողության, ապաշխարության և ներհայեցողության մի գեղեցիկ շրջան ապրեցինք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Ինքնաքննման և Աստվածահաղորդ դառնալու առիթներ շնորհող այդ օրերը, որոնց ընթացքում ընթերցանությունները, Տաճարում արած մեր աղոթքներն ու շարականների երգեցողությունը նպատակաուղղվեցին մեր կարծրացած սրտերն ու կաղապարված մտքերն ապրեցնելուն, ինչպես նաև կենաց ջրով սնուցելուն: Եվ առավել գիտակցությամբ մեզանից յուրաքանչյուրը նայեց այն փաստին, որ պարտ է համարձակությամբ խաչ բարձրացնելու իր մեջ թաքնված հին մարդուն՝ վերապրելու նոր կյանքով, նոր շունչ ու բուրմունք հաղորդելու համար շրջապատին:

Այսօր, առաջին անգամը լինելով, երբ այս եկեղեցում իմ անդրանիկ Ս. Պատարագն եմ մատուցում և իրավասու եմ խոսելու այս Սուրբ Խորանից, երախտիքի ազնիվ զգացումն է պարտավորեցնում իմ և ընկերներիս անունից շնորհակալության խոսք ուղղել մեր բազմաշխատ դասախոսներին՝ որպես երախտապարտ աշակերտներ:

Շուրջ յոթ տարի առաջ, երբ ոտք դրեցինք Սևանի Վազգենյան Դպրանոց, նրանք մեզ ուսուցանեցին լավն ու բարին, շնորհեցին Կատարյալին ու վսեմին ձգտելու կարողություն: Մեզ տվածի համար այսօր երախտապարտ ենք Սրբազան Հորը՝ նրան որդիական խոնարհությամբ բերելով մեր հոգիներում ծրարված ջերմագին զգացումները, որ ծնողական հոգածության յոթնամյա հետևողականությամբ մեր ներքին ես-ի և հոգու շինության խնդրում իր առանձնակի ներդրումն ունի: Իր հավատքի, եկեղեցանվեր բազմաբովանդակ գործունեությամբ Սրբազան Հայրը մեզ համար մերօրյա քաջ հովիվն էր, ումից ոգեշնչված ու գոտեպնդված, այսօր իջել ենք Հայ Եկեղեցու գործունեության սրբավանդ ասպարեզ՝ մեր խոնարհ կարողություններով սպասավորելու ժողովրդին: Անձամբ ես, դպրության աստիճանից մինչև վեղարի տվչություն ձգվող այս շրջանի համար, հպարտությունն ունեմ Գարեգին Սրբազանին կոչելու հոգևոր ծնող: Իմ շնորհակալությունն եմ հայտնում մեր բոլոր դասախոսներին, ովքեր նախանձախնդրությամբ, եկեղեցանվեր ու անխոնջ եռանդով «զծածկեալ խորհուրդ աստուածգիտութեան յայտնեալ ծանուցին», Սուրբ

Գրոց անսպառ լույսի թարգմանները հանդիսացան, մեր բարոյական կյանքի զարգացման ընթացքում լուսաբանեցին քրիստոնեության իսկությունը:

Դառնալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության նորօրյա փաղանգի ժառանգակիցներ՝ աղոթք և հույս ունենք առ Աստված վերառաքվող, որպեսզի Տիրոջ Ամենակարող Աջի հովանու ներքո և հայ ժողովրդից ընծայաբերված սեփական ժողովրդին պիտանի լինենք, կենդանի ու անսասան պահենք այն սրբազան հաստատությունը, որի համար զինվորագրվեցինք՝ մեր էությունը կերտող անձանց մեզ փոխանցած այն վառ գիտակցությամբ, թե Հայ Եկեղեցու այսօրվա անտեղիտալի պահանջն է լինել ծառա սեփական ժողովրդին, մեր ունեցած համեստ կարողությունների օգնությամբ հաղորդակից դարձնել նրանց Ավետարանի երկնապարգև պատվիրանների կենդանարար լույսին և հավատարիմ մնալ Միածնաէջ, ուռնակադրոշմ հաստատությանը, Աստվածային ճարտարապետության այդ կերտվածքի կամարազարդ ու մյուռոնաբույր վկայարանին, որն այսօր, ասես պարտավորեցնող կոչնակի նման, մեր ականջներին է հնչեցնում Պողոս առաքյալի խոսքերը. «Կենդանի եմ այսուհետ ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս» (ԳԱՂԱՏ. Բ 20):

Շնորհք, սեր և Աստվածային սրբարար զորությունն ընդ ձեզ և ընդ ամենեսյանդ. Ամեն:

ՄԱԿԱՐ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1 Նոյեմբերի, կիրակի, 1998 թ.)

«Ոյր գուցէ՝ տացի նմա, եւ ոյր ոչն գուցէ, եւ զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի ի նմանէ»:

«Ով որ ունի, նրան պիտի տրվի, իսկ ով որ չունի, և այն, ինչ որ նա կարծում է, թե ունի, պիտի վերցվի նրանից»:

(ՂՈՒԿԱՍ Ը 18)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Ով որ ունի, նրան պիտի տրվի, իսկ ով որ չունի, թեև նա կարծի, որ ունի, նրանից պիտի վերցվի:

Սիրելի հավատացյալներ, ահավասիկ այս հրաշալի, բայց միևնույն ժամանակ մի քիչ տարօրինակ խոսքերը վերցվել են այսօրվա Ավետարանից՝ Ղուկասու Ավետարան 8-րդ գլուխ, 18-րդ համար: Աստծու՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մարմնացումը խորքի մեջ ուրիշ նպատակ չուներ, եթե ոչ մարդկային հոգու վերակերտումն ու վերաշինությունը, այսինքն՝ փրկագործությունը: Եվ այդ փրկագործությունը մեզանից յուրաքանչյուրը կարող է ունենալ իր կյանքում, իր հոգու ականջները լավ բացելով դեպի Աստծո խոսքը, լսելով այդ խոսքը և իր կյանքի ընթացքին գործնականի վերածելով: Եվ Հիսուս իր առաքելության երեք տարիների ընթացքին հաճախ քարոզներ խոսեց մարդկանց հետ: Հավաքում էր ժողովրդին, խոսում նրանց հետ, որպեսզի բացի նրանց հոգիները, ցանի այնտեղ Աստծո խոսքը: Եվ, ահավասիկ, Ղուկասու Ավետարանից ավանդված այս հրաշալի տողերը առիթ են տալիս մեզ մտածելու, թե ինչ էր ուզում ասել Հիսուս, երբ ասաց. «ով որ ունի, նրան պիտի տրվի»: Արդյոք ինչի՞ մասին է խոսքը, ի՞նչ ունեցվածքի՝ հարստությա՞ն մասին է խոսքը, դրամի՞ մասին է խոսքը, կալվածքներ ունենալո՞ւ մասին է խոսքը, փառք և անուն ունենալո՞ւ մասին է խոսքը: Իհարկե՝ ոչ: Իմ արքայությունը, իմ թագավորությունը այս աշխարհից չէ (Հովհ. ԺԸ 36), հայտարարեց մեր Տեր Հիսուս Քրիստոս Իր քարոզներից մեկի մեջ: Ո՞չ ոք կարող է Աստծո հետ լինել, ո՞չ ոք կարող է Աստծո հասկանալ, եթե նա ինքն իր անձը չի հասկանում: Ուրեմն, «ով որ ունի». այստեղ «ունենալ»-ը անձի ունենալու մասին է խոսքը, գիտակցություն ունենալու, անձնական կարողությունները ճանաչելու մասին է խոսքը: Շատ են մարդիկ, որոնք իրենց մասին մեծ կարծիք ունեն, շատ են մարդիկ, ովքեր կարծում են, թե իրենք ամեն ինչ ունեն, շատ են նաև մարդիկ, որոնց թվում է, թե իրենք արդեն ամեն ինչի հասել են: Ուրեմն՝ ով ունի կյանքը ինչպես ապրելու գիտակցությունը, նրան պիտի տրվի, իսկ ով որ չունի, թեև կարծում է, թե ունի, նրանից պիտի վերցվի: Ուրեմն ի՞նչ

պետք է ունենալ: Գիտակցություն ունենալ, համաձայն Պողոս առաքյալի խոսքերի, նշանակում է կյանքն ապրել երեք հիմնական գաղափարներով՝ բարությամբ, արդարությամբ և ճշմարտությամբ: Մկրտության ժամանակ քահանան հարցնում է կնքահորը. թե այս երեխան ի՞նչ է խնդրում, և նա պատասխանում է. «հավատ, հույս և սեր»: Երեք հիմնական ուղղություններ: Հավատքը խորհրդանշում է բարությունը: Բարությունն ինքնին հավատքն է, որովհետև հավատք՝ նշանակում է հավատալ Աստծո, ուղղություն վերցնել դեպի Աստված: Ահավասիկ. Աստված բարի է, ասում ենք, ուրեմն բարությունը աստվածային ներկայությունն է մեր մեջ. այն գիտակցությունն է, որ մենք պատկանում ենք Աստուծո. Աստված կա մեր մեջ. և մենք Աստծո մեջ ենք: Հիսուս հայտարարեց, որ «Ես Աստծո մեջ եմ, Աստված կամ Հայրը Իմ մեջ և դուք Իմ մեջ կամ Հորը մեջ» (Հովհ. Ժ 38): Եվ երկրորդ՝ արդարությունը հույսն է, հուսականությունն է, եթե մենք հույս չունենանք մեր կյանքում, արդար չենք կարող լինել: Բոլոր խաբեբա մարդիկ, բոլոր նրանք. ովքեր կեղծում են, ստում են, խաբում են. առանց հույսի ապրող մարդիկ են, որովհետև խաբեությունը գալիս է հույսի պակասությունից: Ուրեմն հույսը մեր կյանքում թարգմանությունն է արդարության: Եվ երրորդ՝ ճշմարտությունն անպայմանորեն պիտի թարգմանվեր որպես սիրո ներկայությունը մեր մեջ: «Ես իսկ եմ հարութիւն և կեանք» (Հովհ. ԺԱ 25), - ասաց Քրիստոս, և ապա «Ես եմ Ճանապարհը, Ես եմ Ճշմարտությունը և Ես եմ Կյանքը»: Այսինքն, Ես այն Ճշմարտությունն եմ, որով դուք պիտի հասնեք Կյանքին: Այն Ճանապարհը, որ ձեզ դեպի Կյանք պիտի տանի, այդ Ես եմ: Եվ ի՞նչ է աստվածային Կյանքը, ի՞նչ է Աստծո տրված ճշմարտությունը. եթե ոչ՝ սիրո բյուրեղացումը մեր հոգիների մեջ: Ուրեմն ի՞նչ պետք է ունենալ, որպեսզի «առավել ևս մեզ տրվի»՝ բարություն, արդարություն և ճշմարտություն, որոնք, ինչպես ասացի, հավատով հույսի և սիրո թարգմանությունն են մեր կյանքի մեջ: Եվ Պողոս առաքյալը շատ հրաշալի կերպով խոսում է այդ մասին Եփեսացիներին գրած իր նամակում, և որը մենք պետք է ընդունենք որպես ավարտ մեր այսօրվա խորհրդածության: Ի՞նչ է ասում. սնոտի խոսքերով թող ոչ ոք ձեզ չխաբի (Եփես. Ե 8), որովհետև դրա համար է, որ գալիս է Աստծո բարկությունը «անհնազանդության որդիների» վրա: Դատարկաբանությունը Աստծո բարկությունն է բերում մեզ վրա: Ուրեմն նրանց մասնակից մի՛ եղեք, որովհետև թեև մի ժամանակ խավար էիք, սակայն հիմա լույս եք: Ուրեմն ընթացեք ինչպես լույսի որդիներ, որովհետև լույսի պտուղը բարություն է, արդարություն է և ճշմարտություն:

Սիրելի հավատացյալներ, ահավասիկ այս Սուրբ Պատարագի այսօրվա խորհուրդը թող բոլորիս հոգիների և գիտակցության մեջ իրապես բարությամբ ապրելու ուժականությունը պարգևի. արդարությամբ հարաբերվելու մարդկանց հետ և միշտ ճշմարտությունը որոնելու ուժ տա մեզ: Առե՛ք ձեզ հետ բարություն, արդարություն և ճշմարտություն, տարե՛ք ձեր տները, որպեսզի Հիսուս Քրիստոսով Կյանք ունենանք ի փառս Ամենասուրբ Երրորդության. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՖՐԱՆՍԻՍԿՈՍ ԴԸ ՍԱԼԻ
(1567-1622)

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԲԱՐԵՊԱՇՏ ԿՅԱՆՔԻ

ՄԱՍ Գ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՀԱՏՈՒԹՅՈՒՆ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ ԻԳ

Մարմնավոր ճգնությունների մասին

Ես համամիտ չեմ այն կարծիքին, որ մարդու վերակերտումը պետք է սկսել նրա արտաքինից, այսինքն՝ սանրվածքից, հագուստից, սովորություններից: Ճիշտ հակառակը, ինձ թվում է, որ կարևորը ներաշխարհի նորոգումն է (Առակ. 23.26), (Երգ. 8.6): Սիրտից են բխում մեր արարքները: Ում սրտում բնակվում է Հիսուս Քրիստոս, նա համապատասխանաբար կուղղի և իր վարմունքը: Այդ իսկ պատճառով, ես կուզեի, որ ամենից առաջ Հիսուս Քրիստոսի անունը դրոշմվի քո սրտում: Այնժամ ես համոզված կլինեմ, որ քո բոլոր գործերը կկրեն փրկարար անվան կնիքը, և այն իրողությունը, որ Նա ապրում է քո մեջ, կարտահայտվի քո վարվեցողության՝ աչքերիդ, ձեռքերիդ, շուրթերիդ և նույնիսկ սանրվածքիդ մեջ: Պողոս առաքյալի խոսքի համաձայն. «Այսուհետև ոչ թե ես եմ ապրում, այլ ինձ մեջ ապրում է Քրիստոս» (Գաղ. 2. 20): Կարճ ասած, ով գրավել է մարդու սիրտը, գրավել է նրան ամբողջությամբ, բայց այդ սիրտը կարիք ունի սովորելու՝ ինչպես կազմակերպել և ղեկավարել ընթացիկ կյանքը, որպեսզի նրանում արտացոլվի ոչ միայն բարեպաշտություն, այլև մեծագույն իմաստություն և համեստություն:

Այս կապակցությամբ ուզում եմ քեզ մի քանի խորհուրդ տալ:

Անշուշտ, պահեցողությունը շատ օգտակար է և կարևոր, այն սանձում է մարմինը, վեհացնում հոգին, ենթարկում ախորժակն ու մարմինը բանականությանը և կամքին: Երբ թշնամին տեղյակ է, որ պահքի մեջ ես, առավել է վախենում քեզանից: Աշխատիր պահել պահոց չորեքշաբթի և ուրբաթ օրերը: Սակայն հիշիր, չի կարելի ուժերից վեր պահք պահել: Մենք ենթարկվում ենք փորձությունների եւ չափից ավելի, եւ չափից պակաս սնվելով: Չափազանց խիստ պահեցողությունը կարող է զրկել մարդուն սիրո գործեր կատարելու կարողությունից: Պետք է հաշվի առնել կենսական ուժերը և ստանձնած աշխատանքի ծանրությունը: Եւ պահքը, եւ աշխատանքը ճնշում են մարմինը: Ընտրության դեպքում գերադասելի է նախընտրել Աստծու փառքին ծառայող օգտակար աշխատանքը:

Եկեղեցին թույլ է տալիս լուծարելու պահը, երբ անհրաժեշտ է գործել հանուն Աստծու կամ ծառայել մերձավորին: Մեկը չարչարվում է պահք պահելով, մյուսը՝ հիվանդ խնամելով, մեկ ուրիշը՝ ուսուցանելով և այլն:

Օգտակար գործեր կատարելու համար անհրաժեշտ է խնայել ֆիզիկական ուժերը, որոնք պետք եղած դեպքում միշտ կարելի է թուլացնել, սակայն վերականգնելն այնքան էլ հեշտ չէ: «Կերեք ինչ որ ձեր առաջը դնեն» (Ղուկ. 10. 8), «մի զանազանեք կերակուրները և մի ծանրացրեք ձեր միտքը այդ ուղղությամբ»: Լավ է միշտ սնվել չափավոր, քան մե՛րթ սահմանել խիստ պահեցողություն, մե՛րթ տրվել անզուսպ որկրամոլության:

Գիշերը պետք է քնես այնքան, որ կարողանաս լիարժեք գործել ցերեկը: Աստվածաշունչը սուրբերի օրինակով և բնության կարգի համաձայն բազմիցս նշում է, որ օրվա առավել արգասաբեր մասը առավոտյան ժամերն են: Այնպես որ լավ է երեկոյան շուտ պառկես քնելու, որպեսզի առավոտյան վաղ արթնանաս՝ օգտագործելով այդ հրաշալի, խաղաղ ժամանակը: Ընդ որում, առավոտյան վաղ վերկենալը նպաստավոր է ե՛ւ առողջության, ե՛ւ սրբակեցության համար:

Արատներից սրբվելու համար պետք է նեղել մարմինը, բայց ամենից առաջ անհրաժեշտ է հետևել սրտի և զգացմունքների մաքրությանը: Երբեք չի կարելի դիմել մարմնական ճգնությունների՝ առանց խոստովանահոր հետ խորհրդակցելու:

ԳԼՈՒԽ ԻԴ՝
Զրույցների և առանձնության մասին

Զրուցակիցներ փնտրելը կամ նրանցից խուսափելը՝ ծայրահեղություններ են, որ ի հայտ են գալիս աշխարհի մեջ բարեպաշտ կյանքով ապրողների շրջանում: Զրույցներից խուսափելը ընկալվում է որպես անուշադրության և արհամարհանքի դրսևորում մերձավորի հանդեպ, իսկ զրուցասիրությունը՝ պարզապես ժամավաճառություն և դատարկաբանություն: Մերձավորին պետք է սիրել այնպես, ինչպես սիրում ես ինքդ քեզ (Մատթ. 22.39): Մերձավորի հանդեպ սեր արտահայտելու համար պետք չէ փախչել նրանից, իսկ սեփական անձը սիրելու համար պետք է մենակ մնալ: «Նախ մտածիր քո մասին, հետո՝ ուրիշների».- ասում է Բեռնարդ Քլեյրվոն[1]: Քեզ համար օգտակար է առանձնանալ և զրուցել սեփական սրտի հետ, քան մասնակցել ոչ կարևոր հանդիպումների և վարել անբովանդակալից զրույցներ: Եթե ինքդ կամ մերձավորդ լուրջ պատրվակ ունեք հանդիպելու և զրուցելու, արա այդ ամենայն անկեղծությամբ և բարյացակամությամբ: Ամեն կերպ խուսափիր վատ մտայնությամբ վարվող խոսակցություններից և անհամեստ, այլասերված մարդկանց զրույցներին մասնակցելուց: Ինչպես կատաղած շան կծածի հետևանքով վարակվում են

[1] Բեռնարդ Քլեյրվոն (1090_1153): Կաթոլիկ Եկեղեցու սուրբ: Ծնվել է Բուրգունդիայում ազնվական ընտանիքում: Քսաներկու տարեկան հասակում եղբայրների հետ միասին մտել է վանք: Հետագայում հիմնել է Քլեյրվոյի վանքը և դարձել նրա վանահայրը: Իր համբավը պայմանավորված էր սրբությամբ և վառ անհատականությամբ, որն իրեն դարձրեց իր ժամանակի Եվրոպայի ամենաազդեցիկ դեմքը:

մարդու քրտինքը, շնչառությունը և թուքը, այնպես էլ աղտոտվում են անբարո և սանձարձակ մարդկանց հետ հարաբերվողների հոգիները, ինչը հատկապես վտանգավոր է երեխաների և թուլակամ անձանց համար: Լուրջ պարապմունքներից հետո կարելի է մի փոքր ժամանակ հատկացնել թեթև զրույցի ուղեղին հանգիստ տալու համար: Որոշ զրույցների նպատակը մերձավորին ուշադրության արժանացնելն է և պետք չէ խուսափել դրանցից: Բարեպաշտ կյանքով ապրելու համար կարևոր և օգտակար են զրույցներն աստվածասեր և առաքինի մարդկանց հետ: Նման զրույցների մասնակցիր որքան հնարավոր է շատ: Առաքինասեր մարդկանց հետ հաճախ հարաբերվող անձը ընդօրինակում է նրանց հատկությունները: Ամեն տեսակի զրույցներում գերադասելի են պարզությունը, հեզությունը և համեստությունը: Շատ հոգնեցուցիչ է հարաբերվել ձևապաշտ, շինծու, հաշվենկատ մարդկանց հետ, ովքեր ամեն բան անում են ցուցադրաբար և խոսում ծոր տալով: Լավ է, երբ զրույցի ընթացքում գերիշխում է չափավոր զվարթ տրամադրությունը: Ռոմուալդը[2] և Անտոն Պադովացին[3] հատկապես գովելի են այն բանի համար, որ, չնայած իրենց վարած խստակրոն կյանքին, նրանց դեմքերն ու զրույցները միշտ ուրախ, զվարթ ու սիրալիր էին: «Ուրախացողների հետ ուրախացեք» (Հռ. 12.15): Եվս մեկ անգամ ուշադրությունդ հրավիրում եմ առաքյալի խոսքին. «Միշտ ուրախ եղիր տիրոջով, թող քո հեզությունը հայտնի լինի բոլոր մարդկանց» (Փիլ. 4. 4-5): Այս հորդորը կատարելու համար անհրաժեշտ է, որ քո ուրախության առարկան միշտ արժանավայել լինի: Զգուշացիր կատակներից, որոնք կարող են խոցել կամ վարկաբեկել որևէ մեկին:

Մենք արդեն նշել ենք, որ տարաբնույթ խոսակցությունների ժամանակ կարող ես հոգով մեկուսանալ: Լրիվ հնարավոր է սիրել առանձնությունը՝ առանց անապատ հեռանալու Մարիամ Եգիպտացու կամ Սբ. Անտոնի, Սբ. Արսենի[4] և այլ միայնակյացների նման: Ուր էլ լինի՝ քո սենյակում, պարտեզում կամ այլուր, դու կարող ես մտքով ամփոփվել սրտումդ և հանդարտություն տալ հոգուդ՝ տրվելով ազնիվ և բարի խորհրդածությունների, սուրբ մտածումների կամ հոգեշահ ընթերցանության՝ հետևելով հռչակավոր եպիսկոպոս Նազիազանցու օրինակին, որն ասում է. «Ես մենակ զբոսնում էի մայրամուտին կամ ժամանակս անցկացնում ծովի ափին: Այդպես էի հանգստանում իմ սովորական զբաղմունքներից»: Ամբրոսիոս Միլանցին, բոլոր հոգսերն ու գործերը ավարտելուց հետո, սիրում էր զբաղվել ընթերցանությամբ: Հիշո՞ւմ ես, երբ առաքյալները պատմեցին Տիրոջն այն ամենը, ինչ որ արել էին և ուսուցել, Նա ասաց. «Եկեք դուք առանձին մի ամայի տեղ ու մի քիչ հանգստացեք» (Մարկ. 6. 13):

---

[2] Ռոմուալդ (950_1027): Կամալդոլյան միաբանության հիմնադիր, ազնվական ընտանիքից, վանք է մտել երիտասարդ հասակում: Ժամանակակից վանական խստակրոնությամբ չբավարարվելով, հիմնել է մենակյացների նոր միաբանություն:

[3] Անտոն Պադովացի (1195_1231): Ֆրանցիսկյան վանական, հայտնի էր որպես մեծ քարոզիչ և հրաշագործ:

[4] Սբ. Անտոն և Սբ. Արսեն (III-IV դար): Եգիպտոսի վանականության հայտնի հիմնադիրներից:

ԳԼՈՒԽ ԻԵ
Հագուստի մասին

Պողոս առաքյալի ցանկությունն է, որ աստվածապաշտությունը հանձն առած կանանց հագուստը (նույնը վերաբերում է տղամարդուն) լինի պարկեշտ, վայելուչ, իսկ հարդարանքը՝ ակնածալի և զգաստացնող (Ա Տիմ. 2. 9-10): Չի կարելի թույլ տալ, որ հագուստը մնա կեղտոտված: Արտաքին մաքրասիրությունը պիտի համապատասխանի ներքին մաքրությանը: Աստված մարմնավոր մաքրություն է պահանջում նրանցից, ովքեր մոտենում են խորանին և ստանձնում աստվածապաշտության մասին հոգալու կարևորագույն պարտականությունը (Ես. 52. 11): Հագուստի կտորի և ձևի ընտրությունը հիմնականում կախված է ժամանակից, տարիքից, շրջապատից և բնավորությունից: Տոն օրերին ավելի գեղեցիկ են հագնվում, պահոց և ապաշխարության շրջանում համապատասխան հագուստ կրում, հարսանիքներին՝ հարսանյաց, իսկ սուգի ժամանակ՝ սգո զգեստներ:

Ձեր հագուստը չպիտի տհաճություն պատճառի շրջապատողներին, բայց խուսափեք սնապարծությունից, հետաքրքրասիրությունից, թեթևամտությունից: Պարզությունն ու համեստությունը լավագույն զարդարանքն են: Այն տղամարդիկ, որոնք սիրում են զուգվել, կրել թանկարժեք զարդեր, գանգրացնել մազերը՝ կանացիակերպ են թվում, իսկ չափից ավելի պճնամոլ կանայք դատարկ ու անհամեստ: Նրանք արդարանում են, որ բնավ չունեն վատ մտադրություններ, բայց վատ մտադրություններ միշտ ունի «թշնամին». Ես ուզում եմ, որ դու բոլորից լավ հագնվես, բայց ոչ աչք ծակող և անբնական, թող քո հագուստը լինի նրբագեղ և վայելուչ:

ԳԼՈՒԽ ԻԶ
Ընդհանրապես խոսելաոճի և մանավանդ Աստուծո մասին խոսելու վերաբերյալ

Բժիշկները հիվանդի լեզվին նայելով, որոշում են նրա առողջական վիճակը: Նույնպես և մեր արտասանած խոսքերը բացահայտում են մեր էությունը: (Մատթ. 12.37): Եթե դու սիրում ես Աստծուն, հաճախ խոսիր Նրա մասին տնեցիներիդ, բարեկամներիդ, հարևաններիդ հետ: «Արդարի բերանն իմաստություն է խոսում» (Աղմ. 36.30):

Եվ ինչպես մեղուները իրենց լեզվիկով միայն մեղր են տեղափոխում, այնպես էլ ձեր լեզուն թող միշտ Աստծուն փառաբանի: Խոսիր Նրա մասին ամենայն սիրով, հեզությամբ և խոնարհությամբ մերթ մեկի, մերթ մյուսի հետ, միևնույն ժամանակ ծածուկ պղտոթելով Աստծուն: Եվ Նա այնպես կանի, որ քո խոսքը ցողի նման կիջնի քեզ լսողների սրտերի մեջ: Դու պիտի խոսես ոգեշնչումով, այլ ոչ թե ուսուցանես և խրատես, և քո խոսքով կգրավես սրտերը (Երգ. 4.11): Մի խոսիր ի միջի այլոց, այլ համակ ուշադրությամբ, խոհեմաբար, բացառելով սնապարծության չնչին իսկ դրսևորում: Մի նմանվիր նրան, ով աջ ու ձախ խոսում է սրբության մասին, սակայն լսողներին ամենևին վստահություն չի ներշնչում:

ԳԼՈՒԽ ԻԷ
Խոսքի մաքրություն և հարգանք մարդկանց հանդեպ

«Եթե մեկը խոսքով չի մեղանչում, նա կատարյալ մարդ է» (Հակ. 3.2),- ասում է Հակոբոս առաքյալը: Մշտապես հսկի՛ր ինքդ քեզ, որ շուրթերիցդ հանկարծ անվայել բառ դուրս չթռչի: Գուցե և վատ բան նկատի չունենաս, բայց լսողները կարող են և այլ կերպ ընկալել: Տկար սրտի մեջ ընկած վատ բառը տարածվում է այնտեղ, ինչպես յուղի կաթիլը կտավի վրա, երբեմն առիթ հանդիսանալով մտքի ալեկոծման և բազում գայթակղությունների:

Ֆիզիկական թույնը մուտք է գործում մարմին բերանի միջոցով, իսկ հոգևոր թույնը՝ ականջների: Այդ թույնը արտադրող լեզուն նման է մարդասպանի: Դեռ լավ է, եթե այն թափանցել է հակաթույն պարունակող սրտի մեջ: Ջուր ենք մեզ արդարանցնում: Տերն ասել է. «Բերանը խոսում է սրտի լիությունից» (Մատթ. 12.34): Եթե նույնիսկ մեր մտքին վատ բան չի լինում, նենգավորի մտքին է լինում: Նա չի հապաղում բերանից դուրս թռած բառերը օգտագործելու որևէ մեկի սիրտը խոցելու համար: Անբիծ և անաղարտ սիրտ ունեցողի բերանից անպարկեշտ բառեր չեն հնչի:

Առաքյալն ասել է, որ անպատկառ ու պիղծ բաների անունն իսկ թող չհիշվի ձեր մեջ (Եփ. 5. 3), որովհետև վատ խոսքերը ապականում են լավ բարքերը (Ա Կոր. 15. 33): Առավել ևս, է՛լ ավելի թունավոր են դառնում և սրածայր դաշույնի պես ավելի խորն են խոցում սիրտը, եթե գաղտնաբար են արտասանվում: Եթե անվայել խոսքեր ես լսում, մեջքով շրջվիր խոսողի կողմը կամ մեկ այլ ձևով արտահայտիր դժկամությունդ:

Բայց ամենից վատթարը ծաղրասիրությունն է: Աստված ատում է այդ արատը: Ոչինչ այնպես չի հակասում Աստծո սիրուն, առավել ևս աստվածապաշտությանը, ինչպես քամահրանքը մերձավորի հանդեպ: Սիա թե ինչու է այն համարվում մեծ մեղք: Ծաղրելն անարգանքի ամենավատ դրսևորումն է, որովհետև ուղեկցվում է արհամարհանքով: Ինչ վերաբերում է զուսպ զվարճությանը կամ բառախաղին, որը հույները ուրախ զրույց էին անվանում, այն ազնիվ և հաճելի զբաղմունք է, որը փոխարինում է թեթևամիտ զրույցներին, որոնք սկիզբ են առնում մարդկային թուլություններից: Պետք է զգուշանալ, որ ուրախությունը հանկարծ չվերածվի ծաղրական ծիծաղի: Ուրախ կատակը ենթադրում է վստահություն, բարյացակամություն և սիրալիրություն:

Լյուդովիկոս Թ արքան ասում էր, որ ճաշից հետո կարելի է կատակել ու ծիծաղել: Ուրեմն այնպես կազմակերպենք մեր ժամանցը, որ չվնասենք բարեպաշտությունը:

ԳԼՈՒԽ ԻԸ
Դատապարտություն

«Մի դատեք, որ Աստծուց չդատվեք, մի դատապարտեք, և չպիտի դատապարտվեք»,- ասել է Փրկիչը (Ղուկ. 6. 37):

Պողոս առաքյալը գրել է. «Ուրեմն ժամանակից առաջ մի դատեք, մինչև գա Տերը և հայտնի դարձնի սրտի խորհուրդները» (Ա Կորնթ. 4. 5): Աստված չի

սիրում դատապարտությունները, մեղքի արմատը սրտում է, իսկ ուրիշի սրտի խորհուրդները մեզ հայտնի չեն: Թող յուրաքանչյուրը դատի ոչ թե մերձավորին, այլ ինքն իրեն:

Առաքյալի խոսքի համաձայն. «Եթե մենք մեզ քննեինք, ապա չէինք դատապարտվի» (Ա Կորնթ. 11. 31): Բայց մենք չենք դադարում անել այն, ինչ մեզ արգելվում է, այսինքն՝ դատել մերձավորին, և երբեք չենք անում այն, ինչ պարտավոր ենք՝ քննել ինքներս մեզ:

Որոշ մարդիկ հակում ունեն չափազանց խիստ դատելու մերձավորին: Եթե այդ հատկությունը բնածին է, շատ դժվար է հաղթահարել, նրանք հոգևոր բժշկի կարիք են զգում: Այն բավական վտանգավոր է, քանի որ մարդու հոգում արմատավորվում են դատապարտությունը և չարախոսությունը:

Ոմանք էլ համարում են, որ նսեմացնելով ուրիշներին՝ իրենք վսեմանում են: Այսպիսիները իրենց մյուսներից բարձր են դասում: «Ես նման չեմ ուրիշ մարդկանց» (Ղուկ. 18.11),- ասում էր փարիսեցին: Նրանք կարծես հաճույք են ստանում ուրիշների մեղքերը քննելով, որպեսզի վայելեն սեփական գերազանցության գիտակցությունը: Ըստ որում այդ կարող է և քողարկված լինել, քանի դեռ նրանց այդ մասին ուղիղ չի ասվել:

Շատերը ինքնաարդարացման և խղճի ձայնը լռեցնելու միտումով պատրաստակամորեն ի հայտ են բերում ուրիշների մեղքերը, կարծես մեղքի բազմացումը այն քիչ պախարակելի է դարձնում:

Մի քանիսն էլ դատում են պարզապես վայելելով մարդկանց բարքերի և բնավորությունների մասին ճամարտակելու հաճույքը, ինչն յուրատեսակ մտամարզություն է: Դատողությունների ճշտության դեպքում, նրանք քանի գնում, ավելի են ոգևորվում, այնպես որ կանգ առնելն այնքան էլ հեշտ չի լինում: Ոմանք դատում են կրքոտ, այսինքն միշտ լավ են արտահայտվում նրանց մասին, ում սիրում են, և միայն վատ, ում չեն սիրում: Յուրահատուկ իրողություն է, երբ սերը դրդում է սիրելիների մասին խիստ դատողություններ անել:» Սա հետևանք է անմաքուր, անկատար, անհանգիստ, հիվանդագին սիրո ու խանդի, որն, ինչպես հայտնի է, կարող է մեկ հայացքի կամ ժպիտի համար մեղադրել խաբեության և դավաճանության մեջ: Ի վերջո, պատվասիրության վախը և հոգու այլ տկարություններ նույնպես հող են ստեղծում կասկածանքի և դատապարտության համար: Դրա դեմ պայքարի ի՞նչ միջոցներ կան: Ophiusa բույսի հյութը խմողներին՝ ամենուրեք օձեր և ահաբեկող տեսիլներ են երևում: Հպարտության, նախանձի, սնափառության, ատելության ճիրաններում գտնվողները ամենուր և ամեն ինչում տեսնում են միայն չարն ու դատապարտելին: Առաջիններին օգնում է ապաքինվել արմավենու գինին, իսկ երկրորդներին ես ասում եմ. որքան հնարավոր է, հաճախ խմեք քրիստոնեական սիրո սրբազան գինին, այն կբժշկի ձեզ չար մտադրություններից, որտեղից էլ սկիզբ են առնում անճիշտ դատողությունները: Սերը չարիք չի փնտրում, հանդիպելիս երես է թեքում կամ ձևացնում, թե չի նկատում, առաջին իսկ ահազանգից փորձում է աչքերը փակել նախքան տեսնելը: Նա պարզամտորեն հավատում է, որ այդ կարող է չարիք չլինել, այլ միայն նրա ստվերը կամ ուրվականը: Իսկ եթե ստիպված է ընդունելու, որ իսկապես չարիք է, իսկույն նեթ շրջվում է և աշխատում մոռանալ նրա տեսքը: Քրիստոնեական սերը լավագույն

դեղն է ամեն տեսակի չարիքից: Դեղնախտով հիվանդի աչքին ամեն ինչ դեղին է: Դատապարտության մեղքը նման է հոգևոր դեղնախտի: Ապաքինվել ցանկացողը պետք է բուժի ոչ թե աչքերը կամ մտածողությունը, այլ զգացմունքները: Էությամբ հեզ մարդու դատողությունները հեզ են, գթառատ մարդունը՝ գթոտ: Ես կարող եմ հրաշալի օրինակներ բերել: Իսահակն ասել էր, որ Ռեբեկան իր քույրն է, բայց Աբիմելիքը, տեսնելով ինչպես են նրանք կատակում, հասկացավ, որ կինն է (Ծն. 26.7-9): Աբիմելիքը կարող էր Ռեբեկայի մասին վատ մտածել, բայց չմտածեց: Միշտ պետք է այդպես վարվել, բարեկամս, դատել՝ մերձավորի օգտին, իսկ եթե այն բազմադիմի է՝ որոնել և գտնել ամենալավը:

Սուրբ Հովսեփը կարող էր վատ մտածել Աստվածամոր մասին, բայց այդպես չարեց: Ինչո՞ւ: «Քանի որ արդար էր»,- պատասխանում է Սուրբ Հոգին (Մտթ. 1. 19): Արդար մարդը երբ ի վիճակի չի լինում արդարացնելու ոչ արարքը, ոչ էլ դիտավորությունը նրա, ում ճանաչում է որպես լավ մարդ, հրաժարվում է ամեն տեսակի դատողություններից և դատաստանը հանձնում Աստծուն:

Խաչված Փրկիչը չէր կարող ամբողջությամբ արդարացնել Իրեն խաչը հանողների կատարած գործը, բայց մեղմեց նրանց դիտավորության չարությունը՝ նշելով, որ չգիտեն, թե ինչ են անում (Ղկ. 23. 34): Եթե մենք չենք կարողանում ներել մեղքը, գոնե կարեկցանքի արժանացնենք՝ վերագրելով անգիտությանը կամ տկարությանը:

Մի՞թե երբեք չի կարելի դատել մերձավորին: Այո՛, բարեկա՛մս, երբեք: Մեղավորներին արդարացիորեն դատողը միայն Աստված է: Անգամ դատավորները պիտի լինեն միայն թարգմանիչներն ու մեկնիչները Աստծու կամքի: Եթե նրանք առաջնորդվեն իրենց կրքերով, կնշանակի, որ դատում են և պիտի դատապարտվեն, որովհետև մարդկանց արգելված է դատել ուրիշներին, քանի որ իրենք մարդիկ են:

Եթե կատարվածը չեզոք է, չի կարելի առանց բավական հիմք ունենալու վատ եզրակացության հանգել: Եթե որևէ մեկը պատահաբար ականատես լիներ, թե ինչպես է Հակոբը Ռաքելին համբուրում ջրհորի մոտ (Ծնն. 29.11) կամ Ռեբեկան ընդունում ապարանջաններն ու գինդերը Եղիազարից (Ծնն. 24.22), կարող էր և վատ մտածել նրանց մասին, բայց առանց հիմքի: Ուրիշի մասին միրավորական եզրակացություններ անելը նույնպես դատապարտություն է, սակայն այդ մասին ավելի մանրամասն կխոսենք քիչ հետո:

Նա, ով ուշադիր է իր խղճի ձայնին, ոչ մեկին չի դատում: Առաքինասեր մարդու մտածումները չեն պտտվում մերձավորի մութ ու խճճված գործերի շուրջ, այլ նա սանձում է իր մտքի թափառումները, դրանց հետ չառնչվելու և, ամփոփվելով ինքն իր մեջ, խորհում սեփական կյանքը շտկելու մասին: Ես նկատի չունեմ նրանց, ում հանձնարարված է ընտանիքում կամ պետության ղեկավարման հարցերում այլոց խնամք տանել, քանի որ նրանց խղճի գործը հիմնականում ուրիշների խղճի գործերը քննելն է: Թող նրանք, իրենց սիրո պարտականությունները բարեխղճորեն կատարելուց հետո, անդրադառնան իրենց անձերին:

ԳԼՈՒԽ ԻԹ
Չարախոսության մասին

Դատապարտությունից ծագում է անհանգստություն, հպարտություն, արհամարհանք մերձավորի և թողտվություն սեփական անձի հանդեպ, հարյուրավոր այլ կործանարար հետևանքներ, որոնց մեջ առաջինը չարախոսությունն է: Ինչու ես չունեմ զոհասեղանից վերցրած կայծ, որպեսզի դիպչեմ մարդկանց շուրթերին՝ հանելու նրանց միջից անօրենությունները և սրբելու մեղքերը, ինչպես արեց սերովբեից դասի հրեշտակը Եսայի մարգարեին (Ես. 6.6-7): Նա, ով կարողանար վերջ դներ չարաբանությանը, կվերացներ մեղքերի և անարդարությունների մեծ մասը: Անարդարացիորեն մերձավորին բարի անունից զրկողը պարտավոր է ուղղել արածը: Գողերից և հափշտակողներից և ոչ մեկը երկնային արքայություն մուտք չի գործի, իսկ բարի անունը մարդու ամենամեծ բարիքներից մեկն է: Չարախոսությունը յուրօրինակ սպանություն է, քանի որ մենք ունենք երեք բնույթի կյանք՝ հոգևոր, որը հիմնված է Աստծո շնորհի վրա, մարմնավոր, որը կախում ունի հոգևորից, և քաղաքացիական, որի հիմքում բարի համբավն է: Առաջինից զրկվում ենք մեղքի, երկրորդից՝ մահվան, իսկ երրորդից՝ չարախոսության հետևանքով: Սակայն չարախոսությունը հաճախ գործում է բոլոր երեք սպանություններն էլ: Այն սպանում է խոսողի հոգևոր կյանքը, լսողի՝ հոգին, և չարախոսության զոհ դարձածի քաղաքացիական կյանքը:

Բեռնարդ Քլեյրվոն ասում է, թե՝ չարախոսը, եւ նրան լսողը սատանայի գործիք են՝ մեկը՝ լեզվով, մյուսը՝ ականջով:

Չարախոսների մասին Դավիթն ասում է. «Օձի պես սրեցին լեզուներն իրենց» (Սղմ. 139. 4): Ըստ Արիստոտելի՝ օձն ունի երկճյուղ լեզու և երկու խայթոց: Չարախոսը խայթում ու թունավորում է լսողի ականջները և նրա համբավը, ում մասին որ խոսում է: Ես խնդրում եմ քեզ, իմ սիրելի՝ բարեկամ, երբեք մի՝ չարախոսիր որևէ մեկի հասցեին՝ ոչ ուղղակիորեն, ոչ էլ անուղղակի: Զգուշացիր մերձավորին սուտ մեղքեր վերագրելուց, նրա գաղտնի մեղանչումները բացահայտելուց, պատճառած չարիքը չափազանցնելուց, բարի գործերը սխալ մեկնաբանելուց, որևէ մեկի լավ հատկությունները ժխտելուց, այդ մասին խորամանկորեն լռելուց: Այդ ամենը խորապես վիրավորում է Աստծուն, մանավանդ սուտ վկայությունը, ճշմարտության հերքումը, մերձավորի մասին կանխակալ կարծիքը: Կրկնակի մեղք է սուտ ասելը և մերձավորին վնաս հասցնելը: Ոմանք չարախոսությունը քողարկելու նպատակով իրենց խոսքը հընթացս ուղեկցում են տարբեր նախաբաններով, թեթևակի սիրալիրություններով և քմծիծաղով, առավել հմուտ և թունոտ չարախոսներ են: Նրանք ասում են. ես սիրում եմ այսինչին, նա վատ մարդ չէ, բայց մեղավոր է այս կամ այն բանում: Նա, իհարկե, առաքինի օրիորդ է, բայց մենք տեսել ենք ... և այլն: Նման ձևով սկսվող չարախոսությունը նպատակ ունի ավելի խորը թափանցելու լսողի սիրտը: Կատակով արված չարախոսությունը ամենադաժանն է: Cigue թույն չէ, սակայն հետևանքներն անբուժելի են գինու հետ օգտագործելիս: Նույնպես և չարախոսությունը՝ կարող էր և աննկատ անցնել՝ մի ականջից մտնել, մյուսից դուրս գալ, բայց երբ մատուցվում է ուրախ կատակի ձևով,

զբաղեցնում է լսողի ուղեղը և մտապահվում: «Նրանց շրթների տակ թույն կա իժի» (Սղմ. 139.4),- ասում է Դավիթը:

Մի հայտարարիր՝ «այսինչը հարբեցող է», թեև տեսել ես նրան հարբած վիճակում, կամ նա «շնացող է», թեկուզ և քեզ հայտնի է նման փաստ, որովհետև իրավունք չունես մեկ անգամ գործած սխալի հիման վրա անուն դնելու մարդուն:

Նույը մեղանչեց մեկ անգամ և Ղավտը նույնպես, սակայն ոչ ոք նրանց հարբեցողներ չի անվանի: Պետրոս առաքյալը հանեց սուրը և արյուն հեղեց, բայց նրան մարդասպան չենք համարում:

Նույնիսկ երկար ժամանակ մեղքին անձնատուր եղած մարդուն չի կարելի ախտավոր անվանել, քանի որ կարող ես և սխալվել: Փարիսեցի Սիմոնը Մագդաղինացուն անվանեց մեղավոր կին (Ղուկ. 7.39), որովհետև նա, իսկապես, այդպիսին էր երեկ: Սակայն նրա ասածը ճշմարտությանը չէր համապատասխանում, որովհետև այդ պահին կինը սրտի ցավով ու զղջումով ճշմարիտ ապաշխարությամբ սրբվում էր մեղքերից, և Տերը նրան պաշտպանեց: Անմիտ փարիսեցին իր մտքում մաքսավորին մեղավոր էր համարում, բայց նույնպես սխալվում էր, քանի որ նա արդեն արդարացված էր (Ղուկ. 18.11-14): Աստծու գթասրտությունը անսահման է, Նրա ողորմությանը արժանանալու համար մեկ վայրկյանն էլ բավական է: Ինչպես կարող ենք համոզված լինել, որ երեկվա մեղսագործն այսօր էլ նույնն է: Երեկվա օրը չի դատում այս օրը, իսկ այս օրը չի դատում նախորդը: Միայն վերջին օրը պիտի դատի բոլորին: Մենք երբեք չենք կարող ասել, որ այսինչը չար է՝ առանց ստելու վախի: Կարող ենք տեղյակ լինել, որ այսինչը վատ արարք է գործել՝ ինչ-որ ժամանակ մերժելի կյանք վարել, բայց չի կարելի եզրակացություններ անել «երեկվանից» «այսօր», ոչ էլ «այսօրվանից»՝ «երեկ», առավել ևս վաղվա օրվա մասին:

Այո՛, պետք է զգուշանալ և չարությամբ չխոսել մերձավորի հասցեին, բայց չընկնել մյուս ծայրահեղության մեջ, ինչպես ոմանք, երբ չարախոսությունից խուսափելու համար դրվատում են արատը: Չարախոսության հակում ունեցողի մասին մի՛ ասա, որ սրտաբաց է, ունայնասերի մասին, որ՝ վեհանձն, վտանգավոր անկաշկանդությունը մի՛ անվանիր պարզություն և միամտություն, անհնազանդությունը՝ ջանասիրություն, լկտիությունը՝ ուղղամտություն, վավաշոտությունը՝ մտերմություն: Ո՛չ, սիրելի՛ բարեկամս, չարախոսությունից խուսափելու նպատակով պետք չէ խրախուսել, քծնաբանել և սնել այլ արատներ: Պետք է հստակ արտահայտվել վատի մասին, որ վատ է, նախատինքի արժանին՝ պարսավել: Այդպես վարվելով մենք փառավորում ենք Աստծուն: Սակայն անհրաժեշտ է կատարել հետևյալ պայմանները. ախտը երևան հանել միայն այնժամ, երբ կարող է օգուտ բերել կա՛մ գործին, կա՛մ խոսակցին, կամ նրան, ում մասին խոսվում է: Պետք է ուղիղ ասել, որ տվյալ մարդը անհամեստ է պահում իրեն, որպեսզի մյուսները զգուշանան վտանգից: Եթե ես արդարացնում եմ նրա պահվածքը, լսողներին, մանավանդ մանկահասակներին, կարող է թվալ, որ իրենք ևս կարող են նույնն անել: Նրանց համար օգտակար է, եթե ես նշեմ, որ այսինչ բանը նախատելի է: Արտահայտվելն անհրաժեշտ է. հակառակ դեպքում իմ լռությունը կմեկնաբանվի որպես արատի արդարացում: Միևնույն ժամանակ պետք է հետևել, որ ոչ մի ավելորդ բառ չինչի և թույլ չտրվի անգամ աննշան

չափազանցություն: Ես լռելու եմ, եթե անգամ մի փոքր կասկած ունեմ, որ ասելիքս իրականությանը այնքան էլ չի համապատասխանում: Չեմ խոսելու և այն դեպքում, եթե խոսակցությունը պարզապես չարախոսելու պատրվակ է: Մերձավորի մասին խոսելիս իմ լեզուն նմանվում է վիրաբույժի ձեռքում գտնվող դանակի, որը հատում է նյարդերն ու ջիլերը: Հարվածը պետք է լինի անվրեպ, անհրաժեշտ է ասել իրողությունը. ո՛չ շատ և ո՛չ քիչ: Պարսավելով արատը, պետք է հնարավորին չափ զգույշ վերաբերվել արատը կրողին:

Մեղսագործներից ոմանք անամոթ են և հանդուգն: Նրանց մասին կարելի է արտահայտվել ավելի ազատ, բայց միայն սիրո և կարեկցանքի, այլ ո՛չ բարկության և մեծամտության ոգով, ո՛չ թե ուրիշի անկումից բավականություն ստանալու համար, ինչը բնորոշ է այլասերված և քարսիրտ մարդկանց: Բացառվում են Աստծու և եկեղեցու ակնհայտ թշնամիները:

Հաճախ մարդիկ իրենց թույլ են տալիս դատել երկրի ղեկավարությանը, աչառությամբ վատաբանել որևէ ազգի: Երբեք այդպես չվարվես: Դա վիրավորում է Աստծուն և հանգեցնում ամեն տեսակ գժտությունների: Եթե ուզում ես մեկի մասին վատ բան ասել, նախ քննիր, կարո՞ղ ես արդյոք ճշմարտացիորեն ներկայացնել, աշխատիր մեղադրվողի դիտավորության մեջ թույլատրելի, ներելի բան գտնել, իսկ եթե չհաջողվի՝ փորձիր նրա նկատմամբ կարեկցանք արտահայտել, հիշեցնելով ներկաներին, որ նա, ով չի մեղանչել, պարտական է Աստծու շնորհին: Եթե գիտես, որևէ լավ բան ասա նրա մասին, ում նեղացրել են:

ԳԼՈՒԽ Լ
Որոշ դիտողություններ այն մասին, թե ինչպիսին պիտի լինի խոսելաոճը

Թող քո խոսքը լինի մաքուր, անկեղծ, շիտակ, ճշմարիտ ու հեզ: Խուսափիր անբնականությունից, ձևականությունից, երկակիությունից, կեղծավորությունից: Եթե միշտ հնարավոր չէ ասել ամբողջ ճշմարտությունը, երբեք մի ստիր: Եթե հանկարծակի թույլ ես տվել ոչ ճշմարտացի արտահայտություն, իսկույն ուղղիր խոսքդ՝ բացատրիր կամ հավելիր: Վարժվիր երբեք միտումնավոր չստել, ո՛չ ներողություն խնդրելիս, ո՛չ ուրիշ պատճառով, հիշի՛ր, որ Աստված ճշմարտության Աստված է (Սղմ. 30.6):

Երբեմն հարկ է լինում խոհեմաբար և աննկատելիորեն թաքցնել ճշմարտությունը, սակայն միայն բացառիկ դեպքերում, երբ այդ ծառայում է Աստծո փառքին: Բոլոր մյուս դեպքերում արհեստականությունը վտանգավոր է, քանի որ, ինչպես գրված է Աստվածաշնչում, Աստված չի բնակվում կեղծավոր և նենգամիտ անձի մեջ (Իմաստ. 1. 4-5): Աշխարհիկ ողջամտությունը և կեղծավորությունը (Առակ 10. 9) հատուկ են այս դարի զավակներին: Աստծո զավակները ընթանում են առանց ետ նայելու և զերծ են ետին մտքերից: Ով պարզությամբ է քայլում, նա անկեղծ է,- ասում է իմաստունը: Սուտը, երկփեղկվածությունը, կեղծիքը բնորոշ են թույլ և չարանենգ հոգիներին: Երանելի Օգոստինոսը իր «Խոստովանության» չորրորդ գրքում գրում է, որ իր հոգին և ընկերոջ հոգին միավորված են մեկ հոգու մեջ և ընկերոջ մահից հետո

նա ապրում էր կիսով չափ և վախենում էր մեռնել, որ ընկերը վերջնականապես չմեռնի: Այս խոսքերը հետագայում իրեն շինծու թվացին, անբնական և չափազանցված: Անդրադառնալով նրանց իր «Rétractations» («Հրաժարումներ») գրքում, նա հրաժարվեց այդ արտահայտությունից և հիմարություն անվանեց: Տեսնում ես, բարեկա՛մս, որքան զգայուն է այդ վեհ հոգին խոսքերի նկատմամբ: Այո՛, ճշմարտացի, ուղիղ և անկեղծ խոսքը քրիստոնեական կյանքի մեծագույն զարդն է: «Ասացի՝ «Զգուշանամ իմ ճանապարհին, որ լեզվովս չմեղանչեմ» (Սղմ. 38. 3), «Պահապան դիր, Տե՛ր, իմ բերանին և ամուր դուռ իմ շուրթերին» (Սղմ. 140. 3),- ասում է Դավիթը:

Լյուդովիկոս Թ արքան խորհուրդ էր տալիս երբեք չհերքել ոչ մեկի խոսքը, բացառությամբ այն դեպքերի, երբ զրուցակցի ասածի մեջ մեղքի մասնիկ կա: Այդպես կարելի է խուսափել վեճերից և գժտություններից: Այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է ծագում առարկել կամ հակադրել սեփական կարծիքը, պետք է շատ հեզ և զգույշ լինել, խուսափել ճնշում գործադրելուց, որովհետև խստությունը չի օգնում: Խոսեք քիչ, ինչպես հորդորում են հին իմաստունները, կարևորը՝ մի խոսեք ապարդյուն: Նշանակություն ունի ոչ թե քանակը, այլ որակը: Պետք է խուսափել երկու ծայրահեղությունից՝ չափազանց խստություն դրսևորելուց՝ հրաժարվելով մասնակցել զրույցին, ինչն ընկալվում է որպես անվստահություն և արհամարհանք, և անդադար շատախոսելուց, ինչն ընկալվում է թեթևամտություն: Լյուդովիկոս Թ արքան հավանություն չէր տալիս, եթե հասարակության մեջ խոսում էին շշուկով կամ թաքուն, որպեսզի կասկած չառաջանա, թե որևէ մեկի մասին վատ են խոսում: Նա ասում էր. կիրթ հասարակության մեջ պետք է խոսել այնպես, որ բոլորին լսելի, ուրախալի ու հաճելի լինի:

ԳԼՈՒԽ ԼԱ
Օրինավոր և թույլատրելի զվարճություններ

Ե՛վ հոգին, ե՛ւ մարմինը երբեմն հանգստի կարիք ունեն: Ինչ խոսք, չի կարելի լինել այնքան մռայլ և կոպիտ և բոլորովին թույլ չտալ որևէ զվարճություն: Զբոսնել մաքուր օդում, հանդիպել ուրախ և հաճելի մարդկանց, նվագել և երգել, զբաղվել որսորդությամբ, հանգստի այս հնարավորությունների խելամիտ օգտագործումը միանգամայն ընդունելի է: Օգտակար են մտքի կամ մարմնի ճկունություն պահանջող խաղերը, ինչպիսիք են՝ սպորտային խաղերը, շաշկին և շախմատը: Միայն պետք չէ հատկացնել նրանց չափից ավելի ժամանակ և եռանդ, որովհետև հանգիստը կվերածվի զբաղմունքի, որը հոգուն և մարմնին թեթևություն պարգևելու փոխարեն, առաջ կբերի հոգնություն և ճնշվածություն: Փորձիր հինգ ժամ անընդմեջ շախմատ խաղալ՝ ուժասպառ կլինես, նույնը՝ երկարատև գնդակ խաղալուց հետո:

Ես չեմ ասում, թե խաղից հաճույք ստանալ պետք չէ, այլապես այն հանգստի չի ծառայի: Պարզապես խրախուսելի չէ չափից ավելի ցանկանալ և ձգտել զվարճությունների:

ԳԼՈՒԽ ԼԲ
Արգելված խաղեր

Թղթախաղը և մյուս մոլի խաղերը, ուր մեծ կամ փոքր դրամական շահումները պայմանավորված են պատահականությամբ, ոչ միայն վտանգավոր, այլև միանգամայն չար և պախարակելի են: Այդ իսկ պատճառով արգելվում են քաղաքացիական և եկեղեցական օրենքներով: «Ո՞րն է նրանց վնասը»,- կհարցնեք դուք: Նախ, շահումը կախված չէ խելքից կամ հմտությունից, այլ միանգամայն պատահական է և չվաստակած: «Հետո ինչ,- կասես դու,- այդ ամենը արվում է համաձայնությամբ»: Այո՛, սակայն դրանից չի դադարում լինել անիմաստ, անբովանդակ: Բացի այդ, նման խաղերը ամենևին հանգստավետ չեն, ընդհակառակը՝ շատ հոգնեցուցիչ են: Ուղեղը գտնվում է չընդհատվող ծայրաստիճան լարվածության մեջ, իսկ հուզական ոլորտում տևական տագնապ, վախ, անհամբերություն: Ինչ կարող է լինել ավելի մռայլ, տխուր և ապարդյուն, քան խաղամոլի ուշադրության պրկումը: Խաղի ժամանակ ուրախություն է ի հայտ գալիս միայն շահելու պահին, այն էլ ուրիշի կրած կորուստի հաշվին: Ինչպիսի՞ անազնիվ ուրախություն: Լյուդովիկոս Թ արքան հիվանդ պառկած էր տախտակամածին, երբ երկու պալատական թղթախաղով էին զբաղված: Հազիվ ոտքի վրա կանգնելով, նա բարձրացրեց սեղանը խաղաթղթերով, փողերով մեկտեղ և նետեց ծովը:

ԳԼՈՒԽ ԼԳ
Պարահանդեսներ և այլ զվարճություններ՝ թույլատրելի, բայց և վտանգավոր

Իրենց բնույթով պարերն ու պարահանդեսները չեզոք են, բայց այն կերպը, ինչպես սովորաբար անց են կացվում, ավելի շուտ թեքվում է դեպի չարը և քիչ վտանգ չի ներկայացնում: Ընդունված է պարահանդեսները կազմակերպել գիշերվա ժամերին, ինչը առիթ է տալիս տարբեր գայթակղությունների: Մարդիկ գիշերը մնում են անքուն և հաջորդ առավոտյան ժամանակ կորցնում: Անմտություն է գիշերը վերածել ցերեկի և բարի գործերով զբաղվելու փոխարեն զբաղվել թեթևամտությամբ: Պարերը բորբոքում են սնապարծություն, նախանձ: Սնապարծությունը վատթարագույն զգացմունքներից է: Պարերը մեծապես նպաստում են սխալ և վտանգավոր սիրահարություններին: Նույնիսկ ամենալավ պարահանդեսներում լավ բան չկա: Բայց եթե դեպքի բերումով մասնակցես, չմոռանաս համեստության, արժանապատվության և բարի մտադրությունների մասին:

Պարահանդեսները և նմանօրինակ հավաքույթները պարարտ հող են տարատեսակ մեղքերի և ախտերի առաջացման, ինչպիսիք են՝ վեճը, նախանձը, ծաղրը, խեղկատակությունը, փուչ սիրահարությունը: Նման ժամանցը մարդու հոգին և մարմինը դյուրահակ է դարձնում ցանկասիրությանը: Օձը, առիթը չկորցնելով, կարող է փսփսալ ականջին սիրտը թունավորող անմաքուր մտածումներ, զգացումներ: Այդ բնույթի զվարճությունները տկարացնում են

հոգին, սառեցնում սերը, շփոթեցնում միտքը և առաջ բերում բազում անարգ զգացումներ: Այդ պատճառով նման տեղեր հաճախելիս պետք է աչալուրջ լինել:

ԳԼՈՒԽ ԼԴ
Երբ կարելի է խաղալ և պարել

Ինչու չէ, այդ կարելի է անել հանգստանալու միտումով, բայց ոչ մոլուցքով, գերհոգնությունից, ավելորդ զրգռվածությունից խուսափելու նպատակով տրամադրել մի փոքր ժամանակ: Հաճախակի տեղի ունեցող զվարճությունները վերածվում են հոգնատանջ, մաշող զբաղմունքի: Երբեմն քրիստոնեական սերը դրդում է զիջողամտության: Եղիսաբեթ Հունգարացին երբեմն իրեն թույլ էր տալիս հասարակության մեջ խաղալ և պարել՝ առանց վնաս հասցնելու իր մեջ արմատացած բարեպաշտությանը, որը նույնքան ամուր էր և անսասանելի, որքան Ռիետա լիճը շրջապատող լեռները՝ մշտական ալեբախումների ներքո: Նրա բարեպաշտությունը միայն աճում էր շրջապատող շքեղության անցուդարձի մեջ: Զորեղ կրակը չի նահանջում և քամու դիմաց, այնինչ թույլ պատրույգը իսկույն մարում է թեթև զեփյուռից:

ԳԼՈՒԽ ԼԵ
Պետք է հավատարիմ լինել ե՛ւ մեծ, ե՛ւ փոքր բաներում

Աստված կամենում է, որ մենք հավատարիմ լինենք Նրան՝ ե՛ւ մեծ, ե՛ւ փոքր բաներում: Ուրեմն, բարեկամս, պատրաստ եղիր տառապելու և նույնիսկ նահատակվելու մեր Փրկչի համար: Պատրաստ եղիր, եթե կամենա, Նրան հանձնելու քո կյանքի ամենաթանկը՝ հորդ, մորդ, եղբորդ, ամուսնուդ, երեխաներիդ, աչքերիդ լույսը և կյանքդ, բայց քանի դեռ Նախախնամությունը չի պահանջում քեզնից այդքան մեծ զոհողություններ և նեղություններ, հեզությամբ տար ամենօրյա մանր, աննշան անհաջողությունները, անախորժությունները և հոգսերը, ինչպես՝ գլխացավը, ատամնացավը, ջարդված բաժակը, անբարեհամբույր կամ արհամարհալից հայացքը, ձեռնոցների, թաշկինակի կամ զարդի կորուստը, առավոտյան վաղ արթնանալու անհրաժեշտությունը և այլն: Եթե դու սիրով և համբերությամբ տանես այս փոքրիկ նեղությունները, նրանք կբավարարեն Աստծո բարեգթությունը, որը մեկ բաժակ ջրի փոխարեն (Մտթ. 10. 42) հավատարիմներին խոստանում է երկնային պարգևներ: Քանի որ նման բաներ պատահում են ամեն րոպե, մեզ հնարավորություն է տրվում կուտակել մեծաթիվ հոգևոր գանձեր: Եկատերինա Սիենացու վեհ մտածողությանը, իմաստալից, մարգարեական խոսքին ծանոթանալով, ես չեմ կասկածում, որ նա կարող էր գրավել Երկնային Փեսայի սիրտը: Շատ հուզիչ էր տեսնել նրան նաև հայրական տան խոհանոցում՝ կրակ վառելիս, կերակուր պատրաստելիս, հաց թխելիս և զանազան տնային գործերում, համակված Աստծո հանդեպ նվիրվածության և սիրո զգացումով: Ծառայելով իր ընտանիքին՝ նա ծառայում էր հորը, ինչպես կծառայեր Աստծուն, մորը՝ ինչպես Աստվածածնին,

եղբայրներին՝ ինչպես առաքյալներին, քանի որ անելով այդ, կատարում էր Աստծո կամքը:

Այսպիսով, ես ուզում եմ, որ դու պատկերացնես, ինչպես է հնարավոր կատարել Աստծո կամքը ամենատարբեր գործերում: Խորամուխ եղիր այնպիսի վեհ գործերում, ինչպիսիք են՝ աղոթքը և հայեցողությունը, Սբ. Մարմնի և Արյան հաղորդությունը, Աստծո խոսքի և սիրո տարածումը մարդկանց մեջ, քո կոչմանը համաձայն կատարիր այդ կարևոր և մեծ գործերը, բայց մի մոռացիր նաև առաքինության այն փոքր ու համեստ գործերի մասին, որոնք ծաղիկների պես աճում են խաչի ստորոտում՝ ընտանեկան հոգսեր, հիվանդներին և աղքատներին խնամել, տնային գործեր, և այդ ամենը կատարիր ճիշտ նույն տրամադրությամբ, որով անում էր Եկատերինա Սիենացին: Հազվադեպ են ընձեռնվում Աստծուն ծառայելու արտառոց դեպքեր, բայց փոքրերն անպակաս են. «Ով հավատարիմ է քչի մեջ՝ հավատարիմ կլինի և շատի մեջ» (Մտթ. 25. 21),- ասաց Փրկիչը: «Շատի վրա կկարգվի նա»: Բոլոր գործերդ արա Տեր Հիսուսի անունով (Կող. 3. 17), և բոլորը բարեհաջող կավարտվեն. «Ուստում ես թե խմում, աշխատում թե հանգստանում, եթե ամեն ինչ անում ես Աստծո փառքի համար» (Ա. Կոր. 10. 31), քո բոլոր գործերը արդյունավետ կլինեն:

ԳԼՈՒԽ ԼԶ
Պետք է լինել արդարամիտ և խելամիտ

Մենք մարդ ենք, օժտված ենք բանականությամբ, բայց որքան հազվադեպ են հանդիպում իսկապես խելացի մարդիկ: Ինքնասիրությունը, սովորաբար, վնասում է մեր մտքին, բազմաթիվ փոքր, բայց վտանգավոր անարդարություններ հանգեցնելով, որոնք «Երգ Երգոցի» փոքրիկ աղվեսների նման ապականում են խաղողի այգիները (Երգ. 2. 15), որովհետև քանի դեռ նրանք շատ փոքր են, նրանց ուշադրություն չեն դարձնում, բայց նրանք ի վիճակի են մեծ ավերածություններ գործել, որովհետև անթիվ-անհամար են: Մի՞թե նույնը չի վերաբերում անարդարությանը և նախապաշարումներին: Մենք շատ բաներում ենք մեղադրում մերձավորներին և ներում՝ ինքներս մեզ: Մենք ուզում ենք ծախել ավելի թանկ, իսկ գնել ավելի էժան: Մենք ուզում ենք, որ մեզ հետ վարվեն արդարացի, հանդուրժողաբար, բայց ուրիշների հետ նույն կերպ չենք վարվում:

Մենք արհամարհում ենք այն ամենը, ինչ մեր ճաշակը չի գոհացնում: Եթե մեկի հանդեպ վատ ենք տրամադրված, ինչ էլ անի՝ սխալ ենք մեկնաբանում, իսկ նրան, ով մեզ հաճելի է, ամեն ինչ ներում ենք: Երբեմն ծնողները ֆիզիկական թերության պատճառով նույնիսկ չեն ուզում տեսնել իրենց առաքինասեր երեխային, իսկ արատավոր հակվածություններով երեխաները գեղեցիկ արտաքինի շնորհիվ կարող են առանձնահատուկ սեր վայելել:

Մենք գերադասում ենք հարուստներին աղքատներից, թեև նրանք ոչ մի բանով ավելի լավը չեն, նախընտրում նրանց, ովքեր ավելի լավ են հագնված: Պահանջում ենք, որ մեր իրավունքները չոտնահարվեն, բայց ուրիշների նկատմամբ կարող ենք և անփույթ գտնվել: Հեշտությամբ բողոքում ենք մերձավորից, բայց չենք ուզում, որ բողոքեն մեզնից: Ուրիշի համար որևէ բան անելիս մեզ թվում է, թե մեծ բան ենք արել, իսկ նրա արածը մեզ քիչ է թվում:

Կարճ ասած, նման ենք երկու սիրտ ունեցող կաքավներին: Մի սիրտը բարի է, ուշադիր, հոգատար սեփական անձի, մյուսը խիստ և դաժան մերձավորների նկատմամբ: Երկու կշեռքով ենք կշռում, մեկով մեր առավելությունները, մյուսով ուրիշների:

«Նենգ շրթունքները երկու սիրտ ունեն» (Սղմ. 11. 3),- ասում է Սնսելմ Քենթրբերցին, մեկը ուժեղ ստանալու, մյուսը թույլ տալու համար: Այս ամենը պիղծ է Աստծո առջև: (Բ Օր. 25. 13-16; Առակ. 20. 10-23): Սիրելիս, արդար և ուղիղ եղիր: Միշտ փորձիր քեզ դնել մերձավորիդ տեղը, իսկ նրան քո: Դու ճիշտ կդատես այնժամ: Գնումներ անելիս մտածիր վաճառողի մասին, վաճառելիս գնորդի: Արդար և ազնիվ ապրելու դեպքում մենք ոչինչ չենք կորցնում: Հաճախակի քննիր քո սիրտը, բարեկամս, այնպիսի՞ն է նա ուրիշների նկատմամբ, ինչպիսին կլինեիր դու նրանց փոխարեն: Ահա թե որն է իսկական քննությունը: Երբ Տրայանոսին կայսերը, մեղադրեցին, որ շատ մատչելի է ենթակաների համար, պատասխանեց. «Ես պիտի լինեմ այնպիսին, ինչպիսի հրամանատար կուզենայի ունենալ ենթակա լինելու դեպքում»:

ԳԼՈՒԽ ԼԷ
Ցանկությունների մասին

Ամեն մեկն էլ գիտի, որ պետք է զգուշանա արատավոր ցանկություններից, որ չարիքի ցանկությունը մարդուն վատթարացնում է: Ավելին կասեի, բարեկամս, մի ցանկացիր այն ամենը, ինչ վտանգ է ներկայացնում հոգու համար, ինչպիսիք են պարահանդեսները, խաղերը և նման ժամանցը, մի ցանկացիր ո՛չ պատիվ, ո՛չ տեսիլքներ, ո՛չ զմայլանքներ, որովհետև սրանց մեջ մեծ վտանգ կա խաբկանքի և գայթակղության ենթարկվելու: Շատ հեռավոր ապագայից որևէ բան մի ակնկալիր, քանի որ այդ իզուր հոգնեցնում և թուլացնում է սիրտը, պահում տագնապալից վիճակում: Եթե որևէ երիտասարդ այրվում է ինչ-որ պաշտոն ստանալու ցանկությամբ, որի ժամանակը դեռ չի հասել, ի՞նչ իմաստ ունի այդ ցանկությունը: Եթե ամուսնացած կինը մենաստան գնալու ցանկություն ունի, նրա ինչի՞ն է պետք այդ: Եթե ես ուզում եմ գնել հարևանի կալվածքը, որը նա դեռ չի պատրաստվում վաճառելու, մի՞թե իզուր չեմ վատնում ժամանակս: Եթե ինքս, հիվանդ լինելով հանդերձ, ուզում եմ այցելել ուրիշ հիվանդների կամ քարոզություն կազմակերպել և անել այն, ինչ անում են առողջ մարդիկ, իմ բոլոր այս ցանկությունները կլինեն անժամանակ և անօգուտ: Փոխարինենք նրանց օգտակար ցանկություններով, ինչպես օրինակ համբերության, Աստծո կամքին հնազանդ լինելու, մեզ բաժին ընկած վշտերը հեզությամբ կրելու, այսինքն՝ այն ամենով, ինչ Աստված սպասում է մեզանից:

Հաճախ մենք նմանվում ենք հղի կանաց, որ թարմ բալ են ցանկանում ձմռանը, թարմ խաղող՝ գարնանը: Ես ճիշտ չեմ համարում, երբ որևէ մեկը մտասևեռված է այնպիսի աշխատանքի կամ հանգստի, որոնք չեն համապատասխանում իր պարտքի գիտակցմանը և ունեցած դիրքին: Դեմ եմ անգամ, որ դու ձգտես առավել խելացի կամ սրամիտ լինել, քանի որ այդ բոլորը թեթևամտություններ են: Յուրաքանչյուրը պիտի հոգա իր ունեցած ընդունակությունը զարգացնելու: Մի փնտրիր Աստծուն ծառայելու այլ միջոց-

ներ, բացի նրանցից, որոնք հատուկ են անձամբ քեզ, պետք է ջանասիրաբար օգտագործես ունեցածդ: Այս ամենը վերաբերում է սրտին հաճելի ցանկություններին, իսկ պարզ ցանկությունները չեն վնասում, միայն եթե հազվադեպ են:

Մի ձգտիր խաչ վերցնել, պարզապես դիմացիր այն ամենին, ինչ քեզ բաժին է ընկնում: Սխալ է երազել մարտիրոսանալու մասին և չդիմանալ վիրավորանքների: Թշնամին հաճախ խիստ ցանկություն է հրահրում մեր չունեցած, բայց և պետք չեկող բաների հանդեպ և շեղում մեր միտքը այն մանրուքներից, որոնցից կարող ենք մեծ օգուտ քաղել: Երևակայության մեջ հաղթում ենք աֆրիկյան հրեշների, իսկ իրականում անուշադրության պատճառով պարտություն կրում ճանապարհին պատահած մի փոքրիկ օձից: Փորձություններ մի ցանկացիր, այդ հանդգնություն է, բայց պատահելու դեպքում քաջաբար դիմավորիր և պաշտպանվիր:

Կերակուրների բազմազանությունը ծանրաբեռնում է ստամոքսը, և եթե տկար է, կործանում այն: Մի բեռնիր հոգիդ բազմաթիվ ցանկություններով՝ ո՛չ աշխարհիկ, որովհետև իսպառ կփչացնեն, ո՛չ էլ նույնիսկ հոգևոր, որ շփոթ չառաջանա: Երբ հոգին մաքրված է, առաջանում է հոգևոր մեծ ախորժակ, և նա տենչում է զանազան կերակուրների՝ ապաշխարության, խոնարհության, սիրո, աղոթքի: Լավ ախորժակ ունենալը՝ լավ է առողջության համար, բայց ինչպե՞ս ես մարսելու այսքան կերակուր: Հոգևոր հոր խորհրդով ընտրիր այն ցանկությունները, որոնք ի վիճակի ես իրականացնելու հենց հիմա: Երբ նրանք իրականանան, Աստված կտա ուրիշ ցանկություններ, դու կաշխատես այդ ուղղությամբ ևս որոշ ժամանակ և չես վատնի ժամանակդ անօգուտ ցանկություններ փայփայելով: Ես չեմ ասում, որ պետք չէ ունենալ բարի ցանկություններ, բայց հաջորդականություն սահմանելն անհրաժեշտ է: Ունեցած ցանկությունները պետք է փակել սրտի որևէ անկյունում և իրականացնել նրանք, որոնց ժամանակն արդեն հասել է: Ասածս վերաբերում է ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ ցանկություններին, այլապես տագնապն ու շտապողականությունը կլինեն մեր մշտական ուղեկիցը:

ԳԼՈՒԽ ԼԸ
Խորհուրդներ ամուսնացածներին

Մեծ է պսակի խորհուրդը (Եփես. 5. 32), հիարկե նկատի ունեմ քրիստոնեական պսակը: «Ամուսնությունը ըստ ամենայնի հարգելի է» (Եբր. 13. 4), անգամ կույսերը պետք է խոնարհաբար հարգեն այն: Հավասարապես սուրբ է թե՛ աղքատների, թե՛ հարուստների համար, քանի որ նրա ծագումը, օգտակարությունը, ձևերը և բնույթը սուրբ են: Այն քրիստոնեության օրրանն է, որը լցնում է երկիրը հավատարիմներով, որպեսզի երկնքում ավելանա ընտրյալների թիվը: Այդ իսկ պատճառով, գրույցը ամուսնական կյանքի հարցերի շուրջ չափազանց կարևոր է և պետության համար, նրա արմատն է և ամենայն օգտակարության աղբյուրը:

Աստված կամեցավ, որ իր Սիրելի Որդին հրավիրվի Կանայի հարսանիքին: Մխիթարության և օրհնության գինին երբեք չի պակասում, բայց պատահում է, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի փոխարեն ներկայանում է Ադոնիսը և

Աստվածամոր փոխարեն՝ Վեներան: Հնում խայտաճամուկ գառներ բուծելու նպատակով ոչխարներին հավաքում էին մեկտեղ և նրանց ջրի գուռերի մեջ դնում զոլավոր գավազաններ (Ծննդ. 30. 38-39): Որքան լավ կլիներ հարսանյաց հանդեսներին բազմազանորեն ներկայացնել այդ խորհրդի արժանիքներն ու սրբությունը, մինչդեռ այնտեղ վարում են անհամեստ խոսակցություններ և թույլ տալիս անպատշաճ վարվեցողություն: Զարմանալի չէ, որ համապատասխան արդյունք ՝են ստանում: Ամուսնացողներին ամենից առաջ անհրաժեշտ է փոխադարձ սեր, ինչպես Աստվածաշնչում ասում է Սբ. Հոգին: Անիմաստ է ասել «սիրեցեք միմյանց բնական սիրով», չէ որ այդպես սիրում են և աղավնիները, կամ «սիրեցեք միմյանց մարդկային սիրով», որովհետև այդպես սիրում են և հեթանոսները: Իսկ ես կասեմ, ինչպես առաքյալը. «Մարդիկ, սիրեցեք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց Եկեղեցին, կանայք, սիրեցեք ձեր ամուսիններին, ինչպես Եկեղեցին՝ իր Փրկչին» (Եփես. 5. 25): Աստված Ինքը բերեց Եվային Ադամի մոտ, որ նրան կնության առնի:

Աստված Ինքն անտեսանելի ձեռքով կապեց ձեր ամուսնության օրհնության հանգույցը և տվեց ձեզ իրար, սիրեցեք միմյանց աստվածային սուրբ սիրով:

Այդպիսի սիրո առաջին հետևանքն է սրտերի անքակտելի միությունը: Տերը Իր արյունով փոխկապեց ամուսնուն ու կնոջը, այդ իսկ պատճառով ավելի դյուրին է հոգին անջատել մարմնից, քան ամուսնուն՝ կնոջից: Ամենից առաջ այն ոչ թե մարմնավոր միություն է, այլ սրտերի միասնություն, սիրո դաշինք:

Այդ սիրո երկրորդ արգասիքն է անխախտելի հավատարմությունը: Եկեղեցին օրհնում է նշանադրության մատանիները և որպես կնիք տալիս նախ տղամարդուն՝ վկայություն այն մասին, որ նրա սրտում երբեք տեղ չի գտնի սեր մեկ այլ կնոջ հանդեպ, հետո միայն նա փոխանցում է մատանին կնոջը, որպեսզի նա չսիրի մեկ այլ տղամարդու, բացի նրանից, ում Աստված տվել է:

Երրորդ պտուղն է երեխաներ ունենալն ու դաստիարակելը: Մեծ պատիվ է տրվում ձեզ պսակի միջոցով, որը կայանում է նրանում, որ Աստված ցանկանալով բազմապատկել Իրեն հավիտենականության մեջ փառաբանող հոգիների թիվը, մասնակից է դարձնում ձեզ մարմինների ստեղծման գործում, որոնց մեջ նա արարում է հոգին, ճիշտ այնպես, ինչպես փչեց անմահ հոգին առաջին մարդու մարմնի մեջ: Ուրեմն, տղամարդի՛կ, պահպանեցեք ձեր կանանց հանդեպ քնքուշ, մշտատև սրտագին սեր, և դուք, կանայք, սիրեցեք ձեր ամուսիններին: Սակայն, սերը բազմապատկելով, զգուշացեք խանդից, որի պատճառով առաջանում է աղմուկ, անկարգություն, գժտություն: Խանդն անհնար է այնտեղ, ուր մտերմությունը փոխադարձաբար հիմնված է իսկական առաքինության վրա: Խանդի բացակայությունը վկայում է, որ սերը բիրտ ու զգայական չէ: Այն ի հայտ է գալիս անկայուն առաքինության դեպքում: Խանդը հարաբերությունների գռեհկության ցուցանիշն է, այլ ոչ մաքրության և կատարելության, որովհետև կատարյալ մտերմությունը հավատում է սիրելիի առաքինությանը, իսկ խանդը, ընդհակառակը, չի վստահում:

Եթե դուք, տղամարդի՛կ, ուզում եք, որ ձեր կանայք հավատարիմ լինեն ձեզ, օրինակ ծառայեք նրանց:

Սբ. Գրիգոր Նազիազանցին ասում է. «Ինչպե՞ս եք սրբություն պահանջում ձեր կանանցից, երբ ինքներդ անմաքուր կյանք եք վարում: Ինչպես եք նրանց

պատասխանատվության ենթարկելու այն բանի համար, որ իրենց չեք տվել: Եթե ուզում եք, որ ձեր կանայք անբասիր լինեն՝ ազնիվ եղեք նրանց հանդեպ»: Ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Ձեզնից յուրաքանչյուր ոք գիտենա իր մարմինը պահել սրբությամբ և պատվով» (Ա. Թես. 4. 4): Ինչ կա զարմանալու, եթե նրանք խաղում են ձեր պատվի հետ, եթե ինքներդ եք նրանց դրդում անհավատարմության: Կանայք, ում կյանքի անվիճելի մաս է մաքրությունը և ազնվությունը, փութացեք բարձր պահել ձեր պատիվը և թույլ մի տվեք որևէ անպարկեշտության բարոյազուրկ անել ձեզ: Արգելեք ձեր ներկայությամբ ամեն տեսակի թեթևամտության դրսևորում: Զգույշ եղեք, եթե մեկը գովում է ձեր գեղեցկությունը և նազանքը: Նա, ով գովում է այն, ինչ իրեն իրավամբ չի պատկանում, հափշտակելու միտում ունի: Ձեզ մեծ անարգանք է հասցվում, եթե գովասանքին միանում է նաև ձեր ամուսնու հանդեպ անհարգալից վերաբերմունք, պետք չէ անսալ անմաքուր խոսքերին: Հոգին թունավորվում է ականջի միջոցով, ինչպես մարմինը բերանի:

Սիրո և հավատարմության միասնությունից վստահություն է առաջանում: Օգոստինոսի մայրը՝ Մոնիկան, իր որդուն ընծայեց Աստծուն նախքան նրա աշխարհ գալը: Աստված կատարում է նման խոստումները: Օրինակները բազմաթիվ են՝ երանելի Օգոստինոսը, Թովմաս Աքվինացին, Անդրեասը և շատ ուրիշներ: Բեռնարդ Քլեյրվոյի արժանավոր մայրը երեխաներ ունենալուն պես իսկույն ընծայում էր նրանց Քրիստոսին և հետո վերաբերվում որպես Աստծուն պատկանող, նվիրական անոթների, որ Աստված է վստահել իրեն: Նրա յոթ երեխաներն էլ հետագայում Կաթոլիկ եկեղեցու սուրբեր դարձան:

Երեխայի ծնվելուց հետո ծնողները պետք է ձգտեն նրա սրտում սերմանել Աստծո երկյուղը: Այսպես օր.՝ Լյուդովիկոս Թ արքայի մայրը որդուն հաճախ ասել է. «Իմ թանկագին զավակս, ինձ համար շատ ավելի հեշտ կլիներ, եթե հանկարծ մեռնեիր իմ աչքի առաջ, քան մահացու մեղք գործեիր»: Նրա սուրբ որդին պատմում էր, որ այդ խոսքը այնքան խորն էր խոցել իր սիրտը, որ ամբողջ կյանքում չի եղել օր, որ չհիշի, և գործադրել է բոլոր ջանքերը՝ չխախտելու այն: Ամենևին պարտադիր չէ շատ նյութական բարիքներ ձեռք բերել, բայց պետք է ջանք չխնայել դաստիարակելու երեխաներին Աստծո երկյուղով և վարժեցնել առաքինությանը: Մոնիկան այնպիսի եռանդով ու համառությամբ էր պայքարում Օգոստինոսի վատ հակումների դեմ, որ հետևում էր նրան ցամաքում և ծովում: Նա նորից ծնեց որդուն իր արցունքներով, երբ նա դարձավ առ Աստուած, ինչպես ծնել էր մարմնով:

Ամուսինները պետք է հոգան մեկմեկու բարեպաշտության համար: Ոչ բարեպաշտ տղամարդը բիրտ ու դաժան կենդանի է, իսկ կինը՝ անկայուն առաքինության մեջ և հակված ընկնելու: Պողոս առաքյալը ասում է, որ մեկը կարող է մյուսին ուղղել դեպի առաքինություն (Ա Կոր. 7. 14): Ինչպիսի՞ օրինություն է, երբ այր ու կին հավատարիմ են Աստծուն և պատկանում են իրար Աստծո Վախով: Նրանց փոխադարձ աջակցությունը մեծ պիտի լինի, որպեսզի որևէ տարաձայնություն և երկուստեք անկում տեղի չունենա: Սուրբ Հոգին հեռանում է այն ընտանիքներից, ուր վեճ ու անհամաձայնություն կա: Սբ. Գրիգոր Նազիանզացին պատմում է, որ նրա ժամանակներում նշում էին ամուսնության ամեն մի տարեդարձը: Ես հավանություն եմ տալիս այդ

սովորությանը, եթե այն չի վերածվում աշխարհիկ զվարճության և զգայական հաճույքների: Խոստովանությունից և հաղորդությունից հետո այր ու կին շատ ավելի մեծ պատասխանատվության գիտակցումով, քան սովորաբար, նորոգում են իրենց համատեղ կյանքի նվիրաբերումը Աստծուն՝ Նրանից ստանալով օգնություն և օժանդակություն կյանքի դժվարին պարագաներում:

ԳԼՈՒԽ ԼԹ
Սրբությունը ամուսնական կյանքում

Առաքյալը գրում է, որ ամուսնական անկողինը սուրբ է (Եբր. 13. 4): Սուրբ ամուսնությունը հաստատվել է դրախտում, ուր չկա պղծություն և անմաքրություն:

Միտքս պարզաբանելու համար փորձեմ զուգահեռ անցկացնել ամուսնական հարաբերությունների և սննդառության միջև: Սնունդն անհրաժեշտ է գոյապահպանման համար և այդպիսով ճիշտ է, սուրբ և պատվիրված: Նույնպես և ֆիզիկական հարաբերությունները ամուսինների միջև սուրբ են այնքանով, որ ծառայում են երեխաներ ունենալուն և փոխադարձ սիրո կապը ամրացնելու նպատակին:

Օրինական է նաև այն սնունդը, որը թեև անմիջականորեն չի ծառայում կյանքի պահպանությանը, սակայն անհրաժեշտ է փոխադարձ սիրո ջերմությունը բազմապատկելու: Այս իմաստով Պողոս առաքյալը ամուսնական հարաբերությունները դիտում է որպես պարտականություն (Ա Կորնթ. 7. 3), որոնցից կարելի է խույս տալ միայն փոխադարձ համաձայնությամբ (Ա Կորնթ. 7. 5):

Անհագաբար և անկանոն սնվելը արատ է, մոլություն: Սննդի օգտագործումը պայմանավորված է ոչ միայն քանակությամբ, այլև սնունդը ընդունելու յուրաքանչյուրով, բնույթով: Այդպես, օգտակար հատկություններ ունեցող մեղրը կարող է վերածվել թույնի, դառնալ հիվանդության, նույնիսկ մահվան պատճառ: Սուրբ և ազնիվ ամուսնական կյանքը, հասարակության համար անհրաժեշտ լինելով հանդերձ, առանձին դեպքերում դառնում է վտանգավոր և տեղիք տալիս հոգին սպանող մահացու մեղքերի: Այդ պատահում է այն դեպքերում, երբ ամուսնության բուն նպատակը քողարկված է կամ այլասերված, և որքան շեղված է օրինական կերպից, այնքան ավելի նողկալի է: Երեխաներ ունենալը ամուսնության առաջին և հիմնական նպատակն է: Այնտեղ, ուր այդ նենգափոխված է, ամուսնությունը դառնում է Աստծու առջև ահավոր և գարշելի:

Սնվելու ձևը նույնպես կարող է զազրելի, այլասերված բնույթ ստանալ, եթե առկա է որովայնամոլությունը, երբ մարդը ուտելուց առաջ և հետո մտածում է միայն ուտելու մասին: Փիղը երկրի վրա բնակվող կենդանիներից ամենաարժանավորն է: Նա երբեք չի փոխում իր զույգին և ամբողջ կյանքում քնքշորեն հոգում է նրա մասին: Զուգավորումը կատարվում է երեք տարին մեկ անգամ հինգ օրվա ընթացքում և այնքան աննկատ, որ ոչ մեկին չի հաջողվել դիտել այն: Բայց վեցերորդ օրը կարելի է տեսնել, ինչպես է փիղը ուղևորվում դեպի գետը, լվանում ամբողջ մարմինը և նոր միայն վերադառնում իր հոտը: Նա խորշում է ամեն տեսակի զգայական հաճույքներից: Նույնպես և մարդը, պետք է

լվա ոչ միայն մարմինը, այլև մաքրի իր սիրտը ամեն տեսակի կապվածություններից և զգայականությունից և անկաշկանդ հոգով զբաղվի ավելի վեհ գործերով: Հրաշալի է ասում Պողոս առաքյալը Կորնթացիներին ուղղված նամակում. «... այսուհետև ժամանակը կարճ է: Նրանք, որ կին ունեն, այնպես ապրեն, որպես թե ունեցած չլինեն» (Ա Կոր. 7. 29): Ըստ Սբ. Գրիգոր Նազիազանցու, այս խոսքը վերաբերում է նրանց, ում համար ֆիզիկապես մերձեցումը ինքնանպատակ չէ և չի խոչընդոտում հոգևոր կյանքին: Այն, ինչ ասվում է ամուսնուն՝ հավասարապես վերաբերում է և կնոջը: «Նրանք, որ աշխարհիկ կյանք են վարում,- ասում է առաքյալը,- այնպես ապրեն, որպես թե՝ վայելած չլինեն» (Ա Կորնթ. 7. 31), յուրաքանչյուրն իր դիրքին համեմատ, բայց առանց կապվածության, ազատ՝ Աստծուն ծառայելու համար, կարծես բոլորովին չառնչվելով աշխարհի հետ: «Մեծ չարիք է մարդու համար,- ասում է երանելի Օգոստինոսը,- որ նա հաճույք է փնտրում այն բանում, ինչից պիտի միայն օգտվեր, և միայն օգտվում է նրանից, ինչը պիտի վայելեր»: Մենք պիտի վայելենք հոգևորը, իսկ օգտվենք՝ ֆիզիկականից, եթե մենք աղճատում ենք բնականոն ընթացքը, մեր հոգին դառնում է բիրտ ու վայրենի:

Ես կարծում եմ, որ ամեն բան, ինչ ուզում էի ասել, ասացի, և առանց ուղիղ խոսելու հասկացրեցի այն, ինչի մասին չէի ուզի խոսել:

ԳԼՈՒԽ Խ
Խորհուրդներ այրիներին

Պողոս առաքյալը Տիմոթեոսին ուղղված նամակում դիմում էր բոլոր հոգևոր անձանց. «Հարգիր այն այրիներին, որ իսկապես այրիներ են»: Իսկական այրուն անհրաժեշտ է իմանալ հետևյալը.

1. Այրի լինել ոչ միայն մարմնով, այլև սրտով: Այդ նշանակում է, որ նա պետք է հաստատուն որոշում կայացնի այրիության անարատությունը պահպանելու մասին: Նորից ամուսնանալու ցանկությունն փայփայողները իսկական այրիներ չեն: Շատ ավելի լավ է վարվում ողջախոհության երդում տվող այրին: Նրա մտքով այլևս երբեք չի անցնի ամուսնանալ, որովհետև գիտակցում է, որ խոստումը խափանելու դեպքում կզրկվի երկնային արքայությունից, և այդ զգոնության է դրդում նրան: Երանելի Օգոստինոսը խորհուրդ է տալիս քրիստոնյա այրիներին ողջախոհության երդում տալ: Երդումով մենք նվիրաբերում ենք Աստծուն ոչ միայն պտուղները, այլև պտուղ տվող ծառը, այսինքն՝ մեր կամքը: Պահելով ողջախոհությունը, մենք փաստորեն ընծայում ենք Աստծուն մեր մարմինը, բայց խախտելու հնարավորությունից չենք հրաժարվում: Երդումով մենք ժխտում ենք խախտելու հնարավորությունը և անմնացորդ տրվում ծառայության Նրան, ում ծառայելը լավ է աշխարհի բոլոր թագավորություններից:

Սրտանց միանալով այս խորհուրդին, ես ուզում եմ, որ երդում տվողները անհողդողդ, սրբությամբ և խելամտորեն ի կատար ածեն դրանք՝ ի վերուստ ներշնչում ստանալով և աստվածասեր ու խորիմաց ղեկավարի հետ խորհրդակցելով: Այս դեպքում նրանց կյանքն ավելի պտղաբեր կլինի:

2. Բացի դրանից, այդպիսի երդումի դրդապատճառը պիտի լինի միայն Աստծո հանդեպ սերը, այլ ոչ թե երկրորդ ամուսնության հետևանքով երեխաներին ժառանգությունից զրկելու մտավախությունը կամ որևէ այլ աշխարհիկ նկատառումներ: Աստծո համար գնահատելի է միայն այն, ինչ արվում է հանուն Աստծո: -

«Մեղկասեր այրին կենդանվույն մեռած է» (Ա Տիմ. 5. 6),- ասում է Պողոս առաքյալը: Եթե այրին սիրում է զուգվել, մասնակցել տոնախմբությունների և պարահանդեսների, գրավել տղամարդկանց ուշադրությունը, ապա նա այրի է միայն մարմնով, և ոչ հոգով: Անգամ սգո զգեստ կրելը կարող է սնափառությունից լինել, որովհետև սպիտակ մաշկի և սև գույնի համադրությունը նրան ավելի գրավիչ է դարձնում, եթե նա մտածում է տղամարդուն դուր գալու մասին:

Աշխարհի ավելորդություններից հեռանալը անհրաժեշտ է բարեպաշտ կյանք վարելու համար: Այդ վերաբերում է բոլորին, մանավանդ իսկական այրիներին: Դժվար չէ սիրել ամուսնուն, քանի դեռ նա կենդանի է, բայց սիրել նրան մահից հետո այնպես, որ չցանկանալ ուրիշին՝ բնորոշ է միայն իսկական այրիներին: Այրին չպիտի թողնի իր երեխաներին, եթե նրանք դեռ կարիք ունեն մայրական սիրո և խնամքի: Պետրոս առաքյալն ասում է, եթե մեկը յուրայիններին և մանավանդ ընտանիքին խնամք չի տանում, ավելի չար է, քան անհավատը (Ա Տիմ. 5. 8): Բայց եթե երեխաները այլևս խնամքի կարիք չունեն, նա պիտի ամբողջովին նվիրվի Աստծուն: Եթե նա խառնվում է աշխարհիկ գործերին, օր.՝ դատավարություններին, հաճախ տեղի է տալիս ողջախոհության թշնամուն: Այրին պիտի մշտապես աղոթքի մեջ լինի:

Իսկական այրու նկարագրին բնորոշ են՝ լիակատար համեստությունը, աղքատներին և հիվանդներին հոգալը, սգավորներին մխիթարելը, օրիորդներին բարեպաշտ կյանքի առաջնորդելը: Նա պիտի օրինակ լինի կանացի բոլոր բարեմասնություններում:

Մաքրությունը և պարզությունը նրա հագուստի զարդերն են, խոնարհությունը և սերը՝ գործերի, ազնվությունը և բարի կամեցողությունը՝ խոսքի, համեստությունը՝ աչքերի, իսկ խաչյալ Քրիստոսը՝ սրտի միակ սերը: Իսկական այրին եկեղեցում տարածում է բարեպաշտության բուրմունքը և համարյա միշտ ծածկված է նվաստության փարթամ տերևներով: Նա չի շտապում մասնակցել աշխարհիկ խոսակցություններին, քանի որ ուզում է պահպանել սրտի թարմությունը աշխարհի գայթակղություններից, ունեցվածքի, պատվի և սիրո ցանկությունից: Եթե այդպես է վարվում, առավել երանելի է (Ա Կոր. 7. 40): Իսկական այրին չպիտի դատի նրանց, ովքեր ամուսնանում են երկրորդ, երրորդ, նույնիսկ չորրորդ անգամ: Որոշ դեպքերում այդ նույնպես ծառայում է Աստծո փառքին: Լավ է միշտ հիշել, որ ո՛չ այրիությունը, ո՛չ կուսությունը երկնքում տեղ չի ապահովում, այլ այն տրվում է նրանց, ով վաստակել է խոնարհությամբ:

Ռուսերենից թարգմանեց
ԱՐՓԻՆԵ ՊԱՊԱՅԱՆԸ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԻՄՆԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայ միջնադարյան հոգևոր երգարվեստը պատկանում է արևելաքրիստոնեական աշխարհի հնագույն երաժշտական մշակույթների թվին: Նրա հիմքերը դրվել են տակավին 4-5-րդ դարերում: Հանդիսանալով հայկական միջնադարյան արվեստի հարուստ բնագավառներից մեկը, հոգևոր երգաստեղծությունը հասել է մեր օրերին ինչպես բանավոր ավանդույթի շնորհիվ, այնպես էլ բազմաթիվ ձեռագրերի և 19-րդ դ. երաժիշտների կողմից իրագործած ձայնագրությունների միջոցով: Այդ ձայնագրությունների մի ստվար զանգվածն ամփոփված է Շարական կամ Շարակնոց կոչվող ժողովածուում, որը Հայ Առաքելական եկեղեցու հիմնական երաժշտաձիսական մատյաններից է: Այն ընդգրկում է հայ շարականերգության զարգացման 1000-ամյա ուղու ընթացքում ստեղծած բազմաթիվ մեծարժեք նմուշներ, որոնց ուսումնասիրությունը կարևորվում է ինչպես հայ հոգևոր երաժշտության, այնպես էլ արևելաքրիստոնեական մյուս եկեղեցիների երաժշտության հետ ունեցած տարբեր առնչությունների հետազոտման տեսանկյունից:

«Շարական» բառը, որով ընդհանուր առմամբ բնորոշվում է պաշտոնապես ընդունված և որևէ շարքի մեջ զետեղված հոգևոր երգը, փորձել են տարբեր ձևով ստուգաբանել: Ամենաընդհանրացած ստուգաբանությունը գալիս է հայերեն «շար» արմատից կամ «շարք» բառից (Պետերման, Ամատունի, Աբեղյան և ուրիշներ): Ավետիքյանը՝ մեկնել է «շարական» բառը եբրայերեն (նաև արաբերեն) «šir» - «երգ» բառից[1], որն ընդունել են Էմինը, Կոստանյանցը և ուրիշներ: Ավելի հավանական է, սակայն, Մառի առաջարկած մեկնությունը՝ ասորերեն «šāhrā» - «հսկում, հսկման երգ»-ից առաջանալը, ինչը հետագայում նույնացվել է հունարեն «ειρμός» «շարք, շարական» բառի հետ: «Շարական» բառին հաճախ փոխարինում են «կանոն» կամ «կարգ» տերմինները, օրինակ. «Կանոն Տեառնընդառաջի», «Կանոն Աւետեաց» կամ «Կարգ Ծննդեան», «Կարգ Ապաշխարութեան» և այլն[2]: Շարականի մասին առաջին գրավոր հիշատակությունը առկա է դեռևս 9-10-րդ դդ. թվագրվող հնագույն երկաթագիր Մաշտոցներում, այսպես. «եւ սկսանին զԱմբիծսն և զԱրարիչն՝ շարականաւ: եւ ասեն՝ Գովեա երուսաղէմ, շարականաւ»[3]:

---

[1] Տես Գ. Ավետիքեան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ ժ:

[2] Տես Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1977, էջ 501-502:

[3] Տես Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 1001, Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ. 457:

Թեև Շարակնոցի ուսումնասիրությունը վաղուց է սկսվել, սակայն առ այսօր չի կատարվել նրա մեջ ընդգրկված երաժշտաբանաստեղծական տեսակների ժանրային տիպաբանության վերջնական ճշգրտումը և համեմատական հետազոտությունը արևելաքրիստոնեական մյուս հիմներգությունների համակարգում:

Հայ հոգևոր երգաստեղծությունը, նախնական շրջանում հատկապես, ձևավորվել է Պաղեստինից, Սիրիայից և Բյուզանդիայից եկող զորեղ ազդեցության ներքո: Սակայն հարկ է նշել, որ հայերը ոչ միայն ըմբռնել և ստեղծագործաբար յուրացրել են դրսից եկող ազդեցությունը, այլև սկզբից ևեթ գործուն մասնակցություն բերել այն վեհաշուք շենքի կառուցմանը, որը կոչվում է արևելաքրիստոնեական հոգևոր մշակույթ: Փոխառնչությունները բոլոր փուլերում եղել են բավական ակտիվ՝ անկախ դավանաբանական տարաձայնություններից կամ անբերանպաստ քաղաքական պայմաններից:

Ողջ քրիստոնական պաշտոներգության հիմքը կազմող սաղմոսերգությունը և երգեցիկ ընթերցանությունը (թվերգն և քարոզը) սկզբնական փուլում պայմանավորում էր նոր գաղափարախոսության գեղագիտական պահանջներով թելադրված ելևէջային սահմանափակ տիպային եղանակների շրջանակը: Պրոտոժանրի նշանակություն է ստանում երգեցիկ քարոզը, որի արմատները տանում են դեպի հին եբրայական աստվածաշնչային Օրինաց և Մարգարեից գրքերի երգեցիկ ընթերցանությունը, հին հունական պրոսոդիան, հայկական մեհենական պաշտոներգությունը և, որպես հետևանք բնականաբար, վաղ քրիստոնեական շրջանի ասորական մեմրան (mêmrâ) և բյուզանդական կերիզման: Երգեցիկ քարոզի հնագույն նմուշները, որոնք ներկայացված են Սահակ Պարթևի և Հովհան Մանդակունու անուններով, առաջին ինքնուրույն հոգևոր երգերի՝ կցուրդների հետ մեկտեղ հանդիսանում են ազգային հիմներգության սկզբնավորման անդրանիկ հեղինակային խիզախումները[4]:

Կցուրդների երևան գալը 5-րդ դարում դնում է ազգային շարակներգության սկիզբը: Դրանց ստեղծումը ավանդաբար վերագրվում է Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթևին, Մովսես Խորենացուն և Հովհան Մանդակունուն. «...արարին և երգս շարականաց և կարգեցին եղանակս, զորս բաժանեաց ի միմեանց՝ սուրբ Հայրապետն հոգելի տէր Իսահակ Պարթևն»[5]:

Ինչպես հայտնի է, կցուրդները փոքրածավալ, պարզագույն սաղմոսատիպ երգեր էին, որոնք հարասությունների ձևով կցվում էին սաղմոսներին: Նմանատիպ արխաիկ երաժշտաբանաստեղծական տեսակներ առկա են նաև ասորական և հունական հիմներգության մեջ: Բյուզանդական հիմներգության մեջ կցուրդներին համապատասխանում է տրոպարիոն (τροπάριον) տեսակը: Ինչ վերաբերում է ասորական հիմներգությանը, ապա կցուրդները մշտապես նույնացվել են մադրաշի (mädrâšâ) հետ: Մեր կարծիքով, այդ սխալ բնորոշումը գալիս է տակավին հնագույն հայերեն թարգմանությունից (հավա-

---

[4] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ «Քարոզի ժանրը հայ հոգևոր երգաստեղծության մեջ», «Պատմա-բանասիրական հանդես», 1992, թիվ 2-3, էջ 199-214:

[5] Գիրք, որ կոչի Յաստաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ ԺԳ:

նաբար mādrāšā-ի բառացի մեկնությունից (drš- «կցեմ» բայից), որտեղ Եփրեմ Ասորու մաղրաշաները ստացել են «կցուրդ» անվանումը և այդպիսով արմատավորվել հայ իրականության մեջ: Թերևս սա կարելի է բացատրել հետևյալ կերպ: Ինչպես հայտնի է, Եփրեմի մաղրաշաները, որ գերազանցապես երկարաշունչ, հակաճառական կամ բարոյախրատական բովանդակության երգվող ներբողներ էին, թարգմանվել են 5-րդ դարում (դրանց թարգմանությունը վերագրվում է Եղիշեին), սակայն տվյալ շրջանում հայ հիմներգության մեջ դեռևս գոյություն չուներ համապատասխան ազգային երաժշտաբանաստեղծական տեսակ (այն կազմավորվեց ավելի ուշ 7-րդ դարում): Այդ շրջանի ամենատարածված և արդեն ընդունված տեսակը հենց կցուրդն էր, ուստի հասկանալի է դառնում թարգմանչի ձգտումը հայացնելու Եփրեմի երգերի անվանումը, չխորանալով դրանց մեջ գոյություն ունեցող տաղաչափական, կառուցվածքային և իմաստային տարբերությունների մեջ: Միայն վերջերս ուսումնասիրողները անդրադարձել են այն հանգամանքին, որ կցուրդն ու մաղրաշան ներկայացնում են բոլորովին տարբեր հիմներգական ժանրային երևույթներ[6]:

Մինչդեռ ասորական հիմներգության մեջ մշակվել են կցուրդներին ձևով և բովանդակությամբ համապատասխան երգերի երկու տարատեսակ՝ «մահնիտա» (manitā), որը կցուրդների պես հարել-կցվել է սաղմոսներին՝ հաճախ ներառնելով իր մեջ սաղմոսի առաջին տունը և «տակշեպտա» (takšeptā), մի փոքր ավելի ինքնուրույն տեսակը, որն ազատ էր նախորդող սաղմոսի տան մեջբերումից[7]: Ի դեպ, նմանատիպ երկու տեսակի կցուրդներ է տարբերում նաև Աբեղյանը իր շարականներին նվիրված աշխատության մեջ[8]: Երկու դեպքում էլ դրանք ներկայացնում են կցուրդի և տրոպարիոնի նման սաղմոսների փոքրածավալ և անպաճույճ, չափական արձակով գրված երգվող պերիֆրազներ, որոնց բովանդակությունը կազմում էր աստվածաշնչային տարբեր դրվագների և Քրիստոսի տնօրինությունների մատչելի, գրեթե թեզիսային վերաշարադրումը, իսկ երաժշտությունն աչքի էր ընկնում պարզ դիատոնիկ ձայնեղանակային հիմքով, մեղեդու վանկային կառուցվածքով և կատարման անտիֆոնային սկզբունքով (այսինքն՝ դպրաց դասերի փոխեփոխ երգելով), թեև mādrāšā-ն բառացիորեն «կցուրդ» է նշանակում և, ըստ երևույթին, ասորական ժամասացության մեջ նույնպես կցվել է իրեն նախորդող երգասացություններին, իրականում այն խիստ տարբերվում է

---

6 Այդ կապակցությամբ նշելի է Ա. Սրգարյան-Դրոստի Жанровая терминология армянской гимнографии в контексте терминологических систем христианских литератур Средневековья, "Армянская и русская средневековые литературы", Ереван, 1986, с. 239. Ցավոք ուսումնասիրողը սահմանափակվել է լոկ փաստի արձանագրմամբ, առանց մանրամասն վերլուծության և ժանրային տարբերակման: Ավելին, ընդհանուր առմամբ լուրջ մասնագիտական հիքմ ունեցող և բովանդակալից ուսումնասիրությունը զերծ չէ որոշ վրիպումներից, որոնք կարող են հետագա թյուրիմացությունների և անցանկալի անճշտությունների տեղիք տալ:

7 Այդ մասին տես A. Cody, O. S. B. The earli History of the Octoechos in Syria, „ East of Byzantium: Syria and Armenia in the formative period„ Dumbarton Oaks Symposium, 1980, Washington, D. C. 1982, p. 90.:

8 Տես Ա. Աբեղյան, Շարականների մասին, «Արարատ», 1912, հուլիս-օգոստոս, էջ 729-731:

հայկական կցուրդներից, որոնց ծավալը չի անցնում 3-4 տնից[9]: Դրանում համոզվելու համար բավական է անգամ թռուցիկ հայացք գցել վերջիններիս և համեմատել դրանք Ակինյանի հրատարակած հայերեն թարգմանությամբ պահպանված Եփրեմի 51 մադրաշաների հետ[10]:

Կցուրդները հանդիսացան այն հիմնարար և հարատև կյանք ունեցող երաժշտաբանաստեղծական տեսակը, որը կազմում է Շարակնոցի հիմնական նյութը: Այդ է պատճառը, որ ձեռագրական աղբյուրներում հանդիպում է նաև «Կցորդարան» անվանումը, որը համապատասխանում է բյուզանդական Τροπολόγιον, վրացական ladgari երգչական մատյաններին և արտացոլում Շարակնոցի վաղ շրջանի բովանդակությունը: Տվյալ շրջանի հոգևոր երգաստեղծության մասին որոշակի պատկերացում են տալիս Ծննդյան, Սպասխարության, Ավագ շաբաթվա, Հարության կարգերում զետեղված մի շարք արխաիկ երգեր, ինչպես նաև Շարակնոցի հնագույն շերտը կազմող այլ կցուրդներ:

Այդ շրջանից հասած և իրենց նախնական նկարագիրը պահպանած նմուշներում որոշակիորեն ուրվագծվում են հայ շարականերգությանը հատուկ կերպարային արտահայտչականության հիմնական ոլորտները, աստվածաշնչային նյութի բանաստեղծական մշակման հնարները, գրական տեքստի մեղեդային հնչյունավորման հիմնական տիպերը (յորդոր, չափաւոր-միջակ և ծանր երգերը)[11]:

7-8-րդ դարերում հայ շարականերգությունը նկատելի քայլ կատարեց դեպի առաջ: Տեղի են ունենում մի շարք կարևոր տեղաշարժեր պաշտոնական երգության բարեկարգման, նոր երաժշտաբանաստեղծական տեսակների և Ութձայն համակարգի կիրառության ոլորտում: Հանդես եկան նոր շարականագիր հեղինակներ՝ Կոմիտաս Աղցեցի, Անանիա Շիրակացի, Սահակ Ցորափորեցի, Բարսեղ Ճոն, Հովհան Օձնեցի, Ստեփանոս Սյունեցի և ուրիշներ, որոնց շարականները զգալի չափով ընդլայնեցին հոգևոր երգարվեստի շրջանակները: Իրենց վեհ տրամադրությամբ, մեղեդային նկարագրի մաքրությամբ և գեղեցկությամբ աչքի ընկնող այդ օրհներգերում ազգային հոգի վրա

---

9 Այդ թվերը համապատասխանաբար խորհրդանշում են Սուրբ Երրորդությունը և չորս ավետարանիչներին: Երբեմն կցուրդների տների քանակը ներկայացնում է այդ սրբազան թվերի տարբեր կոմբինացիաներ՝ 3+3, 3x3, 3+4, 3x4: Կցուրդները երեք կամ երեք անգամ երեք տնից են կազմված. բոլոր տները միևնույն եղանակով են երգվում (երեքական տներից բաղկացած լինելը Ս. Երրորդության նշանակ է, իսկ միևնույն եղանակով երգելը՝ երեք Սնձն, մի Աստվածություն լինելուն)».- այսպես պարզ ու գեղեցիկ մեկնել է կցուրդների կազմությունը Կոմիտաս վարդապետը՝ հիմնվելով միջնադարյան մեկնիչների և Հայ Առաքելական Եկեղեցու դարավոր ավանդույթի վրա (տե՛ս Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 109):

10 Կցուրդք Ս. Եփրեմի Խորին Ասորւոյ, հրատ, հ. Ն. Ակինեան, Վիեննա, 1957: Կցուրդք ս. Եփրեմի Խորին Ասորւոյ, Հ. Ն. Ակինյան, Վիեննա, 1957, F. Graffin, Hymnes de Saint Ephrem, consewée en version arménien, Patrologie orientalis, t. xxx, f. I, Paris, 1961. Տես նաև՝ Th. J. Lamy, Sancti Ephraemii Syri himni et sermones, t..I, Machliniae, 1882 :

11 Հայ հոգևոր երգեցողության հիմնական տիպերի մանրամասն վերլուծությունը տե՛ս Тагмизян Н. К., Теория музыки и древней Армении, Ереван, 1977, сс. 206- 286:

համադրվում և զարգացվում են ասորական և բյուզանդական հիմներգության լավագույն գծերը:

Տվյալ ժամանակաշրջանի չափանմուշային կոթող է Կոմիտաս Աղցեցու՝ Հռիփսիմյանց կույսերին ձոնված «Անձինք նուիրեալք» շարականը՝ գրված այբուբենական ակրոստիքոսի ձևով (36 տուն), որտեղ յուրովի կիրառված են բյուզանդական կոնդակի (κοντάκιον) բնորոշ հատկանիշները: Այն առանձնանում է նաև իր տաղաչափական մշակվածությամբ, որը զուտ շեշտական է, ինչը բավական հազվագյուտ երևույթ է մեր շարականերգության մեջ: Ստանալով «կացուրդ» անվանումը հայ իրականության մեջ, այդ երաժշտաբանաստեղծական տեսակը մեծ տարածում է գտնում հետագա դարերի հեղինակների մոտ: Ի տարբերություն փոքրածավալ և արձակ կցուրդների, կացուրդ-կոնդակը բազմատուն, վիպաքնարական բնույթի ներբող է, որը հաճախ հորինվում էր այբբենական կամ անվանական ծայրակապի ձևով: Այսուհետ այբբենական ծայրակապով գրված շարականները ստանում են նաև «Անձինք» անվանումը:

Պետք է նշել սակայն, որ Կոմիտաս Աղցեցու կիրառած նոր երաժշտաբանաստեղծական տեսակը չէր նմանակում մեխանիկորեն կոնդակիոնի մեծ վարպետ Ռոմանոս Երգեցողի (6-րդ դ.) ստեղծագործությունները: Եթե վերջիններիս կառուցվածքը բնորոշվում է պարտադիր նախաբանի՝ կուկուլիոնի (κουκούλιον) առկայությամբ, որին հետևում են տունը և կրկնակը, ապա հայկական կացուրդում այդ նախաբանը բացակայում է, ուստի նրա կառուցվածքը բաղկացած է իրար հաջորդող տներից և կրկնակներից[12]: Ասորական հիմներգության մեջ կացուրդին մոտ են կանգնած բյուզանդական կոնդակիոնի ձևավորմանը նախորդող «մադրաշա» և «սոգիտա» (sôgitâ) բազմատուն, վիպաքնարական կամ խրատական բովանդակության ռեսպոնսորիաները (մենակատարի և դպրաց դասերի կողմից կատարվող ծավալուն երգերը), որոնք, ի դեպ, նույնպես ներկայացնում են հաջորդաբար իրար հետևող տներ և կրկնակներ[13]:

Հայ հոգևոր երգարվեստի ասպարեզում կարևոր դեր է պատկանում 8-րդ դ. փիլիսոփա, քերական և երաժիշտ Ստեփանոս Սյունեցուն, որի անվան հետ է կապված 8-9 երգերից բաղկացած բյուզանդական կանոնի ներմուծումը և դրա հետ սերտորեն առնչվող Ութձայն համակարգի բարեկարգումը: Ստեփանոս Սյունեցու երաժշտական գործունեության մասին տեղեկություններ են հաղորդում տարբեր մատենագրական աղբյուրներ, որոնցից առանձնանում է Ստեփանոս Օրբելյանի հաղորդածը. «Բաժանեաց և զութն ձայնս և կարգեաց, շարեաց զՅարութեան օրհնութիւնս, երգեաց և կցուրդս քաղցրահամս,

---

[12] E. Wellesz, History of Byzantine Music and Hymnography, 2-nd. ed., London, 1962, p. 198-199: Տես նաև Е. Гертман, Византийское музыкознание, Л., 1988, с. 24. Rubens Duval, Anciennes Littératures Chrétiennes. La Littérature Syriaque, Paris, 1907, pp. 13-18, Пигулевская Н. В., Культура сирийцев в средние века, М., 1979, сс. 138-140, A. Cody, op. cit., pp. 100-102:

[13] Տես Пигулевская Н. В., Культура сирийцев в средние века, М., 1979, сс.138-140, A. Cody, op. cit., p. 100-102:

յարմարեաց և ստողոգին Յինանց (...) յոյժ խորհրդաւոր, և զպահոցն, որ զաղուհացսն երգի»[14]:

Ներկայացնելով որոշակի հաջորդականությամբ և տվյալ եկեղեցական տոնի բնույթից բխող տրամադրությամբ հորինված երգերի շարք՝ կանոնը, որպես ցիկլիկ ստեղծագործության տեսակ, նոր հնարավորություններ էր ընձեռում շարականագիրներին, նոր որակ և աստիճան ստեղծում հոգևոր երգարվեստում: Հավանաբար սկզբնապես կանոնները կազմվել են արդեն շրջանառության մեջ եղած կցուրդներից և կացուրդներից, սակայն դրանց կողքին հետզհետե ստեղծվում են հատուկ նոր կանոններ: Ուշագրավ է, որ Ստեփանոս Սյունեցու հեղինակած Ավագ օրհնությունների ութ շարքերը իրենց կառուցվածքով չափազանց մոտ են բյուզանդական կանոնի կառուցվածքին[15]: Ակներևաբար, Սյունեցին իբրև նմուշօրինակ է իր առջև ունեցել Անդրեաս Կրետացու (VII-VIII դդ.) հեղինակած կանոնները: Ավագ օրհնությունները 10-ական մասերից բաղկացած 8 խոշոր շարքեր են՝ նախատեսված ութ ձայնեղանակներով երգելու համար: Այդ երգասացությունների ոգեշնչման աղբյուրը Յին Կտակարանի հայտնի մարգարեական օրհնություններն էին: Ուշագրավ է նաև այստեղ «խիստ ոճի» Ութձայնին հետևելու սկզբունքը (չորս բուն և չորս կողմ եղանակ՝ առանց դարձվածքների և ստեղների), ինչը հաղորդում է նրան յուրահատուկ առանձին հավաքածոյի նշանակություն (համեմատելի 6-րդ դ. ասորի միաբնակների Հայրապետ Սեբեոս Անտիոքացու հոգևոր ինքնուրույն երգերի ժողովածուի կամ բյուզանդական ὀκτώηχος երգչական գրքի հետ), որտեղ հաստատվում է Ութձայնի գաղափարը: Հետագայում, սակայն, հայկական կանոնը, պահպանելով ընդհանուր մասեր բյուզանդականի հետ, ստացավ հետևյալ ուրույն տեսքը.

1. Օրհնութիւն (Օրհնեսցուք զՏէր, զի փառաւոր է փառաւորեալ (Ել.15)),
2. Յարց (Օրհնեալ է Տէր Աստուած հարցն մերոց (Դան. Գ 52)),
3. Մեծացուսցէ (Մեծացուսցէ անձն իմ զՏէր (Ղուկ. Ա 46),
4. Ողորմեա (Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան Քում (Սղմ.4)),
5. Տէր երկնից (Օրհնեցէք, զՏէր երկնից, օրհնեցէք զնա ի բարձանց (Սղմ. ՃԽԸ)),
6. Մանկունք (Օրհնեցէք, մանկունք, զՏէր եւ օրհնեցէք զանունն Տեառն (Սղմ. ՃԽԲ)),
7. Ճաշու (երգվում են տարբեր սաղմոսներից վերցված հատվածներ),
8. Համբարձի (Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն (Սղմ. ՃԻ):

---

[14] Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպս. Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 138-139:

[15] Բյուզանդական կանոնի մասին տես մասնավորապես Wellesz, E., op. cit., p. 198-245; Е. Герман, Византийское музыкознание, с. 129-131.

Նշենք նաև, որ նախապես կանոնը ինը մաս է ունեցել, սակայն «Գործք» կոչվող մասը հետագայում կցվել է Հարցին՝ կորցնելով իր ինքուրույն նշանակությունը[16]:

«Կանոն» անվանումը ստացել է համընդհանուր տարածում արևելաքրիստոնեական բոլոր եկեղեցիներում՝ օգտագործվելով ինչպես լայն (կարգ, օրենք), այնպես էլ ավելի հատուկ՝ վերը դիտարկված երաժշտաբանաստեղծական տեսակի իմաստով: Ասորական հիմներգության մեջ կանոնի հետ մեկտեղ օգտագործվել է նաև էնիանե ('enyanê) անվանումը: Եթե կանոնը երգվում էր առավոտյան ժամերգության ընթացքում, մարգարեական օրհնությունների հետ, ապա էնիանեն երգվում էր սաղմոսներից հետո[17]:

Ելնելով վերը շարադրվածից, առաջարկում ենք Շարակնոցի մեջ մտնող երաժշտաբանաստեղծական տեսակների հետևյալ համեմատական անվանացանկը:

mánitâ, tâkšeptâ -τροπάριον - կցուրդ

mâdrâšâ, šôgîtâ - κοντάκιος - կացուրդ

q ā l e, b ā w ā t a - τιχήρα, 'ειρμόν - շարական (առավել ընդհանուր անվանումը)

k a n w n, 'enyanê - κανών - կանոն, կարգ

Ինչ վերաբերում է այդ երաժշտաբանաստեղծական տեսակներն ամփոփող Շարակնոցին և նրան համապատասխանող ժողովածուներին, ապա պետք է նկատի ունենալ, որ, օրինակ, բյուզանդական պաշտոնեգրության մեջ ձևավորվել է երգչական մատյանների շատ ավելի տարբերակված համակարգ՝ ներառելով հետևյալ տիպերը.

Εἰρμολόγιον, Στιχηράριον, Κοντακάριον: Շարակնոցն ըստ էության միավորում է իր մեջ այդ երեք ժողովածուները: Ուստի միանգամայն իրավացի է ֆրանսիացի հայագետ Շ. Ռենուն՝ պնդելով, որ Շարակնոցն անվանվի պարզապես հոգևոր երգարան՝ Hymnaire[18]: Դրանով փաստորեն վերականգնվում է Տեր-Միքայելյանի[19] և Կոնիբիրի[20] որդեգրած տարբերակը՝ Hymnarium, Hymnal:

Միավասիկ սրանք են շարականներին և արևելաքրիստոնեական հիմներգական մյուս տեսակներին վերաբերող մեր հիմնական դիտարկումները, որոնք, անշուշտ, պետք է զարգացվեն և շարունակվեն նաև կանոնի բաղկացուցիչ մասերի տիպաբանական համեմատության ուսումնասիրման ուղղությամբ:

---

16 Հայկական կանոնի ձևավորման և առանձնահատկությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Շարակնոց, հ. Ա, Երևան, 1997, Յառաջաբան (աշխ. Ա. Սրեշատյանի և Լ. Հակոբյանի), էջ XIV-XIX:

17 Տե՛ս A. Cody, op. cit., p. 97-98.

18 Ch. Renoux, Le Jadgari géorgien et le Šaraknoč' arménien, Revue des études arméniennes, NS, 1993, XXIV, p. 90.

19 Ter- Mikaëlian N., Das Armenische Hymnarium, Leipzig, 1905.

20 Conybeare Fr. C., The Hymnal of the Armenian Church, „The journal of Theological Studies„, 7, 1906.

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՅԵՐԵՆԻ ՆԵՐՔԻՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ԷԼ ԿԱՐԵԼԻ Է ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԲՆԻԿ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՌԵՐԸ

Գրաբարի ե, ի, ու խոնարհման բայածանցները՝ ան, անչ, նչ, ունեցել են սեռազատիչ, կերպազատիչ ու հիմքազատիչ դեր: 5-րդ դարում սրանց սեռազատիչ և կերպազատիչ դերը մթագնվել էր, մնացել միայն հիմքազատիչ պաշտոնը: Սրանք զանազանում էին միայն ներկայի և անցյալ կատարյալի հիմքերը. բեկանեմ-բեկի, մատչիմ-մատեայ, առնում-առի: Բեկան, մատչ, առն ներկայի հիմքեր են, բեկ, մատի, առ՝ անցյալ կատարյալի հիմքեր: Հիշյալ ածանցները, ըստ համեմատական քերականության հաստատման, եղել են միջամասնիկներ, այսինքն՝ բենկեմ, անռում և այլն: Հետագայում մի ուժեղ դրափոխության հետևանքով դարձել են բեկանեմ-առնում: Աճառյանը գրում է. «*Այն բայերը, որոնք պատկանում են այս տիպին, մեծ մասամբ համապատասխանում են հնդեվրոպական ռնգային միջամասնիկավոր ձևերին: Միջամասնիկավոր ռնգականը արմատից դուրս է առնված և կցված է իբրև հետամասնիկ*»[1]: Հայերենի այդ բայերը համապատասխանում են հնդեվրոպական լեզուների միջամասնիկավոր համապատասխաններին: Օրինակ՝ Linguo, հայերեն՝ լիքան (փոխ. լինք) - լատ.՝ frango, հայ.՝ բեկան, փոխն.՝ բենկ, սանսկր.՝ bunkte, հյ.՝ բուծան, փոխ.՝ բունճ, սանսկ.՝ vindeti, հյ.՝ գիտան, փխն.՝ գինտ (գտանեմ):

Սրանք անհերքելի նշմարտություններ են, սակայն դժբախտաբար հայերենի դրափոխության օրենքն այնքան զորեղ է, որ հայերենում միջամասնիկային բայի ոչ մեկ օրինակ չի մնացել: Բոլոր միջամասնիկները վերածվել են վերջամասնիկների:

Այս բայածանցները վերջամասնիկ դառնալուց դեռ շատ առաջ դարձել են սոսկածանցներ, այսինքն՝ կորցրել են իրենց նշանակությունը: Իսկ այն ածանցը, որ կորցնում է իր նշանակությունը և դառնում սոսկածանց, դրանով այլևս նոր բառ չի կազմվում, այն մեռնում է: Տեղի է ունենում նոր գործընթաց: Նրանով ոչ միայն նոր բառ չի կազմվում, այլև այն ծուլվում է արմատին և կորցնում իր ածանցական գոյությունը կամ դուրս ընկնում: Ածանցը բայահիմքին միացած մի քանի բայեր արդեն գրաբարում կան, օրինակ՝ անգոսնեմ

---

[1] Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, էջ 347:

(արմատը՝ անգոյս), կանգնեմ, շիկնեմ, սերմանեմ. սրանց անցյալ կատարյալը լինում է՝ անգոսնեցի, կանգնեցի, շիկնեցի, սերմանեցի. փխն.՝ անգոսի, շիկի, կանգի, սերմի: Եթե ոնգական և ածանցն անցյալ կատարյալում մնում է, ապա այն այլևս ածանց չէ, միացած է բայահիմքին: Համեմատիր՝ հատանեմ- հատի, մատչիմ-մատեայ:

Ածանցի կորուստ է սկսվում նաև այն ժամանակ, երբ միևնույն բայը գործածվում է և՛ ածանցով, և՛ առանց ածանցի. օրինակ՝ տարածանեմ-տարածեմ, լիզանեմ-լիզեմ, զեղծանեմ-զեղծեմ, ներկանեմ-ներկեմ, ողողանեմ-ողողեմ, արծարծանեմ-արծարծեմ և այլն:

Հիշյալ մասնիկները կազմում են ներկայի բունը (հիմքը) և ունեցել են կրավորական, կերպային (սկսողական, տևական, վայրկենական), չեզոք և հիմքակազմիչ նշանակություններ: Այժմ, բացի հիմքակազմիչ նշանակությունից, այլ նշանակություն չունեն: Թե դասական շրջանում ունեցել են, մենք այժմ ոչինչ ասել չենք կարող: Դրանք այժմ մթագնված են և դարձել են սոսկածանցներ: Մասամբ մնացել է կրավորականի նշանակությունը, որովհետև գրաբարի ածանցավոր բայերը գերազանցապես ունեն կրավորական և չեզոք նշանակություն:

Երբ որևէ ածանց իմաստազրկվում է, նրանով այլևս նոր բառ չի կազմվում, այն լեզվի համար մեռած ածանց է, ուստի օտար արմատներին այդ ածանցները կցվել չեն կարող: Ա խոնարհման ան ածանցը (մեծանալ, իմաստնանալ) ամեն բայի կարող ենք կցել (պրոլետարանալ, վագրանալ), որովհետև կենդանի բայածանց է: Նչ մեռած ածանցը օտար բառի չենք կարող կցել և բայ կազմել: Այն բայերը, որոնք ի բնե ունեցել են այդ ածանցները, միայն դրանք կարող են այսօր ունենալ այդ ածանցները: Այլ բայերի մեջ այդ ածանցներն այլևս մուտք գործել չեն կարող: Աճառյանը կարծում է, որ հարկանել բայի արմատն իրանական հարըկ բառն է: Որևէ օտար բառի մեր մեռած արմատները չենք կարող հարկադրել. այնպիսի օրենք գոյություն չունի: Եթե կորի արմատը լիներ օտար ծագում ունեցող արմատ, մենք դրան նչ ածանցը պարտադրել չէինք կարող, որպեսզի ստանայինք կորնչել կամ հարըկ արմատին ան ավելացնեինք՝ հարկանել ստանալու համար, հետո էլ պարզվեր, որ դրա արմատը ոչ թե հարկ է (կ-ն անական է), այլ՝ հար: Իսկ Աճառյանն այդ բառը կապում է իրանական հարըկ արմատի հետ:

Բոլոր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ փոխառյալ բայերը պարզ բայեր են: Գրաբարում չկա ան, ն, նչ, անչ, չ ածանցներով կազմված որևէ բայ, որ օտար փոխառություն լինի, մանավանդ որ այդ ածանցները եղել են միջածանցներ, այսինքն՝ գտնվել են բառարմատի մեջ, այլ ոչ թե՝ բառարմատից դուրս: Օտար արմատի մեջ ածանցը որքան էլ զորեղ լինի, ներթափանցել չի կարող: Այն հիմնական լեզուները, որոնցից մենք կենդանի գործածական փոխառություններ ենք առել, ինչպես իրանական լեզուները, որ մեր փոխառությունների հիմնական աղբյուրն են, ածանցավոր բայ չունենք և այդպիսին չի կարող լինել: Բոլոր փոխառյալ բայերը պարզ են, ինչպես ազատեմ,

ազդեմ, ախորժեմ, ամբարեմ, ապաշխարեմ, ժամանեմ, բաժանեմ, բաշխեմ, թշնամանամ, պատասխանեմ և այլն: Ածանցավոր բայ չկա նաև հույն-ասորական փոխառությունների մեջ, ինչպես, թարգմանեմ, խմորեմ, ձաորեմ, կեղևեմ, մեքենայեմ և այլն: Ածանց չկա նաև այն բայերի մեջ, որոնք օտար բառեր են, բայց իբրև բայ կազմված են մեր լեզվի հոլովույթում:

Բերենք նաև այլ ապացուցիչներ: Ըստ Աճառյանի «Արմատական բառարան»-ի, ածանցավոր բայերից բնիկ չեն (անծանոթ են) անցանեմ, անջատանեմ, արկանեմ, զբաղնում, զբօսնում, զգածնում, եղծանեմ, խրտչիմ (խրտնել), խփնում, խնում, խփանեմ, կառչիմ, կորնչիմ, յագչիմ՝ հեղձնում, հեղձանեմ, հիւծանիմ, յենում, շրտնում (խրտնել), ոստչիմ, ուռնում, պակչիմ, պշնում, պրծանիմ, սուզանեմ, սաբտչիմ (սարտնում-խրտնել), տանիմ, ցածնում, փախչիմ, պրծանիմ, ցասնում, փլչիմ (փլանիմ): Սրանք այն բայերն են, որ հնդեվրոպական ծագում չունեն ըստ Աճառյանի «Արմատական բառարան»-ի:

Սովորաբար հայերենի ոչ բնիկ արմատները մի քանի անգամ գերազանցում են բնիկներին. օրինակ՝ պարզ բայերի երեք ոչ բնիկ արմատի դիմաց ունենք մեկ բնիկ բայարմատ: Իսկ եթե «Արմատական բառարան»-ի տասնմեկ հազար արմատից հանենք անվավեր բառերը, նոր փոխառությունները, թվով մոտ հինգ հազար, և համեմատենք բնիկ ու ոչ բնիկ արմատները քանակապես, ոչ բնիկները վեց անգամով գերազանցում են բնիկներին: Իսկ ածանցավոր բայերի բնիկ արմատները մոտավորապես երկուսուկես անգամ ավելի են ոչ բնիկներից: Ի՞նչն է սրա պատճառը: Պատճառն այն է, որ ածանցավոր բայերը բոլորն էլ բնիկ են: Եթե ընդունում ենք, որ այդ ածանցները միջամասնիկներ են եղել, այսինքն՝ ածանցը գտնվել է արմատի մեջ, և այդպես է, ապա այդպիսի մասնիկի գոյության գիտակցումը հայի համար իր բառերի վերաբերությամբ միայն կարող են իրական լինել, օտար փոխառյալ բառը հինգ ածանց էլ ունենա փոխատու լեզվում, փոխառնող լեզվի համար այդ բառը արմատական է, փոխառնող լեզուն օտար փոխառնող բառի արմատի ու ածանցի զանազանությունը չի գիտակցում:

Աճառյանը արկանել բայը կապում է իրանական հարքկ ձևի հետ, որը պարսկերենում չի պահպանված, կա միայն զենդերենում: Եթե արկանել-ը հարքկ ձևից առաջացած լիներ, կլիներ ամենաշատը հարկել և ոչ թե հարկանել, որ ան ածանցը, ըստ Աճառյանի, ն ռնգականը պետք է նախապես եղած լիներ արմատի մեջ (հարնկել), որ անկարելի մի բան էր, այդ արդեն հայերենի կանոնին չի վերաբերում, իսկ մենք օտար բայարմատին մեռած ածանց պարտադրել չէինք կարող, դա անկարելի էր, և նման բան չկա: Արդեն Տերվիշյանը, Մեյեն, Շեֆտելովիցն այս բայը ճիշտ կերպով բնիկ են համարել՝ կապելով հնդեվրոպական արմատի հետ: Արկանել բայը բնիկ է, մանավանդ առնչվում է հարկանել, վարկանել բայերի հետ:

Ցեղում բայը համարվել է ոչ բնիկ: Թողնենք հնդեվրոպական նմանությունները, միայն հայերենի հիմքի վրա կարելի է ապացուցել, որ դա բնիկ հայերեն բայ է: Ցեղում բայի անցյալ կատարյալն է յեցայ: Օտար յեն արմատը մենք չենք կարող փոխել յեց-ի, հետո էլ այդ յեց արմատը դարձնել նեց: Այդպիսի ձևափոխությունները հայոց լեզվում հատուկ են մեր արմատներին: Նեցուկ բառը պրոֆ. Ջահուկյանը կապում է հնդեվրոպական nika-ի հետ, այսինքն՝ ընդունում է, որ այն հնդեվրոպական ծագում ունի, ուստի բնիկ է:

Ստուգաբանները ներքնատեսությամբ մեր ածանցավոր բայերից մի քանիսը ստուգաբանել են և համարել բնիկ: Աճառյանը ստուգաբանել է իջանեմ-ի էջ արմատը (ռուս. иди): Անծանոթ համարված անցանեմ բայը կապվում է հնդեվրոպական ags -ի, սանսկ. anč-ի, գեղերեն ač, սլավ. ocь-ի և այլ համապատասխան արմատների հետ: Պրոֆեսորներ Ջահուկյանը, Աղայանը անցանեմ բայի անց արմատը նույնպես բնիկ են համարում:

Սրանից ութսուն տարի առաջ անծանոթ զգածնում (զգածիմ) «հագնել, հագնվել» բայը պրոֆ. Ղափանցյանն առնչում էր գոտի բառի հետ՝ արմատը համարելով գատ-գած, ինչպես՝ ամաթ-ամաչ արմատներն են: Այս միանգամայն զորեղ գիտական կռահումը Աճառյանը չի ընդունել:

Մինչ այժմ մեր բառերի ստուգաբանություններն առնչվել են միայն հնդեվրոպական լեզուների հետ, ոչ ոք չի փորձել մեր լեզվի ընձեռած հնարավորությունների միջոցով ճանաչել մեր բնիկ և օտար բառերը: Մենք այս փորձը անում ենք հայերենի ածանցավոր բայերի միջոցով և համոզված ենք, որ մեր մոտեցման այդ եղանակը նիշտ է ու գիտական՝ հետևյալ հիմունքներով.

ա) Հայերենի ե, ի, ու խոնարհման բոլոր ածանցավոր բայերը բնիկ են, որովհետև այդ բայերը երկու հիմքով են հանդես գալիս և հանախ այդ հիմքերը իրարից զգալապես զանազան են. օրինակ՝ տանիմ-տարայ, յենում-յեցայ, խնում-խցի, կորնչիմ-կորեայ և այլն: Օտար համարված բայերը այսպիսի տարբերակներ չունեն և չեն կարող ունենալ: Այս բանը հատուկ է միայն բնիկ բայերին:

բ) Հայերենի ածանցավոր բայերը հանախ ունեն ձայնադարձային այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են ունենալ միայն բնիկ բայարմատները: Փոխառյալ բայերն այդպիսի ձայնդարձային տարբերակներ չունեն և չեն կարող ունենալ. օրինակ՝ հատանեմ, հատ, յօտ, յատ, ատ, զատ, նհատ (պակաս, թերի), յենում-յեցայ, նեցուկ և այլն:

գ) Ե, ի, ու խոնարհման բայածանցները եղել են միջածանցներ և մեզ ծանոթ փոխառություններից առաջ միջածանցները դարձել են վերջածանցներ և դրանց բերականական իմաստները հայի համար մթագնվել են: Հայը չէր կարող իր բնիկ մթագնած ածանցները փոխադրել օտար բայերի վրա: Դա անհնար է և՛ լեզվաբանորեն, և՛ տրամաբանորեն: Իրանական, ասորական, հունական, եբրայական

հայտնի փոխառություններն այդպիսի ածանցներ չունեն և չեն կարող ունենալ:

դ) Հիշյալ բայերը մեծ տարածում ունեն հայերենում և ոչ միայն գրական են, այլև գործածական բոլոր բարբառներում բազմաթիվ ձևափոխություններով, ձայնադարձերով, աճումներով ու ածանցումներով. անցանեմ, յանցանք, զանցանք, զանց, անցուցք, առանց, զառանցել և այլն: Օտար փոխառություններն այսպիսի հարուստ ձևեր չունեն և չեն կարող ունենալ:

ե) Բնիկ ածանցավոր բայերը իրենց քանակով երկուսուկես անգամ ավելի են, քան բնիկ չհամարված բայերը: Այդպիսի հարաբերություն գոյություն չունի մյուս բառաշերտերում: Այդ շերտերում բնիկները երեք-չորս անգամ պակաս են օտար փոխառություններից:

զ) Անծանոթ համարված ածանցավոր բայերի իմաստային դաշտերը չափազանց ընդարձակ են: Այդպիսի ընդարձակ իմաստային դաշտեր փոխառությունները չունեն. օրինակ՝ արկանել բայը, որ անծանոթ է համարված, ավելի քան երկու տասնյակ իմաստներ ունի: Եվ այդ իմաստները այնպես են նառագայթաձև հեռացել միմյանցից, որ դարձել են նույնանուն առանձին բառեր. արկանել (նետել), հագնել, զրկել (յարևէ արկանել), կառուցել (պատնեշ արկանել), փռել, գցել (սփռոց, անկողին արկանել), դնել (ունկն արկանել), ասել (առասպել արկանել) և այլն, և այլն:

Է) Ածանցավոր անծանոթ համարված բայերը կազմում են նոր դարձվածային միավորներ, որոնք մեր լեզվի կենդանի ոգին ու նոր հարստություններն են դրսևորում:

Բնիկ բառերը հայտնաբերելու գործում մեր լեզուն նույնպես բազմաթիվ հիմքեր է տալիս, միայն հարկավոր է որոնել և գտնել այդ հիմքերը: Այս երևույթը ցույց է տալիս, որ մեր լեզվի բնիկ բառերից շատերը դեռևս համարվում են օտար: Ուրեմն վերևում բերված և օտար համարված ածանցավոր բայերը բոլորը բնիկ են և ոչ թե փոխառություն կամ օտար, ինչպես որ «Արմատական բառարան»-ն է համարում:

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԸ ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խոսելով սրբազան արվեստի և աստվածաբանության հարաբերակցության մասին, Ի դարի խոշորագույն աստվածաբաններից մեկը՝ Maritain-ը, գրում է, «Սրբազան արվեստը բացարձակ կախման մեջ է գտնվում աստվածաբանական իմաստությունից: Մեր հայացքի առջև հառնող նշանների մեջ դրսևորվում է մարդկային արվեստն անսահմանորեն գերազանցող, Քրիստոսի արյամբ փրկագնված, աստվածային ճշմարտությունը, լույսի գանձարանը»[1]: Այդ գանձարանից ճառագած շողերն իրենց հայտնութենական առարկայացումն են ստանում եկեղեցական արվեստի գործերում, որոնց մեկնաբանությունը կազմում է միջնադարյան մտքի ուրույն բնագավառներից մեկի՝ եկեղեցաբանության նյութը: Այն աստվածաբանության բաղկացուցիչն է: Ի շարս այլ կարգի տեսական իրողությունների, նրա նպատակն է վերլուծել, մեկնաբանել ծիսական բնույթ և նշանակում ունեցող իրողությունների (արարողություն, ճարտարապետություն, պաշտամունքային անոթներ, հանդերձանք և այլն) աստվածաբանական բովանդակությունը: Այս բնագավառի ուսումնասիրման կարևորագույն սկզբնաղբյուրներից են Պատարագի, ժամակարգության մեկնությունները, Մաշտոց ծիսամատյանի մաս կազմող «Կանոն և արարողութիւն վասն հիմնարկութեան եկեղեցւոյ» միավորի[2] բացատրությունները, ինչպես նաև՝ «Վերլուծութիւն Կաթողիկէ եկեղեցւոյ», «Յաղագս կարգաց եկեղեցւոյ», «Յաղագս եկեղեցւոյ», «Ի խորհուրդ եկեղեցւոյ» խորագրով երկերը: Հատկապես վերջիններս լայն շրջանառության մեջ են եղել արդեն վաղ միջնադարից: Դրանց նպատակն է եղել ոչ միայն բացատրել ծիսական պարագաների խորհուրդը, այլև, կացության թելադրանքով, պահպանել ծիսակարգի հնավանդ մաքրությունն ու ազգային նկարագիրը՝ այն զերծ պահելով օտարամուծություններից:

Հովհան Մայրագոմեցուց և Հովհան Օձնեցուց զատ այսօրինակ երկերի հեղինակ է հիշվում նաև Ը դարի մեծանուն մատենագիր Ստեփանոս Սյունեցին*: Նրա անունով մեզ են հասել ժամակարգության մեկնությունը

---

[1] J. Maritain, Art et scolastique, P., 1920, p. 145:

[2] Տե՛ս «Մայր Մաշտոց», Կ. Պոլիս, 1807, էջ 155-166:

* Է-Ը դդ. եկեղեցաբանական գրականությունն աշխույժ զարգացում է ապրում նաև Բյուզանդիայում, առավել ներկայանալի են մասնավորաբար Մաքսիմոս Խոստովանողի (580-662) եւ Գերմանոս Պատրիարքի (715-730) աշխատությունները (Migne, PG., t 91, Св. Герман Константинопольский, Сказание о Церкви и таинствах, М., 1995), որոնք խորհրդաբանական շատ եզրեր ունեն հայ հեղինակների համաբնույթ երկերի հետ:

(ընդարձակ ու համառոտ տարբերակներով), ինչպես նաև՝ «Ի խորհուրդ եկեղեցւոյ», «Խորհուրդ եւ կարգաւորութիւն եկեղեցւոյ»[3], «Պատճառ հիմնարկութեան Սրբոյ Եկեղեցւոյ» խորագրով աշխատությունները: Ինչպես խորագրերն իսկ հուշում են, վերջինները բնույթով և բովանդակությամբ նման են: Առաջինի լրիվ խորագիրն է «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ այլոց վարդապետաց ի խորհուրդ եկեղեցւոյ»: Խորագիրն ինքնին վկայում է, որ այս երկը խմբագիր է: Եվ իրապես, նրա առանձին հատվածները գրեթե բառացիորեն համերաշխվում են Հովհան Մայրագոմեցու «Վերլուծութիւնք կաթողիկէ եկեղեցւոյ» երկի[4] և Հովհան Օձնեցու՝ եկեղեցուն նվիրված երկրորդ ճառի[5] համապատասխան բացատրությունների հետ: Այս հիմամբ էլ կարելի է ենթադրել, որ խնդրո առարկա ճառի մնացյալ մասերն ամենայն հավանականությամբ պատկանում են Ստեփանոս Սյունեցու գրչին: Ուստի բնական է, որ Սյունեցու եկեղեցաբանական վաստակի հետազոտման համար քննության նյութ կարող են դառնալ մասնավորաբար խմբագիր մեկնության նրա գրչին վերագրելի այդ մասերը: Այս երկը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հատկապես ճարտարապետության, եկեղեցական արարողակարգին առնչակից զանազան պարագաների տեսական բովանդակության ուսումնասիրման համար: Ինչպես դժվար չէ հասկանալ, խոսքը վերաբերում է սրբազան խորհրդի և խորհրդանշանի աստվածաբանությանը: Առաջին «խորհուրդ» եզրի դասական բացատրությունն ենք գտնում Պրոկդ. Կ. Պոլսեցու (434-446) աշխատություններից մեկում. «...խոհուրդ է անճառ, անքննին, անասաց, եւ մինչ խորհուրդն խորհուրդ է՝ ոչ ոք կարէ յայտ ածել եւ մերկանալ, ապա եթէ մերկանայցէ եւ յայտնեսցէ, խորհուրդն այնուհետեւ չէ խորհուրդ»[6]: Այսպիսով, «խորհուրդն» իր մեջ ներամփոփում է անարտահայտելին, վերամտայինը, վերբանականն ու վերբնականը: «Խորհրդի» բևեռային հակոտնյան է «խորհրդանշանը»[7], որը հայտնութենական մակարդակում դրսևորիչն է

---

3 Փ. Անթաբյանը Մաշտոցի անվան Մատենադարանի N 2309 Տոնապատճառ ժողովածուն նկարագրելիս, ելնելով «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի ասացեալ Յաղագս եկեղեցաւրինեացն կարգաց. թէ զինչ է խորհուրդն» (թ. 230ա-231ա). «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ այլոց վարդապետաց ի խորհուրդ եկեղեցւոյ» (թ. 238ա-244ա) միավորների «Խորհուրդ եւ կարգաւորութիւն եկեղեցւոյ» (թ. 231ա-236ա) երկին նախորդելու եւ հաջորդելու հանգամանքից, ինչպես նաև այդ միավորների բնույթի նույնականությունից, խնդրո առարկա միավորի խորագրին ավելացնում է «Նորին» դերանունը («Տոնապատճառ» ժողովածուն, «Բանքեր Մատենադարանի» N10, էջ 112): Հետևելով այս վերագրումին՝ մենք ևս այս երկը ընծայում ենք Ստեփանոս Սյունեցու գրչին դրա համար, սակայն, չունենալով անհերքելի կռվաններ:

4 «Վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ եւ որ ի նմա յաւրինեալ կարգաց» (աշխատ. Ն. եպս. Պողարյան), «Սիոն», 1967, հունվար-փետրվար, էջ 70-75:

5 «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 130-144:

6 Տես «Կնիք հաւատոյ ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ...», աշխատ. Կարապետ եպիսկոպոսի (Տէր-Սկրտչեան), Ս. Էջմիածին, 1914, էջ 108:

7 «Խորհուրդ-խորհրդանշան» նույնական հակադրության քննությունը տես Հ. Ջյոսեյան, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 84-87, ուր, սակայն, Եղիշեի աստվածաբանության հիման վրա դիտված հակադրությունը արձանագրված է մի կողմից «խորհուրդ=խորհրդանշան», մյուս կողմից «ճշմարտություն=իսկություն» եզրերի միջև:

խորհրդի: Բայց այս պարագային այն ներկայացնելով խորհուրդը, սակայն լիովին չի նույնանում նրան: Արդեն վաղ միջնադարում աստվածաբանական միտքը փորձում է մեղմել «խորհուրդ-խորհրդանշան» հակադրությունը: «Որպեսզի կարելի լինի պատկերացնել «անտեսանելի և անմատչելի էաեներին, ասում է Ս. Դիոնիսիոս Արիսպագացին իր «Յաղագս երկնային քահանայապետութեան» երկում, անհամեմատ պատշաճ է օգտագործել նրանց չնմանվող պատկերները, որոնք ցույց են տալիս, թե նրանք վեր են ամեն տեսակ նյութականությունից: Ուրիշ խոսքով...ամեն սրբազան պատկեր (առարկա- Հ. Ք.) «աննման նմանութիւն է», այսինքն՝ աչքի համար աներևույթի և չմարմնավորվողի նշանակն է[8]: Այուսեցին, լինելով Արիսպագացու երկերի թարգմանիչը, կենսագործում է իրեն քաջ հայտնի այդ հեղինակի աստվածաբանական տվյալ հրահանգը:

Բնութագրելով Եկեղեցու դերն ու նշանակությունը՝ Այուսեցին այն նմանեցնում է նավի, որի պետը Հայր Աստված է, նավարարը՝ Որդին, նավահանգիստը՝ Սուրբ Հոգին, առագաստը՝ փրկչական խաչը, թիակները՝ առաքյալների խմբերը, խարիսխը՝ հաստատուն հավատքը, այս ու այն կողմ ծգվող պարանները՝ Հին և Նոր Կտակարանները, նավի բեռները մարդկանց հոգիներն են, ծովը այս աշխարհն է, ալիքները՝ սատանայի նյութած դավերը, քամին՝ օտար հերձվածները[9]: Այս բացատրությունն ինքնին ցույց է տալիս, թե հեղինակը որքան մեծ դեր է վերապահում Եկեղեցուն: Այն ոչ միայն Սուրբ Երրորդությամբ, այն է՝ անդրանցական իրողությամբ անմիջաբար կառավարվող մարմին է, այլև սուրբգրային, հոգևոր արժեքների գետեղարան: Այսպիսով, Եկեղեցին առարկայական պատկերն է տեսական, վարդապետական երկու գլխավոր կարգույթների՝ հրամանակարգ (դոգմատիկ) և բարոյական աստվածաբանության: Նավի, նրա բաղկացուցիչ մասը կազմող զանազան պարագաների այսօրինակ մեկնաբանությունը արձագանքն է ինչպես հայ վաղ միջնադարյան, այնպես էլ ուշ անտիկ, բյուզանդական աստվածաբանության մեջ տեղ գտած համաբնույթ բացատրությունների: Այսպես, Սահակ Պարթևի անվամբ հայտնի կանոններում կարդում ենք, որ «առաքեալք եւ մարգարէք եւ վարդապետք են նաւավարք՝ ունելով նաւապետ զմարմնացեալ եւ զմարդացեալ Բանն Աստուած, եւ զնա իսկապէս խոստովանիմք ասել Մայր Եկեղեցւոյ ի Քրիստոս հաւատացելոց, քանզի զաւրէն նաւի զամենեսեան յինքն ամփոփելով ցամաքաթեւ յամենայն աշխարհական ծփանաց կարող լինի

---

[8] И. Е. Данилова, От средних веков к Возрождению, М., 1975, с. 12: Իր «Սիստեմատիկ աստվածաբանության» մեջ Tillich-ը նկատում է. Աստծո գոյության վերաբերյալ խորհրդածության միակ մարդկային միջոցը խորհրդանշանն է: Բայց յուրաքանչյուր կրոնական խորհրդանշան ինքն իրեն մերժում է ուղղակի իմաստի և, ընդհակառակը, հաստատում իր փոխաբերական «ինքնանդրանցականացման» իմաստի մեջ. P. Tillich, Sistematic Theology, v. 1, Chicago, 1951, p. 237: Խորհրդանշանի աստվածաբանական այս ընկալումն է ընկած նաև հայ միջնադարի եկեղեցական մատենագրության հիմքում:

[9] Այսօրինակ մեկնաբանություն առկա է Սարգիս Շնորհալու մոտ նմանապես. «Որոց պարտ եւ արժան էր հաստատուն կալ յուղղակս նաւին եւ ընդդէմ հերձուածողական հողմոցն...». Մեկնութիւն Կաթողիկեայ թղթոց, Կ.Պոլիս, 1826, էջ 435, նաև 444, 605:

ապրեցուցանել»[10]: Մեսրոպ Մաշտոցի Ապաշխարության կարգի հայտնի երգում ասվում է. «Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ, Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ, Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւեն»: Նավի, նավապետի և ծովի այս խորհրդաբանությունը համերաշխ է եկեղեցու հայրերի եկեղեցաբանական բացատրություններին: Բնութագրական մանրամասնություններով հատկապես աչքի են ընկնում Տերտուղիանոսի, Հիպպոդիտոսի, կապադովկյան հայրերի և Հովհան Ոսկեբերանի երկերը[11]: Սկրտությանը նվիրված ճառում Տերտուղիանոսը ասում է, որ Հիսուսին և աշակերտներին փոթորկոտ ծովով տանող նավը (Մտթ. Ը 24) եկեղեցու պատկերն է: Հիպպոդիտոսը աշխարհը ներկայացնում է փոթորկոտ ծովի պատկերով, իսկ եկեղեցին՝ փրկագործող նավի: Այդ նավն հանդարտ, ապահով ընթացքով սահում է ալիքների միջով, որովհետև նրա փոքրաքոր նավապետը Քրիստոս է: Նավի քիթը Արևելքն է, նավախելը՝ Արևմուտքը, երկու ղեկերը Հին և Նոր Կտակարաններն են, նավի ամրակապերը եկեղեցին շաղկապող քրիստոսական սերն է, առագաստները՝ երկնքից իջած Սուրբ Հոգին, իսկ երկաթե խարիսխները՝ Քրիստոսի երկաթեղեն պատգամները, նավաստիները հրեշտակներն են, որոնք նավի աջ և ձախ կողմերում կանգնած օգնում են նավավարին՝ նավն ապահով առաջնորդել կենցաղի ծովի դժնի ալիքների միջով[12]: Այս նույն պատկերն է առկա Ս. Հովհան Ոսկեբերանի անվամբ հայտնի «Յաղագս եկեղեցւոյ ի ժողովոց գրոց» երկում, ուր կարդում ենք. «Նոյնպէս եւ Քրիստոս արար իբրեւ զնաւ ի ծովու զեկեղեցի աշխարհի նաւելով բերեալ եթող, ոչ եթող զալեկոծութիւնսն, այլ յափշտակեաց ի մրրկացն, ոչ նստոյց զծովս, այլ ամրացոյց զնաւն...»[13]:

Եկեղեցու հոգևոր դերի ընդհանրական ու նկարեն հատկորոշումից հետո Ստեփանոս Սյունեցին կանգ է առնում նրա ճարտարապետական առանձին մասերի աստվածաբանական բացատրության վրա: Հավատացյալն իրեն ապահով կարող է զգալ միայն եկեղեցու ներսում գտնվելով: Եկեղեցի պետք է մտնել դռնով, որ նյութապես շոշափելի խորհրդապատկերն է Քրիստոսի («Ես եմ դուռն», Հովհ. ժ. 7): Դուռն իր չորս սեմերով խորհրդանշում է Քրիստոսի տնօրինությամբ իրագործված Բանի մարմնավորումն ու մարդացումը: Սրա շնորհիվ Բանը միավորվեց մարդու մարմինը կազմող չորս տարրերին և դրանք աստվածացնելով բարձրացրեց մինչև Եզեկիելի մարգարեության մեջ նկարագրված չորեքկերպյան Աթոռ: Դռան երկու փեղկերը ներկայացնում են երկու կարգի իրողություններ՝ մարդացած Աստծո և աստվածացած մարդու փոխշաղկապումով, փոխներթափանցումով գոյացած ադամորդու կատարելությունը: Այսպիսով հեղինակը հարազատ է մնում հայրախոսական աստվա-

---

10 Տես Կանոնագիրք հայոց, հտ. Ա, աշխատ. Վ.Հակոբյանի, Եր., 1965, էջ 388, տող 3-8:

11 Տես В. В. Бычков, Эстетика Поздней Античности. II-III века, М., 1981, с. 250. Т. А. Миллер, Образы моря и письмах каппадокийцев и Иоанна Златоуста (опыт сопоставительного анализа) – "Античность и современность", М., 1972, с. 366-369:

12 В. Бычков, նշվ.աշխ., էջ 250:

13 Հ. Քյոսեյան, Հատվածներ Ս. Հովհան Ոսկեբերանի Սրարածոց մեկնության հայերեն թարգմանությունից, «Էջմիածին» 1987, 9-է, էջ 169:

ծաքանությանն ընտանի այն գաղափարին, թե Աստծո մարդացումով միայն ադամորդին կարող է. հաղթիարելով Նյութի և Ոգու բևեռացումը[14], աստվածանալ և դառնալ քրիստոսակերպ**: Խորհրդական այս բացատրությանը հետևում է երևույթի բացառապես քրիստոսաբանական իմաստավորումը. «Եւ բնութիւն մի եւ մի դէմք տեսանի անբաժանաբար գոլով»[15]: Սա անխզելիորեն կապված է ադամորդու աստվածացումն իր լրումին հասցնող եկեղեցու հետ, որ ոչ այլ բան է, քան «Քրիստոսի հարատևորեն շարունակվող մարդացումը»[16]: Այս մարդացումի շնորհիվ, ինչպես նկատում է Մաքսիմոս Խոստովանողը, մարդկանցից «աստվածներ գոյավորող Աստված, համաձայն Իր շնորհի, բովանդակ արարչությունը դարձնում է Իրենը»[17]:

Եկեղեցու լուսամուտները չորս կողմերում են, որպեսզի լույսն առատորեն ներս թափանցի և դուրս վանի բագինների խավարին վարժված դևերին: Եվ ինչպես Եղիա մարգարեն զոհասեղանի կրակով լույս սփռեց շուրջ բոլորը և, ի տես հավաքված ժողովրդի, հայտնի դարձրեց աստվածագործ հրաշքը ու դրանով դատապարտեց սուտ մարգարեներին, այնպես էլ դրսից ներս հորդող առատ լույսով կատարում ենք Լույսի լուսեղեն խորհուրդը և վանում դևերին: Լույսի ներթափանցումն արևելքից ցույց է տալիս դրախտի լույսով եկեղեցու սնվելը և մտքի աչքով դրախտի լույսն ըմբռշխնելը: Ադամորդու հոգևոր շարժումը կատարվում է ծախից աջ. նախ «ահեկաւն իմաստութեամբ մտաւք մերովք յարեւմուտս խոկալ եւ լսելեաւք մերովք ընդ հիւսիսի եւ ընդ հարաւ արձակել», որպեսզի մեզ աշխարհի չորս կողմերից հավաքելով տեր դարձնի մեր հայրենի երկնավոր ժառանգությանը, ինչը և կատարվում է ավազանում

---

14 Տես. В. М. Живов, "Мистагогия" Максима Исповедника и развитие византийской теории образа- "Художественный язык средневековья" (сборник статей). М., 1982, с. 117:

** «Եւ որպէս Որդին Աստուծոյ եղեւ որդի մարդոյ, եւ զգեցաւ զմեր բնութիւնս. - կարդում ենք «Յաճախապատում»-ի մեջ. - ...այսպէս եւ մեք զգեցցուք զուղղութիւնս... զի որդիք Աստուծոյ լիցուք եւ աստուածք սիրով». տես «Յաճախապատում ճառք սրբոյ հաւրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի», աշխատ. Ա. Տեր-Միքելյանի, Ս. Էջմիածին. 1894, էջ 18:

15 Գրիգոր Տաթևացին Հովհաննու Ավետարանի մեկնության մեջ տերունական «Ես եմ դուռն» խոսքի հետևյալ բացատրությունն է տալիս, որ դավանական ընդարձակ վավերացումն է Այնմեջ մտքի. Հարց. «Վասն է՞ր ասէ յաւդիւն «դուռն». Պատասխանի. Նախ զի յատկասցի ի հասարակ դրանց, երկրորդ զի կենաց է դուռն, երրորդ զի երկնից, չորրորդ՝ առ Հայր մտից: Վասն է՞ր յոմանս եկեղեցի միափեղկ է դուռն եւ յոմանս է երկփեղկ: Երկոքինն խորհրդաւորք են. Նախ զի ետես Յովհաննէս ի Տեսլեան զդուռն վերին քաղաքին յոդջոց մարգարտաց, իսկ Սողոմոն արար զդուռն տաճարին երկքաղիկս: Դարձեալ՝ միափեղկեանն զմիութիւն Բանին մարդացելոյ նշանակէ, իսկ երկփեղկն զհոգի եւ զմարմինն Քրիստոսի: Եւ սուտ են որ ասեն զԱստուածութիւն եւ զմարդկութիւն նշանակէ. Նախ զի Աստուածութիւն եւ մարդկութիւն ոչ բաժանեցան, այլ՝ հոգի եւ մարմին: Երկրորդ զի Սողոմոն արար զդրունս երկքաղիկս ի գիոց եւ պատեաց ոսկով, որ ցուցանէր փայտն զանապական մարմինն եւ Հոգին, եւ ոսկին զԱստուածութիւն միաւորեալ: Երրորդ զի ողջ մարգարիտն նշանակէ զքանն միացեալ ի մարմնի: Չորրորդ ասէ աստ «ես եմ դուռն» միաւոր եւ ոչ դրունք բազմաւոր: Եւ զի մուտ դրանն, որ է բացուածք, ընդ որ մտանեն, որ ասի դուռն եւ այս միաւոր է եւ ոչ բազմաւոր, զի ընդ տախտակն թէ՛ մի, թէ՛ բազում, ոչ ոք մտանէ, այլ բացուածն, որ մի է, որով զԻնքն նշանակեաց զՏէրն». ՍՄ, ձեռ. 1394, թ. 281ա:

16 Живов, նշվ. աշխ., էջ 119, С. Л. Епифанович, Преподобный Максим Исповедник и Византийское богословие, Киев, 1915, с. 80.:

17 Живов, նշվ. աշխ., էջ 119:

իրագործված վերստին ծնունդով: Սրանից հետո միայն առամորդին կարգվում է Քրիստոսի աջակողմյան դասի մեջ: Հետևելով Աստվածաշնչից եկող և արդեն վաղ միջնադարի աստվածաբանության մեջ համապատասխան մեկնաբանության ենթարկված տեսակետին՝ Սյունեցին բավական հստակ զանազանում է ձախ և աջ կողմերի խորհրդաբանությունը: Ձախն իր հոգևոր նշանակությամբ ստորադաս է աջին, քանզի այն խորհրդանշում է արևմուտքը, որի մասին է խորհում մարդկային այսրաշխարհային իմաստությունն՝ իր անփառունակ, մեղսալից անցյալից միտելով դեպ արևելք՝ աջակողմ:

Մկրտության ավազանը երեք կարգի իրողություններ է խորհրդանշում. այն հայրական շնորհ է, Մայր եկեղեցու արգանդ և Կարմիր ծով: Վերջին երկուսը պայմանավորված են առաջինով. Հայր Աստծո շնորհով է, որ սոսկական ավազանն էապես փոխարկվում է հոգևոր որդիներ ծնող արգանդի: Ինչպես առաջին արարչության ժամանակ ջրից ստեղծված կենդանիները «թեւաբուսեալ թեւաւք ելին ի ջրոյ յորձանաց» և զերծ մնացին սատանայի որսորդական նենգամիտ հնարներից, այսպես էլ եկեղեցու այս հոգևոր արգանդում վերստին ծնվածները Ս. Հոգու թևերով բարձրանում են դեպ վերին երուսաղեմ: Ինչպես խորհրդանշանի երկրորդ, այնպես էլ երրորդ նշանակությունը ներկայացված է հինկտակարանային զուգորդումներով: Մկրտության ավազանը նաև Կարմիր ծովի խորհրդապատկերն է: Հետևելով Պողոս առաքյալի բացատրությանը՝ Սյունեցին խորհրդաբանական զուգորդումով նկատում է, որ իսրայելացիներին ուղեկցող ամպը Սուրբ Հոգին է, իսկ ծովը՝ Մկրտության ավազանը.[18] ինչպես փարավոնը, հալածելով իսրայելացիներին, մտավ ծով և իր զորքով խեղդվեց նրա ալիքների մեջ, մինչդեռ իսրայելացիները ոչ միայն անփորձանք դուրս եկան ծովից, այլև վայելեցին «յերկնաձորան կերակուր» (մանանա), այնպես էլ մենք, մտնելով մկրտության ավազանի մեջ, խեղդամահ ենք անում աներևույթ փարավոնին՝ սատանային, և լուսավորվելով Ս. Հոգու ընծաներով, դառնում ենք լույսի որդիներ և կերակրվում երկնային անմահ Հացով՝ Քրիստոսով[19], այսինքն՝ ստանում Ս. Հաղորդություն:

Նույնքան ուշագրավ է կանթեղների և ջահերի մեկնաբանությունը: Նրանք զետեղված են վարագույրի արտաքնակողմում, որն այս աշխարհի խորհրդապատկերը լինելով՝ իր երկնակամարում ունի նյութեղեն լուսատուներ, այն է՝ կանթեղներ և ջահեր: Իսկ վարագույրի ներքնակողմը խորհրդապատկերն է իմանալի՝ հոգևոր աշխարհի, ուր բնակվող իմանալի էակները՝ հրեշտակները, կարիք չունեն նյութեղեն լույսի. «քանզի Աստուած է լոյս նոցա»[20]: Սակայն այս խորհրդանշանն ունի մեկ այլ մակարդակ ևս. վարագույրի ներսակողմում գտնվող առամորդին, որ իր ներսում կրում է հոգևոր կանթեղ, հոգևոր էակ է,

---

[18] Ս. Կորնթ. Ժ 1-3:

[19] Յովհ. Զ 11:

[20] Այս կապակցությամբ Եսայի Նչեցու երկերից մեկում կարդում ենք. Խորանը «ուր Սեղանն է, որ է պատկերն Յիսուսի, եւ մարմինն նորին բաշխի», խորհրդանշում է երկինքների երկինքը, ուր «հանգուցեալ է Աստուածութիւնը»: Տաճարը, որ նախատեսված է մաքրակենցաղ և սրբակրոն անձանց համար, խորհրդանշում է հրեշտակների կայանը, իսկ գավիթը՝ երկիրը. «Թուղթ վասն կարգաց եկեղեցւոյ եւ ժամուց» ՍՄ, ձեռ. 5154, թ. 259բ. տե՛ս Ս. Քհն. Պետրոսյան, Եսայի Նչեցու թղթերը, «Էջմիածին», 1985, ԺԱ-ԺԲ, էջ 97:

իսկ վարագույրի արտաքնակողմում գտնվողը՝ մարմնավոր: Հոգևոր տարածքում գտնվող էակը կարիք չունի նյութեղեն լույսի, որովհետև նրա լույսը Աստծո պատվիրաններն են[21]: Կանթեղն ինքնին ադամորդու խորհրդապատկերն է, ինչպես այն բաղկացած է լույսից, ջրից, ձեթից և ապակուց, այնպես էլ մարդու բնությունն է բաղկացած չորս նյութերից՝ կրակից, ջրից, օդից և ապակուց (=հողից): Ջրի վրա ծավալվող ձեթը, որից լույս է ճառագում և լուսավորում մարդու էությունը, Սուրբ Հոգին է: Միանգամայն ակնհայտ է, որ միտքը կառուցված է Օննդոց գրքի հայտնի դրվագի զուգորդումով, ինչպես ջրերի վրա է թևածում Աստծո Հոգին[22], այնպես էլ ձեթը՝ կանթեղի ջրի վրա: Կանթեղի լարերը նյութեղեն, շոշափելի առարկայացումն են սաղմոսերգուի «Ո՞ թուէ զբազմութիւն աստեղաց...» խոսքի[23]: Մյուս կողմից նրանք ակնարկում են Հեսու Նավեի կատարած հրաշքը, երբ նա կարծեք լարերով կանգնեցրեց լուսատուների շարժումը՝ վանելու համար թշնամիներին:

Խորհրդանշանի աստվածաբանության հետազոտման համար նույնքան ուշագրավ է աշտանակի բացատրությունը: «Խորհուրդ եւ կարգաւորութիւն եկեղեցւոյ» աշխատության մեջ բերելով հինկտակարանային «Եւ արար Բեսելիէլ զաշտանակն լուսոյ ձոյլ ոսկի եւ ջահ ի վերայ նորա» նկարագրությունը՝ հեղինակն այն նկատում է մի կողմից Ս. Երրորդության հանդեպ եղած հավատքի և մյուս կողմից Աստծո խորհրդապատկերը: Վերբանական այս շերտից զատ աշտանակն ունի մեկ այլ նվիրապետական շերտ ևս, այն խորհրդապատկերն է եկեղեցու վերակացուների՝ եպիսկոպոսների: Ինչպես ոսկեղեն աշտանակն է Աստծո խորհրդապատկերը, այնպես էլ վայել է, որ եպիսկոպոսն ունենա Աստվածության էությունը կազմող ոսկու պատվականությունն ու մաքրությունը[24]: Պատահական չէ, որ բյուզանդական գիտակցության մեջ ոսկին իր լուսավոր էությամբ ուներ ընդգրկուն, բազմաշերտ նշանայնություն: Այն ոչ միայն Արքայի և Աստծո խորհրդանշանն է, այլև գունային համակարգում հանդես է գալիս իբրև «ներդաշնակող հաղորդիչ՝ մեդիում»[25]: Խորհրդանշանի խնդրո առարկա երրորդ իմաստը (եպիսկոպոս) աղերսված է ոսկու աստվածաբանական այս նշանակության հետ: Եպիսկոպոսի՝ խորհրդաբանորեն ոսկուն համարժեք դիտվելը, թվում է որոշակի ակնարկ է նրա (Աստծո և մարդկանց միջև իրականացրած) միջնորդական դերի մասին:

Վարագույրը շարժող ճախարակը երկնքի շրջանակն է, իսկ սրա լարերը՝ Սուրբ Հոգու շնորհները, որոնցով առաջնորդվում է Սուրբ Գրքի իմացությունն՝ ավելանալով կամ նվազելով: Ճախարակը միաժամանակ խորհրդանշում է

---

21 Եսայի ԻԹ 9, Սղմ. ճԺԸ 105, ԺԸ 9:

22 Ծնդ. Ա 2:

23 Սղմ. ճԽԹ 4:

24 Ի տարբերություն սրա, Գրիգոր Տաթևացին, առաջնորդվելով մեկնաբանական մեկ այլ ավանդույթով, գրում է, թե «ոսկին նշանակէ զանսուտ եւ զանապական բանքն Տեառն ի սմա, որպէս ասաց «Երկինք եւ երկիր անցցեն եւ բանք իմ ոչ անցցեն». տես Խորանների մեկնություններ, աշխատ. Վ. Ղազարյանի, Եր., 1995, էջ 96:

25 Տես В. Бычков, Византийская эстетика. Теоретические проблемы. М., 1977, с. 106-107:

հրեշտակին, որ մարմնից զատված հոգին մի ակնթարթում բարձրացնում է դեպ վերին Պետությունները, որ նվիրապետական երկրորդ եռյակի երկրորդ դասն է ներկայացնում: Ճախարակի միջոցով վարագույրի բացվելն ու փակվելն ունի ծիսական կարևոր խորհուրդ: Ինչպես հրապարակային դատավարության ժամանակ սպասավորները Դատավորի առջև բացում են վարագույրը, այնպես էլ, համաձայն Եսայու մարգարեության, երկինքն է գալարվելով բացվում, և Աստծո Որդին, որպես բացարձակ Դատավոր, կատարում է Իր դատաստանը[26]: Այս համաբանությամբ էլ սարկավագների ժողովրդին կարդացած հրավերքի ժամանակ, հրավերք, որ պարունակում է տերունական խրատ և վարդապետություն, վարագույրը բացվում է, իսկ երբ կատարվում է քահանայական խորհրդածություն, վարագույրը կրկին փակվում է: Սրանով հատկորոշվում են երկու ժամանակային վիճակներ. Ապառնին, երբ պիտի կատարվի ընդհանուր դատաստանը, և ներկան, որ հոգևոր խորհրդածության, հավիտենական կյանքին անցնելու նախապատրաստության ժամանակն է:

Հայ միջնադարի մշակույթի աստվածաբանության ուսումնասիրման համար մասնավորաբար առատ նյութ է պարունակում ծիսական խորհրդանշանի մեկնաբանությունը: Ժամակարգության մեկնության մեջ խոսելով եկեղեցական տոնի ժամանակ ծիսակատար պաշտոնյայի հագած զգեստի մասին՝ հեղինակն այն վերարտադրությունն է համարում Ահարոնի պճղնավորի, որն իր հերթին խորհրդանշում է Աստծո Բանի մարմնացումը, որովհետև Ահարոնը Քրիստոսի նախօրինակն է. ինչպես քահանան վակասե հանդերձանք է հագնում, այնպես էլ Քրիստոս՝ մեր խոնարհ մարմինը: Այնուհետև Սյունեցին տալիս է քահանայական զգեստի չորս գույների հետևյալ խորհրդական մեկնաբանությունը: Զգեստի կապույտ գույնը խորհրդանշում է երկնայիններին և նրանց առաքինությունը, ծիրանին՝ երկնավոր Թագավորով՝ Քրիստոսով զգեստավորվելը, կարմրով՝ մարմնով և արյամբ Իր անքննելի Աստվածությանը մեզ հաղորդակից դարձնելը, իսկ ոսկեգույն ծիրանիով՝ Քրիստոսի ոսկեճաճանչ բնության միավորված լինելը մարդու բնությանը: Քահանայական զգեստի վուշից լինելը ակնարկ է Աստծո Բանի՝ Քրիստոսի երկրից, այն է՝ Կույսից մարմին ստանալու մասին[27]: Արձագանքելով տաճարի մարդանմանության վաղնջական գաղափարին՝ Սյունեցին հաստատում է, որ հինկտակարանային Բեսելիել ճարտարապետի կառուցած խորանը Քրստոսի մարմնի նախօրինակն է. սյուների արծաթե խարիսխները երկու կողմից խորհրդանշում են Փրկչի ոտքերի երկու թաթերը, ութ սյուները՝ ոտքերի և ձեռքերի դաստակները, պղնձե ցցերը՝ ոսկորները, կամարները՝ ոսկորների կցումը, զմրուխտ ակնաքարերը՝ աչքերի երկու բիբերը և այլն[28]:

---

[26] Եսայի ԼԳ 4:

[27] «Ժամակարգութեան մեկնութիւն ընդարձակ եւ համառաւտ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ նորին ճառ հիմնարկութեան Սրբոյ Եկեղեցւոյ ի լոյս ընծայեց Սահակ վարդապետ Ամատունի», Ս. Էջմիածին, 1917, էջ 65-66:

[28] Սնդ. էջ 68:

Ճարտարապետական խորհրդանշանի հետազոտման համար մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում Այուսեցու «Պատճառ հիմնարկութեան սրբոյ եկեղեցւոյ» աշխատությունը: Եկեղեցու խորանի մեջտեղում զետեղված Սուրբ Սեղանի անտաշ և անկոփ քարը խորհրդապատկերն է Գողգոթայի վրա բարձրացված հոգևոր վեմի, եկեղեցու հիմքում դրված 12 քարերը՝ առաքյալների, որոնք կրթված չեն այսրաշխարհային օրենքներով և գիտելիքներով[29]: Եկեղեցու հիմնաքարերի լվացված և օծված լինելը խորհրդանշում է առաքյալների մկրտությամբ և հոգով մաքրագործված լինելը, առաքյալների, որոնք հիմքը դարձան Ընդհանրական եկեղեցու: Հետևելով Ս. Դիոնիսիոս Արիսպագացու՝ հեղինակը ասում է, որ Սուրբ Սեղանն ինքը խորհրդանշում է Քրիստոսի մարմինը[30], իսկ Սեղանի վրա գտնվող Խաչը՝ Տիրոջ չարչարանքը[31]: Սուրբ Սեղանի վրա զետեղված 12 խաչերը ակնարկում են Վերնատան մեջ գտնվող 12 առաքյալներին, իսկ նրա դիմային չորս մակերեսների վրա եղած խաչերը՝ 12 մարգարեներին, որոնք թեպետ հոգով կից էին տնօրինականքին, սակայն՝ անհաղորդ Տիրոջ մարմնին[32]:

---

29 Անդ. էջ 71:

30 Հմմտ. Յովհաննէս Արճիշեցի (Ոսպնակեր), Մեկնութիւն Ս. Պատարագի, Ս. Էջմիածին, 1860, էջ 17:

31 Ժամակարգութեան մեկնութիւն, էջ 75-76:

32 Անդ. էջ 76:

ՎԱՐՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ՀԵՏ

Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսը (1730-1799 թթ.) շատ ժամանակ էր հատկացնում նամակագրությանը: Համարյա ամեն օր նա զբաղված էր տարբեր վայրերում գտնվող նվիրակներին ու առաջնորդներին, աշխարհիկ ու հոգևոր անձանց նամակներ ու կոնդակներ գրելու գործով: Կաթողիկոսարանի գործավարությունն այն ժամանակ պատշաճ բարձրության վրա էր: Հատուկ մատյանների մեջ գրվում էին նամակների սևագիր օրինակները, մեկ այլ տեղ արձանագրվում էր նրանց հակիրճ բովանդակությունը: Եթե նամակները կարևոր չէին (շնորհակալության կամ մխիթարության նամակներ, ստացագրեր, զանազան երկտողեր կամ հետգրություններ) նրանց մասին խիստ համառոտ ծանոթագրություն էր մտցվում հատուկ տետրակի մեջ: Հետո այդ մատյանները կազմվում էին, էջակալվում և պահվում դիվանում: Դժբախտաբար նույն բծախնդրությունը չէր ցուցաբերվում ստացված նամակների պահպանության գործում, ուստի նրանց մեծ մասը չի դիմացել ժամանակի փորձությանը, և տեղեկություններ նրանց վերաբերյալ կարելի է գլխավորապես ստանալ վերոհիշյալ սևագրություններից և համառոտագրություններից: Նամակների վրա եղած նշումներից, լրացումներից ու ջնջումներից երևում է, որ մինչև մաքրագրվելը դրանք հիմնավորապես խմբագրվել են Կաթողիկոսի կողմից:

Գործավարության այդ ձևը էջմիածնում կիրառության մեջ է դրվել Սիմեոն Երևանցու օրոք (1763- 1780 թթ.), որը դրան մեծ կարևորություն էր տալիս: Մինչ այդ նամակների սևագրությունները չէին պահվում[1]:

Ղուկաս Կարնեցին նամակագրություն ուներ Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Կարինում, Նոր Ջուղայում, Երուսաղեմում, Մադրասում, Բոմբեյում, Բասրայում, Կալկաթայում, Հնդկաստանի այլ քաղաքներում և նույնիսկ հեռավոր Չինաստանում ապրող հայերի հետ: Նամակագրության թեման համարյա անփոփոխ էր՝ նամակագրության հարցեր, ստացված նամակներ, նվիրակական կամ առաջնորդական գործեր, եթե հասցեատերը նվիրակ էր կամ հոգևոր առաջնորդ, զանձանակական հարցեր, էջմիածնի վանքում ու շրջապատում եղած որոշ նորություններ (սովորաբար շինարարական-վերանորոգչական հարցեր), երկրի քաղաքական վիճակի նկարագրություններ: Առանձին դեպքերում՝ ապրանքների ձեռքբերման հանձնարարություններ, ֆինանսական հարցեր, շտապ լուծումներ պահանջող տեղական խնդիրներ, զանազան միջնորդություններ և այլն: Այս առումով էջմիածնի նվիրակներին և տեղական մեծահարուստ հայերին ուղարկված նամակներն ունեն ընդհանուր նմանություն: Բայց միայն մեկ անձնավորության՝ Մադրասում ապրող հարուստ

---

[1] «Դիվան հայոց պատմության», գիրք Գ, Թիֆլիս, 1895, էջ 6:

վաճառական, հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Շահամիր Շահամիրյանին (1723-1797թթ.) ուղղված նամակները տարբերվում են մյուսներից: Այդ նամակների մեջ գլխավորապես քննարկվում են երկիրը օտար բարբարոս լծից ազատագրելու, ժողովրդի լուսավորության գործն առաջ տանելու խնդիրներ: Հարկ է նշել, որ դրանք սոսկ նամակներ չեն, այլ արձագանքներ տեղական քաղաքական իրադարձությունների, մտորումներ երկրի բախտի, հարևանների հետ նրա հարաբերությունների և, ի վերջո, ընտրելիք հետագա ուղու վերաբերյալ, որը երկիրը տանելու էր, ըստ մադրասցի լուսավորիչների, դեպի ազատություն և պետականության վերականգնում:

Այս ժամանակներում (18-րդ դ. 85-90-ական թթ.) առաջին նամակը, որ ուղղել է Ղուկաս Կարնեցին Շ. Շահամիրյանին, երկու օրինակից գրված պատասխան գրությունն էր, որն ապահովության համար ուղարկվել էր 1785 թ. մայիսի 22-ին, իսկ մյուսը՝ 1786 թ. սկզբներին:

Մաշտոցի անվան Մատենադարանի N4481 ձեռագրում պահպանված այդ նամակի համառոտագրությունից երևում է, որ Ղուկասը նախ հաղորդել է իր նախորդի՝ Սիմեոն Երևանցու մահվան լուրը, ապա գրել իր ընտրության, երկրում ստեղծված քաղաքական լարված կացության և, մասնավորապես, լեզգիների ավերիչ արշավանքի մասին: Միաժամանակ նա հավաստում է Շ. Շահամիրյանի երեք նամակների և նվիրաբերած 200 ռուփիի ստացումը: Երկրորդ նամակի մեջ, որը եղել է «ի պատասխանի նորին նորագէս գրեցելոց», տրվել է երկրի քաղաքական կացության նկարագրությունը՝ «հանդերձ նորանոր անցիւք կողմանցս երկրիս և սրբոյ Աթոռոյս, և ի կողմանէ Խամսայու մելիքացն և վասն ապօրինաւոր Յովհաննիսին ևս բանք ծանուցանելիք, որք ծանուցան»[2]:

Ցավոք, համառոտագրությունից համարյա ոչինչ չի կարելի իմանալ հասցեատիրոջ ուղարկած նամակի բովանդակության մասին, բայց միայն այն բանը, որ նրա մեջ բացառապես շոշափված են քաղաքական կացության հետ կապված հարցեր, թույլ են տալիս կարծելու, որ ստացված նամակի մեջ գլխավորապես արծարծվել են այդ բնույթի խնդիրներ: Նամակների սևագրությունները, դրականորեն տարբերվելով համառոտագրություններից, նաև այն մեծ առավելությունն ունեն, որ թույլ են տալիս որոշ, երբեմն էլ բավականին հստակ պատկերացում ստանալ նամակագրի ասածների, նրա հարցադրումների ու պահանջների մասին: Այսպես, 1786 թ. մայիսի 27-ին Շ. Շահամիրյանին հասցեագրված Ղուկասի նամակի սևագրությունը, որ զբաղեցնում է N4501 ձեռագրի 959-961 մեծադիր էջերը, թույլ է տալիս մասամբ իմանալու այն ամենի մասին, ինչ գրել է Ղուկասը Շ. Շահամիրյանին 1785 թ. մայիսի 22-ի և 1785 թ. օգոստոսի 25-ի նամակներում: Այս նամակի սկզբում հակիրճ ձևով ներկայացվել է երկրի վիճակը լեռնականների արշավանքի ժամանակ, դրանից հետո սկսված խառնակությունները: Նա երկնային շնորհ է համարում լեզգիների՝ դեպի էջմիածին չառաջանալը: Հետո նա պատմում է Մայր Տաճարի նորոգման և նրա պատերը նկարներով զարդարելու մասին, անցնում նամակագրական հարցերի և վերջում

---

[2] Նամակի հրատարակությունը տե՛ս Ն. Տեր-Ավետիսյան, Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար, Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. XIII, Երևան, 1940, էջ 48-53: Նամակի համառոտագրությունը տե՛ս Մատենադարանի ձեռ. N4481, էջ 180ա:

ողջույններ հաղորդում Շահամիրի որդիներին՝ Հովհաննես և Եղիազար աղաներին, թոռանը՝ աղա Նազարին, էջմիածնի գործակալ պրն. Հովսեփ Մարությանին և Մադրասի ժողովրդին: Չկամենալով վերապատմել Շ. Շահամիրյանին հասցեագրված այս նամակի բովանդակությունը, նշենք միայն նամակի խիստ գործնական ոճը և հակիրճ ձևով բազմաթիվ հարցեր ներկայացնելու հաջողված ձգտումը: Նրանից երևում է, որ Շ. Շահամիրյանը նամակներ է գրել նաև «առ բարեպաշտ արքայն Վրաց և առ այլ ազնիւ անձինս ոմանս, առաքեալ ենք առ նոսա, սակայն աւանդքն, զորս յղեալ էիր ընդ նոսա, դեռ ցարդ ևս ոչ հասին, որոց աղագաւ գրեցաք ի Ջուղայ առ առաջնորդն՝ հարցանելով վասն իրացն, թէ զի՞նչ եղեն»:

Այս ժամանակ դեռ էջմիածին չէին հասել Շ. Շահամիրյանի հրատարակած «Աշխարհացոյցը», Նադիր Շահի պատմությունը և Մադրասի հայ գաղութի կանոնադրությունը: Ղուկասը տեղյակ էր, որ դրանք գտնվում են Նոր Ջուղայում, և միջոցներ է ձեռք առնում՝ էջմիածին հասցնելու համար: Դրանք տեղ են հասնում հաջորդ՝ 1787 թվականին, և իր հերթական նամակում, գրված այդ թվականի օգոստոսի 25-ին, Ղուկասը, հավաստելով նրանց ստացումը, հայտնում է, որ հանձնել է ըստ պատկանելույն, այսինքն՝ քարտեզների և պատմության օրինակները՝ ուղարկել է վրաց թագավորին ու Ղարաբաղի մելիքներին, իսկ «զմերն մեք ընկալաք, զպատմագիրն ընթերցեալ և զաշխարհացոյցն հանդէպ կախեալ վայելեմք, վասն որոյ շնորհակալեցաք զսիրելւոյդ և օրհնութեամբ բազմաւ օրհնեցաք զքեզ»[3]:

Ժամանակն է այժմ մի երկու խոսք ասելու այդ ուղարկված հրատարակությունների մասին, որոնք անընդհատ հիշատակվում են այս տարիներին թե՛ Շ. Շահամիրյանին, թե՛ Հերակլ թագավորին և Ղարաբաղի մելիքներին ուղարկված նամակներում:

«Աշխարհացոյցը» հայկական վեցերորդ տպագիր քարտեզն է, հայ ազատագրական շարժման Մադրասի խմբակի կարևորագույն հրատարակություններից մեկը: Լրիվ վերնագիրն է՝ «Աշխարհացոյց Հայաստանեայց»: Դա Շ. Շահամիրյանի պատվերով լույս է տեսել Վենետիկում 1778 թ.: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ քարտեզը կարծեք հավելվածն է «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» և «Որոգայթ փառաց» գրքերի և կոչված է ավելի լավ պատկերացում տալու Հայաստանի, նրա բնակավայրերի, լեռների ու ջրերի, սահմանների, հարևան երկրների և, ընդհանրապես, այն ամենի մասին, ինչ կարելի է հաղորդել քարտեզի միջոցով: Այն կոչված էր նպաստելու հայ երիտասարդության մեջ հայրենասիրություն ներարկելուն, մեծ օգնություն պետք է ցույց տար երկրի ազատագրությանը նախանձախնդիր անձանց՝ իրենց ամենօրյա պայքարում[4]: Այդ քարտեզի վրա Հայաստանի մի մասը և Վրաստանը, որի հետ նաև Կովկասյան լեռնաշղթայի և Հյուսիսային Կովկասի մի մասը, վերցված են մի ընդհանուր սահմանի մեջ: Դա, ըստ երևույթին, մադրասցիների երազած հայ-վրացական միասնական պետության տարածքն է, որը նրանք կամենում էին ստեղծել Ռուսական կայսրության հովանու ներքո:

---

[3] Տես ձեռ. N4501, էջ 1226-1228: Այս նամակի սկզբնամասը տպագրված է Ս. Տեր-Ավետիսյանի «Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության մասին» աշխատության մեջ, էջ 55-56:

[4] Քարտեզի մասին ավելի մանրամասն տես Վ. Գրիգորյան, Շահամիր Շահամիրյանի «Աշխարհահացոյց Հայաստանեայցը», «Բանբեր Մատենադարանի», N6, Երևան, 1962, էջ 353-362:

Հաջորդ գիրքը՝ «Նշաւակը», որը լույս է ընծայվել Մադրասում 1783 թ. Շ. Շահամիրյանի տպարանում, այդ քաղաքի հայ գաղութի կանոնադրությունն է: Լրիվ վերնագիրն է՝ «Տետրակ որ կոչի նշաւակ կառավարելոյ ինչս որբոց և առանց կտակ ննջեցելոց», և կազմված է «Որոգայթ փառաց»-ի գաղափարների ոգով: Ըստ հեղինակ Շ. Շահամիրյանի, քաղաքի հայ համայնքը ղեկավարվելու էր ընտրովի երեք կառավարիչների կողմից: Բոլոր կարգի նյութական միջոցները մուծվում են բարեգործական դրամարկղ, որի միջոցները ծախսվելու են չունևորների վրա: Այս կանոնադրության մեջ պարզորոշ կերպով դրված է նաև ներգաղթի հարցը: Հեղինակը հույս է հայտնում, որ երբ ազատագրվի Հայաստանը, «Մնացորդքն ի մէջ ցնծութեամբ ելցեն ի պանդխտութենէ առ գիրկս գորովագոյթ մօրն իւրեանց յԱրարատ աշխարհ» (էջ 5): Մինչ Հայաստանի ազատագրումը Հնդկաստանից հեռացած հայերն ապաստանելու են Ռուսաստանում (Հյուսիսային Կովկասում), ուստի և «Նշաւակի» մեջ բերված է նաև ռուսաց թագավորի և գաղթական հնդկահայերի միջև կնքվելիք պայմանագիրը (17 կետից) (էջ 57):

Նադիր Շահի պատմությունը անգլերենից թարգմանված գործ է, վերնագիրն է՝ «Պատմագրութիւն վարուցն և գործոցն Նադրը Շահ թագաւորին Պարսից հանեալ ի պատմութեան ազգին պարսից արարելոյ յումեմնէ անգլիացւոյ մստր Հանուէ կոչեցելոյ»: Թարգմանությունը անգլերենից հայերեն կատարել է Սիրզայան Պողոս Ամթեցին՝ Նոր Ջուղայի վանքի միաբան եղիա վարդապետի աշակերտը[5]:

Ահա այս գրքերն ու քարտեզն էին հասել էջմիածին, և Ղուկասը բարեխղճորեն ուղարկում է դրանք հասցեատերերին՝ կցելով համապատասխան նամակներ կամ գրություններ:

Ղուկասը նշված նամակի մեջ (25 օգոստոսի) գրում է, որ չնայած ինքը բոլոր նամակներն ուղարկել է հասցեատերերին («առ Վիրս և առ Հայս»), բայց միայն Դավիթ Սարդարն է պատասխան ուղարկել, որը և դրել է «Թիֆլիզեցի Յովսէփ»-ի թղթերի մեջ և ուղարկել 1786 թ. հուլիսի 1-ին, «զի հասուցէ քեզ»[6]: Ուրեմն կարելի է ճշտել, որ Հովսեփ Դինիբեկյանն իր հերթական ճանապարհորդությունը դեպի Հնդկաստան կատարել է 1786 թ. հուլիսի սկզբներին:

Ղուկասը չէր կարողացել ուղարկել Մելիք Հովսեփյան Մելիք Ապովի նամակը և նվերները, քանի որ ճանապարհները վտանգավոր էին «մանաւանդ վասն նեղութեան և վշտաց նոցա, զոր կրեն ի կատաղեալ բռնաւորէն իւրեանց, ոչ յղեցաք, զի մի գուցէ անկանիցին ի ձեռս թշնամեաց և կորնչիցին»[7]: Այնուհետև նա գրում է էջմիածնի գործակալ պրն Հ. Մարությանի մահվան, նոր գործակալ ընտրելու անհրաժեշտության մասին, նկարագրում վանքի նորոգման աշխատանքները, երկրի քաղաքական կացությունը, գրում Հերակլ թագավորի և Իբրահիմ խանի գործերի, նույնիսկ ռուսաց կայսրուհու՝ դեպի Ղրիմ և Նոր Նախիջևան կատարելիք ուղևորության մասին (վավ. N476): Հետաքրքիր է, որ նամակի վերջում ողջույն է հղված նաև Հովսեփ էմինի գաղափարակից և զինակից Մ. Բաղրամյանին, որը ժամանակին բանադրվել

---

[5] Չնայած գրքի վրա գրված է, որ լույս է տեսել Հ. Շահամիրյանի տպարանում 1780 թ., բայց հիշատակարանի մեջ նշված է, որ այն հրատարակվել է 1783 թ., տպաքանակն է եղել 200 օրինակ:

[6] Ձեռ. N 4501, էջ 1226:

[7] Նույն տեղում:

էր Սիմեոնի կողմից. «Դարձեալ՝ սիրելի և հոգևոր որդւոյն մերոյ և հարազատ զաւակին սրբոյ Աթոռոյս, յԱստուծոյ օրհնեալ խոհեմառատ և շնորհապերճ պարոն տիրացու Սովսէփին Բարաղամեան ևս ողջոյն և օրհնութիւն տամ, եթէ յայդր իցէ՝ առ որ ընդ նուիրակին զյատուկ թուղթ ունիմք գրեալ, որ և լիցի ողջ և պահպանեալ միշտ շնորհիւ Տեառն»[8]:

Հաջորդ նամակում, գրված 1787 թ. դեկտեմբերին, մանրամասն նկարագրված է Անդրկովկասի և Արարատյան երկրի քաղաքական կացությունը. «Վասն երկրիս և սրբոյ Աթոռոյս որպիսութեանցն, թէ եմք ի միջակ խաղաղութեան»[9]:

Մեծ հեռավորություն էր բաժանում Ղուկաս Կարնեցուն իր մադրասահայ բարեկամից՝ Շ. Շահամիրյանից, և ինչպես տեսանք, ապահովության համար նա ոչ միայն նույն նամակը երկու օրինակից և տարբեր ճանապարհներով էր ուղարկում, այլև նոր նամակ գրելիս, դարձյալ վասն ապահովության, հակիրճ կերպով վերապատմում էր նախորդ նամակի բովանդակությունը: Դա նորություն չէր էջմիածնի գրասենյակի համար: Բազմամյա փորձը ցույց էր տվել, որ նամակների կորստյան դեպքում, իսկ դա հազվադեպ երևույթ չէր այն ժամանակների համար, տեղ հասած հաջորդ նամակներից հասցեատերը կարող էր գաղափար կազմել նախորդ՝ տեղ չհասած նամակներում արծարծված կարևոր հարցերի մասին: Այսպես, 1787 թ. դեկտեմբերի 30-ին գրած նամակի սկզբում Ղուկասը նախ պատմում է իր վերջին՝ օգոստոսի 25-ին գրած նամակի հիմնական բովանդակությունը և ապա անցնում իր նոր ասելիքին: Որպես կանոն, Շ. Շահամիրյանին ուղարկված նամակների մեջ զեղումներ, ավելորդաբանություններ չկան և, փաստորեն, դրանք քաղաքական կացության հակիրճ շարադրանքի կամ էլ պատմական տեղեկանքի տեսք ունեն, և դրա մի լավագույն օրինակը N4501 ձեռագրում պահպանված գրությունն է[10]:

Կարելի է ենթադրել, որ Շ. Շահամիրյանին այնքան էլ հաճելի չեն թվացել Ղուկասի նամակներում երկրի ծանր, դժվարին կացության նկարագրությունները, շարադրանքի մռայլ տոնը, հուսահատությունը: Դրանք նյարդայնացրել են խիստ գործունյա, վերափոխումների ոգով մշտապես լեցուն և ավելի լավատես Շ. Շահամիրյանին, որն անկեղծորեն հայտնել է իր դժգոհությունը:

Ղուկասն անկեղծությանը պատասխանել է անկեղծությամբ և հատուկ ընդգծել, որ ինքը դառը ճշմարտությունը գերադասում է քաղցր ստից և իր պարտականությունն է համարում ամեն ինչ ներկայացնել իրական գույներով ու ճշմարիտ խոսքերով՝ ամենևին չգունազարդելով իրականությունը: Նույնն էլ կկամենար տեղեկանալ իր հետ թղթակցողից:

Շ. Շահամիրյանին հասցեագրված հերթական նամակը գրվել է 1789 թ. սեպտեմբերի 11-ին, որպես պատասխան 1787 թ. հոկտեմբերի 15-ին և 1788 թ. փետրվարի 6-ին գրած նամակների[11]: Դժբախտաբար, նրանցից երկրորդը չի պահպանվել, բայց նրա բովանդակության վերաբերյալ կռահումներ կարող

---

[8] Նույն տեղում, էջ 1228:

[9] Ձեռ. N 4481, էջ 231:

[10] Ձեռ. N4501, էջ 1551-1552

[11] Նույն տեղում, էջ 1417-1419: Հրատարակությունը տես Ս. Տեր-Ավետիսյանի վերը նշված աշխ., էջ 60-66:

ենք անել Ղուկասի պատասխաններից: Նախ նշենք, որ Հնդկաստանից առաքվող նամակներն էլ մի քանի օրինակով և տարբեր անձանց միջոցով էին ուղարկվում: Այսպես էին վարվում նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության կողմից Հնդկաստան ուղարկվող նվիրակները՝ իրենց նամակները միաբանությանը ուղարկելիս: Նույն նամակը (երբեմն որոշ փոփոխություններով) գրում և ուղարկում էին մի քանի օրինակից: Այնպես էր ստացվում, որ բոլոր նամակներն էլ տեղ էին հասնում, պահպանվում էր նաև սնագրությունը, որը նվիրակը վերադառնալիս բերում էր հետը: Եվ դիվանատանը կուտակվում էին թե՛ ուղարկված նամակի սնագրությունն ու բնագիրը, թե՛ պատասխանի սնագրությունն ու տարբերակները: Դա, իհարկե, իդեալական վիճակ է ուսումնասիրողների համար, որոնք նույն իրադարձության մասին պատմող նամակների մեջ անընդհատ կարող են հայտնաբերել կարևոր մանրամասներ և մշտապես համեմատել պատասխանը նամակի հետ: Տվյալ դեպքում երևում է, որ Շ. Շահամիրյանից ստացվել էր մի նամակի՝ առաջին նամակի համառոտագրությունը՝ «Նախագաղափարն», երկրորդ-օրինակը և երկրորդի «երկրորդ օրինակն միայն»:

Այս նամակներից Ղուկասը կրկին տեղեկանում էր Շ. Շահամիրյանի որդու՝ աղա Եղիազարի մահվան մասին և դարձյալ ցավակցություն հայտնում: Ապա անցնում բուն նամակի բովանդակությանը:

Պարզվում է, որ Շ. Շահամիրյանը ոչ միայն խորհուրդներ, այլ դառն խոսքեր, մեղադրանքներ է ուղղել նաև Կաթողիկոսի շուրջը համախմբված հայ գործիչներին. «Գրեալ էիր մեզ վասն ազատութեան աշխարհիս մերոյ և ազգիս հոգ տանիլ և ցուցեալ էիր զոմանս կերպս կարգադրութեան»: Երևում է, որ Շ. Շահամիրյանը կոչ է անում զինված պայքար կազմակերպել, ապստամբության միջոցով ազատագրել երկիրն օտար բռնակալներից:

Ահա թե ինչ է պատասխանում Ղուկասը հայ ազատագրական շարժման ղեկավարի այդ անկեղծ պոռթկումին. «Այլ երանի էր, թէ գոնեա մասնաւորապէս արդիւնանային: Քանզի առ այդ պիտոյ էր ամենայն ազգի մերոյ ընդ հովանեաւ հաւատացեալ և բարեմիտ տերանց լինիլ և զապահովութիւն ունիլ, որ խնամածութեամբ նոցին կարիցէին ծգտիլ առ երջանկութիւնս, բայց ահա ըստ մեծի մասին մատնեցեալք կան ի խստութիւնս թշնամեաց անողորմից, որ հաւատարմապէս ծառայելով ևս չկարեն զողորմութիւն գտանել, ո՞ւր մնայ թէ զապստամբութիւն ցուցանիցեն, որք բնաւ ոչ իսկ կարեն»:

Շ. Շահամիրյանը շատ հեռու էր Հայաստանից և չգիտեր այնտեղի վիճակը, հայերի ցրվածությունը, փոքրաքանակությունը, չորս կողմից օտար, մահմեդական ուժերով շրջապատված լինելը, այդ պատճառով նրա համար շատ դյուրին էր ազատագրական ծրագրերի մշակումը: Հետագայում, երբ նա ավելի լավ է ճանաչում իրականությունը, և հարկ է նշել, դա նաև Ղուկաս Կարնեցու պարբերաբար հաղորդած տեղեկությունների շնորհիվ, կանգ է առնում միացյալ հայ-վրացական պետության ստեղծման և Ռուսական կայսրության օգնությունն ապահովելու առաջադիմական տեսակետների վրա:

Նույն նամակում կան ջնջված տեղեր, որ վերականգնել ենք: Ղուկասը վախեցել էր խանական հնարավոր գրաքննությունից և կրճատումներ կատարել. ահա այդ բաժինը. «Զի նոքա իբրև զաւազ ծովու և մեք սակաւաւորք, նոքա ըստ աշխարհային հանգամանաց զօրաւորք և մեք տկարք»:

Շ. Շահամիրյանը մեղադրանք էր ներկայացրել այն մասին, որ «հաճիք ընդ ծառայութիւն այլազգեաց և ոչ սիրէք զազատութիւն, բայց լիներ թէ դու, - պատասխանում է նրան Ղուկասը, - օրհնեալդ, այժմ յայս կողմունքս գայիր և շրջագայէիր ի Ջուղայու մինչև ցաստ և յայլ կողմունսն, որ գոն ազգ մեր, և ականատես վերահասութեամբ իմանայիր զկացութիւնս մերազնէից և զանօգնականութիւնն, և զբռնութիւն իշխողացն, և ինքնին կնքէիր, թէ այս դիտմանցս յառաջանալ ոչ լինի: Ապա թէ հնարաւոր իցէ յառաջնոյն, մի՞թէ յիմար իցեմք, որ ի տառապանաց զերծանիլ չկամիցիմք»:

Այնուհետև Ղուկասը ձգտում է ավելի պատկերավոր ձևով ներկայացնել իր փաստարկները. «Չկունք որսացեալք ի ցանցս և թռչունք ընբռնեալք ի վարմս ջանան զերծանիլ, ապա որքա՞ն ևս առաւել բանականքս բարձամք ազատութեան, սակայն զի այժմոյս կարի դժուարին է առ մեզ և վտանգաւոր յոյժ, վասն որոյ երկուց չարեաց ըզփոքրն ընտրել պիտոյ է»:

Չարյաց փոքրագույնն այստեղ, ըստ Ղուկասի, օտարի լուծը հանդուրժելն է, այլապես ավելի վատթար չարիքներ կգային ազատության ձգտող, ապստամբություն անող ժողովրդի գլխին, որը չէր կարողանա ո՛չ հասնել այդ ազատությանը և ո՛չ հազար ու մի պատճառներով իրականացնել այդ ապստամբությունը: Նա բերում է երուսաղեմցի հրեաների օրինակը, որոնք ապստամբեցին հռոմայեցիների դեմ, «թէ զի՞նչ կրեցին, որք դեռ զօրաւորք էին»: Ո՞ւր է «աստուածառաք Մովսէս», որ կարողանա գործել և փրկել մեզ: Եթե նրանք միայն փարավոնի իշխանության տակ էին, ապա մեր ազգը «ըստ մեծի մասին ցիր և ցան եղեալ ի քանի կալուածս բռնաւորաց՝ օսմանցւոց, պարսից, մարաց և այլոց»:

Ո՞վ է այն զորավարը, հարց է տալիս Ղուկասը, որ «առանց վնասուց ժողովեսցէ և ազատ կացուսցէ զսոսա»: Գուցե վրաց թագավո՞րը և «ի ձեռն նոցա կարելի է լինիլ այս»: Սակայն վերջինս հզորության մասին պատմությունները նա համարում է «շողոքորդական զրոյցք», իսկ ինքը ճշմարիտն է հայտնելու Շ. Շահամիրյանին «թէև անհաճոյ թուեսցի քեզ: Քանզի արքայն Վրաց միայն իւրեանց մնացորդ երկրացն իշխէ, այն ևս հայթայթանօք, և այլ երկրաց ոչ բնաւ, և թէպէտ ի յերևանցւոց զհարկ ինչ առնու վասն ոմանց պատճառաց, բայց յամենայն կառավարութիւն սոցա ոչ խառնի՝ գիտելով, զի ոչ անսան և թէ փոքր մի նեղիցին, ապստամբին՝ ապաւինութեամբ անմատչելի ամրոցին, որպէս քանիցս եղեալ է»: Գյանջայի վրա էլ Հերակլի իշխանությունը լիակատար չէր. միան մի քանի տարի Իբրահիմ խանի հետ «կիսաբաժին վայելէին»: Իսկ հիմա Իբրահիմը զորացել է և Գյանջայի վրա միայնակ է իշխում: Անցյալ տարի Ֆաթալի խանը, միաբանելով վրաց թագավորի հետ, ազատեց Գյանջան Իբրահիմի տիրապետությունից, բայց տեղի իշխողն այլազգի է. «որ ոչ է մնալոյ ընդ ձեռամբ Վրաց»: Ինչ վերաբերում է «հիւսիսաբնակաց մեծ տերութենէն» օգնությանը, ապա այն ևս հուսալի չէ, քանի որ վրաց արքան զորք բերեց այնտեղից, բայց օգուտ չտեսավ «և ի շրջակայիցն բարբարոսաց բազում աւերք հասին երկրին այնու պատճառաւ»: Նա գտնում է, որ այնտեղից (հյուսիսից) առայժմ մեզ օգնություն չի լինի (ընդգծումն իմն է - Վ. Գ.):

Նախ. հարկ է նշել, որ այս ամբողջ բաժինը, սկսած «ըստ մեծի մասին...» պարբերությունից մինչև այստեղ, բնագրում ջնջված է[12]: Ղուկասի զգուշավորությունն այստեղ էլ չի դավաճանել նրան: Իսկ բուն տեքստում նա որոշակիորեն գրում է, թե. «ճշմարտօրէն գրեալքս իմ ծանր թուին քեզ», բայց, իմաստունի ասածի պես, լավ համարիր բարեկամիդ հասցրած վերքը, քան ուրիշների կեղծավոր համբույրը:

Եզրափակելով իր միտքը՝ Ղուկաս Կարնեցին գտնում է, որ առայժմ ոչ մեկից օգնության հույս չկա. «և հաւաստապէս իմա, որ ոչ ի հիւսիսական տերութենէն և ոչ յայլոց մեզ այցելութիւն (ոչ) (բնագրում ջնջված է այս բառը-Վ. Գ.) կարէ լինիլ այժմ, բաց ի Աստուծոյ»: Եվ եթե շրջակայքի թշնամիները իմանան իրենց ծգտումների մասին, ապա «առաջի կայ նեղութիւն, խոշտանկումն, յափշտակութիւն և սուր»[13]:

Մենք արդեն առիթ ենք ունեցել խոսելու երկրի ազատագրության հարցի շուրջ Ղուկասի ունեցած դիրքորոշման մասին[14]: Ստեղծված քաղաքական խառը պայմաններում նա, որպես հեռատես և լրջախոհ հոգևորական-քաղաքագետ, գտնում էր, որ միայն հյուսիսի քրիստոնյա մեծ տերությունը՝ Ռուսական կայսրությունը, կարող է ազատություն ու փրկություն բերել օտար, բարբարոս տիրապետության տակ տառապող հայ ժողովրդին: Դրա մասին են վկայում ռուսական հրամանատարության ներկայացուցիչների և ռուսական պետության ղեկավարների, մասնավորապես Եկատերինա Բ կայսրուհու, Պավել Ա-ի հետ ունեցած գրագրությունները: Նա մեծ սիրով էր ընդունել ռուսական հրամանատարության ներկայացուցիչ դոկտոր Ռայնեգսին, և այդ ուղղությամբ նրա քայլերը համընկնում են նրա՝ որպես կաթողիկոս ընտրվելու սկզբնական շրջանի հետ մինչև վերջ: Բայց բնավորությամբ նա շատ զգուշավոր էր և չէր կամենում ավելորդ գործողություններով իրեն վստահված հոտի դեմ գրգռել շրջապատի վայրենի բռնակալներին: Նրա համար լավ դաս եղավ Վրաստանի օրինակը, որի տիրակալը 1783 թ. Գեորգիևյան պայմանագրով ընդունելով ռուսական հովանավորությունը, ոչ միայն չստացավ սպասված և խոստացված օգնությունը, այլև ընկավ ծանր հարվածների տակ: Կաթողիկոսը զորական ուժ չուներ, չէր կարող հենվել հայ մելիքների վրա, որոնց մի մասը թափառական էր դարձել և հեռացել Վրաստան, մյուսները ցրված էին օտար ազգերի, տարբեր պետությունների և իշխանությունների մեջ, և միամտություն կլիներ կարծել, որ միայն հոգևոր իշխանությամբ օժտված, թեկուզ և մեծ հեղինակություն վայելող մեկը, ինչպիսին Կաթողիկոսն էր, կկարողանար միավորել այդ ամենքին, գինել նրանց, ապահովել անհրաժեշտ ամեն բանով, ապստամբություն բարձրացնել և ազատագրել ստրակացված հայրենիքը: Նա հավատում էր ռուսներին, գիտեր, որ վաղ թե ուշ նրանք են ազատելու հայերին մահմեդական ծանր լծից, բայց նրանք դեռևս հեռու են, և չարժեր վաղաժամ ու չարդարացվող գործողություններով սրել թշնամու ուշադրությունը, կասկածների տակ գցել թե՛ մարդկանց և թե՛ նրանց հոգևոր օջախները: Մեզ հայտնի է, որ Ղուկասի

---

12 Ձեռ. N4501, էջ 1418:

13 Նույն տեղում:

14 Դիվան հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա (1780-1785), աշխատասիրությամբ՝ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 25-26):

այդօրինակ զգուշավորությունը դուր չէր գալիս հայ ազատագրական շարժման թե՛ ռուսահայ և թե՛ արևելահայ կենտրոնների անձնվեր գործիչներին:

Նամակի շարունակության մեջ Ղուկասը գրում է, որ «Խնդրեալ էիր ևս տպագրել զՊատմագիրքն Աղուանից, զոր Յովսէփ վարդապետն ևս էր յիշատակեալ ի թուղթ իւր: Հաճեցաք ընդ խնդիրդ և կամիմք առնել: Բայց յայն Պատմագրքէն մին միայն գոյ ի սուրբ Աթոռոջս և միովն ոչ լինի վստահաբար տպագրել: Իսկ զի յիշեալ էիր, թէ Յովհաննէս կաթուղիկոսն խոստացեալ էր շնորհել ինձ զայն Պատմագիրքն, և թէ Իսրայէլ կաթուղիկոսէն յառաջմէ գրեալ էի[ր] յղել յայդր և այլն: Վասն որոյ և մեք գրեցաք այժմ Իսրայէլ կաթուղիկոսին և Յովհաննէս կաթուղիկոսի եղբայր Սարգիս վարդապետին, զի առ ոնիցէ այն Պատմագիրքն յղեսցեն, որ զերկուսն համեմատեալ իրերաց զուղիղն տպագրեսցուք»[15]:

Հետաքրքիր է, որ մադրասցիները ցանկություն են ունեցել էջմիածնից մի ուսուցիչ հրավիրել Մադրաս, որ դպրոց բացի այնտեղ և տասը տարի երեխաներին սովորեցնի դպրություն և քերականություն: «Միւս ևս խնդրեալ էիք զգիտուն և զպարկեշտ և զկատարելահասակ տիրացու կամ աբեղայ մի առաքել յայդր, որ մինչև ի ժ (10) ամ կացցէ առ ձեզ և վարժեսցէ զմանկունս ձեր ի դպրութիւն ազգի մերոյ և յարուեստն քերականութեան»[16]:

Ղուկասը, փաստորեն, այդ գործը մադրասցիների վրա է դնում. «Հոգ տարցուք գտանել զայնպիսի ոք և հաճեցուցանել ի գալ»:

Այս ամենը գրված է եղել Շ. Շահամիրյանի առաջին նամակի մեջ, իսկ երկրորդ նամակում հիշատակվում է թիֆլիզեցի հարյուրապետ Հովսեփի վերադառնալու մասին, որի հետ նամակներ ու ընծաներ էր ուղարկել:

Շ. Շահամիրյանը խնդրել էր, որ Վրաստանից և Ղարաբաղից իրեն հասցեագրված նամակները անպայման ուղարկեն իրեն: Վերջում Ղուկասը մանրամասն տեղեկություններ է հաղորդում Անդրկովկասի քաղաքական կացության վերաբերյալ (Հերակլի և Ֆաթալի խանի դաշինքն ընդդեմ Իբրահիմ խանի, Գանձակի պաշարումը, Ֆաթալիի մահը, մելիքների հեռանալը Թիֆլիս, Ախալցխայի փաշայի հարձակումները Վրաստանի վրա, Հերակլի պատասխան միջոցառումները և այլն): Մի խոսքով, եզրակացնում է Ղուկասը. «Զի այս կողմունքն միանգամայն խառնակեալք կան, անդորրութիւնն պակասեալ է և տառապանքն ազգին մերոյ յաւելեալ յոյժ, որպէս ի Զուղայ. Աստուած բարձրեալն ողորմեսցի և խաղաղութիւն պարգևեսցէ, որում կարօտ եմք»[17]:

Ղուկաս Կարնեցու հաջորդ նամակը, հասցեագրված Շ. Շահամիրյանին, թվագրված է 1792 թ. օգոստոսի 16-ին (նախորդը՝ 1791 թ. մայիսի 13-ին) և ուղարկված Հնդկաստան՝ «ձեռամբ ի Հերակլ արքայէն յայդ կոյս առաքեցեալ պարոն Կարապետին»[18]: Իսկ մինչ այդ ինքը ստացել էր «սիրանշիշ ընծայքն քո ամբողջ ծրարաւ՝ ձեռամբ թիֆլիսեցի պարոն Յարութիւնի ուրումն, որք էին 4

---

15 Ձեռ. N4501, էջ 1418-1419:

16 Նույն տեղում, էջ 1419:

17 Նույն տեղում:

18 Ձեռ. N4501, էջ 1850-1852: Հրատարակությունը տե՛ս «Դիւան հայոց պատմութեան», գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 137-141: Նաև Ս. Տեր-Ավետիսյանի նշվ. աշխ., էջ 67-71: Համառոտագրությունը տե՛ս ձեռ. N4481, էջ 435:

թոփ ներկեալ կտաւ, 2 թոփ մատրփակ, 2 թոփ եզերքն ղալամքեար, 2 թոփ կապոյտ մահրամայք, 2 թոփ եաւշան ղալամքեար»[19]:

Պատասխանի ուշացումը կապ ունի երկրի խառնակ վիճակի և հնդկահայոց մոտ որպես նվիրակ ուղարկված եփրեմ վարդապետի անակնկալ գալստյան հետ, որն ասելիք ուներ Շ. Շահամիրյանից. «որ զասացեալով քո իմանայաք ի նմանէ և ըստ այնմ առնէաք զգրութիւն մեր առ սիրելիդ»:

Ղուկասը մեկ առ մեկ պատասխանում է Շ. Շահամիրյանի նամակներում առաջ քաշված հարցերին: Սկզբի կետը վերաբերում է այն բանին, որ Կաթողիկոսը կարողանա օրինավոր, օգտակար հետևանքներ ունեցող նոմոսներ (հրամանագրեր) ստանալ թե՛ ռուսաց կայսրուհուց և թե՛ ալամանաց (Ավստրիայի) կայսրից: Պատասխանի մեջ պատմվում է Ավստրիայի կայսր Հովսեփ Բ-ին ուղարկված գրության մասին, որով խնդրում էր հրովարտակ տալ Ավստրիայում ապրող հայերին. «Յորում էր խնդիր մեր, շնորհել զհրովարտակ համամիտ Ռուսաց կայսերուհւոյ շնորհեցելոյն»: Ավստրիայի դեսպանը և Հ. Արղությանը, որոնց միջոցով ուղարկվել է նամակը, հավաստել են նրա ստացումը և կայսեր դրական վերաբերմունքը. «Նա խոստացեալ է կատարել զխնդիր մեր զկնի թեթևանալոյ ի խուժանաց պատերազմին, բայց վախճանեցաւ և բան մնաց անկատար»: Բայց ինքը շարունակելու է գործը և դիմելու է նրա եղբայր Լեոպոլդին:

Երկրորդ առաջարկությունը Շ. Շահամիրյանի այն է եղել, որ «զամենայն զթուղթս ժառանգութեանց սրբոյ Աթոռոյս վերանորոգել տալ ձեռնագրութեամբ իշխողին երկրիս և այլն»: Սա ևս ընդունելի առաջարկ է, որը նա կանի, երբ դրա համար երկրում բավարար քաղաքական հարմար վիճակ ստեղծվի:

Շ. Շահամիրյանին լուր էր հասել, որ վախճանվել են Կիլիկիայի Թեոդորոս և Աղվանքի Հովհաննես Կաթողիկոսները: Պատասխանի մեջ հերքվում է առաջին լուրը, իսկ երկրորդի մասին ասվում է, որ նրա հետ աթոռակից էր Իսրայելը և Հովհաննեսի մահից անմիջապես հետո «ամենայն երկրացիքն բազմակնքովքն աղերսեցին բուռն և իշխողն և խնդրեաց շնորհել նմա վարել զկաթողիկոսութիւն տանն Աղուանից, վասն որոյ և մեք ետուք»: Միաժամանակ նշում է, որ ինքը ի զորու չէ ազդել Կիլիկիայի կաթողիկոսության ընտրության վրա. «Զի ոչ ինչ փոյթ է նոցա ընտրել զօգտաւորն, այլ զհետ սովորութեան ընթանան»[20]:

Չորրորդ կետը վերաբերում է Սուլխան Դիվանի նամակն ըստ պատկանելույն հասցնելուն, որը և կատարում է Վեհափառը:

Վերջում, ըստ սովորության, Ղուկասը անցնում է քաղաքական դեպքերի նկարագրությանը. «Պատմեմ ապա զանցից և զորպիսութեանց երկրիս և կողմանցս»: Այստեղ արդեն խիստ համառոտ գծերով ներկայացվում են Անդրկովկասի դեպքերը և շարունակ հոլովվում է Աղա Մուհամմեդ խանի անունը, որը դարձել էր զորեղ ուժ և ակտիվորեն խառնվում էր կովկասյան գործերին:

Հետգրության (փուսուլայի) մեջ Ղուկասը գրում է, թե նամակներիցդ իմացա, որ «թէ զմի նորատիպ գիրք իցես յղեալ առ մեզ՝ անուանեալ Որոգայթ փառաց, թուեցաւ մեզ, թէ նշաւակ կոչեցեալ գրքուկն իցէ, զոր քանի ամօք

---

19 Ձեռ. 4501, էջ 1850:

20 Ձեռ. 4501, էջ 1851:

յառաջ ընկալեալ եմք և ազնուոյդ ևս միամտութիւն գրեալ, բայց թէ այլ որիշ գիրք իցէ Որոգայթ փառացն տակաւին առ մեզ չէ հասեալ»[21]:

«Որոգայթ փառացը» հայ իրականության մեջ «Նոր տետրակ որ կոչի հորդորակ» գրքից հետո երկրորդ քաղաքական-հրապարակախոսական գիրքն էր: Այն տպագրվել էր 1788-89 թթ. (չնայած վրան գրված է 1782 թ.) Մադրասում, և նրա մեջ հիմնավորված էին մադրասցիների ազատագրական գաղափարները և շարադրված էին այն օրենքները, որոնցով ղեկավարվելու էին ապագա հայկական պետության քաղաքացիները:

Հետագայում էջմիածնում ստանում են ոչ միայն «Որոգայթ փառացի» օրինակները, այլև ձեռագիր տարբերակները, որոնք մինչև հիմա պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում:

Մենք չենք կարծում, որ Ղուկաս Կարնեցին ինչ-որ ազդեցություն էր ունեցել Շ. Շահամիրյանի և Մադրասի խմբակի մյուս անդամների ազատագրական գաղափարների վրա, բայց նրա պարբերաբար հաղորդած տեղեկությունները, ընդհանուր վիճակի իրական պատկերը գծելու և ներկայացնելու նրա մշտական ձգտումը հնարավոր է, որ ստիպել են հայրենիքից շատ հեռու ապրող և հայրենի իրականությունից կտրված մադրասցիներին ինչ-որ ոչ էական ուղղումներ ու ճշգրտումներ մտցնելու իրենց ծրագրերի մեջ:



[21] Նույն տեղում, էջ 1852:

ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԲԱԲԿԷՆ ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԻՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻՆ

(ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Ս. ԱԹՈՌԻ ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԲԱԲԳԷՆ ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒԼԷՍԷՐԵԱՆԻՆ (1868-1936) ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ, ՈՒՂՂՈՒԱԾ ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՅՐԵՐՈՒՆ (1895-1936), խմբագրեց ՎԱՐԴԱՆ ՍՐՔԵՊԻՍԿ. ՏԵՄԻՐՃԵԱՆ
Միաբան Կիլիկեան Ս. Աթոռի ուխտին, ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ, 1996. 304 էջ)

Գործ ունենք լրջմիտ մի հեղինակի նոյնպիսի աշխատութեան հետ. ամէն անգամ գիտական այսպիսի աշխատանք տեսնելիս նախ քաղում ենք մեզ հետաքրքրող նրա ունեցած նորոյթը, ապա՝ այն քննելու, գնահատելու, գրախօսելու, մտորումներս հեղինակին եւ ընթերցողին հաղորդելու եւ շահեկան գործն աւելի շահեցնելու ցանկութիւն ենք ունենում, սակայն առօրեայ՝ որպէս կանոն տաղտկալի պարտականութիւններն այս մղումների գործադրման հնար գրեթէ չեն տալիս: Այս դէպքում նոյնպէս գրախօսականիս ուշացման միակ պատճառն այս է, որի համար եւ խնդրում ենք ընթերցողի մեծահոգի ներողամտութիւնը:

Մերձաւոր անցեալի գիտնականի գիտական նամակագրութեան տպագրումն ունի մի քանի կարեւորութիւն ու նշանակութիւն: Առաջին հերթին սա հրապարակումն է գիտնականի վաստակի այն մասի, որ ինքն այլեւայլ պատճառներով չի հասցրել տպագրել: Ապա սրանք գիտութեան պատմութեան թանկ վաւերագրեր են, որովհետեւ պարզում են որեւէ խնդրի տրուած որեւէ լուծման ընթացքն ու պայմանները. նաեւ իմացական արժէք ունեն, որովհետեւ պարզում են իրենց հեղինակ գիտնականի մտքի աշխատանոցն ու այնտեղ եղած գործիքները: Վերջապէս գիտութիւն մտնող նոր սերնդի համար նաեւ ուսուցողական արժէք ունեն, որովհետեւ պարզ ու մէկէն ցուցադրում են հեղինակի հետազօտութիւնների ստեղծման ամբողջ ընթացքը, այլ խօսքով՝ խոհանոցը: Այսպիսի հրատարակութիւններն առաւել շահեկան են լինում, երբ տպագրւում են նամակ-պատասխան հերթագայութեամբ, սակայն, ցաւօք, միշտ չէ, որ երկուսն էլ հասու են լինում հրատարակողին:

Սկզբից ելեթ ասենք, որ արուած է անուրանալի արժէքի եւ միմիայն շնորհակալիքի արժանի մի աշխատանք, որ հայագիտութեան պատմութեան

եւ նրա գիտական ժառանգութիւնը մեկանաբանելու լաւագոյն սկզբնաղբիւրներից մէկն է եւ որի ներկայ քննութիւնը կառուցում ենք ներկայացնելու, արժեւորելու, քննելու, քննադատելու եւ առաջարկելու իրերայաջորդ քայլերով: Կարծում ենք, որ շարադրանքի այս եղանակը խօսքի համառօտութեան լաւագոյն ուղին է, որի հիմնական նպատակն էլ գործին ու նրա շարունակութեանը հնարաւոր չափով օգտակար լինելն է[1]:

Ակամայ եւ հաճոյքով (այսպէս սակաւադէպ է լինում) պէտք է վերապատմենք գործիս նախապատմութիւնը. իր ազգականներին այցելելու առիթն օգտագործելով եւ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան հանգուցեալ նախկին աբբահայր Հ. Գրիգորիս վ. Մանեանի ու վաստակաշատ եւ անուանի բանասէր Հ. Օգոստինոս վ. Սեքուլեանի բնական բարեհաճութիւնից օգտուելով, Վարդան Արքեպիսկոպոս Տէմիրճեանը դեռեւս 1981 թ., հրապարակելու նպատակով, Վիեննայում պատճէնել է Մխիթարեան միաբանութեան անդամներին ուղղուած՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռի միաբանների հեղինակած 500-ից աւելի նամակ: Ապա այս փաստաթղթերի մշակումն սկսել է մեծն Օրմանեան Պատրիարքի արմաշական ձեռնասուն աշակերտ Բաբկէն Ա. Աթոռակից Կաթողիկոսի՝ 1895-1936 թթ. գրած 124 նամակով, որ նախապէս հրատարակել է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Հասկ» պաշտօնաթերթում (Ապրիլ 1984 թ. - Մայիս 1988 թ.) եւ որին ներկայ հատորեակում աւելացրել է եւս 20 անտիպ նամակ. ի վերջոյ՝ ամբողջն օժտել է «Յառաջաբան»-ով (էջ 9-35): Վերջինովս հեղինակը հմտօրէն պատկերել է Բաբկէն Կաթողիկոսի կենսագործունէութեան ամբողջ ընթացքը, ներկայացրել մեր եկեղեցու պատմութեան մէջ այս նշանաւոր բանասէր հոգեւորական-մտաւորականի ունեցած վաստակի պատկերը, որով ներկայ հրատարակութիւնն այժմ Բաբկէն կաթողիկոս Կիւլէսէրեանի կենսագործունէութեանը վերաբերող առաջին եւ ելակէտային տեղեկատուն է:

Այսուհանդերձ, գործիս հիմնական արժէքը հէնց նրա բուն մասն է՝ հրապարակումը 144 (+ 2) վաւերագիր-նամակի (էջ 37-287), որոնք ուղղուած են ժամանակի վիեննական թուով տպսներկու, գրեթէ բոլոր գիտնական միաբաներին՝ Հ. Յակոբոս վ. Տաշեանին (8 նամակ), Հ. Թովմաս վ. Կէտիկեանին (33), Հ. Ներսէս վ. Ակինեանին (50), Հ. Հմայեակ ծ. վ. Համբարեանին (13), Հ. Համազասպ վ. Ոսկեանին (30), Հ. Մեսրոպ վ. Հապոզեանին (4), Հ. Գաբրիէլ ծ. վ. Սենէվիշեանին (2), Հ. Գրիգորիս ծ. վ. Գալէմքեարեանին (1), Հ. Արիստակէս վ. Վարդանեանին (1), Հ. Քերովբէ վ. Յովնանեանին (1), Հ. Իգնատիոս վ. Աքեանին (2), Հ. Վարդան վ. Մելքիսեդեկեանին (1):

Ընդհանրապէս նամակագրութիւնը համարւում է անկեղծագոյն գրատեսակը, սակայն սա էլ յարաբերական է, այսինքն՝ կախում ունի հեղինակի բնաւորութիւնից. հատորեակս անթաքոյց բացայայտում է Բաբկէն Կաթողիկոսի բնաւորութեան մարդկային եւ գիտական շիտակութիւնն ու մաքրութիւնը, նաեւ՝ այսօր եւս անհրաժեշտ մի բան, որ է՝ գիտական եւ ազգային խնդիրների համար դաւանական տարբերութեան մոռացումը, որի կարողութիւնն ունէին

---

[1] Ջուտ գովաբանական ոճի գրախօսութիւնները գիտութեանը որեւէ շահ չեն բերում. քանի որ նրանց տալիք օգուտը իր վաստակը գնահատուած տեսնող հեղինակին անհրաժեշտ ուրախութիւն պատճառելն է, ուստի եւ, մեր համոզմամբ, կարող են տպագրուելու փոխարէն ամփոփուել հեղինակին ուղղուելիք անկեղծ նամակի մէջ:

թէ՛ Բաբկէն Կաթողիկոսը եւ թէ՛ իր թղթակից Վիեննական Մխիթարեան միաբանները:

Ամէն առանձին անհատի ուղղուած նամակաշարից առաջ կարճ առաջաբանով անհրաժեշտաբար ներկայացրել է տուեալ նամակագրութեան ժամանակագրական սահմանները եւ բնոյթը. մի օրինակ. Յակովբոս վ. Տաշեանի հետ նամակագրութիւնը վերաբերում է 1 (13) Յունուար1895 թ. - 6 (19) Մարտ 1913 թ. ընթացքին, այլեւ՝ «շատ ջերմ ու անկեղծ եղած են երկու բանասէրներու սրտաբաց կարծիքներն ու նկատողութիւնները, հոր եւ որդւոյ միջեւ եղած յարաբերութեան նման» (էջ 37): Հրատարակութեանս մի կարեւոր արժանիքն է նաեւ այն, որ օժտուած է Բաբկէն Կաթողիկոսի ու նրա թղթակիցների զանազան լուսանկարներով, վերջիններիս անհրաժեշտ համառօտ կենսագրականներով եւ լուսաբանումներով:

Փաստաթղթերի բնագրերին նախորդում են նրանց նկարագրութիւնները, որոնք արուած են միջնադարեան ձեռագիր մատեանների ներկայացման եղանակով, մինչդեռ սրանք արժէր անել նոր ժամանակների փաստաթղթերի համար սահմանուած ձեւով, որը ցուցադրելու համար բերենք Յ. վ. Տաշեանին ուղղուած 3-րդ նամակի առկայ նկարագրութիւնը եւ ցանկալի համարածը.

«ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ. - Գրիչ. - Յարութիւն Սրկ. Կիւլէսէրեան Դպրեվանուց: Ստացող.- Հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա: Թուական. - 15/27 Փետրուար 1895: Վայր. - Դպրեվանք (Սրմաշ): Նիւթ եւ չափ. - թուղթ գծաւոր, 26,3x21 սմ.: Թերթք. - վեց. օգտագործուած են առաջին երեսները: Տողք. - 25+23+26+26+26+11= 137: Օնթ. Նամակի Ա. երեսի ձախ վերի ծայրը արխիւի պատասխանատուն արձանագրած է «Կիւլեսերեան Բաբգէն»:

Այժմ՝ մեր տարբերակը. «Գծաւորուած թղթի 6 թերթ (գրուած միայն Ա. երեսները), 26,3x21 սմ., 25+23+26+26+26+11= 137 տող, ինքնագիր ձեռագիր հեղինակի: 1ա՝ ձախ վերի ծայրը արձանագրուած՝ «Կիւլեսերեան Բաբգէն»: Վերը եղածի՝ այստեղ բացակայող ամբողջը կայ բնագրի հրատարակութեան մէջ՝ սկզբում կամ վերջում, ուստի եւ մեր տարբերակի համառօտութիւնը տեղեկոյթի կորուստ չի նշանակում: Աւելացնենք, որ այսպիսի համառօտ նկարագրականներն արժէ դնել բնագրերի հրատարակութիւնից յետոյ, քանզի վերջիններիս համեմատ նախորդներն ածանցեալ են: Պակասող բնագրում գոյութիւն չունեցող տեղեկութիւններն էլ բանասիրօրէն կամ ենթադրման եղանակով նշանակւում են ուղղանկիւն փակագծերի մէջ, ասենք, նամակի գրութեան՝ մոռացմամբ չնշանակուած թուականը գրւում է այսպէս՝ [Յուլիս 1899 թ.], որի վրայ դրուած ծանօթութեան նշանի ներքոյ էլ պարզաբանւում է ենթադրական թուագրումը:

Ամէն անհատի ուղղուած նամակաշարն աւարտուած է «Կարծիքներ եւ վկայութիւններ» բաժնով, որի մէջ համառօտ գծերով բնորոշուած է Կիւլէսէրեան Կաթողիկոսի թղթակցի անհատական ու գիտական նկարագիրը: Առանց այս մասի, հրատարակութիւնը կարող էր կիսակատար թուալ:

Նամականիի հատորիս կարեւորագոյն արժանիքն այն է, որ առաւել կամ պակաս չափով նրա մէջ միշտ արծարծուած են Կիւլէսէրեան Կաթողիկոսի եւ իր թղթակիցների գիտական հետաքրքրութիւններին վերաբերող բոլոր մատենագիրներին ու նրանց երկերին վերաբերող բանասիրական խնդիրները: Սրանով այս հատորը մօտաւորապէս արտացոլում է մեր դարի առաջին

քառասնամեակի (1895-1936 թթ.) հայագիտութեան պատկերը կամ համարեա նրա հայելին է:

Նամակների մեկնաբանելի եւ լուսաբանելի տեղիները միշտ ունեն կատարեալ ու անհրաժեշտ չափով մանրամասն ծանօթագրութիւններ, նամակագրի թղթակիցների եւ յիշատակուած նշանաւոր անձանց՝ վանական կամ աշխարհական մտաւորականների համառօտ կենսագրականներ, տուեալ խնդրին կամ անհատին վերաբերող ելակէտային տեղեկատու գրականութեան մատնանշումներ: Այս յատկանիշի շնորհիւ Վարդան Արքեպիսկոպոսի ներկայ աշխատութիւնն ունի խնդրոյ նիւթ ժամանակաշրջանի հայագիտութեան եւ մեր գրական մշակոյթի կարեւոր ու անհրաժեշտ տեղեկատուի արժէք եւ պիտանի ու գործածելի է միջնադարեան ու ժամանակակից հայ բանասիրութեան տարաբնոյթ խնդիրներով զբաղուող բոլոր մասնագէտների համար:

Այս նոյն հենքի վրայ էլ կարծում ենք, որ հրատարակութիւնս մեծապէս շահած՝ իր ընթերցող-գործածողների համար առաւելագոյնս շահեկան էր լինելու, եթէ օժտուած լիներ անձնանունների ու տեղանունների անուանացանկերով: Պարզաբանենք՝ մեզ հետաքրքրում է Փաւստոս Բուզանդ հեղինակն ու իր յայտնի Պատմութիւն Հայոց անզուգական երկասիրութիւնը. Անձնանունների ցանկում Փաւստոս Բուզանդ անուան դիմաց նշանակուած էջահամարների ներքոյ գտնելու էինք Կիւլէսէրեան կաթողիկոսի եւ իր թղթակիցների կարծիքներն այս հեղինակի, նրա երկի այս կամ այն խնդրի վերաբերեալ. սակայն անուանացանկերի չգոյութիւնը մեզ ստիպելու է ամէն անգամ հատորս կարդալու, երբ մեզ կհետաքրքրի նախորդից տարբեր նոր խնդիր: Աւելի մանրամասնենք՝ եթէ Բուզանդին վերաբերող մեր խնդրի թելադրանքով մի անգամ ծայրէծայր կարդացել ենք այս գիրքը, ապա եզնիկի երկի եւ անձի համար հարկադրուած ենք կրկին կարդալու Բուզանդի առիթով կարդացածը: Հասկանալի է, որ այսպիսի նիւթերի ամսագրային հատուածական հրատարակութիւններն այդպիսի ցանկերով օժտելն անհնար եւ անիմաստ է, սակայն նկատի ունենալով նաեւ այն հանգամանքը, որ գրքային հրատարակութեան լոյս տեսնելուց յետոյ նախորդն արդէն պակաս գործածական է դառնում, գրքում անուանացանկերի կազմումն առաւել քան անհրաժեշտ անելիք է: Ըստ այսմ յոյս ունենք, որ գործիս շարունակութիւն հատորներն արդէն այս ցանկերն ունենալու են: Մի՝ առաջին հայեացքից երկրորդական թուացող խնդիր եւս. հին ու նոր անունների մէջընդմէջ յիշատակութիւններ ունեցող այսպիսի գործերի մէջ անձնանունների ցանկն անպայման միասնական պէտք է լինի, միայն թէ հին անունները պէտք է նշանակուեն սովորական՝ անուն-մականունի կարգով, ասենք՝ «Կիրակոս Գանձակեցի», իսկ նոր անունները, կրկին սովորական՝ մականուն-անունի կարգով, ասենք՝ «Կիւլէսէրեան Բաբկէն վ. (ապա՝ Աթոռակից Կաթողիկոս)». այսինքն՝ վերջին անունը «Բ» գրի ներքոյ դնելը շփոթ կառաջացնէր: Այսպիսի մէջընդմիջումը նախընտրելի է, որովհետեւ մէկ կամ միւս դէպքում հին անունները անուան, նորերը՝ մականուան կարգով փնտրելն արդէն սովորոյթ է դարձել:

Մեր ձեռագրական ժառանգութեան հաշուառման, արժէւորման եւ հետագայ ընդհանուր համակարգչային-մատենագիտական մշակման առումով առանձնապէս կարեւոր է «Բաբգէն Աթոռակից Կաթողիկոսին նպաստը ձեռագրագիտական աշխատութիւններուն» (էջ 288-91) հատուածը, ուր ամենայն մանրամասնութեամբ ամփոփուած են երջանկայիշատակ Կաթողիկոսի վաս-

տակները եւ նամակների սոյն հատորեակի մէջ եղած անդրադարձները: Նամակների մէջ առկայ՝ ընդհանրապէս ձեռագրերին վերաբերող բոլոր յիշատակութիւնները նոյնպէս օրինակելի հետեւողականութեամբ մանրամասնօրէն ծանօթագրուած են: Այս ամէնը կարեւոր ենք համարում այն պարզ պատճառով, որ հայերէն ձեռագիր մատեանների գիտական նկարագրման աշխատանքները Յ. վ. Տաշեանի նշանաւոր ցուցակի եղանակով արդէն բաւական առաջ են ընթացել[2], խոշոր հաւաքածուներից մնացել է երեւի թէ միայն Երեւանի Մատենադարանինը, որի մանրամասն նկարագրութիւնը նոյնպէս ընթացքի մէջ է, ուստի եւ հասունացել է կուտակուած նիւթը նորագոյն եղանակներով ու հնարաւորութիւններով ամփոփելն ու նրա հիման վրայ նոր արդիւնքների բերող հետազօտութիւններ անելը:

Արժէքաւոր է նաեւ յառաջաբանի «Հրատարակուած գործեր» հատուածը (էջ 30-5), որ Բաբկէն Կաթողիկոսի տպագիր երկերի մատենագիտութիւնն է: Վերջինիս համարժէք ենք համարում Սեպուհ սրկ. Յ. Պաղտոյեանի կազմած եւ գիրքը եզրափակող (էջ 292-300)՝ «Գերաշ. Տ. Վարդան Ս. Արքեպիսկ. Տէմիրճեանին գրական վաստակը. 1956-1996» ծանօթագրուած ցանկը: Այս ցանկերն առանձին արժէք ունեն այն պատճառով, որ Հայաստանի Ազգային գրադարանն ընդարձակ ծրագրով սկսել է ստեղծումը «Հայագէտների կենսամատենագիտական բառարան»-ի, որն այս գրքից ստանում է երկու պատրաստի մատենագիտութիւն[3]: Միայն թէ՝ ունենք վերջին ցանկին վերաբերող մէկ-երկու դիտողութիւն. այն խմբաւորուած է եւ ունի ընդամենը 46 միաւոր: Մեր համոզմամբ այսպիսի ցանկերը պէտք է կազմել ժամանակագրական կարգով, գուցէ՝ ամէն տարուայ մէջ առանձնացնելով գիրք, յօդուած, գրախօսութիւն, խմբագրում, սրբագրում եւ այլ կարգով, հարկ եղած դէպքերում նկարագրութիւններն սկսելով «(Գրախօս.)», «(Խմբագր.)» եւ այսպիսի այլ զատիչ նշումներով: Մատենագիտութիւնը կազմուած է պատմողական եղանակով, մինչդեռ ընդունուած եւ հիմնականում կիրառուողը մի այլ եղանակ է՝ մատենագրուող միաւորների՝ յատուկ կանոններով նկարագրութիւն եւ ծանօթագրութեան տեսքով յաւելում այլ տեղեկութիւնների. այսպէս՝ 43-րդ միաւորը Վարդան Արքեպս.-ի պատրաստած՝ «Օրագիր Անդրէաս եւ Թադէոս արքեպիսկոպոսաց եւ պատմութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանուց. Պէյրութ, 1960» գրքի (Թիւ 2)՝ Մեսրոպ Արքեպս. Աշճեանի գրած գրախօսութիւնն է, որը որպէս ծանօթութիւն արժէր

---

[2] Գրախօսուող գրքի հեղինակը նոյնպէս զգալի վաստակ ունի այս ասպարէզում. որպէս վարդապետական աւարտաճառ պատրաստել է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան մատենադարանի ձեռագրացուցակը. կազմել է Բաբկէն Կաթողիկոսի Դալաթիոյ ազգային մատենադարանի ձեռագրացուցակի. ցանկերը, հրատարակել՝ «Ցուցակ ձեռագրաց Թաւրիզի Մելիք-Թանգեան ազգային-եկեղեցական բանգարանի. Անթիլիաս. 1977» (նկարագրել է 16 ձեռագիր) եւ այլն: Կարծում ենք, սխալ չէ համարելը, թէ հայերէն ձեռագրերի փոքրիկ մի ցուցակ կազմած բանասէրը նման է հայ գրական մշակոյթի դաշտում կամ լեռան լանջին խաչքար կանգնեցրած մարդուն:

[3] Այս առիթով անտեղի չենք համարում գրախօսութեանս ընթերցողներին յորդորելու եւ խնդրելու, որ իրենք իսկ կազմեն եւ Հայաստանի Ազգային գրադարան (Երեւան, Տերեան փողոց. 72) ուղարկեն իրենց 10-15 տողանոց համառօտ կենսագրականներն ու տպագրուած գործերի լիակատար մատենագիտութիւնները: Ընթացքի մէջ է նաեւ Հայ նոր գրականութեան ու գրականագիտութեան կենսամատենագիտական բառարանի կազմումը, որով կոչս վերաբերում է նաեւ ընդհանրապէս բոլոր հայ բանասէրներին ու գրագէտներին: Այս գործերի նպատակը՝ արուած հսկայ աշխատանքն ամփոփելը եւ նրա հիման վրայ նոր անելիքները պարզելը. աւելի վստահ քայլերով առաջ ընթանալն է:

զետեղել գրքի նկարագրութեան ներքոյ: 18-րդ միաւորը՝ «Դիմաստուերներ, ազգային եկեղեցական տիպարներ, Պէյրութ, 1983» գրքն է, որ կազմուած է մամուլում նախապէս տպուած 8 եւ աւելի («Այլ յօդուածներ եւս կան սոյն հատորին մէջ») յօդուածից: Կարծում ենք՝ թուարկուած ութ յօդուածն իրենց հրատարակուելու ժամանակագրական կարգի համամատ պէտք է նկարագրուած լինէին որպէս առանձին միաւորներ եւ ամէն անգամ վերջում ունենային ծանօթութիւններ՝ «Նոյնը տես թիւ 18, էջ...», այստեղ նշելով 18-րդ միաւոր գրքի համապատասխան էջահամարները: Այսպէս 1957 թ. գրուած գործերի շարքում առանձին համարով պէտք է լիներ հետեւեալը. «Իգնատիոս Աստուածազգեաց Յայրապետ.- ԳԼԱՁՈՐ պարբերաթերթ, 1957, Ա տարի, թիւ Գ, էջ 51-59», իսկ ծանօթութեան մէջ՝ գրուէր. «Նոյնը տես թիւ 18, էջ ...»: Ապա՝ 37-րդ միաւորը թուարկումն է Վարդան Արքեպս.-ի աշխատակցած պարբերականների տպագիր երկերի ցանկի մէջ առանձին համարով այսպիսի նիւթի նշանակումն անիմաստ էր. կարելի էր մատենագիտութեան վերջում դնել նոյն պարբերականների այբբենական անուանացանկ: Ամփոփելով ասենք, որ այս մատենագիտութիւնը վերակազմելու կարիք ունի: Նիւթիս արծարծման վերջում էլ մի ցանկութիւն. տարբեր պարբերականներում կան Վարդան Արբազանի արժէքաւոր հրապարակումներ, որոնք երբեմն կիսատ են մնացել (տես, օրինակ, թիւ 36 Կորսուած յիշատակարաններ. Կիլիկիոյ հայկական վանքերն ու եկեղեցիները). այսպիսի նիւթերը, մամուլի էջերում ցրուած մնալով, միշտ պակաս յայտնի ու մատչելի են լինում ընթերցողին, ուստի եւ նրանց ժողովումը, մէկտեղումն ու, կիսատ մնացածը լրացնելով, առանձին գրքով տպագրելն անհրաժեշտ անելիք է:

Աւարտենք. այս գրքով Վարդան Արքեպիսկոպոս Տէմիրճեանը կատարել է միմիայն շնորհակալիքի արժանի խնամքոտ մի աշխատանք, որ ներկայ հայագիտութեան համար կայուն, տեւական եւ մնայուն արժէք է, իր թուարկուած արժանիքների շնորհիւ երկար ժամանակ ծառայելու է ընթերցողի տարաբնոյթ պահանջմունքների բաւարարմանը: Յուսանք, որ, հիմնականում գրքի ձեւաւորմանը վերաբերող մեր ցանկութիւնների հաշուառումով, հեղինակն իրար ետեւից հնարաւոր արագութեամբ մշակելու եւ տպագրելու է իր ունեցած մնացած նիւթը: Աւելացնելով, որ ասածս շնորհակալիքից կարեւոր մասն ունեն գրախօսուած գրքի «հրատարակման ծախսերուն աջակցող նուիրատուներ»-ը (ցանկը տես էջ 5), վստահ լինենք, որ յաջորդ հատորներն էլ մեկենասների պակաս չեն ունենայ:

*****

ԱՐՔԵՆԻԿ ՂԱՋԱՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾՈՓԱՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի տպարանում 1997 թ. լույս տեսավ Արտաշես Մաթեւոսյանի «Մեծոփավանքի գրչության կենտրոնը ԺԲ-ԺԵ դարերում» աշխատությունը: Այն նվիրվում է Հայաստանում քրիստոնեության պետական կրոն ընդունման 1700 եւ Մեսրոպագիր Հայաստանի 1600-ամյակներին: Գերաշնորհ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հովանավորությամբ, տեր եւ տիկին Քառլ եւ Էմմա Սողոյանների մեկենասությամբ հրապարակված սույն գործը հայագիտական մի նոր բնագավառի՝ գրչության կենտրոնների ուսումնասիրության առաջնեկն է:

Շուրջ 30 տարի առաջ գրված այս աշխատանքը ձեռագրագետ Արտաշես Մաթեւոսյանի թեկնածուական թեզն է, որը ներկայացվել է հեղինակի կողմից հրատարակության, առանց որեւէ փոփոխության: Ուստի եւ գրքում Առաջաբանի փոխարեն դրվել է ժամանակին թեզին տրված Մատենադարանի ձեռագրագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, անվանի հայագետ Ասատուր Մնացականյանի եւ Պետերբուրգի Հանրային գրադարանի ձեռագրերի բաժնի գլխավոր գրադարանավար, բանասիրական գիտությունների դոկտոր Եվգենիա Գրանստրեմի կարծիքները:

Հայոց գրերի արարմանը հաջորդած 1500 տարիների ընթացքում Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս հսկայական ձեռագրական ժառանգություն է ստեղծվել, որի մի չնչին մասն է մեզ հասել: Հայ ձեռագրական մշակույթը իր մեջ ամբարում է հայ, մասամբ արեւելյան եւ անտիկ աշխարհի ժողովուրդների պատմությունն ու մտածողությունը: Որպես այդպիսին, հայերեն ձեռագիրն արժանացել է ուսումնասիրողներից շատերի ուշադրությանը: Հնագրության եւ մանրանկարչության տեսանկյունից եւս քննվել են ձեռագրերի ստեղծման հանգամանքները, սակայն ձեռագրի ստեղծման վայրերը որպես հատուկ ուսումնասիրության նյութ չեն դարձել: Գրչության կետրոնները դիտվել են մեր ժողովրդի պատմության, մշակույթի ընդհանուր հոլովույթում, որպես մշակույթի կենտրոններ:

Սկսելով՝ մեկ առանձին կենտրոնի ուսումնասիրության գործը, հեղինակը, ինչպես՝ հետագայում ցանկացած ուսումնասիրող, կանգնում է երեք մեծ դժվարության առաջ. ա) ձեռագրական հսկայական կորուստներ, բ) մեզ հասած ձեռագրերի աշխարհասփյուռ լինելը, գ) ձեռագրերից մեծ մասի գրչության հանգամանքների վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը: Քանի որ կորուստները եւ գրչության հանգամանքների բացակայությունը լրացնել անհնարին է, ուստի տեւական երկար աշխատանք է անհրաժեշտ մեզ հասած ձեռագրերի մասին տեղեկություններն ամբողջացնելու համար: Դրա համար հեղինակը ստեղծել է հայերեն ձեռագրերի համահավաք քարտարան (մոտ 35 հազար քարտ) եւ դասավորել ըստ գրչության վայրերի, ժամանակագրական կարգով:

Աշխատանքը բաժանվում է՝ Ներածություն, Առաջին, Երկրորդ, Երրորդ դրվագներ, Ցանկեր մասերի: Ներածության մեջ հեղինակը հիմնավորում է գրչության կենտրոնների սկզբնավորման եւ Միջնադարյան Հայաստանում գրչության մասնագիտական դպրոցների բացման հարցը եւ, վերջապես, Մեծոփավանքի գրչության կենտրոնի կապը Հայաստանի մշակութային մյուս կենտրոնների հետ պատմական ժամանակաշրջանի խորը վերլուծական հենքի վրա:

Առաջին դրվագը վերնագրված է «Մեծոփավանքի գրչության կենտրոնը ԺԲ-ԺԳ դարերում»: Եթե 12-րդ դարի վերաբերյալ տեղեկությունները միայն Աստվածատուր Մեծոփեցու գործունեությանն են վերաբերում, որից շատ քիչ բան է մեզ հայտնի, ապա 13-րդ դարի երկրորդ կեսը շատ ավելի հարուստ նյութ է պարունակում:

Հայաստանի քաղաքական կյանքի փոփոխությունը, ինչպես նաեւ տարանցիկ ճանապարհներից մեկի Քաջբերունիքով անցնելը նպաստում է նրան, որ Արճեշը դառնում է առեւտրի եւ արհեստների խոշոր քաղաք: Այս քաղաքի Ասպիսնակ եւ Հարություն գյուղերի եկեղեցիներում եւ մյուս անապատներում ու վանքերում զարգանում է գրչության արվեստը: Նշանավոր էին Մխիթար Սասնեցի, Հովհաննես, Ստեփաննոս եւ Սիմոն Արճիշեցիները:

Սովորաբար միջնադարյան դպրոցների կյանքը հազվադեպ էր տեւական լինում, այն երբեմն դադարում էր բաբունապետի մահվան հետ (Ցիպնա, Խառաբաստա դպրոցներ եւ այլն): Սակայն Մեծոփավանքի դպրատան, դպրոցի գործունեությունը շարունակվում է Մխիթարից հետո նրա աշակերտների ջանքերով: Մեծոփավանքի վերստին ծաղկումը կապվում է Որոտնեցու աշակերտ Հովհաննես Մեծոփեցու կողմից վանքը վերակառուցելու հետ:

Լենկ Թեմուրի արշավանքներից հետո Հայաստանում շատացել էր մահմեդական տարրը, եղել էին ձեռագրական հսկայական կորուստներ, աշխուժացել էր միարարական շարժումը: Ազգի պահպանությունը, ուծացումից փրկելը, հավատի ամրապնդումը հրամայականորեն պահանջում էր Հայ Առաքելական եկեղեցու դավանաբանական ինքնության պահպանում: Միարարների դեմ գրվել էին Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթեւացու եւ նրանց աշակերտների ջանքերով ստեղծված դավանաբանական. աստվածաբանական նոր գործեր, որոնք պետք է ընդօրինակվեին եւ տարածվեին: Նախորդ դարերի ընթացքում գրչության արվեստի զարգացմանը զուգընթաց, այս բնագավառ էին թափանցել նաեւ թերուս գրիչներ, որոնց ընդօրինակությունները սխալաշատ էին: Եվ ահա ձեռագրական այս հարուստ ժառանգությունը ժողովրդին եւ եկեղեցուն ծառայեցնելու եւ Սուրբ Գրքի խոսքը ժողովրդին հասցնելու համար անհրաժեշտ էին հմուտ գրիչներ:

Սարգիս բաբունապետի մահից հետո Քաջբերունիքում դադարել էր վարդապետարանի գործունեությունը, պակասել էին քարոզիչները, ավերվել էին եկեղեցիները, գերվել ու այրվել էին ձեռագրերը: Այս պակասը լրացնելու համար Գրիգոր Տաթեւացին համալսարանը Տաթեւից տեղափոխեց Մեծոփավանք եւ նրան տվեց գրչության թեքում, որի նպատակը առաջնակարգ գրիչներ պատրաստելն ու ձեռագրեր ընդօրինակելն էր: Գրիգոր Տաթեւացու հետ վերադառնալուց հետո էլ Մեծոփավանքի վարդապետարանը պահպանեց իր ծրագրային ուղղությունը:

Ձեռագրական նոր նյութի հիման վրա հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Տաթեւացին Մեծոփավանքում իրեն փոխարինող է նշանակում Գրիգոր Խլաթեցուն, ճշտում է նաեւ նրա ռաբունապետության թվականը, երգնկայի դպրոցի վարդապետի Հակոբ Դրիմեցու այստեղ հրավիրվելու ժամանակը եւ այլն:

Աշխատության այս մասում ներկայացվում են Գրիգոր Խլաթեցի, Թովմա Մեծոփեցի, Հակոբ Դրիմեցի վարդապետների կյանքը, մանկավարժական, գրչական գործունեությունը, գրչության առանձին դրվագներ ուսուցման համար արված համառոտումներ, մեկնություններ, Հարց ու պատասխանիքով կազմված դասագրքեր եւ այլն: Թովմա Մեծոփեցու, Հակոբ Դրիմեցու եւ Մկրտիչ Նահապետենցի ծառայությունները մեծ են դասավանդվող առարկաների ծրագրերի հարստացման եւ նոր առարկաների ուսուցման կազմակերպման գործում:

Այս ամենը շարադրված են գրքի երկրորդ դրվագի «Մեծոփավանքի գրչության կենտրոնը ԺԵ դարում» առաջին գլխում: Այս դրվագի Երկրորդ գլուխն ամբողջովին նվիրված է Մեծոփավանքի գրչության դպրոցի աշակերտներին եւ նրանց կատարած ընդօրինակություններին: Հայ ձեռագրական մշակույթի ստեղծման ու պահպանման գործում մեծ են գրի անխոնջ ու աննկատ այդ մշակների գրիչների ծառայությունները: Սակայն նրանց գործունեությունը մինչեւ այս աշխատանքը առանձին-առանձին չի գնահատված: Ելնելով այս կենտրոնից մեզ հասած, ավելի շուտ հայտնի ձեռագրական ժառանգությունից, հեղինակը ամբողջացնում է դպրոցի գրչական գործունեությունը:

Թովմա Մեծոփեցու մոտ պատրաստվել են 24 ընտիր գրիչներ, որոնցից մեկն էլ Հովհաննես Մանգասարենցն է, որի գրչական գործունեությանն էլ առավել հանգամանալից կերպով անդրադառնում է հեղինակը: Ջաքարիա աշակերտի վկայությամբ Մանգասարենցը 72 տարվա գրչական գործունեության ընթացքում ընդօրինակել է 132 ձեռագիր եւ պատրաստել ավելի քան 20 աշակերտ: Հովհաննես Մանգասարենցը մեզ հայտնի ամենաբեղմնավոր գրիչն է, որից 20 ձեռագիր է հասել մեզ: Դրանցից 12-ը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Բացի Մանգասարենցից, ամփոփ ներկայացված են նաեւ մյուս գրիչները: Այս բաժնում հեղինակը կատարել է բազմաթիվ ձեռագրագիտական, պատմաբանասիրական, տեղագրական ճշգրտումներ եւ սրբագրումներ:

Երրորդ դրվագն ունի «Գրչության արվեստը Մեծոփավանքի գրչության կենտրոնում ԺԴ-ԺԵ դարերում» վերնագիրը: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում աշխատանքի հենց այս գլուխը: Գրչության արվեստը ուսումնասիրվել է թե՛ հնում եւ թե՛ մեր օրերում, սակայն այն չի որոշակիացվել որեւէ կենտրոնի քննությամբ, չի բացահայտվել գրչության արվեստի էությունը, ելնելով այդ կենտրոնի ընձեռած հնարավորություններից: Այս գործն այդ ուղղությամբ կատարված առաջին փորձն է: Եվ քանի որ միայն Մեծոփավանքից մեզ հասած ձեռագրական նյութը գրչության արվեստի կարեւոր տարրերը եւ կողմերը համեմատաբար ամբողջական չէր կարող ներկայացել (դա պայմանավորված չէր միայն ձեռագրերի կորստով, այլեւ գրչության արվեստի առանձնահատկություններով), ուստի հեղինակն օգտագործել է ձեռագրական այլ հուշարձաններ եւս:

Ցույց տալով, որ Մեծոփավանքի գրչության դպրոցում ուսուցման հիմքում ընկած էր Արիստակես գրչի եւ Գեւորգ Սկեւռացու գրչության արվեստին նվիրված գործերը, Գրիգոր Տաթեւացու Մեծոփավանքում արված այդ գործերի Մեկնությունները, ինչպես նաեւ դրանց հիման վրա գրված Թովմա Մեծոփեցու դասագիրքը եւ Հակոբ Ղրիմեցու քերականությունը, բացահայտված են գրչության արվեստի տարրերը սկսյալ նախագաղափար օրինակի անհրաժեշտությունից մինչեւ սրբագրման եւ խմբագրման անհրաժեշտությունը: Առանձին ենթաբաժիներ են նվիրված մանրանկարչությանը, կազմարարությանը, գրանյութի պատրաստմանը, գրչության գործիքներին, ստացողներին, փրկողներին, նորոգողներին, վայելողներին, ձեռագրերի հիշատակարանների պատմական անգնահատելի նշանակությանը եւ այլ հարցերին, որոնք առնչվում են ձեռագրի ստեղծմանը:

Այդ իմաստով, այս աշխատանքը ուղենշային դեր կատարեց գրչության կենտրոնների ուսումնասիրության գործում, որին հետեւեցին Մշո Առաքելոց վանքի, Սնիի, Գեղամա երկրի, Սկեւռայի վանքի, Վաղարշապատի եւ այլ գրչության կենտրոնների ուսումնասիրությունները:

«Ցանկեր» բաժնում օգտագործված գրականության ցանկից առաջ առանձին ցանկով ներկայացված են Մեծոփավանքից մեզ հասած ձեռագրական վաստակը 35 վարդապետների, գրիչների, ծաղկողների եւ կազմողների ընդօրինակած 160 եւ Մեծոփավանքից դուրս նրա աշակերտների կողմից ստեղծված մոտ 40 ձեռագրերը: Կատարված են ձեռագրերի գրչության վայրի եւ ժամանակի բազմաթիվ ճշգրտումներ:

Ա. Մաթեւոսյանի կազմած հայերեն ձեռագրերի համահավաք քարտարանից պարզվում է, որ մեզ հասած հայերեն ձեռագրերի մոտավոր քանակը շուրջ 30 հազար է գրված 1500 գրչության կենտրոններում, եւ որ դրանց մեծ մասի տեղն ու ժամանակն անհայտ է, քանի որ անխնամ պահելու եւ տեղից տեղ փոխադրելու պատճառով չեն պահպանվել գրության ժամանակի բուն հիշատակարանները, ուր որպես կանոն տրվում է ձեռագրի ստեղծման ժամանակը, տեղը, ստացողն ու գրիչը:

Գրչության կենտրոնների ուսումնասիրությամբ հնարավոր է լինում որոշել ոչ միայն ժամանակը, այլեւ գրչության վայրը, գրիչը, ծաղկողը:

Ամեն մի ձեռագիր իր պատմաբանասիրական, բնագրական, ձեռագրական, հնագրական, մանրանկարչական եւ այլ արժեքներից ու նշանակություններից զատ իր ստեղծողների, իր ծննդավայրի, երբեմնի շեն ու ծաղկուն գրչության կենտրոնի վկայությունն է եւ կենդանի հիշողությունը: Ավելին, այսօր դրանց մեծ մասը բարբարոսների կողմից ջնջվել է երկրի երեսից: Այդպիսի բախտի արժանացավ եւ Մեծոփավանքը, որ շարունակում էր պահպանել իր միաբանությունը, դպրոցն ու մատենադարանը մինչեւ 20-րդ դարի սկիզբը, երբ հողին հավասարվեց վանքը, անարգվեցին այնտեղ թաղված մեծ վարդապետների շիրիմները:

Մեր ավերված բազմաթիվ եկեղեցիները, մեր վարդապետների եւ գրիչների անարգված շիրիմները եւ նրանցից մեզ հասած ձեռագրերը պահանջում են, որ մենք նրանց ծննդավայրերի ուսումնասիրման գործը դարձնենք նվիրական բնագավառ եւ կատարենք այն սիրով, մեծ ակնածանքով եւ նվիրումով:

ԳՐԱԿԱՆ

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«ԿԵԱՆՔԻՍ ՄԷՋ ԱՅՆՔԱՆ ՎԱՐ ՆԱՅԱԾ ՉՈՒՆԷԻ ԵՍ՝ ԱՅՆՔԱՆ ՎԵՐ ՏԵՍԱԾ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՄԱՐ»

«Խնդրեցէք՝ եւ տացի ձեզ, հայցեցէք՝ եւ գտջիք, բախեցէք՝ եւ բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝ գտանէ եւ որ բախէ՝ բացցի նմա»:

«Խնդրեցեք Աստծուց, եւ Նա կտա ձեզ, փնտրեցեք եւ կգտնեք, բախեցեք եւ կբացվի ձեր առջեւ, որովհետեւ ով ուզի, ստանում է, ով փնտրի, գտնում է, եւ ով բախի, նրա առջեւ կբացվի»:

(ՄԱՏԹԵՈՍ Է 7)

«Մարդկային ամէն սրտի տախտակներուն վրայ՝ Սինէական բարձունքէն բերուած քարէ պնակիտներուն պէս անձանօթ մատներով գիրեր կան գրուած: Խստութեան կամ ուրացումի ինչ վայրկեանի մէջ ալ մէկը ուզէ ջախջախել. օր մը նորերը կը պատրաստէ, ելլելու համար այն լեռան վրայ, ուր ձայն մը պիտի ըսէ իրեն. «Գրեցից ի վերայ տախտակացդ զպատգամսն, որ էին յառաջին տախտակին՝ զոր խորտակեցեր» (ԵԼԻՑ ԼԴ 1): (ԵՂԻՇԷ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ, Բ ՇԵՆՈՐՀԱԼԻ. ԿՐՈՆԱԿԱՆ ՁԱՐԹՈՒՄՆԵՐ, էջ 371): Շարունակելով իր անցնելիք ուղին՝ բոլոր ժամանակներում էլ Աստծո արարչագործության կատարելատիպն առաջնորդվել է ասես մեծ մտածողի այս խոսքերով, որ լավագույն խրատ-հորդորն է Քրիստոսի Եկեղեցու հետեւորդներին:

Մարդկային կյանքն իրականության կայուն, անշարժ մի մասնիկը չէ, այլ. ընդհակառակը, այն հարատեւ փոփոխվող է, միշտ շարժուն, լեցուն վառ ապագայի տեսիլքով: Հավատավոր քրիստոնյան անդուլ կերպով ձգտում է կատարելության եւ այդ ձգտման մեջ էլ հենց փորձում արժանանալ Աստվածային շնորհին: Բարու եւ կատարելության ձգտումը վեհացնում է մարդուն, ազնվացնում, նա այլակերպվում է՝ դառնալով շնորհաց աղբյուր, որով եւ ունենում երկնառաք Վարդապետին ականջալուր լինելու գիտակցությունը: Իր հոգու դռները բացելով Տիրոջ առջեւ, ապրելով երանական կյանքով՝ քրիստոնյա անհատն իրենից հեռացնում է խաղաղությունը խռովող, տագնապեցնող մտքերը, դառնում բարության ու սիրո սերմերը տարածող մի օրինակելի անձ շրջապատի համար:

Հեքանոսաց Առաքյալը Կորնթոսի Եկեղեցու անդամներին է հղում ինքնաքննության կոչը՝ ասելով. «Քննեցեք դուք ձեզ՝ տեսնելու համար, թե մնո՞ւմ եք նույն հավատքի մեջ» (Բ ԿՈՐՆԹ. ԺԳ 5): Հիրավի, մարդ արարածն ընդհանրապես եւ քրիստոնյան մասնավորապես միշտ կարիքն ունի ներհայեցողական վերլուծումներով սեփական անձին անդրադառնալու՝ տեսնելու համար, թե որքանո՞վ է հավատարիմ ինքն իրեն, իր կոչմանն ու

առաքելությանը: Պողոս Առաքյալը պարզորոշ ասում է. «Որովհետեւ ինձ համար կյանքը Քրիստոս է, եւ մեռնելը՝ շահ» (ՓԻԼԻՊ. Ա 21): Քրիստոնեության մեծագույն պարգեւը Երկիր մոլորակին, հանայն մարդկությանը եղավ հավիտենական կյանքը, եւ որի արմատներն այս աշխարհից են սնվում, սկիզբ առնում: Ավետարանի քարոզիչների՝ Առաքյալների, ինչպես նաեւ նրանց հետեւորդների համար կյանքը Քրիստոս էր, իսկ կյանքի ավիշը՝ Մեծ Վարդապետի ուսուցումները: Հայաստանյայց Եկեղեցու Սուրբ Հայրերը եւս, որպես ճշմարիտ աշակերտները Քրիստոսի Ավետարանի, իրենց ողջ կյանքը, որպես կենդանի Պատարագ, նվիրաբերեցին Աստվածորդու խորանին՝ ի վկայություն եւ ի հաստատություն իրենց մշտատեւ պտղաբերող հավատքի: Այդ լուսաշող դեմքերից յուրահատուկ կերպով են առանձնանում Ս. Մեսրոպ Մաշտոցը, Ս. Սահակ Պարթեւը, ովքեր Մովսես Մարգարեի նման օրինաց գրերը բերեցին Հայոց հինավուրց աշխարհ եւ դրանցով լուսավորեցին Թորգոմյան տոհմի զավակներին, միաժամանակ, հավատքով ու ճշմարիտ լույսով ներշնչված, Թարգմանիչ Վարդապետների հետ միասին, հայաբարբառ ու հայաշունչ դարձրին Աստծու Խոսքը՝ Աստվածաշունչ Մատյանը, եւ Հայրենի հողում հայոց գրերի վրա խարսխված վերահաստատեցին Մեծ Լուսավորչի Հայրապետական Սուրբ Աթոռը:

«Մեր լեզուն մեր պատմությունն է»,- գերմանացի աշխարհահռչակ գրող ու լեզվաբան Յակոբ Գրիմմին է պատկանում այս թեւավոր խոսքը, որը որդեգրելով, իրավամբ կարող ենք մեծ երկյուղածությամբ նույնը կրկնել նաեւ Հայոց ոսկեդենիկ լեզվի մասին:

Ազգային ամեն մի գիր ստեղծվում է այն ժամանակ, երբ ազգը հավատում է իր Վաղվան եւ ուզում է խոսել այդ Վաղվա իր սերունդների հետ:

Կորյունը (Մաշտոցի ավագ աշակերտը) Ասորիքից հայրենիք վերադարձող Մեսրոպ Մաշտոցին համեմատում է Մովսես մարգարեի հետ, որ Սինա լեռան վրայից իջնելով, իսրայելացիներին էր տանում աստվածապարգեւ, փրկարար օրենքները՝ Տասնաբանյա պատվիրանները:

Մաշտոցը Հայաստան էր բերում ոչ թե օրենքներ, այլ Ասորիքում իր ստեղծած աստվածապարգեւ գրերը, որոնք հայ ժողովրդին պիտի փրկեին վերահաս մեծագույն աղետից՝ ազգային ինքնության կորստից:

«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»,-այս տողը, որով բացվում է Սողոմոնի Առակաց գիրքը, դարձավ մաշտոցյան այբուբենով գրված առաջին պատվիրանը այդ այբուբենը հեգողներին, հայոց գրի ու դպրության որդեգիրներին: Բայց խոսքն այս ունի անմիջական շարունակություն. «Զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց, տղայոց զմիտս եւ զհանճար: Որոց իբրեւ լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի, իսկ որ հանճարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստասցի»:

Ավետարանի ճշմարիտ մշակները, լույս առնելով ՄԵԾ ԼՈՒՅՍԻՑ, մոռացան իրենց ես-ը՝ անանձնական սիրո սահմանները նվաճելու ձգտումով: Նրանք հայ ժողովրդի զավակներին՝ պարգեւեցին աստվածահայտ կյանքի իրական բանալին, մարդկային հոգին ազնվացնող ու վեհացնող առաքինությունների ճշմարիտ ուղին: Քրիստոսի Ավետարանի հավատարիմ աշակերտները, բոլոր ժամանակներում, Թարգմանիչ Վարդապետների խնկաբույր խոսքով զարդարված, նրանց իսկ հիշատակի ոգեկոչման օրը, երբ մեկ անգամ եւս առիթ են ունենալ մտածման ու խորհրդածության նյութ դարձնել Թարգմանիչ Հայրերի ապրած կյանքն ու գործունեությունը, ապրել՝ են նրանց ոգեղեն էության

մշտատեւ ներկայությունը. զգացել այն բեռան ծանրությունը. որ դրվել է իրենցից յուրաքանչյուրի ուսերին:

Ցանկացած իրադարձության կամ անհատի ոգեկոչումն ավելի շատ սեփական կյանքի ինքնաքննումի ու անդրադարձման կոչ է. որ իրավամբ մեզ է ավանդվել Առաքյալի խոսքերով. իսկ այդ խոսքերին իրենց ձայնն են միացրել նաեւ Թարգմանիչ Վարդապետները դրանց արձագանքները. որպես հրավեր. փոխանցելով ամենքին՝ ուսուցիչներին. ծնողներին. դաստիարակներին. բոլոր նրանց. ում այսօր վստահված է մեր վաղվա օրը: Այն հրավեր է վերաքննության. նախանձախնդիր կյանքի. կրոնա-բարոյական ու ազգային տոհմիկ դաստիարակության: Այդ հրավերքի օգնությամբ հենց յուրաքանչյուր ուսուցիչ պետք է քննի ինքն իրեն՝ տեսնելու համար. թե պատրա՞ստ է արդյոք բարձրաձայն ծնողներին ուղղելու ՄԵԾ ՈՒՍՈՒՑՉԻ խոսքերի գեղեցիկ ու հոգեպարար տարբերակը. «Թույլ տվեք ձեր մանուկներին մեզ մոտ գալ եւ մի արգելեք նրանց. որովհետեւ այդպիսիներինն է Երկնքի Արքայությունը»:

Իր տնօրինական առաքելության ավարտին մեր Տերն ականատեսը եղավ այրի կնոջ արարքին եւ. Իր մոտ կանչելով Առաքյալներին. մեկ անգամ եւս հավաստեց. թե տալն ավելի լավ է. քան՝ առնելը: Տալը. սակայն. օծուն պետք է լինի սիրով ու ինքնաբուխ զգացումով: Թարգմանիչ Վարդապետները եւս. այրի կնոջ օրինակով. իրենց ողջ կյանքը նետեցին Հայաստանյայց եկեղեցու եւ հարազատ ժողովրդի ծառայության գանձանակի մեջ: Հայոց Այբուբենի գյուտով Աստված ու մարգարեները խոսեցին մեր մայրենի լեզվով: Ու ծնվեց Հայոց Ոսկեդարը: Իսկ այսօր մեր առաքելությունն է՝ նոր սերնդին սրբորեն փոխանցել մեզ ավանդված ոսկետառ ԿՏԱԿԸ՝ այս կերպ պանծացնելով Թարգմանիչ Վարդապետների անմահ հիշատակը. միաժամանակ հիշելով Եղիշե Պատրիարքի հուզախռով խնդրանքը. որ մի գեղեցիկ կոչ է բոլոր ժամանակների հավատավորին. որպեսզի նա. ամեն անգամ ուխտավորաբար այցելելով մեծ Ուսուցչապետի շիրմին. իրավունք ունենա այդ ժամանակ խոնարհաբար կրկնելու նույն այս խոսքերը. «առաջին ու անգիտակից շարժումս պիտի ըլլար անգամ մըն ալ ծնրադրել ու թախանձագին խնդրել իրմէ.

-Աղուոր Ա Բ Գ-էդ դաս մը տուր ինձի»:

Հավատքը մարդկային կյանքի վեմն է. առանց որի դժվար է պատկերացնել այն. զի հավատքի խորտակմամբ մարդ արարածը կանգնում է արհավիրքի դեմ-հանդիման՝ հուսալքման ու դժբախտության անհաղթահարելի ծանրությունից կքած: Հավատքն է. որ մարդուն շնորհում է ստեղծագործական ձիրք. որը եւ վերածում է կյանքի: Ճիշտ նմանատիպ հավատքով էր առլեցուն Աստվածամոր սիրտը:

Աստվածամայրը եղավ այն խորանը. որի վրա ամեն օր բոցկլտում էր հավատքի մշտավառ ճրագը. եւ այդ հավատքի պտուղը եղավ մարդկության Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս: Աստվածամոր «Երից ամաց ընծայումն ի տաճարն» տոնը համայն քրիստոնյա աշխարհը տոնախմբում է նոյեմբերի 21-ին: Լինելով ուխտի զավակ. համաձայն Մովսիսական օրենքի. Մարիամն ընծայվեց Տաճարին: Տաճարընծայումը պայմանավորված էր նաեւ նրանով. որ նա իր ծնողների անդրանիկն էր. որի հավաստումը մենք գտնում ենք ԵԼԻՑ գրքի ԺԳ գլխի առաջին երկու համարներում: Հին Ուխտի ժողովրդին ուղղված այս նույն պատվիրանը կրկնվում է տարբեր առիթներով՝ մատնանշելու համար նրա կարեւորությունը եբրայեցի ժողովրդի կրոնական հավատալիքներում (ԵԼԻՑ

ԼԴ 19): Հետագայում, համաձայն հենց այս օրենքի, Աստվածամայրը եւս իր անդրանիկ պտուղը, որ է Մանուկ Հիսուս, Տաճար պիտի տաներ՝ Աստծուն ընծայաբերելու համար (ՂՈՒԿ. Բ 22-24):

Մարիամն իր ապրած մաքուր ու անբասիր կյանքով, բարձր նկարագրով, հաստատուն հավատքով, համեստությամբ ու խոնարհությամբ, արժանացավ Աստծու շնորհին, դարձավ միակ օրհնյալ կինն ու Լույսի մայրն այս աշխարհում: Առաքինություններով զարդարուն համեստ «աղախինը Աստուծոյ» հիրավի Քրիստոսի Եկեղեցու եւ նրա հավատացյալների կողմից արժանացավ մեծագույն պատվի, որն իր դրսեւորումը գտավ շարականներում, հոգեպարար մեղեդիներում եւ աղոթքներում: Մանկավանդ Հայոց Եկեղեցին Տիրամոր պատկերով զարդարեց իր տաճարների խորանները՝ հավատացյալներին, հատկապես հայ մայրերին ամեն վայրկյան հիշեցնելով Աստվածամոր կյանքի անմեկնելի օրինակը, օրինակ, որով եւ հիշեցվում են մայրական պարտականություններն իրենց զավակների հանդեպ: Ամեն մի խորանից քրիստոնյա մայրերին հառած իր նայվածքով Աստվածամայրն ասես պատգամում է, թե ամեն մի ծնունդ մի տաճար է տան մեջ: Ծնողի համար չկա ավելի նվիրական պարտականություն, քան այդ աստվածակերտ տաճարի հոգեւոր կրթությունն ու դաստիարակությունը, որի շնորհիվ մանկան հոգում պետք է բնակեցվեն Աստծո սերն ու հույսը, ինչպես նաեւ կյանքի բարձրագույն այն առաքինությունները, որոնք պետք է նրան պահպանեն բոլոր տեսակի մոլորություններից:

Երանի այն մայրերին, ովքեր կարողանում են լսել Աստվածամոր աղբյուր-շուրթերից բխող անբարբառ, բայց եւ վաղեմություն չճանաչող այս պատվիրան-հորդորները:

Մոտ երկու հազար տարիներ առաջ Երկիր մոլորակը ողողվեց ՍԻՐՈ ԻՇԽԱՆԻ ծննդյան ավետիսով, եւ այդ Իշխանն Իր փառքը, կյանքի արժեքն ու առաքելության իրականացումը տեսավ միմիայն մարդկությանը ծառայելու մեջ: Քրիստոս Իր սերն արտահայտեց հիվանդներին բժշկելով, մեռյալներին հարություն պարգեւելով, անդամալույծներին, կույրերին ու կաղերին դարմանելով: Իր ողջ գործունեությամբ Աստվածորդին կամենում էր ասել, որ քրիստոնեությունը սիրով ապրված ու սիրով առլեցուն ԿՅԱՆՔՆ է: Աստվածային սիրով հրդեհելով Իր Առաքյալների սրտերը, Խաղաղության Ավետաբերն ու մարդկության Փրկիչը պատգամեց նրանց շրջել աշխարհով մեկ եւ ամենքին ուսուցանել Իր վարդապետությունը: Տիրոջ ընտրյալներից երկուսը՝ Ս. Թադեոսն ու Ս. Բարդողիմեոսը, դարձան Հայաստանյայց Եկեղեցու հավերժահաստատ սյուներն ու հայ ժողովրդի լուսավորիչները: Նրանց բերած լույսով իմաստավորվեց ողջ Հայաստան աշխարհը: Որպես երախտիքի խոնարհ դրսեւորում, հայ հավատավորը հաստատեց ու զորացրեց քրիստոնեական հավատքն իր կյանքում, քանզի հավատքն է մարդ անհատի վավերական գոյության հիմքը: Ջույգ Առաքյալների հիշատակի ոգեկոչումը գեղեցկագույն առիթ է մեկ անգամ եւս անդրադառնալու մեր Եկեղեցու առաքելականությանը եւ այդ առաքելականությամբ օծուն անհատի կոչմանն ու առաքելությանը: Առաքյալները եղան ճշմարտության վկաները: ՄԵԾ ԱՌԱՔՅԱԼԻ հետեւությամբ վարդապետեցին, բժշկեցին, Աստծու մարդկության մեջ բնակվելու ավետիսը տվեցին ու, ՄԵՕ ԽԱՉՅԱԼԻՆ հավատարիմ, արժանացան նահատակության պսակին: Յուրաքանչյուր հայ, որ առաքելահաստատ Եկեղեցու Սրբալույս Մյուռոնով է վերածնված, զույգ Առաքյալների ոգեկոչման օրը պարտավոր է

դարձնել իր համար ուխտի օր, որով եւ իր հավատարմությունը հայտնած կլինի հարազատ եկեղեցու եւ նրա ուսուցումների նկատմամբ: Հոգեկան արժեքների, քրիստոնեական առաքինությունների անգերազանցելի սկզբունքները մեզ կտակեցին Ս. Թադեոսն ու Ս. Բարդողիմեոսը, որոնցով ապրեցինք մենք եւ մեր միտքը վերածեցինք լուսաստիւռ ու կենսապարգեւ ստեղծագործության: Ձույգ լուսատուների տոնի հիշատակությունը նաեւ հրավեր ու կոչ է յուրաքանչյուր հայորդու՝ հավատարիմ մնալու առաքելահիմն ու լուսավորչահաստատ իր եկեղեցուն, քրիստոսավանդ հավատքին, մեսրոպաշունչ մայրենիին:

***

Հայաստանյայց եկեղեցու տոնացույցի ոսկե շղթայի տեսանելի ու շարունակական այս գեղեցիկ օղակները հանդիսացող Սրբերի տոնը ոգեկոչվեց հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, որոնց հիշատակության միջեւ ընկած ժամանակային բաժանումը ոչ միայն չի հեռացնում այդ տոները միմյանցից, այլ, ընդհակառակը, իմաստալից մի կապով ամուր շաղկապում է իրար՝ հայ հավատավորին կոչելով հետեւել վերափոխման, ինքնակերտման, ինքնահաստատման ու ինքնաբուխ կյանքով ապրելու եւ այդ կյանքը մարդ արարածի համար ի սպաս դնելու Աստվածորդու կտակած մեծագույն պատգամին:

Խորը ըմբռնումով միմյանց հետ շաղկապելով այս տոների աստվածապարգեւ խորհուրդը, մեզանից յուրաքանչյուրը, որպես ճշմարիտ քրիստոնյա, պարտավոր է մեկ անգամ եւս ապրել ինքնաքննումի, ինքնաճանաչման այն վայրկյանները, որոնց շնորհիվ մարդ անհատն ընդհանրապես մոտենում է Երկնառաք Վարդապետին, ապրում Նրա ուսուցումների լույսով: Հենց այդ լույսն է, որ օգնում է մեզ իրական աչքերով տեսնել շրջապատող երեւույթները, գնահատել ու արժեւորել: Եվ, ի վերջո, այդ լույսն է, որ մեզ պետք է օգնի ապրել այն սիրո ջերմությամբ, ՝որով ջերմացած էր Աստվածորդու հետեւորդների սրտերը, եւ որը փոխանցվել է մեզանից յուրաքանչյուրին եւս: Ուստի մեկ անգամ էլ, մտովի վերապրելով ոգեկոչված տոների խորհուրդը, նրանց միջեւ առկա ոգեղեն կապը, որ ի վերջո հանգեցրեց հայ ժողովրդի ինքնության ամրապնդմանն ու հարատեւմանը եւ աստվածապարգեւ գրերի գյուտին, հոգով ծնրադրելով Ամենայն Հայոց Ուսուցչապետի շիրմի առջեւ, փորձենք, հետեւողությամբ եղիշե Դուրյան Մեծ Պատրիարքի, կրկնել նրա իսկ սեփական խոսքերը, եթե անշուշտ մեզ արժանի ենք համարում դրան.

«Կեանքիս մէջ այնքան վար նայած չունէի ես՝ այնքան վեր տեսած ըլլալու համար, որքան ցած ու անշուք այդ դամբարանը»:

ՎՈԼՈԴՅԱ ՍԲԲԱՀԱՄՅԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՆԴԱՌՆԱԼԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ*

«Վաստակեցի ես ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, եւ արտասուօք իմովք զանկողինս իմ թացի: Խոռվեցաւ ի սրտմտութենէ ակն իմ, մաշեցայ ես ի վերայ ամենայն թշնամեաց իմոց:

Ի բաց կացէք յինէն ամենեքեան ոյք գործէք զանօրէնութիւն»:

/ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՅ Զ 7-9/

Անցավ այսպես ևս երկու տարի: Այս ընթացքում աստվածաստեղծ բնությունը մեծագույն և չարագույն հարված հասցրեց մեր՝ քիչ թե շատ խաղա՞ղ ընտանիքին:

1946 թվականի գարուն: Մայիսյան մի ծաղկավետ օր, ընդամենը երեսուներեք տարեկան ծաղկափթիթ հասակում, մեզ՝ իր ընտանիքին ե իր անչափահաս երեխաներին ընդմիշտ հրաժեշտ տվեց Աղավնի մայրս: Ծանր և կեղեքիչ հիվանդությունը վերջապես ասաց իր որոշիչ խոսքը: Մայրս մահացավ հիվանդանոցում:

Մորս մահից հետո, իմ պատանի անհասու գիտակցումով և դեռևս իր ձևավորման ընթացքում գտնվող տրամաբանությամբ, ես եկա այն համոզման, որ նա իր կյանքն ապրեց բացառապես տառապելով, տառապելով ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես: Մայրս անբուժելի հիվանդ էր ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեպես, հոգեպես, որովհետև իր խաթարված կյանքը նրան զրկել էր հոգեկան լիարժեք ըմբոշխնումի չափավոր գոհացումից, և ավելի ճիշտ կլինի ասել՝ բնապարգև կյանքի վայելքներից ամենադույզն իսկ նշույլ անգամ նա չքաղեց: Սակայն այստեղ պետք է մի փոքր, որոշ չափով տողերը թաց անել և պարզաբանել մի քանի հանգամանքներ:

Վազգեն հայրս, ինչպես գիտեք, ահավոր ջանքերի գնով, մեծ դժվարությամբ կարողացավ ամուսնանալ Աղավնի մորս հետ: Մարանդիզի Ավետիսը՝ այդ ահասարսուռ, չարախորհուրդ էակը, դժկամությամբ տվեց իր համաձայնությունը Աղավնի դստեր՝ Վազգենի հետ ամուսնության: Ահա այս փոխադարձ ոչ լիարժեք համաձայնությամբ ամուսնության անհեռանկարային լինելն ընդգծվեց հենց առաջին իսկ օրից: Վազգենի և Աղավնիի ամուսնության առաջին իսկ ամիսներից խնամի այս երկու ընտանիքների միջև հարաբերություններն աստիճանաբար սրվեցին: Պատճառը հիմնականում այն էր, որ հայրս կտրականապես արգելում էր մորս հաճախակի այցելել հայրական տուն՝ հարազատներին: Իսկ մայրս հակառակ կերպ էր վարվում, չլսելու տալիս ամուսնու դաստիարակիչ պահանջները: Աղավնի մայրս կա՛մ չէր ցանկանում և կա՛մ էլ չէր գիտակցում մարդկային փոխհարաբերության մի շատ պա՞րզ ճշմարտություն. եթե երիտասարդ զույգերը երազում են ունենալ

* Հինգերորդ մասը տե՛ս թիվ Է, էջ 107:

օրինավոր ընտանիք, ապա ամուսնությունից հետո աղջիկը մեկընդմիշտ հոգով և մարմնով պետք է կապվի իր կողակցի հարազատներին՝ մոռանալով անգամ հայրական ընտանիքի հզորությունը, ուժը, դիրքը և համարումը: Իսկ Աղավնի մայրս այդպես չէր վարվում, չէր համակերպվում հորս պահանջներին և շարունակում էր պահպանել հայ մարդու կողմից այդ խիստ դատապարտելի վարքագծի դրսևորումները, որի հետևանքը եղավ այն, որ նա աստիճանաբար օտարացավ իր ընտանիքից և մեկընդմիշտ զրկվեց և՛ իր ամուսնու, և՛ նրա ծնողների բարյացակամ վերաբերմունքից: Հենց այս հանգամանքն էլ հիմնական պատճառը դարձավ այն չարաբաստիկ իրողության, որի հետևանքով այս երկու ընտանիքները դարձան համարյա թե թշնամիներ...

Աղավնի մորս ոչ ընտանեհարգ վարքագծի դրսևորումը երևի թե, և ես հաստատ համոզված եմ դրանում, իր հոր՝ «ամենակարող» Մարանդիզի Ավետիսի «առասպելական» կերպարն էր՝ շրջապատված իր մի շարք համակիրներով: Եթե յուրաքանչյուր ոք այդպես տրամաբանի և իր վարքագիծը պայմանավորի ինչ-որ հզոր ուժերով, ապա, դրանից ելնելով, պետք է անել հետևյալ սխալ և մերժելի հետևությունը. յուրաքանչյուր արքայադուստր և կամ իշխանադուստր անհնազանդ ու անուղղելի պետք է լինի իր ամուսնական ընտանիքում, միշտ ապրի իր հզոր հոր երևակայական հովանու ներքո, մի երևույթ, որ երբեք ու երբեք արդարացի չէ: Միայն կարճամիտ ու տհաս էակն այդպես կմտածի:

Մայրս չգիտակցեց, որ այսպիսի վարքագծով նա իր կյանքն ընդմիշտ դատապարտում է կործանման: Օրինապահ և օրինավոր ընտանիքի համար և ընդհանրապես մարդկային փոխհարաբերության տեսակետից խիստ դատապարտելի և մերժելի է այսպիսի մտածելակերպը և նրանից հետևող դրսևորումները:

Ինչևէ, երկա՜ր ամիսներ պայքարելով, բայց վերջնականորեն համոզվելով, որ իր հորդորներն ապարդյուն են, հայրս իր դիրքավորումը Աղավնի մորս հանդեպ կտրուկ և մեկընդմիշտ փոխեց. աստիճանաբար սկսեց անտարբեր վերաբերմունք ցուցաբերել նրա նկատմամբ, նույնիսկ արհամարել նրան: Հարաբերությունները վերջնականորեն խզեց աներոջ ընտանիքի հետ, մի վարքագծի դրսևորում, որին համախոհ եղան և իր ծնողները՝ Գրիգոր պապս և Սաթենիկ տատս, այն դեպքում, երբ այս երկու խնամի ընտանիքներին բաժանում էր միմյանցից ընդամենը... մեկ պատ:

Ահա այս էր հիմնական պատճառը, որ պատերազմի հաղթական ավարտից հետո հորս վերադարձն այնքան էլ չուրախացրեց, չհուզեց, չերջանկացրեց Աղավնի մորս: Շուրջ երկու տասնամյակ տևած նրանց համատեղ կյանքը վերջնականորեն նրան բերել էր այն համոզման ու գիտակցության, որ ինքը բացահայտորեն արհամարված է իր ամուսնու կողմից:

Ճիշտ է, հայրս մի երևելի դրական կերպար չէր, ուներ իր էությանը բնորոշ բազմաթիվ բացասական կողմեր, բայց Աղավնիի և Վազգենի հարցում եկեք օբյեկտիվ լինենք, իրերը և երևույթները կշռադատենք արդարամտորեն: Այս հարցում ես բացարձակորեն մեղադրում եմ Աղավնի մորս և անկողմնակալ կերպով պաշտպանում Վազգեն հորս:

Մարդկային այն էակը (տվյալ դեպքում խոսքս ուղղված է Մարանդիզի Ավետիսի նմաններին), որը միշտ և հանապազորդ խոսում է իր ուժի և հզորության դիրքերից, այդպիսին մարդկային հասարակության կողմից

անառարկելիորեն դատապարտված է անկողմնակալ պարսավանքի և արհամարհանքի:

Չմոռանամ ասել, որ Մարանդիզի Ավետիսի «համախոհներից» էր նաև նրա միջնեկ փեսան՝ Եպրաքսյայի ամուսինը, որի անունն անգամ արժանի չեմ գտնում հոլովելու այստեղ: Ահա այս «հզոր» մարդկային էակների՝ Մարանդիզի Ավետիսի, Վարդգեսի և նրանց «համախոհների» վարքագծի դրսևորման վերջաբանը եղավ մի անմեղ, համեստ ու սուրբ էակի՝ Աղավնի մորս կյանքի ցավագի՜ն վախճանը...

Թող խաղաղության մե՜ջ հանգչի ինձ համար մշտնջենական սուրբ համարվող Աղավնի մորս մշտատառապյա՜լ հոգին:

Իր տեղին և ժամանակին ասել եմ արդեն, որ ես մայրական գուրգուրանք չեմ ստացել: Այո՛, երևի թե իմ մեջ չի էլ սաղմնավորվել և ծնվել քնաշնորհ այդ զգացումը դեպի մայրս: Ես այն առատորեն և անմնացորդ նվիրել եմ իմ Սաթենիկ տատին՝ այդ առաքինի և նվիրյալ կնոջը, և բազմապատկորեն ստացել պատասխան գուրգուրանք ու փաղաքշանք նրանից: Կրկին անգամ շեշտում եմ, որ մայրական զգացման հարցում ես չեմ մեղադրում Աղավնի մորս, քանի որ նա երկա՜ր տարիներ հիվանդ էր և գամված անկողնում:

Ես ի խորոց սրտի հայցում եմ նրա անմե՜ղ ու սո՜ւրբ հոգու մայրական ներողամտությունը...

Այստեղ բոլորիդ լսելի, սակայն ի խոր ցավ ինձ միայն ասեմ, որ ես զրկված եմ եղել և ընդմիշտ էլ զրկված կմնամ մայրական փաղաքշանքներից և դրանց անմիջական արդյունք հանդիսացող նուրբ, քնքույշ ու սուրբ զգացումներից:

Մեղա՜ քեզ, մայր իմ:

***

Ծնողներիս հետ երկա՜ր «քանակցություններից» և պայքարից հետո, 1946 թվականին, վերջապես ես կարողացա թոթափել իմ ուսերից ինձ համար այնքա՜ն տհաճ պարտականությունների տևական և անվերջանալի գործընթացը: Ես ընդմի՜շտ լքեցի երաժշտական դպրոցը: Այնուհետև, հենց նույն տարի, ժամանակավորապես թողեցի նաև հանրակրթական դպրոցը, որի մասին կխոսեմ իր ժամանակին: Իմ կողմից դրսևորված այս համառ պայքարի և ձգտման իրականացումը ոչ թե պատահական համաձայնություն էր ծնողներիս կողմից, այլ այն բանի հետևանք, որ հայրս պատերազմի տարիներին հաճախակի գրել էր իր ծնողներին. «Որդուս տվեք մի արհեստ սովորի, հիմա արհեստի դար է»: Եվ այս խնդրանք-հորդորն էլ հենց իր հիմնական և որոշիչ դերը կատարեց: Հայրս էլ, որ արդեն շուրջ մեկ տարի էր, ինչ վերադարձել էր ռազմաճակատից, հենց ինքն էլ վերջնականորեն որոշիչ դեր խաղաց այս հարցում:

Վերջապես՝ ես հասա իմ նպատակին: Այժմ արդեն ծնողներիս հիմնական մտահոգությունն էր, որ ես որևէ արհեստի տիրապետեմ: Առայժմ ես ոչ մի տեղ չէի կարող աշխատանքի ընդունվել, քանի որ... դեռևս անչափահաս էի, չունեի անձնագիր: Մինչև անձնագիր ստանալս ես հորս հորդորներով և նույնիսկ պահանջով մեկ տարի ստիպված եղա օգնելու նրան, թեև առևտուրը բոլորովին էլ չէր բխում իմ հոգեբանական կերտվածքից: Ես ստիպվա՛ծ էի

ժամանակավորապես կատարել ինձ համար այդ տհաճ և իմ ներաշխարհին ոչ բնորոշ աշխատանքը:

Մոնտրի ընթացքում ժամանակ առ ժամանակ մեզ մոտ էր գալիս և կամ ինձ փոխարինում Գրիգոր պապս՝ ինձ համար հատկապես այդ առաքինազարդ անձնավորությունը: Ցավոք, նա արդեն և՛ ֆիզիկապես, և՛ մարմնապես շա՜տ էր թուլացել և քայքայվել, հաճախ էր հիվանդանում և օրերով գամվում անկողնում: Բայց, ինչ արած, նա ստիպված էր ոտքի վրա եղած ժամանակ օգնել իր որդուն՝ Վազգենին, որպեսզի երկուսով համատեղ կարողանային այդ ծա՜նր տարիներին իրենց ընտանիքը գերծ պահել սովից ու հիվանդությունից և քիչ թե շատ ապահովել ապրուստի միջոցներ: Իսկ նրանք, հազար փա՜ռք ու պատի՜վ նրանց, այս հարցում արդարացրեցին իրենց: Նրանք բավարար չափով կարողացան հոգալ իրենց ընտանիքի ապրուստը:

Այստեղ մի փոքր ուշացումով, բայց տեղին է ասել, որ ծնողներս, հատկապես Սաթենիկ տատս, կարծես լուծը վզիս դրած էին ինձ «քշում» դեպի երաժշտական դպրոց: Ինձ համար շատ սովորական էր կարկատած տաբատով հաճախել հանրակրթական դպրոց, սակայն այդպիսի արտաքին տեսքով մտնել երաժշտական դպրոց՝ այ դա՛ արդեն ինձ համար կարծես կնշանակեր շղթայակապ սպանդանոց գնալ: Թող ձեզ տարօրինակ չթվա, եթե ասեմ, որ ես մահու չափ ամաչում և ինձ անչա՜փ նսեմացած էի զգում՝ այդպիսի տեսքով մշակութային ուսումնական այդ օջախ ոտք դնելուս համար: Բացի այն, որ իմ տաբատը մի քանի տեղերից կարկատած էր, դրան ավելացրեք նաև այն հնամաշ բամբակաբաճկոնը, որ ես կրում էի ինձ վրա արդեն մի քանի տարի:

Ի հեճուկս իմ այս խղճուկ ու ողորմելի արտաքին տեսքի, իմ դասընկերները երաժշտական դպրոց էին հաճախում՝ իրենց վրա կրելով շքե՜ղ եագուստներ, իսկ ձմռան ամիսներին՝ նույնքան թանկարժեք ու շքեղ վերարկու, օձիքն էլ՝ նրբորեն և խիստ քաղաքակիրթ կերպով օղակ տված մի նրբագործ խավոտ վզնոց: Էլ չեմ ասում այն մասին, որ այդ աշակերտների գրպաններում անպակաս էին շոկոլադի սալիկները:

Ցավն այն էր, որ ես այս ամենը զգում էի իմ մաշկի վրա, գիտակցում, որ այս մշակութային ուսումնական հաստատությունն իմ տեղը չէ, թեև ես ընդունակ ու առաջադեմ աշակերտներից էի: Հաշվի առնելով այս արտաքին, խիստ էական ներգործությունները ինձ վրա, ես ինձ չափազանց նսեմացած և արհամարհված էի համարում սույն միջավայրում:

Ինչպես մեր քաղի երեխաների վերաբերմունքն էր բացասական ազդեցություն ունենում ինձ վրա՝ երաժշտական ուսում ստանալու առումով, այնպես էլ երաժշտական դպրոցի նշածս արտաքին, խիստ էական հանգամանքները լուրջ բացասական ներգործություն էին ունենում իմ հոգուն: Նորից եմ կրկնում. ես ինձ ահավոր կերպով նսեմացած էի զգում մշակութային ուսումնական սույն հաստատության՝ ինձ համար ճնշիչ այս մթնոլորտում...

Սկզբնական ուսումնական տարեշրջաններին ես գերազանց առաջադիմությամբ էի փոխադրվում դասարանից դասարան: Հետագայում մեր քաղի երեխաների բացասական վերաբերմունքը և երաժշտական դպրոցի ճնշիչ ազդեցության մթնոլորտն ինձ աստիճանաբար ստիպեցին ուսման մեջ երերալ, ետընթաց ապրել, մի կերպ՝ դասարանից դասարան փոխադրվել: Ի ապացույց այս բանի ասեմ, որ երաժշտական դպրոցի աշակերտական սիմֆոնիկ

նվազախմբում ես առաջին տարիներին, որպես առաջադեմ աշակերտ, նստում էի «առաջին ջութակ» շարքի առաջին աթոռին: Այնուհետև երբ ես սկսեցի երեքալ ուսման մեջ, վատ առաջադիմություն ցուցաբերել, ինձ աստիճանաբար տեղափոխեցին երկրորդ, երրորդ շարք, անգամ «առաջին ջութակ» շարքից տեղափոխեցին «երկրորդ ջութակ» շարք: Ես այլևս չէի արդարացնում ուսուցիչներիս հույսերը...

Այստեղ առանձնահատուկ կերպով պետք է շեշտեմ, որ իմ սերնդակիցների շրջանում երևի թե շատերը եղան, որ թողեցին ուսումը և այդ մատդա՞շ հասակում անցան աշխատանքի՝ հանուն իրենց և իրենց ընտանիքների գոյատևման: Ցավալի է արձանագրել այս ամենը՝ կյանքի կանոնների օրինաչափ ռիթմի ո՞չ օրինաչափ խախտումը:

Արդ, ստիպված եմ շեղվել հիմնական նյութից և խոսել ներկա ժամանակներում մեր հասարակությանը հուզող խի՛ստ դատապարտելի մի երևույթի մասին: Հարգելի ներկա պարոնայք, այժմ մեր հասարակության շրջանում գլուխ է բարձրացրել մի բացասական երևույթ, որի կողքով երբեք չպետք է անտարբեր անցնել: Եթե իմ սերնդակից պատանիները, ինչ-ինչ արդարացի հանգամանքներից դրդված, ստիպված էին թողնել իրենց ուսումը և անցնել աշխատանքի՝ հանուն իրենց գոյատևման, այդ ժամանակաընթացքում իհարկե ձեռք բերելով նաև մի որևէ արհեստ-մասնագիտություն, ապա ներկայիս մատաղ սերունդը, թողնելով ուսումը, միմիայն ու բացառապես զբաղված է «մասնագիտանալ» ստոր, անազնիվ առևտրի և այլ նմանատիպ «աշխատանքային» բնագավառներում: Այս բոլոր բացասական երևույթների պատճառը հիմնականում մեր երիտասարդության անգործության մատնված լինելն է: Դուք պատկերացնո՞ւմ եք, թե տասը կամ քսան տարի հետո ինչպիսի՛ որակումով կպիտակավորեն մեր հասարակությանն օտարները: Ներեցեք համարձակությանս համար, բայց ստիպված եմ ասելու, որ երբ հասարակությունն է համարյա ամբողջապես ապականված, ապա նրա ոտքերի տակ հողը խի՛ստ երերուն է և կործանարար, իսկ նրա՝ կրկին ոտքի կանգնելը՝ անհույս և երազային: Այս հարցում երբեք չպետք է մեղադրել պարզ ու ազնիվ աշխատավոր ժողովրդին, որովհետև նրա դերն այս հարցում երբեք չի կարող որոշիչ լինել: Այս հարցում բացառապես մեղավոր են բարձր էշելոններում «հանգրվանածները»: Այստեղ աներեր և անվարան բերենք ժողովրդական իմաստուն ասացվածքը. «Ձուկը գլխից է հոտում»:

Պատվարժան և հարգարժան ներկաներ, այժմ, ներկայումս, հենց հիմա մեր ժողովրդի գլխին կախված «ամենահաղթ» Նեռի այս մարդակործան գավազանը պետք է անհապաղ ետ մղել, ավելի ճիշտ կլինի ասել՝ մեկընդմիշտ ոչնչացնել, փոշի դարձնել, այլապես ուշ կլինի:

Ուշքի՛ եկեք, ուշքի՛ եկեք, ժողովուրդ, և դուք, պետական պաշտոնական այրեր:

***

Աղավնի մորս մահից դեռևս մեկ տարի էլ չէր անցել, երբ 1947 թվականի փետրվարյան մի ցրտաշունչ օր մեզ՝ իր ընտանիքին ընդմիշտ հրաժեշտ տվեց նաև Գրիգոր պապս: Իր տեղին ես ասել եմ արդեն, որ Գրիգոր պապս անչա՞փ հյուծված էր ու քայքայված: Այդ իսկ պատճառով նա հաճախակի էր հվանդանում և գամվում անկողնում: Եթե պատերազմի չորս տառապալից երկարաձիգ տարիներին Գրիգոր պապիս համար երազային էր թվում այս

անկողինը, ապա այնմ նա ստիպված էր հնազանդվել բնության երբեմն հեգնախառն օրինաչափություններին և նրա սառնասիրտ ու դաժան վճիռներին: Այստեղ սրտի ցավով պետք է նշել, որ Գրիգոր պապիս օրգանիզմի այս արագ քայքայումը գալիս էր նրա ապրած անվերջանալի տառապանքներից՝ սկսած 1915 թվականի Մեծ գաղթից և այնուհետև նրա անժխտելի հետևանք հանդիսացած բնականոն ողջ իրողությունների հերթագայությունից: Ցմռռանամ ասել և կրկին անգամ շեշտել, որ Գրիգոր պապիս առողջական վիճակի քայքայման որոշիչ ու վերջնական հարվածը պատերազմական այն չորս տարիների հոգեմաշ և անհատնում դառնություններով լի կյանքն էր, որ նա ապրեց ու անցկացրեց միմիայն օրնիբուն տանջվելով: Բայց չէ՞ որ պատերազմական այդ չորս տարիներին իր ընտանիքի, հատկապես իր մատղաշ թոռների գոյատևման հիմնական ծանրությունն ու բեռն իր ուսերին էր ընկած: Եվ նա՝ այդ անչափ առաքինի ու բարեհոգի անձը, անմնացորդ նվիրումով կարողացավ կատարել ծնողական իր պարտականությունները՝ սակայն անվերականգնելիորեն և վերջնականորեն քայքայելով իր առողջությունը:

Հիմա արդեն, հիվանդ վիճակում, քնելուց առաջ, Գրիգոր պապս ավելի հաճախ էր կրկնում այն միտքը, ինչ պատերազմի տարիների երանական անկողնում գտնվելու ժամանակ.

- Ախր ես ինչպե՞ս էս փափուկ անկողին թողնեմ և էքամ-պառկեմ էն պա՞ղ խոռի մեջ:

Անընդգրկելի հավերժության ինչ-որ ընդամենը երեք տարվա մի չնչին ժամանակահատվածում՝ երեք անդառնալի կորուստներ մեր ընտանիքում: Վարազդատ հորեղբայրս իր մատղաշ ու անփորձունակ կյանքը նվիրաբերեց հանուն հայրենիքի հարատևման և ազգայնապաշտ Գերմանիայի ջախջախման: Աղավնի մայրս իր կյանքի լուսաբացին, կյանքի իր ամենածաղկուն շրջանում, զոհ գնաց երկու, այսպես ասած, խնամի ընտանիքների թշնամական հարաբերություններին: Գրիգոր պապս ծնվեց աստվածաստեղծ կենսատու հողից, ողջ էությամբ ու նվիրումով շահեց, պահեց ու պահպանեց իր ընտանիքի գոյությունը, սակայն, ցավոք, քայքայեց, մաշեց ու ավերեց իր առողջությունը և գնաց հանգչելու հավերժի գիրկը:

Հողի՛ց ծնվեցիք և մշտական ու վերջնական հանգրվա՛ն գտաք նրա հյուրընկալ գրկում:

Հո՛ղ էիք, հո՛ղ դարձաք:

Հազա՞ր ողորմի Գրիգոր պապիս, Աղավնի մորս և Վարազդատ հորեղբորս անարա՞տ ու ջի՞նջ հոգիներին:

Այստեղ թույլ տվեք երկու խոսքով ի մի բերելու Գրիգոր պապիս համեստ կենսագրությունը: Ծնվել էր Վանում և շուրջ չորս ու կես տասնամյակ ապրել իր հարազատ ոստանում՝ այնտեղ անցկացնելով և՛ քաղցր ու բերկրալի, և՛ ջանադիր տառապանքներով լի կյանք: Գրիգոր պապս առանձնապես աչքի չի ընկել ո՛չ իր մտավոր ունակություններով, ո՛չ իր հարուստ նյութական կարողություններով և ո՛չ էլ իր հզորությամբ ու սարսափով շրջապատի նկատմամբ, այլ Աստված նրան շնորհել էր բազում բարեմասնություններ. ազնվություն, բարեհոգություն, նվիրվածություն, անաչառություն... Եղել էր շատ պա՞րզ, հասարակ աշխատավոր անձնավորություն: Վանում ապրած վերջին տարիներին պաշտոնավարել էր տեղի օրիորդաց վարժարանում որպես վերակացու: Այստեղ «պաշտոնավարել» բառը խնդրում եմ հասկանալ

որպես «պարտականությունների կատարում», «ռաշխատել» իմաստով, այլ ոչ թե «պաշտոն», «պաշտոնյա», որ ինչպես հիմա է ընկալվում:

Մինչև այժմ ես համեստաբար հարկ չեմ համարել խոսել այն մասին, որ Գրիգոր պապս իր ժամանակին վաստակել էր արդեն իր անձը բնորոշող մի մակդիր, տիտղոս, կոչում, այն է՝ հատուկ անվանը կից նշվող «աղա» մեծարման բառը՝ «Գրիգոր աղա»: Այդպես էին կոչում նրան ոչ այն պատճառով, որ նա մեծահարուստ էր և կամ նշանավոր անձ, ո՛չ, քա՛վ լիցի, այլ ի գնահատումն նրա ազնվության, բարության և հոգու պարզության: Եվ ես քանի որ ապրել եմ նրա հովանավորության և խնամքի տակ, բավարար չափով զգացել ու լիովին ճանաչել նրա մարդկային այդ բոլոր բարեմասնությունները, դրական հատկանիշները, ապա իմ համեստ եզրակացմամբ այդ տիտղոսն արժանի վաստակն էր նրա ջինջ ու առաքինի անձի:

Եկեք այստեղ կրկին վերադառնանք մի հարցի, վերջնական պարզություն մտցնենք նրա մեջ և մեկընդմիշտ վերջ դնենք դրան, քանի որ ինձ համար խիստ տհաճ է այդ թեմայի շոշափումը:

Ուրեմն այսպես, Գրիգոր պապիս այս արժանահավատ տիտղոսը կարծեք մի անբուժելի խոց լիներ՝ խրված Մարանդիզի Ավետիսի, նրա փեսա Վարդգեսի և անգամ նրանց ժառանգորդների չարակամ հոգու մեջ: Թախանձագին խնդրում եմ այս հարցում ինձ ճիշտ հասկանալ և այն չընդունել որպես բամբասանք կամ վրեժխնդրական զգացմունքների արտահայտություն: Ո՛չ երբեք: Բայց և այնպես, Մարանդիզի Ավետիսի և նրա համախոհ ջոկատի բարեատյաց բացահայտ վերաբերմունքը մեր ընտանիքի նկատմամբ փոխանցվել էր նաև նրանց հետնորդներին: Ի ապացույց դրա նշեմ մի փոքրիկ էպիզոդ, զրույց-խոսակցություն՝ տեղի ունեցած իմ և Վարդգեսի որդու միջև: Հարազատական նե՞ղ շրջանակում, համեստ սեղանի շուրջ, նշված անձնավորությունը, օղու մի քանի բաժակ կոնծելուց հետո, չկարողանալով զսպել իր դատարկ ներաշխարհի եռուզեռը, անսպասելիորեն հետևյալ կերպ դիմեց ինձ.

- Մուրադ, մարդիկ քո Գրիգոր պապի ո՞ր արժանիքն էին հաշվի առել, որ նրան «աղա» էին կոչում: Ա՛յ, իսկական աղան հայրս էր, որ քացիով էր բաց անում բարձր պաշտոնյայի առանձնասենյակի դուռը:

Նա անմտորեն և թերգիտակցորեն որքա՞ն ճիշտ բնորոշեց իր հոր վարքագիծը և էությունը:

Ես չհամբերեցի և անմիջապես վրա բերեցի.

- Արժանավոր մարդուն գնահատում են ո՛չ թե իր զորեղությամբ և կամ հարստությամբ, այլ մարդկային իր դրական հատկանիշներով, որով իրո՛ք մեծահարուստ էր Գրիգոր պապս:

Այս պատասխանից նա անակնկալի եկավ և այլևս ոչինչ չասաց:

Աղավնի մորս և՛ մահից առաջ, և՛ մահից հետո ես հաճախակի էի այսպիսի զազրախոս զրույցների մասնակից լինում, զրույց, որի թունավոր նետի սլաքն ուղղված էր մեր ընտանիքի հասցեին: Բայց ամեն անգամ ինձ հանգստացնում էի՝ ասելով. «Ձայն բարբառոյ յանապատի»: Այսպիսի «զրույցների» ժամանակ ես հաճախ էի շեշտում.

- Նրանք իմ ամենամոտ հարազատներն են, իմ հարազատ ընտանիքի լիարժեք ղեկավարները:

Այսպես անցան տարիներ, և ես համարյա կտրեցի շփումներս նրանց հետ:

Ճիշտ է, Մարանդիզի Ավետիսն իմ մորական պապն էր, իսկ Գրիգոր աղան՝ հայրական, սակայն Մարանդիզի Ավետիսին՝ այդ անարժան էակին ինչպե՞ս կարելի էր Գրիգոր պապիս՝ այդ առաքինի ու մաքուր անձնավորությանը, կշեռքի նույն նժարին դնել, համեմատել միմյանց հետ: Ներող եղեք իմ այս խիստ կողմնակալ դիրքավորման համար, որովհետև Գրիգոր պապիս՝ այդ առաքինի անձին, կշեռքի նույն նժարին դնել, համեմատել Մարանդիզի Ավետիսի նման անարժան մեկի հետ, կնշանակի մեղանչել արդարության առջև:

Ահա այս, այսպես ասած, անվանակիր և անանուն պայմանականությունները և այլ նմանատիպ էակներ կանխորոշեցին հետագա իմ դիրքորոշումն այդպիսի «ժարազատների» նկատմամբ:

***

Նույն՝ 1947 թվականի աշնանը վերջապես իրականացավ իմ վաղեմի երազանքը: Ես դարձա աշխատավոր: Աշխատանքի ընդունվեցի Երևան քաղաքի շոգեքարշերի վերանորոգման արհեստանոցում որպես փականագործի աշակերտ: Ինձ համար բացվեց կյանքի ճանաչողության մի նոր, անծանոթ աշխարհ՝ լի անտվոր հոգսերով ու բազում չարչարանքներով, որն սկիզբ դարձավ չափահաս կյանքի իմ նորամուտը ազդարարող հիշարժան ու անմոռաց ժամանակաշրջանի: Ես անսահմա՜ն երջանիկ էի: Չէ՞ որ մտել էի կյանքի նոր աշխարհ՝ լի ապագա լուսավոր հույսերով ու հեռանկարներով:

Անշուշտ չեմ թաքցնում նաև այն իրողությունը, որ կյանքի այդ նոր աշխարհում սկզբնական շրջանում ես ինձ դրսևորում էի մի փոքր անհամարձակ ու կաշկանդված, որը, բարեբախտաբար, շատ կարճ ժամանակաընթացքում հաղթահարվեց, հարթվեց ու անհետացավ: Մի քանի ամիս անց ես արդեն թոթափել էի ինձանից այս բոլոր բացասական երևույթները և լիարժեքորեն անդամը դարձել աշխատանքային այդ ընտանիքի: Իմ վարպետն էր Իրանի Թավրիզ քաղաքից շուրջ մեկ տարի առաջ ընտանիքով Մայր Հայրենիք ներգաղթած մի անձնավորություն: Արամայիս էր նրա անունը: Հետագա մեր զրույցներից պարզվեց, որ նրանք ևս 1915 թվականի տառապյալներից էին: Չարաբաստիկ այդ տարի նրանց ընտանիքը նույպես մի կերպ, մազապուրծ լքել էր իր հայրենի հողը և փախել ու բնակություն հաստատել Իրանի Թավրիզ քաղաքում: Եվս մի անդառնալի ցավ: Կրկին իմ առջև հառնեց վերագաղթական մի նոր հայ ընտանիք: Մտոտիչն այն էր միայն, որ այդ վերագաղթական ընտանիքը վերջապես հայտնվել էր իր հայրենիքում, պատմական Հայաստանի այս փոքրիկ մի հողակտորի վրա, հողակտոր, որ կոչվում էր Խորհրդային Հայաստան:

Մենք՝ ես ու իմ վարպետը, շատ շուտ մտերմացանք միմյանց: Երևի թե իմ հոգու ձայնն արտաբերվում էր նրա հոգու ներդաշնակ լարերից: Թեև ստալինյան բռնությունների ժամանակաշրջանն էր, բայց մենք, գաղտնորեն, շատ հաճախ էինք զրուցում պատմական մեր Հայրենիքի, գաղթի օրերի չարագույժ դեպքերից: Իսկ նա, երբ տրամադրությունը բարձր էր լինում, մեծ գոհունակությամբ խոսում էր Իրանահայ ազգային-եկեղեցական կյանքի մասին, նրա հոգսերից, ներկա կյանքի քիչ թե շատ բարվոք վիճակից: Սակայն

յուրաքանչյուր անգամ չէր մոռանում խոսել իր ծնողների, արյունակից հարազատների, 1915 թվականի նրանց անմոռաց քաջագործությունների մասին: Անսահման հպարտությամբ էր խոսում իր հարազատների այն հատվածի մասին, որոնք այժմ էլ հարում են դաշնակցական կուսակցությանը և պայքարում հանուն մեր ժողովրդի ճակատագրի շտկման և իրավունքների վերականգնման:

Հիշարժան ու անմոռաց օրեր էին դրանք, իմ՝ շոգեքարշերի վերանորոգման արհեստանոցի աշխատանքային գործունեության այդ կարճ ժամանակահատվածը: Ես երկար չաշխատեցի այնտեղ, ընդամենը շուրջ մեկ ու կես տարի, բայց իմ և վարպետիս միջև մտերմական կապը երկա՜ր տարիներ շարունակվեց:

1950-ական թվականների վերջերին անսպասելի տեղեկացա, որ ինձ համար օրինակելի ու հայրենասիրության չափանիշ հանդիսացող այս ընտանիքը մեկընդմիշտ լքել է Մայր Հայրենիքը և մեկնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Ես անակնկալի եկած երկա՜ր ժամանակ չէի հավատում այդ իրողությանը: Ինչպե՞ս կարող էր անհամար հայրենասիրական քաջագործություններ կատարած այդ ընտանիքը, այդ գերդաստանը թողնել իր բնօրրանը՝ Մայր Հայաստանը, և հեռանալ այնտեղից: Ինչևէ, կրկին գաղթականի ցուպն իր ձեռքը վերցրեց մի հայ ընտանիք, մի հայ գերդաստան՝ հետագա իր ճակատագիրն ընդմիշտ կապելով օտար ժողովուրդների քմահաճ վերաբերմունքին:

Դատապարտելի է այն անձը, որը լքում է իր հայրենիքը: Առավել դատապարտելի է նա, ով նպաստում է այդ բացասական երևույթին:

Ինչպե՞ս կարելի է լքել հայ մարդու համար մի բուռ դարձած սրբություն սրբոց այս հողակտորը:



ՍՈՍԱՑԱՐԿՈՒՄ Է ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ

ՆԱԽՈ ՔԵՌԻՆ ՉՊԵՏՔ Է ՄՆԱ ՍՈՍԱՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախո Քեռի Մոկացին (Նահապետ) «Սասունցի Դավիթ» էպոսի նշանավոր ասացողներից է: «Դավիթ եւ Միեր» պատումը, որ հաջորդել է Գարեգին Սրվանձտյանցի 1874 թվականի կատարած առաջին գրառմանը (ասացող՝ Մշո գավառի Առնիստ գյուղի բնակիչ, բանասաց Կրպո), գրի է առել Մանուկ Աբեղյանը 1886-ին:

Նախո Քեռու պատումն իր բովանդակության ամբողջականությամբ եւ գեղարվեստական արժանիքներով էպոսի մեծաքանակ պատումների շարքում համարվում է լավագույններից մեկը: Մ. Աբեղյանը հավաստել է, որ նա ավանդապահ եւ ստուգապատում ասացող էր: Երգում էր նաեւ պատումից հատվածներ, որոնք, լսելով, նոտագրում է մեծն Կոմիտասը:

«Դավիթ եւ Միեր» պատումը, որպես լավագույնը գրառվածների մեջ, փոքր-ինչ համառոտելով, ռուսերեն է թարգմանել Վալերի Բրյուսովը եւ հրատարակել «Հայաստանի պոեզիա» անթոլոգիայում (1916 թ.):

Նախո Քեռին, որպես պատմական անձնավորություն, որպես տաղանդավոր բանասաց եւ ազգային բանահյուսությանը մեծ ծառայություն մատուցած անհատ, համարյա անծանոթ է մեր գրասեր հասարակությանը: Բացի մի քանի կցկտուր տողերից, որ զետեղված են Հայկական հանրագիտարանում, մենք գրեթե ոչինչ չգիտենք նրա մասին: Լուսաբանող գրականություն եւս չկա: Ուստի ես որոշեցի խորանալ նրա կենսագրական անհայտ էջերի մեջ՝ ակնկալելով նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Էջմիածնի քաղաքապետարանի եւ ավագանու, Հայաստանի Գրողների Միության ուշադրությունը:

Նախո Քեռին (Նախո բիծան, Նահապետը) ծնվել է 1851 թ. Արեւմտյան Հայաստանի Մոկք կամ Մոկս գավառի Գինեկաց գյուղում: Տավրոսյան լեռնաշխարհում ծնված, բացառիկ հիշողությամբ օժտված Նահապետը դեռ վաղ մանկությունից ըմբոշխնում է ժողովրդական բանահյուսության բառն ու բանը, ազգագրական երգերի յուրաքանչյուր մեղեդին ու հնչյունը, իսկ Սասունում ծնունդ առած էպոսի դրվագները, հերոսական պատումներն ասես դաջվում են նրա մտքի ու հիշողության պատերին՝ հետագայում վերարտադրվելով նույնպիսի ստուգությամբ ու կատարելությամբ: Նրա մտաէջերից երբեք չեն ջնջվում մեկ անգամ լսած զրույցները, հեքիաթները, ժողովրդական բանավոր մյուս ստեղծագործությունները: Կարիքն ու զրկանքը, ընչազրկությունը թույլ չեն տալիս նրան կրթություն ստանալ, դեռ ավելին՝ կարիքից ստիպված, սրտի մրմուռով հրաժեշտ է տալիս հարազատներին ու չքնաղ

ծննդավայրին եւ հանգրվան գտնում էջմիածնում: Նահապետը Մայր Աթոռ է գալիս լեռնականի իր ազգագրական տարազով. Սասունում եւ Շատախում գործածվող լայն տաբատով, այծի մորթուց կարված կարճաթեւ աբայով, հաստ գոտիով: Այն ժամանակ Գեւորգյան ճեմարանի նկարչության ուսուցիչ, հետագայում մեծանուն գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցը հենց այդ տարազով էլ նկարել է Նախո Քեռուն (տես էջի նկարը, բնօրինակը պահվում է Հանրապետության պետական պատկերասրահում): Նախո բիձան էջմիածին է մտնում դատարկածեռն, սակայն հարուստ՝ իր մեջ ամբարած ժողովրդական զրույցներով ու ավանդապատումներով, մեր ժողովրդի պատմության հերոսական էջերով առլեցուն ու անսպառ հեքիաթներով: Այստեղ՝ էջմիածնում, նա աշխատում է որպես դոնապան եւ հենց առաջին իսկ օրվանից, իր հարուստ իմացությամբ, պարզությամբ ու պարտաճանաչությամբ, սիրվում թե՛ ճեմարանի սաների եւ թե՛ դասախոսների կողմից:

Մանուկ Աբեղյանի վկայությամբ, 1886 թ., երբ գրի էր առնում «Դավիթ եւ Միհր» պատումը, Նախո Քեռին մոտ 35 տարեկան էր: Երախտաշատ հայագետի՝ ասելով, նա պատմել է այն մեծ խանդավառությամբ, որոշ հատվածներ՝ երգելով: Նահապետը էպոսի դրվագները լսել է տարբեր սասունցիներից: Ըստ նրա, իր ծննդավայրում կար մեկը, որ անգիր գիտեր էպոսի 40 ճյուղը: Հայտնի բանասացի մասին գրավոր տեղեկությունը վերջակետվում է 1915 թվականով (տապանաքարի վրա արձանագրված թիվն է): Նախո Քեռու մասին ես գիտեի այսքանը: Սակայն մի առիթով աներոջս Հովհաննեսի հետ եղա էջմիածնի գերեզմանատանը, ուր հանգչում էր նրա հարազատը: Հոգեհանգստյան արարողությունից հետո նա իմ ուշադրությունը հրավիրեց մի տապանաքարի վրա: Այն անշուք, սովորական չափերին անհամապատասխան մի շիրմաքար էր եւ դժվարությամբ էր ընթերցվում վրայի գրությունը. «Նախո Քեռի: Ծնված 1851 թ., մահացած 1915 թ.»:

-Դու բանաստեղծ ես, Նախո Քեռուն պիտի լավ իմանաս, իսկ նա մեր արյունակիցն է: Էջմիածին է եկել ինձնից ու եղբորիցս առաջ: Ես ու Խաչիկը Նախոյի եղբոր՝ Մխիթարի թոռներն ենք: Ես գիտեմ նաեւ նոր տեղեկություններ: Մոկաց Գինեկաց գյուղից երբ նրանք գաղթում են, բոլորի նման իրենք եւս ճանապարհին ունենում են մեծ կորուստներ: Իրենց պապը՝ Մխիթարը, հոգեվարքի մեջ, կարողանում է շշնջալ. «Տղա Թումո, լաճերին կտանես Նախոյի մոտ, Վաղարշապատ»: Երբ նրանք հասնում են էջմիածին, Նախո Քեռին արդեն մահացած է լինում: Իրենց տոհմի պատմությունը ժամանակագրական կարգով Խաչիկ Ասլանյանը գրի է առել, ինչպես նաեւ կազմել տոհմածառը: Նախո Քեռին ունեցել է երեք դուստր՝ Ալմաստը, Սիսեն եւ Դիլբարը: Ալմաստն ամուսնացել է, սակայն հայտնի չէ, թե ու՞ր է գնացել: Սիսեն եղել է հաշմանդամ եւ գաղթի տարիներին մահացել անհայտության մեջ: Դիլբարը ես Հայրենիք չի հասել:

Նախո Քեռու մատուցած անուրանալի ծառայությանը, նրա կերպարին իր «Անլռելի զանգակատուն» պոեմի «Ողողանք նվաճման» գլխում անդրադարձել է սիրված եւ մեծանուն բանաստեղծ Պարույր Սեւակը՝ ավելի քան 80 տողերով, որոնք եզրափակվում են այսպես.

Նախոյի մտքով ինչպե՞ս անցկենար,
Թե միշտ հիշվելիս՝ ինքը՝ խեղճ քեռին
Կկանգներ կողքին ինչ-որ Վագների:
Այո, Վարդապետ, վիզը ծռելով՝
Այդ խեղճ ու կրակ անգրագետ քեռին
Կողքից էր նայում գոռոզ Վագներին
Եվ պահանջում էր,
Թե՞ աղաչում էր,
Որ դու քո զորեղ Սասնա ծռերով
Խրատես նրա նիբելունգներ-ին:

«Սասնա ծռեր»-ի մասին հիշատակությունը գալիս է հի՜ն-հին դարերից եւ մեզ է հասել տաղանդավոր ու շնորհալի ասացողների շնորհիվ: Նրանք չպետք է մոռացվեն: Հատկապես նրանց կատարած մեծագործությունը պետք է փոխանցվի գալիք սերունդներին: 1962 թ., անվանի էպոսագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանի նախաձեռնությամբ, շիրմաքար-հուշարձան է կանգնեցվել մեկ ուրիշ բանասացի՝ Թորոյենց Մանուկի հիշատակին, Երեւանում: Այդ գեղեցիկ նախաձեռնությունն իրականացրել են Հայաստանի Գրողների Միության վարչությունը եւ Երեւանի քաղաքապետարանը: Ի դեպ, Նախո Քեռու գերեզմանի եւ շիրմաքարի մասին գիտեն ընդամենը մի քանի մարդիկ: Ժամանակին Հայաստանի Հանրապետության վաստակավոր ուսուցիչ Հայկ Դանղյանի հետ մենք այս հարցը բարձրացրել ենք, սակայն, ինչպես ասում են, սայլը տեղից չի շարժվել: Իսկ գերեզմանին շիրմաքար-հուշարձան ունենալու իրավունքը տաղանդավոր բանասաց Նախո Քեռին իրավամբ եւ անվերապահ վաստակել է:

Անհարգի մոռացության քողը պե՛տք է բարձրացվի եւ ըստ արժանվույն գնահատվի «Սասնա ծռեր»-ի երկրորդ գրառման ասացողը եւ Սասնո աշխարհի մեծ բանասացը:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ
ՀՀ Գրողների եւ Ժուռնալիստների
Միությունների անդամ

ՄԱՏԵՆԱՏԱՐԱՆ
ԹԻ ՄԱՏԵՆԱՐԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄ

Հոկտեմբերի 28-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում Ռուսաստանի Հումանիտար գիտությունների ակադեմիայի առաջին փոխնախագահ Ֆյոդոր Ստերլիկովը ակադեմիայի անդամության դիպլոմ հանձնեց Մայր Աթոռի դիվանապետ Գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին:

Ռուսական այս ակադեմիան 1997 թվականից իր մասնաճյուղն ունի նաև Հայաստանում, որի նպատակն է խթանել երկրի հոգևոր-մշակութային, քաղաքական և տնտեսական զարգացմանը, նպաստել Հայաստան-Ռուսաստան կապերի ամրապնդմանը: Հումանիտար գիտությունների հայաստանյան մասնաճյուղի իսկական անդամներ են շուրջ 40 գիտնականներ և 13-ը՝ թղթակից անդամներ:

Նույն օրը պրն. Ստերլիկովը ակադեմիայի անդամության տոմսեր հանձնեց ևս 13 գիտնականների:

Իր երախտիքի խոսքում Սրբազան Հայրը կարևորեց հայ-ռուսական կապերի ամրապնդումը, ներկաներին մաղթեց գիտակից նվիրվածություն այդ կապերի ամրացման գործին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՕԾՈՒՄ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄՈՒՄ

Ժ-ԺԱ դարերում Անիի հյուսիսային արվարձանում, Սմբատյան պարիսպներից դուրս, Ավագ դռնից 1,5 կմ հեռավորության վրա, կառուցվեց, Թորոս Թորամանյանի որակմամբ, *միջնադարյան հայ ճարտարապետության պսակը՝* Հովվի եկեղեցին, «*որն իր նախորդը չունենալեն զատ, իր հետնորդը հազիվ ունեցավ 15-րդ և 16-րդ դարերու գոթական արվեստին մեջ, այն ալ փայտի և երկաթի աջակցության շնորհիվ*»: Ըստ ավանդության, այս եկեղեցին կառուցեց մի հովիվ՝ Ս. Գրիգոր լուսավորիչ տաճարի նմանությամբ, որպեսզի արքայական փառաշուք տաճարում աղոթելու անարժան համարված իր կինն այդտեղ աղոթի:

Անիի Հովվի եկեղեցին

Աստղաձև հատակագծով ու եռահարկ ծավալա-տարածական հորինվածքով փոքր չափերի այդ եզակի շինության առաջին հարկը դամբարան էր, իսկ երկրորդ հարկում գտնվում էր Ս. Պատարագի սեղանը:

Երկու բոլորակ աստիճաններով խարիսխի վրա տեղադրված եկեղեցու հատակագիծը մի բարդ գծանկար էր. վեցթև աստղը ներգծված էր 12 եռանկյունաձև և վեց կիսաշրջան որմնախորշերով՝ կտրված արտաքին պարագծի մեջ: Երկրորդ և երրորդ հարկերի ողջ ծանրությունն իրենց վրա էին կրում վեց սլացիկ որմնապուռնախուրձերից դեպի կենտրոն ձգվող, առանց հենարանի, կախովի վեց կիսակլոր ջլակամարները, որոնց կրունկները, խտանալով, կենտրոնում ամրացված էին երկարաձիգ փականային քարով: Եվ նման հիացմունք առաջացնող կոթողը հիմնովին ավերվել է 1970 թվականին:

Սակայն նմանօրինակ կառույցները վերացման ենթակա չեն: Աստվածային նախախնամությունը տնօրինեց այնպես, որ հայ ճարտարապետական մտքի գլուխգործոցներից այս մեկը վերածնվի, կրկին վեր հառնի ու նորովի զարմացնի հավատավոր ժողովրդին: Բայց այս անգամ արդեն ոչ թե Անիում, ոչ թե գերության մեջ, այլ մեր ազատ ու անկախ Հայրենիքում:

Շուրջ հինգ տարի առաջ Հրազդանի Վանատուր թաղամասի բնակիչ Ռուբիկ Գալստյանը ձեռնամուխ եղավ Հովվի եկեղեցու ճիշտ կրկնօրինակի կառուցմանը: Նոր եկեղեցին չի տարբերվում հնից ոչ մի բանով: Այստեղ պահպանված են բոլոր համաչափությունները, որ տալիս է Թորոս Թորամանյանը: Իր այս նոր վայրում մատուռ-դամբարանն ամբողջովին ձուլվում է շրջապատի հետ և դառնում նրա այլևս անբաժանելի մասնիկը:

Սրբազան Հոր խոսքը օծման ժամանակ

Հոկտեմբերի 24-ին Կոտայքի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանը կատարեց նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը և այն անվանեց Սուրբ Խաչ: Օծման արարողությանը ներկա էին հոգեշնորհ Տ. Միքայել Ծ. վրդ. Աջապահյանը, ներքին թեմերից ժամանած հոգևորականներ, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև մեծաթիվ հավատացյալներ:

Հավարտ օծման արարողության, բարերար Ռուբիկ Գալստյանին իր շնորհակալանքի ու օրհնության խոսքն ուղղեց գերաշնորհ Սրբազան Հայրը՝ հույս հայտնելով, որ նրա կատարածը պիտի ընդօրինակելի լինի նաև բոլոր նրանց համար, ովքեր հնարավորություն ունեն նման ազգապահպան ու հայանվեր գործ կատարելու: Թեմական առաջնորդը նաև շնորհավորեց ներկա հավատացյալներին այդ ուրախ առիթով՝ հիշեցնելով, որ ցանկացած հավատի տուն կենդանի է իր հավատացյալներով: Որքան լեցուն է տաճարը եկեղեցական արարողությունների ժամանակ, նույնքան ապրումով ու աստվածային ներշնչումով է առաջ ընթանում տվյալ հավատավոր հոտը լույսի ու ճշմարտության միակ ու անխոտոր ճանապարհով:

Առաքել Սրբազանի խոսքից հետո, հավաքված բազմությանը, հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, շնորհավորանքի խոսք հղեց հոգեշնորհ Տ. Միքայել Ծ. վրդ. Աջապահյանը՝ նշելով, որ թեև առողջական վիճակի պատճառով Նորին Սրբությունն այժմ բացակայում է Հայաստանից, բայց տեղյակ է այստեղ՝ ներքին թեմերում կատարվող իրադարձություններին և այսօր, օվկիանոսից այն կողմում լինելով, կիսում է Հրազդանի հավատավոր բնակիչների ուրախությունը:

Այնուհետև նորաշեն եկեղեցու բակում Զարենցավան քաղաքի հոգևոր

ԿՈՏԱՅՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

հովիվ Տ. Իսահակ քհն. Մարգարյանը մկրտեց շուրջ երեսուն նորադարձների: Միսական արարողություններից հետո, ներկա հավատացյալներին տրվեց սիրո ճաշ:

***

Հոկտեմբերի 25-ին մեծ ցնծություն էր տիրում Աբովյանի շրջանի Կոտայք գյուղում: Այդ օրը՝ Գյուտ Խաչի տոնին, վերաբացվեց գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին, որ կառուցվել է 1886 թվականին և խորհրդային «աստվածամարտության» տարիներին վերածվել էր ցորենի ամբարի:

Շնորհիվ գյուղի երկու գյուղապետերի՝ Աշոտ Բաբայանի և նրան հաջորդած Գրիշա Թադևոսյանի, կատարվեց եկեղեցու մասնակի նորոգումը. վերակառուցվեց Սեղանը և նորոգվեց մկրտության ավազանը: Թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանի ջանքերով վերակառուցվեց նաև եկեղեցու զանգակատան կաթողիկեն:

Օրվա առաջին կեսին, ժամը 11.00-ին, գյուղ ժամանեցին թեմական առաջնորդ Սրբազան Հայրը, Մայր Աթոռի միաբաններ Տ. Միքայել Ծ. վրդ. Աջապահյանը, Տ. Վրթանես վրդ. Աբրահամյանը, Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ: Գյուղացիները ցանկալի հյուրերին դիմավորեցին ավանդական աղ ու հացով:

Այնուհետև «Հրաշափառ»-ի երգեցողությամբ Սրբազան Հայրը մուտք գործեց եկեղեցի, և սկսվեց օծման հանդիսավոր արարողությունը, հավարտ որի նորաօծ եկեղեցում մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ: Օրվա պատարագիչն էր Աբովյան քաղաքի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Աբրահամ ավագ քհն. Մարգարյանը:

Հընթացս Պատարագի, «Հայր մեր»-ից առաջ, հավուր պատշաճի քարոզ խոսեց առաջնորդ Սրբազանը՝ ներկա հավատացյալներին հղելով նաև իր օրհնության ու շնորհավորանքի խոսքերը: Նա նշեց, որ իր մեջ մեծ խորհուրդ ունի եկեղեցու օծումը Գյուտ Խաչի տոնի օրը, որովհետև այս եկեղեցին դարձավ Կոտայք գյուղի բնակիչների համար վերագտնված սրբություն: Սրբազան Հայրը շնորհակալություն հայտնեց գյուղապետ Գրիշա Թադևոսյանին՝ եկեղեցուն աջակցելու համար:

Ապա հավաքվածներին, հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, շնորհավորանքի և օրհնության խոսք ասաց Տ. Միքայել Ծ. վրդ. Աջապահյանը՝ շեշտելով, որ եկեղեցու վերաբացումը դեռ չի նշանակում, թե ներկաները դարձան քրիստոնյա: Հոգեշնորհ Հայր Սուրբը ժողովրդին բացատրեց, թե որն է ճշմարիտ քրիստոնյան, նրա պահվածքն ու կոչումը, աղոթելու ինքնամփոփ վիճակի մեջ լինելու նշանակությունը:

Այնուհետև խոսեց պատարագիչ Տեր Հայրը՝ միաժամանակ

հիշեցնելով, որ այս եկեղեցու հերոս քահանա Տեր Զաքարի հորդորմամբ ու առաջնորդությամբ շրջանի բնակիչները մասնակցեցին Սարդարապատի հերոսամարտին:

Սուրբ և անմահ Պատարագին ներկա էին մարզպետարանի և գյուղապետարանի ներկայացուցիչներ, մեծաթիվ հյուրեր, ինչպես նաև գյուղի ողջ բնակչությունը:

Հավարտ Պատարագի, ավանդական դոլ զուռնայով ևս նշվեց օրվա մեծ խորհուրդը: Կատարվեց նաև մատաղի օրհնություն և տրվեց սիրո ճաշ:

Համայնքի ու հոգևոր կյանքի կազմակերպման համար կարևոր պայման է աղոթքի տան առկայությունը: Նշանակում է, թե ճանապարհի կեսն անցած է. քարեղեն կառույցը կա: Իսկ մենք՝ պարզ հավատացյալներս համոզված ենք, որ Աստծո կամոք շատ շուտով այն կփոխարկվի հոգեղեն կառույցի, և աղոթքի ու հոգևոր արարողությունների ջերմ շնչով կտրոփի յուրաքանչյուր հայորդու սիրտը:

ՎԱՀԵ ԴՊԻՐ ԲԵԳՈՅԱՆ

«ՇՈՂ ՄԸ ՄԱՇՏՈՑԻ ԼՈՒՅՍԵՆ»

ՕՇԱԿԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՍԲ. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԴՊՐԱՏՈՒՆԸ

Կիրակի, հոկտեմբերի 18-ին, Արագածոտնի թեմի հոգևոր կենտրոնում՝ Օշականում, հավարտ Սբ. Պատարագի, տեղի ունեցավ Սբ. Մեսրոպ Մաշտոց Դպրատան հանդիսավոր բացումը:

Դեռևս 1995 թ., առաջին անգամ այցելելով Օշական, Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսն ուխտեց բարեկարգել Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հարակից տարածքը: Եվ ահա վերակառուցված են դարասկզբին կյանք առած շինությունները: Մեկ տարի առաջ կատարվեց առաջնորդարանի շենքի բացման հանդիսավոր արարողությունը: Իսկ հինավուրց ծխական դպրոցի հիմնովին վերանորոգված շենքն այսուհետ կծառայի որպես Սբ. Մեսրոպ Մաշտոցի հիշատակին նվիրված Դպրության տուն:

Դպրատունը բացում է դռները

Ի թիվս թեմի առաջնորդ Գրշ. Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբանության անդամների ու բազմաթիվ հյուրերի, հանդիսությանը ներկա էր նաև ամերիկահայ բարերար «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանակիր Ջիվան Կոբոյանը, որի նվիրատվությամբ էլ իրականացվել են Դպրատան վերկառուցման աշխատանքները: Ներկա էին նաև Կոբոյան գերդաստանի անդամները, ինչպես նաև Ջիվան Կոբոյանի որդին՝ նույնպես բարերար Ջուլիա Կոբոյանը:

«Նորին Սրբությանն ենք երախտապարտ մեր ժողովրդին ընծայված այս փառահեղ նվերի համար և պարտ ենք այսօր Տեր Աստծուց

ապաքինում ու արևշատություն խնդրելու Հայոց Հոր համար, աղոթելու, որ, շուտափույթ անցկացնելով կազդուրման շրջանը, Նորին Սրբությունը վերադառնա Մայր Աթոռ Սբ. Էջմիածին՝ու, կրկին այցելելով իր սիրելի Օշական, Հայրապետական մաշտոցաշունչ օրհնության խոսքն ասի ամենքիդ արևշատության համար», – բացման խոսքում ասաց Դպրատան վարիչ-տնօրեն Ալֆրեդ Շահնազարյանը:

Վեհափառ Հայրապետի մտահղացմամբ Դպրատունը լինելու է գիտա-մշակութային կենտրոն: Դպրատանը կիրականացվեն Սբ. Մեսրոպ Մաշտոցի ժառանգությանը նվիրված գիտական աշխատանքներ, կկազմակերպվեն գիտաժողովներ ու ցուցահանդեսներ, Դպրատունը կդառնա գրադարանային, թանգարանային, կրթական, հայագիտական, մասնավորապես՝ Մաշտոցագիտական ուսուցման, հանդեսների և արարողությունների կենտրոն: Ժամանակի ընթացքում նախատեսվում է այստեղ ի մի բերել Սբ. Մեսրոպ Մաշտոցի, Սբ. Սահակ Պարթևի և մեր մյուս Թարգմանիչ Վարդապետների, ոսկեդարյան մշակույթի և, առհասարակ, Սբ. Մեսրոպ Մաշտոցի ժառանգությանը նվիրված գիտական և գրական աշխատությունները, հրատարակությունները ու հոդվածները:

Ինչպես տեղեկացրեց պրն. Շահնազարյանը, Դպրատունն ունի իր գիտական խորհուրդը, որտեղ ընդգրկված են ճանաչված հայագետներ: Արդեն իսկ տեղի են ունեցել բարձր մակարդակի գիտաժողովներ, իսկ յուրաքանչյուր տարի նախատեսվում են նաև «Մաշտոցյան ընթերցումներ»: Նախատեսվում է նաև հրատարակել «Ոսկեդար» տարեգիրքը և այլ գրքեր:

Պրն. Շահնազարյանը տեղեկացրեց, որ, անսալով Վեհափառ Հայրապետի հայտնի կոչին, Դպրատանը նյութական ու բարոյական օգնությամբ սատարել են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը, Հայաստանի Ազգային գրադարանը, Գիտությունների Ազգային Ակադեմիայի հումանիտար հաստատությունները, Ազգային պատկերասրահը, Պետական արխիվը, Երևանի պետական համալսարանը, ՀՀ Նկարիչների, Կոմպոզիտորների և Գրողների միությունները, այլ կազմակերպություններ: Դպրատանը իրենց ստեղծագործություններն ու անձնական գրադարանների գրքերն են ընծայել մշակույթի և գիտության հայտնի գործիչներ: Արդեն իսկ ձեռք են բերված 4000 հատոր հայագիտական գրքեր՝ հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով:

Դպրատան տնօրենը առանձնացրեց քանդակագործ Ղուկաս Չուբարի նվիրատվությունները: Քանդակագործի «Մովսես Խորենացի», «Անանիա Շիրակացի», «Թորոս Ռոսլին», «Կոմիտաս» քանդակները, «Մաշտոց և Կորյուն» արձանախումբը արժանացել են Վեհափառ Հայրապետի հիացումին:

Դպրատան բացման առթիվ ողջույնի խոսք ասացին նաև պատմաբաններ Պարույր Մուրադյանն ու Էդուարդ Դանիելյանը, Ազգային

պատկերասրահի տնօրեն Շահեն Խաչատրյանը, քանդակագործ Ղուկաս Զուբարը: Արագածոտնի մարզպետ Հրայր Կարապետյանը, իր գոհունակությունը հայտնելով մարզում գիտական-մշակութային խոշոր կենտրոնի բացման առիթով, ներկաներին փոխանցեց Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի շնորհավորանքները:

Թեմի առաջնորդ Նավասարդ Սրբազանը Դպրատան բացման մասնակիցների անունից ընթերցեց Վեհափառ Հայրապետին ուղղված հեռագիրը, ապա՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ ամերիկահայ բարերար Ջուլիա Կոբոյանին Հայ Առաքելական Եկեղեցու բարձագույն պարգևով՝ «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին: Տիկին Կոբոյանի ներկայությամբ կկառուցվի Երևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու սբ. Խորանը: Շքանշանը բարերարուհուն հանձնվեց ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի:

Հատվեց ժապավենը, և ներկաները մուտք գործեցին գեղեցիկ, զուսպ ու ճաշակով վերակառուցված ու կահավորված Դպրատուն: Այստեղ թանգարանային բաժնում, մինչ հիմնական ցուցադրության ամբողջացումը, ՀՀ Մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարարի աջակցությամբ հանդիսության առիթով բացված էր Ազգային պատկերասրահի հավաքածուների ժամանակավոր ցուցահանդեսը: Ցուցադրված շուրջ 80 նկարիչների ստեղծագործությունները ներկայացնում են եկեղեցական մշակույթն ու մեսրոպյան ժամանակաշրջանը:

Արդարև, ինչպես նշեց պրն. Շահնազարյանը, Դպրատունը կդառնա Սբ. Մեսրոպ Մաշտոցի անունն ու մեծագործությունը փառաբանող, կենդանի ապրող ու շնչող հոգեմտավոր մի համազգային կենտրոն: Եվ, ինչպես Վեհափառ Հայրապետն է Օշականի մասին գրում «Մաշտոցաշունչ» գրքում, «*Եկել ենք Մաշտոցի լույսեն շող մը կաթեցնելու մեր հոգիներուն մեջ: Ոչ ոք իրավունք ունի այստեղ այցելելու և մեկնելու այստեղեն այնպես, ինչպես էր եկել: Սուրբ Մեսրոպ Մաշտոցով այցելված հայը իր ինքնության և արժանապատվության զգացումին, ինքնըմբռնումին մեջ կզորանա, կգեղեցկանա, կհագեցնա*»:

Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՅՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄՄԱՆԻ ՄԷՋ

Տ. ՎԱՀԱՆ ԵՊՍ. ԹՕՓԱԼԵԱՆ ԿԸ ՍՏԱՆԱՅ ԱՐՔՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Ցորդանանի մայրաքաղաք Ամմանի տեղական Ազգային Խորհուրդի եւ մշակութային, մարզական եւ բարեսիրական միութիւններու գործակցութեամբ տեղի Ս. Թադէոս եկեղեցւոյ կառուցման երեսնամեակը եւ Պատրիարքական Փոխանորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Թօփալեանի քահանայական ձեռնադրութեան 35-ամեակը վերջերս նշուեցան հանդիսութիւններու շարքով մը:

Վերոնշեալ հանդիսութիւններուն հրաւիրուած էին Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն՝ Գերշ. Տ. Նաւասարդ եպս. Կճոյեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն՝ Գերշ. Տ. Վարդան Եպս. Տէմիրճեան, Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն՝ Հոգեշ. Տ. Արամ Վրդ. Աթէշեան, ինչպէս նաեւ Եգիպտոսի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Արք. Չինչինեան:

Ցոբելեանական հանդիսութիւններու շարքին՝ Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Թորգամ Արք. Մանուկեան կատարեց Ս. Թադէոս եկեղեցւոյ նորոգուած Խորանին եւ Մկրտարանին օծումը: Ապա պատարագեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ս. Պատարագին ներկայ գտնուեցան քոյր Եկեղեցիներու բարձրաստիճան հոգեւորականներ: Ցընթացս Ս. Պատարագի, քարոզեց Պատրիարք Սրբազանը եւ կարդացուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ Կոնդակը, որուն մէջ Վահան Սրբազանին կը շնորհուէր Արքութեան աստիճան:

«ՋԱՀԱԿԻՐ» կահիրէ
12.11.98

ՔԱՀԱՆԱՅԵԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՂԱՐԻ ՏԻԶՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

21 եւ 22 Նոյեմբեր 1998ին Քէօլնի Առաջնորդանիստ Ս. Սահակ-Մեսրոպ Մայր եկեղեցւոյ մէջ անընախընթաց բազմութեան մը ներկայութեան տեղի ունեցաւ Բարեշնորհ Ցակոբ Սրկ. Նալպանտեանի կուսակրօն քահանայութեան ձեռնադրութիւնը՝ ձեռամբ Գերմանիոյ Հայոց Առաջնորդ Տ. Գարեգին Արքեպս. Պեքճեանի:

Արարողութիւնները սկսան 21 Նոյեմբեր 1998ին՝ երեկոյեան ժամերգութեամբ: Կոչման արարողութենէն յետոյ յաջորդ օրը՝ 22 Նոյեմբեր 1998ին Առաջնորդ Սրբազանը մատոյց Ս. Պատարագ՝ առընթերակայութեամբ Տ. Անուշաւան Աբեղայ Ժամկոչեանի եւ Տ. Միւռոն Քհնյ. Սարգիսեանի:

Ցընթացս Ս. Պատարագի, կատարուեցաւ ձեռնադրութիւնն ու օծման արարողութիւնը, և Ցակոբ Սրկ. Նալպանտեան վերանուանուեցաւ Տ. Արմաշ Աբեղայ: Խարտավիլակի պաշտօնը ստանձնած էր Տ. Սերովբէ Վրդ. Իսախանեան՝ Հիւսիսային Գերմանիոյ հայ համայնքներու Հոգեւոր Հովիւը:

Այս հոգեպարար արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին սարկաւագներ եւ հրաւիրեալ դպիրներ, եւ Ս. Պատարագը քառաձայն երգեց տեղւոյն «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ Արէթ Պեքճեանի:

Ներկաներուն մէջն էին Տ. Արմաշ Աբեղայի մայրը՝ տիրամայր Նուարդ Նալպանտեան, կնքահայրը՝ տիար Պերճ Օգութեան, եւ նրա տիկինը՝ Մարի Օգութեան, ՀՀ դեսպանութեան ներկայացուցիչներ, Գերմանահայ միութիւններու ներկայացուցիչներ, Տ. Արմաշ Աբեղայի համալսարանական դասընկերները՝ թուով 26 ուսանողներ, որոնք կու գային տարբեր երկրներէ (Ինչպէս Պուլկարիա, Ռումանիա, Սուրիա, Լիբանան, Լեհաստան, Չեխիա, Սլովաքիա, Հայաստան, Ռուսաստան եւ այլ երկրներէ), դասախօսը՝ աստուածաբանութեան տօքթ. Մարթին Մայզէր, բողոքական քահանայ Միխայէլ Հիւպնէր, ինչպէս նաեւ քոյր Եկեղեցւոյ հիւր հոգեւորականներ:

Ցաւուր պատշաճի քարոզեց պատարագիչ Սրբազան Հայրը: Առաջնորդ Սրբազան Հայրը անդրադարձաւ, որ նոյն օրը Կոստանդնուպոլսոյ Պատրիարքարանի Մայր տաճարին մէջ իր անդրանիկ Ս. Պատարագը կը մատուցանէ նորընտիր Պատրիարք Տ. Մեսրոպ Արքեպս. Մութաֆեան, իսկ Գերմանիոյ Թեմի Մայր տաճարին մէջ տեղի կ'ունենայ ձեռնադրութիւնը նախկին Ցակոբ Սարկաւագի՝ ներկայ Արմաշ Աբեղայի:

Սրբազանը նշեց, թէ այս երկու արարողութիւններու մէջ սերտ կապակցութիւն մը կայ: Արմաշ՝ Թուրքիոյ մէջ գտնուող Իզմիթ քաղաքին մօտակայքի, ներկայիս Աքմէշէ կոչուող գիւղի նախկին հայկական անունն է: Այդ գիւղին մէջ էր յայտնի Արմաշու վանքը, որ Հայ Եկեղեցիին տուաւ շնորհալի եւ ուսեալ կուսակրօն հոգեւորականներ, ինչպէս՝ Բաբգէն Կաթողիկոս Կիլէէրեան, Թորգոմ Արքեպս. Գուշակեան, Գարեգին Արքեպս. Խաչատուրեան եւ տակաւին 25-է աւելի զարգացած ու մեծանուն եկեղեցականներու փաղանգ մը, որ թրծուեցաւ Մաղաքիա Արքեպս. Օրմանեանի եւ Եղիշէ Արքեպս. Դուրեանի շունչով: Այսօր գոյութիւն չունի Արմաշու վանքը, սակայն պատմութիւնը կը վկայէ, թէ ինչպիսի հոգեւորականներ տուած է մեզի այս վանքը: Մեր Եկեղեցին պէտք ունի այսօր Արմաշու վանքէն շրջանաւարտ հոգեւորականներու նման կուսակրօն հոգեւորականութեան: Աստուածային մեծագոյն շնորհք մը կար անոնց մէջ, եւ այդ Արմաշեան շնորհքը տեսնելով վերջին հինգ տարիներու ընթացքին մեր նորաւոր Արեղային մէջ, Սրբազան Հայրը անոր անուանեց Արմաշ՝ հաւատալով, որ իրմով պիտի վերածնի Արմաշեան ոգին մեր եկեղեցիներէն ներս: Թող Աստուած օգնական ըլլայ մեր Արեղային՝ հովուելու իրեն յանձնուած հօտը: Սրբազան Հայրը, շնորհաւորելով Գերմանահայոց թեմի ժողովուրդն ու համայնքները, տիրամայրն ու նորաւոր Արեղան, վերյիշեցուց օծեալ Արեղային կուսակրօն քահանայի մը ժողովուրդին ծառայելու պարտականութիւնները՝ հաւատարիմ մնալով հոգեւոր կանոններուն՝ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ:

Արմաշ Արեղայ Նալպանտեան հինգ տարիներ առաջ եկեր էր Գերմանիա իբրեւ ուսանող Առաջնորդ Սրբազան Հօր հրաւէրով, Ս. Էջմիածնի Գեւորգեան Ճեմարանը աւարտելէ յետոյ: Հայր Սուրբը թէեւ պիտի շարունակէ իր աստուածաբանական ուսումը, սակայն պիտի ծառայէ նաեւ թեմին մէջ իբրեւ շրջուն հովիւ մինչեւ իր ուսման վերջնական աւարտը: Ապա ան պաշտօնապէս պիտի կոչուի հովուական ծառայութեան:

Ս. Պատարագի աւարտին նորընծայ Արմաշ Արեղային ի պատիւ, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը՝ Մայր եկեղեցւոյ վարչութեան կազմակերպութեամբ: Տիկնանց ու երիտասարդաց յանձնախումբերու անթերի սպասարկութեամբ հիւրասիրուեցան ներկաները, այս ընթացքին շնորհաւորական խօսք առին Թեմական խորհուրդի անունով ատենապետ տոքթ. Սարգիս Քէհեաեան, Մայր եկեղեցւոյ վարչութեան ատենապետ տիար Գրիգոր Սաղլամէր, օրուան առթիւ նորընծայ Հայր Սուրբին մայրը՝ Նուարդ Նալպանտեան ամփոփեց Վահան Թէքէեանի «Եկեղեցին Հայկական» բանաստեղծութիւնը, ապա ներկաները, անձամբ շնորհաւորելով, իրենց նուէրները յանձնեցին Արմաշ. Արեղային:

Նոյն օրը, երեկոյեան ժամերգութենէն ետք, կատարուեցաւ վեդարի տւչութեան արարողութիւնը՝ ձեռամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

Գերմանիոյ գաղութի մէջ մինչեւ այսօր կատարուած առաջին քահանայական ձեռնադրութիւնն էր այս, որ տեղի ունեցաւ անանախընթաց բազմութեան մը ներկայութեան: Գերմանիոյ Հայոց Առաջնորդութիւնը տակաւին ունի ուրիշ թեկնածուներ ալ, որոնք կը պատրաստուին յաջորդաբար ձեռնադրուելու եւ ստանձնելու հայ համայնքներու հովուական ծառայութիւնը: Առաջնորդութիւնը այս ձեռնադրութիւններով կը միտի հարստացնել թեմի հոգեւոր կեանքը եւ աւելի կանոնաւորել եկեղեցական գործունէութիւնը պատրաստուած, ուսեալ ու զարգացած հոգեւորականներով:

Նորընծայ Արմաշ Աբեղայ իր քառասնօրեայ ապաշխարութիւնը կ'անցնէ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայրավանքը, ուրկէ ստացած է իր հոգեւոր առաջին սնունդը:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

23 ՆՈՅԵՄԲԵՐ 1998

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԱՇ ԱԲԵՂԱՅ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ

Ծնած է 29 Յունուար 1973ին, Սուրիոյ հայաշատ Հալէպ քաղաքին մէջ: Նախնական կրթութիւնն ստացած է տեղւոյն Կիլիկեան վարժարանին մէջ: Ութամեայ կրթութենէ մը յետոյ հոգեւորական ըլլալու բուռն ցանկութեամբ կը դիմէ Սուրբ Էջմիածին եւ 1987 Յունուար 17ին կ'ընդունուի Մայր Աթոռի Հոգեւոր Ճեմարան:

1991 Սեպտեմբեր 15ին, Խայվերացի տօնին կատարուած Միւռոնօրհնութեան նախօրեակին Սարկաւագ կը ձեռնադրուի՝ ձեռամբ Մայր Աթոռի դիւանապետ Բարձր. Տ. Ներսէս Արքեպս. Պոզապալեանի: Այնուհետեւ «Գէորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսի կեանքն ու գործունէութիւնը 1911-1930» խորագիրը կրող ուսումնասիրութեամբ կը պաշտպանէ աւարտական ճառը եւ 24 Յունիս 1993ին օրուան Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա-ի ձեռամբ կը ստանայ Հոգեւոր Ճեմարանի վկայականը:

Աստուածաբանական իր ուսումը կատարելագործելու եւ տեղւոյն գաղութին մէջ ծառայելու նախատեսումով 23 Դեկտեմբեր 1993ին կու գայ Գերմանիա, Առաջնորդ Գարեգին Արքեպս. Պեքճեանի հրաւէրով: Գերմաներէն լեզուի դասընթացքներուն հետեւելէ անմիջապէս յետոյ 1994ի Ապրիլէն սկսեալ կը փոխադրուի Էրլանկըն, ուր կ'անցնի համալսարանական կանոնաւոր ուսման քաղաքի Ֆրիտրիխ Ալէքսանտր Համալսարանի աստուածաբանական ֆաքիւլթէի մէջ, որ մինչեւ օրս կը շարունակէ յաջողութեամբ:

ՀԵԼՍԻՆԿԻՈՒՄ ԲԱՑՎԵՑ «ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՆՁԵՐԸ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Նոյեմբերի 11-ին Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիի Արվեստի և դիզայնի թանգարանում բացվեց «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

Ինչպես նախորդ տարի Մոսկվայի Կրեմլում և ապա այս տարի Աթենքի «Մեղարոն» սրահում բացված ցուցահանդեսներում, այս անգամ ևս Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը ներկայացնում է Հայ Առաքելական Եկեղեցուն և համայն քրիստոնեությանը հոգեհարազատ սրբություններ: Մայր Աթոռի թանգարաններից ու պահոցներից Հելսինկի է ուղարկվել 82 ցուցանմուշ: Դրանց թվում են Նոյյան տապանի մասունքով մասանց պահարանը, Ս. Հովհաննես Կարապետի, Ս. Թադեոս և Ս. Բարդուղեմեոս առաքյալների, Ս. Հակոբ Մծբնեցի Երանելի Հայրապետի մասունքներով մասնատուփերը, Խոտակերաց Ս. Նշանը, հայոց Աշոտ Երկաթ թագավորի խաչը, եկեղեցական արվեստի այլ գլուխգործոցներ, գրքեր, խաչքար:

Ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությանը ներկա էր Հայաստանի պաշտոնական պատվիրակությունը, որի կազմում էին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար գերշ. Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Ուկրաինայի թեմի առաջնորդ գերշ. Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, ՀՀ Կրոնի գործերի խորհրդի նախագահ Լազար Սուքյանը և այլոք:

Ցուցահանդեսի նախապատրաստումը, որը տևել է շուրջ մեկ տարի, հանձն էր առել ցուցահանդեսների կազմակերպմամբ զբաղվող ֆիննական «ՌՀ -Կոնսուլտանտս» ընկերությունը: Վերջինիս տնօրեն Հեկկե Լահելման և ֆիննական կառավարության լիազոր ներկայացուցիչ-փորձագետ Պեկկա Կիվիլոյտոն անձամբ մասնակցեցին ցուցանմուշների փաթեթավորման և առաքման աշխատանքներին:

Հայ Եկեղեցու հոգևոր արժեքները, որ ֆիննն ժողովրդին ներկայանում են առաջին անգամ, կցուցադրվեն մինչև եկող տարվա հունվարի վերջը:

Ցուցահանդեսի առիթով ֆիննական կողմը հրատարակել է կատալոգ՝ հինգ տասնյակից ավելի լուսանկարներով:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ. ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ, ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի /ԵԵԿ/ Ուսումնական Հանձնախմբի հանդիպումը Ցասսիում /Ռումինիա, 16-ից 21-ը սեպտեմբերի, 1996 թ./ քննարկեց «Ժողովուրդների և մշակույթների միջև հաշտությունը Եվրոպայում. Աստվածաբանական քննարկումներ Եկեղեցիների ավետարանչական և էկումենիկ առաքելության մասին» թեման և առաջադրեց հետևյալ ըմբռնումները: Սույն փաստաթուղթն սկսվում է նյութի աստվածաբանական ասպեկտներով, ուշադրություն է դարձվում հաշտության աստվածաշնչական որոշ ըմբռնումների և տարբեր ավանդություններում դրանց մեկնությանը: Այն Եվրոպայի Եկեղեցիների հաշտության էկումենիկ միտումը համարում է նպաստ՝ ուղղված մարդկության բաժանումների բուժմանը և ավարտվում Եվրոպայում ժողովուրդների և մշակույթների հաշտության բարոյական ու քաղաքական տեսակետներով:

1. ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ

Եվրոպական էկումենիկ հարաբերությունների մեջ հաշտությունը դարձել է կենտրոնական թեմա: Որպեսզի ի վիճակի լինենք հրատապ խնդիրները լուծել հաշտության ոգով, պետք է քննենք մեր աստվածաշնչական և աստվածաբանական հիմունքները, որոնք, պարզվում է, երկուստեք հարստացնող կլինեն:

1) Կարևոր է նշել, որ, համաձայն Ծննդոց Գրքի, մարդկային ցեղի ստեղծումն Աստծու հատուկ գործողությունն էր: Աստված ասաց. «Մարդ ստեղծենք մեր պատկերով ու նմանությամբ» /Գիրք Ծննդոց Ա 26/: Մարդկանց, որպես Աստծու պատկերով ստեղծված էակների, սահմանումը նշանակում է, որ ճիշտ այնպես, ինչպես Սուրբ Երրորդության մեջ երեք հավասար անձանց հաղորդությունը գոյություն ունի սիրո ամուր կապի միջոցով, այնպես էլ մարդկային էակների կյանքերն են հետևում այդ սկզբնական՝ ներդաշնակ, սիրող համայնքի օրինակին: Եկեղեցու հայրերը ոչ միայն ընդգծում են մարդկային էակների միությունը և բարեկամությունը, այլ նաև այն, որ նրանք համապատիվ են և հավասար բնությամբ՝ տղամարդկանց և կանանց փոխադարձ ամբողջացման մեջ:

2) Աստվածաշնչում հաշտության ուսումնասիրությունն սկսվում է Անկման պատմությամբ /Ծննդոց Գ 6-19/: Խախտելով աստվածային պատգամը, այսինքն՝ չարաշահելով արարչագործությունը հանուն

անձնական շահի, մարդկային էակները իրենք իրենց դեմ են դուրս գալիս: Սա ունի լուրջ տիեզերական, մարդաբանական և ընկերային հետևանքներ: Նրանք օտարանում են Աստծուց, այլ մարդկանցից, շրջակա միջավայրից և իրենք իրենցից:

3) Անկման պատմությունը պարունակում է մի համար /Ծննդոց Գ 15/, որը հայտնի է որպես Նախա-Ավետարան: Ըստ Եկեղեցու հայրերի մեկնության, այդ համարը վերաբերում է Մեսիայի հաղթանակին: Հիսուս Քրիստոսի ամբողջ կյանքը, հատկապես Խաչը և Հարությունը, ծառայում են Աստծու հետ հաղորդակցության վերականգնմանը. Գողգոթայի վրա Քրիստոսի Հաշտության արարքը նշանակում է նոր կյանքի սկիզբ: Այս կյանքը պարունակում է ողջ արարչագործությունը: Մարդկությունը դեռևս կենտրոնական դեր ունի: Ուստի արարչագործությունն սպասում է նրանց փառքի հայտնությանը, ովքեր կրկին դարձել են Աստծո որդիները /Հռոմ. Ը 19-22, Գաղ. Դ 6-7/:

4) Այս աստվածաշնչական հիմունքները խորությամբ քննարկվել և երանգավորվել են որոշակի մշակութային և ընկերային կոնտեքստներով.

- Ուղղափառ աստվածաբանությունը շարունակեց վաղ Եկեղեցում զարգացած դասական մոտեցումը: Հաշտությունը չպետք է բաժանել փրկագործությունից: Կյանքն Աստծու հետ հաշտված հաղորդակցություն է: Քրիստոսի հաղթանակն առաջնորդում է դեպի մարդկության աստվածացում /թեոսիս/: Ըստ հայրաբանական ավանդության, Աստված դարձավ անձ, որպեսզի անձինք կարողանան աստվածանալ: Աստվածային ներգործությունները լուսավորում են մեզ և դարձնում խաղաղության աղբյուր՝ մեզ բարեկամ մարդկային էակների, կյանքի բոլոր ոլորտների և ողջ արարչագործության համար /«Խաղաղություն ձեռք բեր ինքդ քո մեջ և քո շուրջ հազարավոր մարդիկ կփրկվեն», Ս. Սերաֆիմ Սարովցի/:

- Արևմուտքում առաջ է եկել հաշտության իրավական կողմնորոշում ունեցող մի մեկնություն, համաձայն որի Քրիստոսի Փրկագործությունն ընդունում է փոխհատուցման կամ բավարարման բնույթ: Քավության գործը վտանգված էր՝ վերածվելու մեղքի պարտքի վճարման: Զարչարանաց խորհրդապաշտությունը և բավարարման սխոլաստիկ վարդապետությունը ստվեր են նետում վաղ Եկեղեցու փրկչաբանական /սոտերիոլոգիական/ ծավալման վրա, որը փրկագնման և հաշտության համար պատասխանատու էր՝ ճանաչել Աստծո սերն ու ողորմածությունը:

-Պատասխանելով արևմտյան միջնադարյան մեկնության միակողմանիությանը՝ բարեռնորոգչականները վերադարձան վաղ Եկեղեցու գաղափարներին: Օրենքի և Աստծու ցասման աստվածաշնչական ակնարկության հիման վրա նրանք իրենց հերթին շեշտեցին ողջերի ու մեռյալների աստվածային դատաստանի պատգամը: Հետլյութերյան աստվածաբանությունը հիմնականում շեշտեց հաշտության և դարձի ենթակայական ու հոգեբանական շարժառիթները:

Ներկա իրավիճակում մենք կկամենայինք խուսափել աստվածաբա-

նական պատմության որևէ միակողմանիությունից: Խաչի իրադարձությունը պետք է տեսնել դրա փրկագործական, մարմնացման և տիեզերաբանական կոնտեքստում: Միայն սրբության հեռանկարում ենք մենք հայտնագործում հաշտությունը՝ որպես «Աստծու պարգև և նոր կյանքի աղբյուր»:

Այսօր մենք միասնաբար խոստովանում ենք Աստծու հաշտության պատգամը՝ անկախ առկա հարանվանական շեշտադրումներից:

2. ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Եկեղեցուն տրված է հաշտության պատգամն ու առաքելությունը /Բ Կորնթ. Ե 17-21/: Բաժանված Քրիստոնեությունը, բաժանված Եկեղեցիները և հակամարտող Քրիստոնյաները «հաճախ նպաստել են աշխարհի բաժանմանը», - ցավով նշում է Անգլիկան-Ուղղափառ համատեղ երկխոսության հանձնաժողովը /1984 թ./: Մինչդեռ Աստծու հետ հաշտության կոչը, ուղղված տղամարդկանց, կանանց, համայնքներին ու ազգերին՝ լինելու Քրիստոսի դեսպանները /Բ Կորնթ. Ե 20/, «մեզ մղում է միություն փնտրելու հենց մեր մեջ, որպեսզի նպաստենք մարդկության բաժանումների առողջացմանը», հաստատում է նաև այդ հանձնաժողովը, զի Աստծու հետ հաշտության արդյունքը հաշտությունն է միմյանց հետ, որն ակնհայտ է դառնում, երբ քրիստոնեական համայնքները Քրիստոսի մարմնի մեջ միաժամանակ մարմնավորում են հնարավոր մեծագույն բազմազանությունն ու միությունը ընկերային, մշակութային և ազգային սահմանների շրջանակներում /Գաղ. Գ 26/:

Ի պատասխան Քրիստոսի աղոթքի, որ Իր հետևորդներն «ամենքը մի լինեն... որպեսզի աշխարհը հավատա...» /Հովհ. ԺԷ 20-21/, Սուրբ Հոգու գործունեության շնորհիվ կյանքի է կոչվել «եզակի էկումենիկ ջարժումը, որն ավելի տեսանելի միության փնտրտուքը միավորում է հանուն արդարության և խաղաղության պայքարի հետ» /Հավատի և Կարգի Ե Համաժողովի պատգամը, Սանտյագո Դե Կոմպոստելլա, 1993/: Աստծու և միմյանց հետ հաշտության կոչը, որպեսզի մենք կարողանանք միասին մասնակցել Աստծու՝ առաքելությանն աշխարհում, գործ և արձագանք է ծնում փոխադարձ կապի մեջ գտնվող բազմաթիվ տեղական, մարզային, ազգային, տարածաշրջանային, միջազգային, եվրոպական և համաշխարհային մակարդակների վրա:

Ցուրաքանչյուր մակարդակի վրա կարիք կա թե՛ «սիրո երկխոսության» և թե՛ աստվածաբանական երկխոսության, ինչպես նաև աշխարհում առաքելության, վկայության և ծառայության՝ հանուն արդարության և խաղաղության փնտրտուքի և արարչության հանդեպ ընդհանուր խնամքի մեջ համատեղ գործունեության նպատակով ռեսուրսները կիսելու պատրաստակամության, էկումենիկ ձևավորման ու պատրաստության, խորհրդակցության ու կանոնակարգման ընդհանուր կառույցների:

Երբեմն այդպիսի գործունեության մեջ Եկեղեցիների և Քրիստոնյա-

ների հանձնառությունն արտահայտվում է եկեղեցապետերի կողմից ստորագրված համաձայնագրերում՝ ընդհանուր հավատքի բավարար արտահայտության հիման վրա: Երբեմն խորհրդանշական գործողությունները կամ էլ հատուկ արարողությունները նշանավորում են անցյալ հակասությունների հուշերի սպիացումը կամ բարեկամության և համագործակցության խոչընդոտների հաղթահարումը /տե՛ս «Հաշտություն. Աստծու Պարգև և Նոր Կյանքի Աղբյուր», Եվրոպական էկումենիկ Բ Համաժողովի ուսումնական ուղեցույց, 1997 թ., բաժին 3/: Երբեմն սրբազան խորհուրդների կամ խորհրդական արարողությունների ընդհանուր նշումն արտահայտում է առանձին Եկեղեցիների միջև առավել տեսանելի միությունը: Ավելի հաճախ, այնուամենայնիվ, Հաղորդությունը միասին տոնելու մեր անկարողությունը խստորեն հիշեցնում է մեզ, որ, որպես Եկեղեցիներ, դեռևս հաշտված չենք: Երբեմն հոգատար ուշադրություն է դարձվում առանձին երկրներում Մեծամասնության և Փոքրամասնության Եկեղեցիների հաճախ դժվարին փոխհարաբերություններին, և Նոր կյանքի ուղին միասին է հայտնաբերվում /տե՛ս Եվրոպայում Մեծամասնության և Փոքրամասնության Եկեղեցիների շուրջ ԵԵԿ խորհրդակցության հաշվետվությունը, Թրոնդհայմ, Նորվեգիա, 1996 թ./՝ Մեծամասնության Եկեղեցիների միջոցով գիտակցորեն և եռանդուն կերպով արդարության որոնմամբ Փոքրամասնության Եկեղեցիների համար:

Այնուամենայնիվ, վերաբերմունքի երկվությունը մնում է Եկեղեցիների և ազգերի միջև /ազգային ինքնությունը սահմանվում է էթնիկ եզրերով, կամ էլ ըստ բազմամշակութային քաղաքացիության/, քանի որ երբեմն Եկեղեցիների դերն է զորավիգ լինել տառապող, հպատակ համայնքին, որը ենթարկվում է այլ նպատակներով օգտագործման կամ շահագործման վտանգին: Երբեմն Եկեղեցիների դերն է դիմագրավել գերիշխող մեծամասնության գործողություններին կամ կեցվածքներին, որոնք ենթարկվում են «քաղաքականությանը միջամտելու» համար պախարակվելու կամ վարկաբեկվելու հակադիր վտանգին:

Եկեղեցիները կարող են նաև կոչված լինել ժողովուրդների, համայնքների կամ ազգերի միջև համաձայնությանը նպաստելու գործում նախաձեռնություն հանդես բերելուն: Երբ Աստծու շնորհով և ողորմածությամբ այդպիսի հաշտությունը կայանում է, ապա դա հրաշք է թվում: Այն, ինչը թվում էր անհնարին, դառնում է ցնծությամբ լեցուն իրականություն, և զարմանում ենք, թե ինչու՞ ավելի վաղ չենք փորձել կատարել առաջին քայլն այդ ուղղությամբ:

3. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Համաձայն աստվածաշնչական վկայության, յուրաքանչյուր անձ Աստծու ստեղծագործություններից մեկն է, և դա հաստատվում է նրանով, որ մարդն ստեղծված է Աստծու պատկերով: Աստծու գործերը հայտնում

են նաև ժողովուրդների և նրանց պատմության բազմազանությունը: Բազմազանությունը չի խանգարում մարդկային համայնքին, այլ նպաստում է մշակույթների և ավանդությունների հարստությանը: Աստվածաբանորեն խոսելով՝ ոչ մի անձ կամ ժողովուրդ մյուսից ավելի լավը չէ. և, ընդհակառակը, չի կարելի ասել, թե որոշ անհատներ կամ ժողովուրդներ ուրիշներից ավելի նվազ արժանիք ունեն:

Մենք ընդունում ենք, որ տարածաշրջանային, ազգային կամ մշակութային ավանդությունների բազմազանությունը Եվրոպայի հարստության մասն է, և որ բոլոր ժողովուրդները հավասարարժեք են: Այնուամենայնիվ, մենք նաև տեսնում ենք, որ տան նկատմամբ օրինական սերը և հայրենասիրությունը կարող են անակնկալ կերպով վերածվել ազգայնամոլության, ինչը գերակայություն է հավակնում իր սեփական խմբի կամ ժողովրդի համար և սպառնալիք ընկալվում օտարների կողմից: Սա կարող է առաջնորդել փոքրամասնությունների ճնշման և, ի վերջո, պատերազմի ու կործանման:

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԱԶԳՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնյաները և Եկեղեցիներն իրենց եկեղեցական ու ազգային մշակույթի հետ սերտ կապի շնորհիվ տարբեր ազդեցությունների են ենթարկվում: Մարդկային և եկեղեցական ինքնության մեջ շատ դրական կողմեր կան, բայց կա նաև մեծ մեղք: Դրա վկայությունն են այն դեպքերը, երբ, ելնելով իրենց սեփական ժողովրդի հանդեպ թվացյալ հավատարմությունից, Քրիստոնյաներն ու Եկեղեցիները լուռ են մնացել սխալի, պատերազմի, շահագործման և նման այլ երևույթների նկատմամբ, անգամ գործուն աջակցություն ցուցաբերել դրանց:

Հավատքի և տան, Եկեղեցու և ազգի ավանդական կապի փոխհարաբերություններում պետք է գերազանցեն առաջինները: Այլ հավատարմությունները պետք է Քրիստոսի նկատմամբ հավատարմությունից հետո, երկրորդական տեղ գրավեն: «Եսակենտրոնության որևէ ձև, որը տանում է դեպի այլ ժողովուրդների կամ ազգային փոքրամասնությունների ճնշման՝ իր սեփական ժողովրդի նկատմամբ սիրո միջոցով, կամ ներառում է այլ ժողովուրդների առանձնահատկությունների պատշաճ ընդունման և գնահատման մերժումը, մեծ մեղք և անարգանք է Աստծու՝ Արարչի և բոլոր ազգերի Տիրոջ հանդեպ»: «Կյանք և Աշխատանք» միջազգային Բ կոնֆերանսի /Օքսֆորդ, 1937 թ./ այս խոսքերը այսօր դեռ ճշմարիտ են: Ավելին, մենք շեշտում ենք, որ Աստծու պատվիրանները /ինչպես օրինակ՝ սիրի՛ր քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ. մի՛ ատիր և մի՛ չարախոսիր, մի՛ սպանիր, մի՛ ցանկացիր հարևանիդ ունեցվածքը/ դեռևս վերաբերում են ժողովուրդներին ու ազգերին, պետություններին ու վերպետական կազմակերպություններին կամ բազմազգ ընկերություններին: Այդ պատվիրանները մարդու իրավունքների և միջազգային օրենքի հենանիշն են հանդիսանում:

ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԽԱՂԱՂ ԿԱՐԳԻ ՏԵՍԻԼՔ

Հաշտության Քրիստոնեական պատգամը մեզ հնարավորություն է տալիս հաշտեցնող քաղաքական արարք կատարել: Դա տեղի է ունենում նախ և առաջ յուրաքանչյուր և ամեն մի Քրիստոնյայի հանձնառության միջոցով՝ իրենց անձնական կյանքում և ընկերային ու քաղաքական խնդիրներում: Հաշտությունը Եկեղեցիների ընկերային-բարոյական և ընկերային-քաղաքական պատասխանատվությունն է: Որպես վերպետական ինքնություն ունեցող հաստատություններ, երկխոսության և շփումների միջոցով. նրանք նպաստում են էթնիկ և միջազգային հակամարտությունների լուծմանը: Բացի այդ, Եկեղեցիներն առաջարկում են, որ համաշխարհային քաղաքականությունը որդեգրի մարդկանց և մշակույթները հաշտեցնելու կառույցներ: Այն ժամանակ հակասությունները կարող են լուծվել պոռնց որևէ ուժի կիրառման՝ միջազգային խաղաղ ճանապարհով. ուժեղի օրենքին կարող է փոխարինել օրենքի ուժը:

Օրինական ազգային ինքնավարության և անհրաժեշտ միջազգային կառույցների միջև լարվածությունը կարելի է թուլացնել, եթե պետությունների և վերպետական կազմակերպությունների փոխհարաբերությունները հիմնվեն համերաշխության ու օժանդակության սկզբունքների վրա: Պետության ավանդական եկեղեցական ըմբռնումն այժմ պետք է տարածվի վերպետական հեղինակությունների վրա: Գործնականորեն խոսելով՝ դա նշանակում է, որ Քրիստոնյաները պետք է պետությունների համար ավանդաբար սահմանված ռեսուրսներով նպաստեն վերպետական և ներպետական կառույցների ու կազմակերպությունների ստեղծմանը, որոնք կարողանան ապահովել արդարություն և խաղաղություն: Դա կարող է արտահայտվել պետությունների կողմից ինքնավարության մասնակի հրաժարմամբ: Սա ինքնուրույն համաշխարհային կառավարություն ունենալու հարց չէ, այլ՝ միջազգային համակեցության հիմնարար հիմունքների զարգացման և երաշխավորման հարց, ինչպես օրինակ՝ սահմանել, թե ո՞վ իշխանության մենաշնորհ ունի էթնիկ և միջազգային հակամարտություններում: Միևնույն ժամանակ Եկեղեցիները բարձրացնելու են իրենց մարգարեական ձայնը, երբ վերպետական կազմակերպությունները չարաշահեն իրենց իշխանությունը և դրանք ի չարը գործադրեն անհատական շահերի պատճառով: Եկեղեցիների հաշտության առաքելության մասն է նաև՝ մշտապես պաշտպանել հանուն էթնիկ և կրոնական փոքրամասնությունների իրավունքների:

ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Եկեղեցիները կրկին անգամ հաստատում են Եվրոպական էկումենիկ Ա Համաժողովի /Բազել/ կոչը՝ «բռնությունը բացառելու նախընտրելի

տարբերակի համար»: Դրանով զինված ուժի կիրառումը, որպես խաղաղության պահպանման վերջին միջոց, կենթարկվի խիստ չափանիշների, որոնք պետք է հստակորեն սահմանվեն միջազգային համայնքի կողմից:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱ

Եկեղեցիները դիմագրավում են այն սպառնալիքը, համաձայն որի Եվրոպան բաժանվում է փոխկապակցված Արևմուտքի և մասնատված Արևելքի: 1989-ից ի վեր քաղաքական, տնտեսական և ընկերային զարգացումները շատ գործընթացներում դրական են եղել, սակայն Արևմտյան և Արևելյան Եվրոպայի միջև գոյություն ունի նաև ակնհայտ բաժանում: Դա մի նոր անվստահություն է առաջացնում ժողովուրդների միջև: Քրիստոնյաները և Եկեղեցիները պետք է հակազդեն դրան և հնարավոր կարելին անեն՝ խրախուսելու սահմանամերձ հանդիպումներն ու շփումները: Արևմտյան և Արևելյան Եվրոպայի միջև հաշտությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ բոլոր երկրները ցուցաբերեն հաշտված համերաշխություն և զգայունություն, կարեկցանք միմյանց նկատմամբ, իրենց տնտեսական և քաղաքական գործունեության մեջ ուշադիր ու հոգատար լինեն ամբողջ Եվրոպայի նկատմամբ:

ԵՎՐՈՊԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Եկեղեցիները, նպատակ ունենալով համաշխարհային արդարությունը, եվրոպական քաղաքականության կոչ են անում: Անհատական շահերի համար որպես Ընդհանուր Տունկա ըմբռնվող Եվրոպան հակասում է ողջ Քրիստոնեական և մարդկային պատասխանատվությանը: «Ամրոց-Եվրոպան» ոգի չէր ունենա և վերջին հաշվով դատապարտված կլիներ: Առանց մարդկության ամբողջական քաղաքական և տնտեսական հաշտության գործողությունների, հաշտված Եվրոպա չի լինի:

ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՆՊԱՐՀԻՆ

Եվրոպան այն մարդկանց կարիքն ունի, ովքեր վստահում են Աստծուն և հաշտ են Աստծո ու միմյանց հետ, հավատք և սեր հարևանի հանդեպ՝ վերանորոգված բարոյականության և էթիկայի, կրթության և մշակույթի, աշխարհիկ հասարակության մեջ քաղաքական և տնտեսական կյանքի նկատմամբ հույսով: Դրանք նպաստում են Եվրոպայի՝ հաշտված համայնքի վերածվելուն:

Եվրոպական էկումենիկ Ա Համաժողովը /Բազել, 1989 թ./ հաշտված Եվրոպայի համար ձևակերպեց հետևյալ կանոնները.

ա) Հավասարության սկզբունք՝ այնտեղ ապրող բոլոր ուժեղների կամ թույլերի համար.

բ) Այնպիսի արժեքների ճանաչում, ինչպիսիք են ազատությունը, արդարությունը, հանդուրժողականությունը, համերաշխությունը, միասնականությունը.

գ) Դրական վերաբերմունք տարբեր կրոնների, մշակույթների և աշխարհայացքների հետևորդների նկատմամբ.

դ) Բաց դռներ, բաց պատուհաններ, այլ խոսքով՝ լայն անձնական շփումներ, գաղափարների փոխանակում.

ե) Երկխոսություն՝ հակասությունները բռնության միջոցով լուծելու փոխարեն:

Պողոս Առաքյալի խոսքերն այսօր ուղղված են Եվրոպայում բոլոր քրիստոնյաներին. «Արդ պատգամավորներ ենք Քրիստոսի, որպես թե Ինքն Աստված մեզնով կոչ ուղղեր ձեզ. աղաչում ենք հանուն Քրիստոսի, որ հաշտվեք Աստծու հետ» /Բ Կորնթ. Ե 20/:

Հոգեշնորհ Ջին Մեյլրենդ
ԵԵԿ-ի ուսումնասիրությունների կոմիտեի ատենապետ
Պրոֆ. Ռեյնհարդ Ֆրիլինգ
ԵԵԿ-ի ուսումնասիրությունների կոմիտեի փոխատենապետ
Պրոֆ. Վիորել Յինիտա
ԵԵԿ-ի ուսումնասիրությունների քարտուղար

Անգլերենից թարգմանեց
ԼՈՐԻՍԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԸ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՐԻԻ ԺՈՂՈՎԻ 900-ԱՄՅԱԿԻՆ

Սույն թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 3-ը Իտալիայի Բարի քաղաքում տեղի ունեցան Բարիի ժողովի (1098) 900-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություններ՝ Բարիի արքեպիսկոպոսարանի և Ս. Նիկողայոս տաճարի վանահայրության հովանավորությամբ:

Տիեզերահռչակ սուրբի՝ Նիկողայոսի աճյունները կրող քաղաքում 900 տարի առաջ առաջին անգամ փորձ արվեց հաջտեցնել Լատին և Հույն Եկեղեցիներին՝ 1045 թվականի տխուր և ողբերգական բաժանումից հետո: Ցավոք, ժողովն այդ հարցում հաջողություն չարձանագրեց, սակայն պատմության մեջ մտավ որպես բարի կամքի առաջին արտահայտություններից մեկը, որպես գոյություն ունեցող տարակարծությունները երկխոսությամբ լուծելու փորձ:

Այդ ժողովի 900-ամյակի առթիվ Բարիի արքեպիսկոպոսարանի և Ս. Նիկողայոս տաճարի վանահայրության կողմից պատրաստվել էին հոբելյանական հանդիսություններ, որոնք ներառնում էին գիտաժողովներ, ցուցահանդեսներ, համերգներ, էկումենիկ աղոթքներ: Չորս օրերի ընթացքում տարբեր զեկուցումներում վեր հանվեցին Բարիի ժողովի պատմական ենթահողը, ջարժառիթները, դրական ազդեցությունները և ձախողման պատճառները:

Հոբելյանական հանդիսություններն ավարտվեցին հոկտեմբերի 3-ի երեկոյան՝ էկումենիկ աղոթքով, որին նախագահում էր Բարիի արքեպիսկոպոս Մարիանո Մագրասսին:

Հանդիսություններին հրավիրված էին Ուղղափառ գրեթե բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչները: Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու սույն հոբելյանական արարողություններին իր մասնակցությունը բերեց Մինքայել ծ. վրդ. Աջապահյանը:

ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 22-24-ը Վատիկանի Ընտանիքի Քահանայապետական Խորհրդի հրավերով կայացավ միջազգային-միջեկեղեցական համաժողով՝ նվիրված կյանքի և ընտանիքի խնդիրներին:

Վատիկան էին հրավիրված եվրոպական գրեթե բոլոր երկրների օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ, ովքեր անդրադարձան ընտանիքի հետ կապված խնդիրներին, միաժամանակ տեղի ունեցան նաև օրենսդրական քննարկումներ:

Համաժողովը նախագահում էր Վատիկանի Ընտանիքի Քահանայապետական Խորհրդի նախագահ կարդինալ Ալֆոնսո Լոպեսը: Ժողովականներին ողջունեց Վատիկանի պետքարտուղար կարդինալ Անջելո Սոդանոն: Համաժողովի մասնակիցները արժանացան Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի ունկնդրությանը:

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու, համաժողովին մասնակցեցին ՀՀ Սահմանադրական Դատարանի եւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ տիար Ռաֆայել Պապայանը և Ազգային Ժողովի պատգամավոր, Մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի փոխնախարար տիար Արամ Մանուկյանը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ՍԲ. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԳԱԼԻՆԱ ՍՏԱՐՈՎՈՅՏՈՎԱՅԻ

Ռուսաստանի Դաշնության Պետդումայի պատգամավոր Գալինա Ստարովոյտովայի սպանության առիթով Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի անունից նոյեմբերի 23-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից ցավակցական հեռագիր հղվեց Պետդումայի նախագահ Գենադի Սելեզնյովին:

«Գալինա Ստարովոյտովան հայ ժողովրդի մեծ բարեկամն էր, որ շատ բան է արել հանրապետությունում ժողովրդավարության կայացման համար:

Սբ. Էջմիածնում աղոթք են հղում առ Բարձրյալը, որպեսզի Աստված արժանին հատուցի մարդասպաններին և հանգուցյալի հոգին դասի արդարների շարքում», - ասվում է հեռագրում :

Ի հիշատակ Գալինա Ստարովոյտովայի, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 4-ին, կիրակի.- Դ կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «եւ ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս» (Մարկոս ԺԱ 33) բնաբանով:

Հոկտեմբերի 11-ին, կիրակի.- Ե կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, իր անդրանիկ Ս. Պատարագը մատուցեց Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանը:

Հոկտեմբերի 18-ին, կիրակի.- Զ կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշեն աբեղա Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «... իսկ որ համբերեսցէ ի սպառ՝ նա կեցցէ» (Մատթ. Ժ 22) բնաբանով:

Հոկտեմբերի 25-ին, կիրակի.- Է կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Եգիպտահայոց թեմի փոխառաջնորդ, Կահիրեի հոգևոր հովիվ Տ. Գալուստ վարդապետ Դարբինյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը օրվա խորհրդին պատշաճող քարոզ խոսեց:

Նոյեմբերի 1-ին, կիրակի.- Ը կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Ոյր գուցէ՝ տացի նմա, եւ ոյր ոչն գուցէ, եւ զոր կարծէն թէ ունիցի՝ բարձցի ի նմանէ» (Ղուկ. Ը 18) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Նոյեմբերի 8-ին, կիրակի.- Թ.կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Հաւատալ արժան է այնմ, որ մերձենայ առ Աստուած» (Եբր. ԺԱ 6) բնաբանով:

Նոյեմբերի 14-ին, շաբաթ.- Սրբոց առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի:

Նոյեմբերի 14-ին, առավոտյան, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Ամերիկայի Միացյալ Նահանգների Սենատի անդամ Կարլ Լևինը՝ Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնի ուղեկցությամբ: Մայր Աթոռի Վեհարանում հյուրերին ընդունեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Սրբազան Հայրը հյուրերին պատմեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի և նրա հոգևոր գործունեության, մասնավորապես Գևորգյան Հոգևոր ճեմարանի, ինչպես նաև Սևանում և Գյումրիում գործող հոգևոր դպրանոցների մասին: Ներսես Սրբազանն անդրադարձավ նաև խորհրդային տարիներին Հայ Առաքելական եկեղեցու կրած դժվարություններին:

Զրույցի ընթացքում սենատորը հատկապես հետաքրքրվեց Թուրքիայում հայ եկեղեցական համայնքի ներկայիս կացությամբ, որի առիթով Սրբազան Հայրը մանրամասն տեղեկություններ հաղորդեց:

***

Նույն օրը Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց մեկ օր առաջ ՀՀ նախագահին իր հավատարմագրերը հանձնած Սբ. Աթոռի նվիրակ, Գլոստոնիայի արքեպիսկոպոս գերապայծառ Շտեֆան Սուրբրիգենը /նստավայրը՝ Թբիլիսի/:

Պապական նվիրակը Մայր Աթոռ. Սբ. Էջմիածնի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին հաղորդեց Սրբազան Պապի ողջույնները և Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին ուղղված առողջության մաղթանքները:

Գերապայծառ Հայրը վերհիշեց 1984 թ. երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի այցը Ուրուգվայ, որտեղ ինքը Վատիկանի դեսպանն էր:

Հանդիպման ընթացքում խոսվեց էկումենիկ հարաբերությունների,

դեկտեմբերին Զիմբաբվեում կայանալիք Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 8-րդ համագումարի մասին, որին հրավիրված է նաև Կաթոլիկ Եկեղեցին:

Վատիկանի դեսպանն ասաց, որ Հայաստանում ինքը կայցելի Գյումրի, ինչպես նաև 1988 թ. երկրաշարժից հետո Կաթոլիկ Եկեղեցու կողմից հիմնած Աշոցքի հիվանդանոց:

Պապական նվիրակը հույս հայտնեց, որ հետագայում կրկին կայցելի Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետին տեսնելու նպատակով:

Նոյեմբերի 15-ին, կիրակի.- Ժ կիրակի զկնի Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Վազգեն վարդապետ Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ Հայր Սուրբը «Երկիւղ Տեառն սկիզբն իմաստութեան» (Առակ. Ա 7) բնաբանով օրվա խորհրդին պատշաճող քարոզ խոսեց:

Նոյեմբերի 22-ին, կիրակի.- Ա կիրակի Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Տեսէք եւ զգոյշ լերուք յամենայն ագահութենէ, զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա» (Ղուկաս ԺԲ 15) բնաբանով:

Նոյեմբերի 28-ին, շաբաթ.- Տօն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Հայր Սուրբը՝ «Սէր ոչ երբեք անկանի» (Ա Կորնթ. ԺԳ 8) բնաբանով:

Նոյեմբերի 29-ին, կիրակի.- Բ կիրակի Յիսնակաց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը՝ «Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ սրբոյ» (Մատթ. ԻԸ 19) բնաբանով:

Ս. Պատարագից հետո կատարվեց հոգեհանգստյան կարգ Ռուսաստանի Դաշնության Պետդումայի պատգամավոր Գալինա Ստարովոյտովայի հիշատակին:

ԽՈՐԵՆ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ

(1974–1983)

1983

1353. Ադրբեջանի Հայոց թեմի պատվիրակության այցը Ստավրոպոլ: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 69:

1354. Ազնավուրյան Գոհար: - Սուրեն Մանվելյանի գրական ժառանգությունը: 1983, փետրվար-մարտ, էջ 80-81:

1355. Աճեմյան Շահե արքեպիսկոպոս - Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի քարոզը արտասանված Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում Ծաղկազարդի տոնի օրը: (27 մարտ 1983 թ.): 1983, փետրվար-մարտ, էջ 27:

1356. Այցելություն Լենինգրադ: [Խորընծա Տ. Թորգոմ, Տ. Ասողիկ եւ Տ. Շնորհք աբեղաների այցելությունը Լենինգրադ]: 1983, . նոյեմբ.-դեկտ., էջ 70:

1357. Անդրանիկ Ս. Պատարագ եւ առաջին քարոզ: [Նոր ձեռնադրված Տ. Թորգոմ աբդ. Խարազյանի, Տ. Ասողիկ աբդ. Արիստակեսյանի եւ Տ. Շնորհք աբդ. Բաղդասարյանի անդրանիկ քարոզները]: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 61-66:

1358. Աշուրյան Գուրգեն քհն: - Սուրբ Գայանե կույսի վանքը: 1983, ապրիլ-մայիս, էջ 40-43: Երկու լուսանկարով:

1359. Ապրիլյան եղեռնի վաթսունութերորդ տարելիցի ոգեկոչումը Մայր Աթոռում: 1983, ապրիլ-մայիս, էջ 25-26: Մեկ լուսանկար:

1360. Առաքելյան Ալբերտ: - Վահան Տեր-Առաքելյան: (Ծննդյան հարյուրամյակի առթիվ): 1983, փետրվար-մարտ, էջ 72-76:

1361. Ավարտաճառների բանավոր պաշտպանություն հոգեւոր ճեմարանում: 1983, փետրվար-մարտ, էջ 19-22:

1362. Արաբաջյան Անանիա վարդապետ: - Եղիշեի աստվածաբանական հայացքները: 1983, փետրվար-մարտ, էջ 51-54:

1363. Արգենտինայի Հայոց թեմի ներկայացուցիչները Մայր Աթոռում: 1983, փետրվար-մարտ, էջ 39:

1364. Արզումանյան Զավեն Վրդ.: - Նորահայտ ձեռագիր մը Սանդուխտի աղոթարանը: [Բրապարակում]: 1983, հունվար, էջ 28-31:

1365. Արիստակեսյան Սմբատ սարկավագ: - «Բարեխոսությամբ Սուրբ Աստվածածնի» (Տոն վերափոխման): 1983, օգոստ., էջ 12-14:

1366. Արիստակեսյան Սմբատ սարկավագ: - Մեծի Պահոց շրջանը եւ նրա խորհուրդը: 1983, փետրվար-մարտ, էջ 33:

1367. Արիստակեսյան Ասողիկ աբեղա: - Վեհափառ Հայրապետի ծննդյան 75-ամյակին: [Բանաս-

տեղծություն]: 1983, սեպտ.-հոկտ., էջ 74:

1368. Բաղդասարյան Շնորհք աբեղա: - Աշունը Հայաստանում: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 71-73:

1369. Բաղդասարյան Վարդան սրկ.: - Քրիստոնեությունը Հայաստանում Ա-Գ դդ. եւ քրիստոնեական առաջին համայնքի սկզբնավորումը Սյունիքում: 1983, օգոստ., էջ 22-29:

1370. Բաղդիշյան Գեւորգ: - Կիրակոս Գանձակեցու «Պատմություն Հայոց» երկի աշխարհաբար թարգմանությունը: (Գրախոսություն): 1983, փետրվար-մարտ, էջ 59-62:

1371. Բանաստեղծական նոր ժողովածու: [Նվիրված է Տ. Թորգոմ արք. Մանուկյանի (գրական կեղծանունը Շեն Մահ) «Սերը կամար» գրքին]: Բերված է նաեւ «Դուն մեր հրաշք» բանաստեղծությունը: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 60:

1372. Բրուտյան Գրիգոր: - Հայոց տոմարի որոշ հարցերի մասին: (Հայոց մեծ թվական): 1983, օգոստ., էջ 41-44:

1373. Գալստյան Շնորհք արքեպիսկոպոս: - Հայազգի սրբերի կենսագրության նոր ժողովածու: [Խմբագրության ներածական խոսքով, որում ներկայացվում է սրբազան հոր «Հայազգի սուրբեր» գիրքը]: 1983, օգոստոս, էջ 5-11:

1374. Գեւորգ Խաչատուր: - Օրիներգ էջմիածնի եկեղեցուն: (Կառուցման 1680 ամյակի առթիվ): [Բանաստեղծություն]: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 59:

1375. Դիպլոմային աշխատանքների պաշտպանություն Հոգեւոր ճեմարանում: 1983, հունվար, էջ 20-21:

1376. Դիվան Մայր Աթոռի: - Հաղորդագրություն: [Սեպտեմբերի 25-30 տեղի ունեցած Սյունեաց-օրհնության եւ Վազգեն Առաջինի ծննդյան 75-ամյակին, քահանայական կոչման 40-ամյակին եւ գահակալության 28-րդ տարեդարձին նվիրված հանդիսության մասին]: 1983, սեպտ.-հոկտ., էջ 18-21:

1377. Դիվան Մայր Աթոռի:- Հաղորդագրություն [1983 թ. հոկտ. 23-ին տեղի ունեցած եպիսկոպոսական ձեռնադրության մասին]: 1983, սեպտ.-հոկտ., էջ 77-78:

1378. Դիվան Մայր Աթոռի: - Ճշտում: [Հերքում «Ասպարեզ» օրաթերթում տպագրված Էդվարդ Հովհաննիսյանի Մայր Աթոռի գանձատան շինարարության միջոցների ծախսմանը վերաբերող հոդվածի]: 1983, հուլիս, էջ 21:

1379. Դուդին Մ[իխաիլ]: - Արիության բարձունքից: [«Մուսա լեռան քառասուն օրը» վեպի ռուսերեն հրատարակության առաջաբանի թարգմանությունը]: 1983, հունվար, էջ 34-36:

1380. Եգիպտահայ ուխտավորների խումբը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: 1983, սեպտ.-հոկտ., էջ 101-102:

1381. Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերի այցելությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածին: 1983, մայիս-հունիս, էջ 60-62:

Նկ. դոկտ. Ֆիլիպ Փոթերը Վեհարանում:

1382. [Եղիշե]: - Ուղղափառ վարդապետ եւ անհաղթ փիլիսոփա երանելի Եղիշեի տերունական աղոթքի «Հայր մեր որ յերկինս»-ի մեկնությունը: [Թարգմանությունը

Սնանիա եպս. Արաբաջյանի]: 1983, փետրվար-մարտ, էջ 55-58:

1383. Եպիսկոպոսական ձեռնադրություն: [Նաեւ Վեհափառի քարոզը ձեռնադրության ժամանակ]: 1983, սեպտ.-հոկտ., էջ 79-83: Մեկ լուսանկար:

1384. Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի խորհրդակցությունը Մոսկվայում: 1983, մայիս-հունիս, էջ 75-76:

1385. Ջատկական տոնակատարություններ բուլղարահայ թեմում: 1983, ապրիլ-մայիս, էջ 36-38: Երկու լուսանկարով:

1386. Էկումենիկ կյանք: (Արեւելյան Գերմանիայի Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչները Մայր Աթոռում): 1983, ապրիլ, էջ 31-33: Նկ.՝ Գերմանացի հյուրերը Վեհարանում:

1387. Ընդունելություն Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի նախագահությունում եւ պատվոգրի հանձնում Վեհափառ Հայրապետին: 1983, սեպտ.-հոկտ., էջ 3-5:

Նկ.՝ Վեհափառ Հայրապետը: - Վեհափառ Հայրապետը եւ ՀՍՍՀ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Բաբկեն Սարկիսովը Գերագույն Սովետի ընդունելությունների դահլիճում պարգեւատրության արարողությունից հետո:

1388. Ընդունելություն Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդում: 1983, սեպտ.-հոկտ., էջ 6-9:

1389. Թահմիզյան Ն[իկողայոս]: ԺԳ-ԺԵ դարերի հայ հոգեւոր երգաստեղծության նմուշներ: [Նոտագրությամբ]: 1983, հուլիս, էջ 25-35:

1390. Թամանյան Յուրի: - Ղրիմի Ս. Սարգիս եկեղեցու ճարտարապետությունը: 1983, հուլիս, էջ 36-42:

1391. Թեմական կյանք: 1983, հունվար, էջ 53-56:

Բովանդ. Այցելություն Ադրբեջանի հայոց թեմ: [Տ. Գեւորգ եպս. Սերայդարյանի Ս. Ծննդյան առթիվ]: - Ձեռնադրություն Լոնդոնի հայոց եկեղեցում: - Նորակառույց եկեղեցու օծումը Ֆրանսիայի հայոց թեմում: [Ս. Նշան եկեղեցին Ռոն Ալպ շրջանի Պոն դը Շերի քաղաքում]:

Նկ.՝ Երեք լուսանկար:

1392. Թեմական կյանք: (Լուրեր Հայաստանյայց եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմից): 1983, մայիս-հունիս, էջ 69-70:

1393. Թղթակից: - Հոբելյանական հանդիսություն Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունում: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 76:

1394. Թորամանյան Ս. Խ.: - Մոլդավիայի հայերի շինարարական գործունեության պատմությունից: [Ուսումնասիրություն]: 1983, հունվար, էջ 43-49, փետրվար-մարտ, էջ 67-71:

1395. Իսահակյան Ավետիք: - Էջմիածնի պատմական դերը: [Գրված 1955 թ. Վազգեն Առաջինի ընտրության եւ օծման առիթով]: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 56-58:

1396. Լազարյան Գարուշ սարկավագ: - Ս. Գրիգոր Լուսավորչի կյանքի եւ գործունեության հետ կապված մի քանի հարցերի շուրջ: 1983, հունվար, էջ 24-28:

1397. Լենինգրադի հոգեւոր ճեմարանի ուսանողների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին: 1983, մայիս-հունիս, էջ 67-68:

1398. Լուրեր Բուլղարահայ թեմից: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 74-75:

1399. Լուրեր Ռումինիայի հայոց թեմից: 1983, մայիս-հունիս, էջ 71:

1400. Լուրեր Ռումինիայի հայոց թեմից: (Ուխտագնացություն դեպի Սուչավա): 1983, օգոստ., էջ 18-21: Երեք լուսանկարով:

1401. Խմբագրություն: - «Մուսա Լեռան քառասուն օրը» վեպը ռուսերեն: 1983, հունվար, էջ 32-33:

1402. Ճաղկազարդի տոնը Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում: 1983, փետրվար-մարտ, էջ 40-41: Մեկ լուսանկար:

1403. Ծայրագույն վարդապետական իշխանության տվչություն: [Տ. Անանիա աբեղա Արաբաջյանին]: 1983, սեպտ.-հոկտ., էջ 75-76:

1404. Կարապետյան Գեորգ: - Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց: (Ծննդյան 150-ամյակի առթիվ): 1983, հուլիս, էջ 22-24:

1405. Կարապետյան Սամվել: Արցախի որմնափակ խաչքարերը: 1983, օգոստ., էջ 34-40: Քարտեզով եւ մի քանի գծագրերով ու լուսանկարով:

1406. Կարապետյան Սամվել: - Բացառիկ հորինվածքով միջնադարյան հուշարձան: [Արցախի Կիչան գյուղի մոտ գտնվող Սնապատ վանական համալիրի մասին]: 1983, ապրիլ, էջ 58-61:

Համալիրի հատակագծի եւ արձանագրությունների լուսանկարներով:

1407. Կարապետյան Ստեփան սարկավագ: - Ամերիկահայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության մի խումբ անդամների այցելությունը Մայր Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: 1983, հուլիս, էջ 17-18:

Նկ.՝ Ամերիկահայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության անդամները Ս. Էջմիածնի Վեհարանում:

1408. Կարապետյան Ստեփան սրկ.: - Հայրապետական Աթոռի հայրենադարձության տարեդարձը: 1983, հուլիս, էջ 11-14:

1409. Կիրակոս Գանձակեցի, «Հայոց Պատմություն»: (Հատվածներ աշխարհաբար թարգմանությունից, թարգմ. Վարագ Առաքելյանի): 1983, փետրվար-մարտ, էջ 63-66:

1410. Կուրոյեդով Վլադիմիր: - ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վլադիմիր Կուրոյեդովի շնորհավորական գիրը Հայոց Հայրապետի ծննդյան 75-ամյակի առթիվ: 1983, սեպտ.-հոկտ., էջ 10:

1411. 1983 թվականին սրբալույս Մեռոնի օրհնության, Վեհափառ Հայրապետի ծննդյան 75-ամյակի, քահանայական կոչման 40-ամյակի եւ գահակալության 28-րդ տարեդարձի հանդիսություններին մասնակցած պատգամավորների եւ հյուրերի ցուցակ: 1983, սեպտ.-հոկտ., էջ 71-73:

1412. Հայագիտական հրատարակություններ: 1983, փետրվար-մարտ, էջ 82-83:

Բովանդ.՝ Նոր աշխատություն հայ ժողովրդի հերոսական անցյալի մասին: [Հայրիկ Մուրադյանի «Էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից» գրքի մասին]: - Հայկական մանրանկարչությանը նվիրված նոր ալբոմ: [Աստղիկ Գեորգյանի «Դիմանկար» գրքի մասին]: - Հայ

երգարվեստի նոր ժողովածու: [Նիկողոս Թահմիզյանի կազմած եւ խմբագրած «Ոսկեփորիկ» ժողովածուի մասին]:

1413. Հայագիտական հրատարակություններ: 1983, հուլիս, էջ 53-55:

Բովանդ. Հայ գաղափարախոսությանը նվիրված ժողովածու: [Ալմաստ Ջաքարյանի եւ Գարրի Հովհաննիսյանի հրատարակած «Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ» (1820-1920 թթ.) գրքի մասին]: - Հայ միջնադարյան արվեստի չխամրող նմուշներ: [Հրավարդ Հակոբյանի «Վասպուրականի մանրանկարչությունը» գրքի մասին]: - Երեք ժողովուրդների դարավոր կապերին վերաբերող ժողովածու: [1982 թ. Լենինգրադում հրատարակված «Ռուս եւ հայ միջնադարյան գրականությունները» ժողովածուի մասին]: - Հայաստանը ռուս գրողների աչքերով: [«Յոթ գարունների երկրում» եռահատոր ժողովածուի առաջին գրքի մասին]: - Թեոփանես Խոստովանողի «Ժամանակագրությունը հայերեն» [Հրաչ Բարթիկյանի թարգմանությամբ հրատարակված Թեոփանես Խոստովանողի «Ժամանակագրություն» գրքի մասին]:

1414. Հայագիտական հրատարակություններ: 1983, օգոստ., էջ 54-55:

Բովանդ. Գառնիի հեթանոսական համակառույցին նվիրված աշխատություն: [Ալեքսանդր Սահինյանի «Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը» գրքի մասին]: - Հայ ճարտարապետության պարծանք Աղթամարի տաճարը: [Ստեփան Խաչատուրի Մնացականյանի «Աղթամար» գրքի մասին]:

1415. Հայագիտական հրատարակություններ: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 77-79: [Գրախոսություններ նվիրված Խաչատուր Արտաշեսի Մուշեղյանի «Դրամական շրջանառությունը Հայաստանում», «Դավիթ Անհաղթը՝ հին Հայաստանի մեծ փիլիսոփան», Մխիթար Անեցու պատմության եւ Վալենտինա Աբրահամյանի «Հայկական ոսկերչություն» գրքերին]:

1416. Հանգիստ Տ. Տաթեւ քահանա Հարությունյանի (1931-1983 թթ.): 1983, մայիս-հունիս, էջ 93:

1417. Հանդիսություններ Մայր Աթոռում Արբալույս Մյուռոնի օրհնության եւ Վեհափառ Հայրապետի ծննդյան 75-ամյակի առթիվ: 1983, սեպտ.-հոկտ., էջ 22-30:

Բովանդ. Կ. Պոլսի հայոց պատրիարքի ժամանումը: - Կիրակամտի ժպտերգություն Մայր Տաճարում: - Արբալույս Մեռոնի օրհնություն: - Պաշտոնական ճաշկերույթ Վեհարանում: - Հոգեհանգստյան աղոթք Ծիծեռնակաբերդում: - Ճաշկերույթ ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի: Երեք լուսանկարով:

1418. Հարությունյան Սեդա: - Հայագիտության մեծ երախտավորը: (Ֆրեդերիկ Ֆեյդիի ծննդյան 75-ամյակի առթիվ): (Բերված է նաեւ Ֆեյդիի գործերի մատենագիտությունը): 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 44-50:

1419. Հարությունյան Վարազդատ: - Պատմություն Ա. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեության Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության օրոք (1956-1980): [Խմբա-

գրության ներածականով]: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 51-55:

1420. Հոբելյանական հանդիսություններ նվիրված Բուլղարիայի պատրիարքության վերահաստատման 30-ամյակին եւ Բաչկովո պատմական վանքի հիմնադրման 900-ամյակին: 1983, մայիս-հունիս, էջ 72-74:

1421. Հոգեւոր ճեմարանի ուսումնական տարեշրջանի բացումը: [Կա նաեւ Վեհափառ Հայրապետի խոսքը]: 1983, սեպտ.-հոկտ., էջ 95-97:

1422. Հովհաննիսյան Վաչագան: - Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայրապետին: [Բանաստեղծություն]: 1983, փետրվար-մարտ, էջ 37-38:

1423. Հովվապետական ուղեւորություն Լոնդոն եւ Փարիզ: 1983, մայիս-հունիս, էջ 6-48:

Բովանդ. Մեկնում Մոսկվա: - Ժամանում Մոսկվա: - Մեկնում Լոնդոն: - Բարիզալստյան հանդիսություն օդանավակայանի Ս. Գեւորգ էկումենիկ մատռան մեջ: - Հանդիպում Քենթրբերիի արքեպիսկոպոսի հետ Լամբերթ պալատում: - Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ռոբերտ Ռանսիի խոսքը (6 մայիսի 1983 թ.): - Հայոց Հայրապետի խոսքը ուղղված Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ռոբերթ Ռանսիին, (Լոնդոն, 6 մայիսի, 1983 թ.): - Հայրապետական Ս. Պատարագ եւ քարոզ Լոնդոնի հայոց Ս. Պետրոս եկեղեցում: - Վեհափառ հայրապետի քարոզը Ս. Պետրոս եկեղեցում (8 մայիսի 1983 թ.): - Համայնքային ճաշկերույթ Ս. Պետրոս եկեղեցուն կից սրահում: - Հանդիպում Հ.Բ.Ը. Միության Լոնդոնի մասնաճյուղի անդամների հետ: - Հանդիպում Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության եւ «Աբգարյան ավանդ» հանձնաժողովի անդամների հետ: - Այցելություններ: - Խորհրդակցական հանդիպում լոնդոնահայ եկեղեցական համայնքային խորհրդի հետ: - Հանդիսավոր ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: - Մասնավոր ընդունելություն Համբրն Քորթի պալատում: - Հայոց Հայրապետը ընդունում է «Անահիտ» միության անդամներին: - Հանդիպում Անգլիայի հայ սկաուտական միության անդամների հետ: - Հանդիպում Թեքեյան մշակութային միության պատանիների հետ: - Պաշտոնական ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: - Հանդիսավոր Ս. Պատարագ եւ հայրապետական քարոզ Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցում: - Հանդիպում Գեւորգ Թահիրյան վարժարանի աշակերտության, ուսուցիչների եւ ծնողների հետ: - Ողջերթի ընդունելություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի: - Այցելություն Լոնդոնի սովետական դեսպանատուն: - Հանդիպում Անգլիայի կաթոլիկ եկեղեցու պետ կարդինալ Բասիլ Հյումի հետ: - Մեկնում Փարիզ: - Հայոց Հայրապետը Փարիզում: - Այցելություններ: - Պատվո Լեգեոնի շքանշանի տվչություն Տ. Սերովբե արքեպս. Մանուկյանին: - Ամենայն Հայոց Հայրապետի խոսքը Փարիզում Պատվո Լեգեոնի շքանշանի տվչության առթիվ: - Դոկտոր Ֆիլիպ Փոթերի այցը Ամենայն Հայոց Հայրապետին: - Հանդիպում դպրոցասեր տիկնանց վարժարանի աշակերտության եւ ուսուցչական կազմի հետ: - Այցելություն Սովետական դեսպանատուն: - Այցելություններ Վեհափառ Հայրապետի

մոտ: - Վեհափառ Հայրապետը ընդունում է Փարիզի եկեղեցական վարչության անդամներին եւ հոգեւորականներին: - Հայրապետական Ս. Պատարագ եւ քարոզ Փարիզի Հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում: - Վեհափառ Հայրապետի քարոզը Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ առաջնորդանիստ եկեղեցում (29 մայիսի 1983 թ.): - Սամվել Մուրադ Մխիթարյան վարժարանին կից նոր մանկապարտեզի բացումը: - Այցելություններ Վեհափառ Հայրապետի մոտ: - Ընդունելություն Փարիզի կարդինալ արքեպիսկոպոսի մոտ: - Մեկնում Մոսկվա: - Հայոց Հայրապետը Մոսկվայի Հայոց Ս. Հարություն եկեղեցում: - Վերադարձ Մայր Աթոռ:

1424. Մաթեւոսյան Կարեն: - Եղվարդի Ս. Զորավար եկեղեցին եւ մենաստանը: [Ուսումնասիրություն]: 1983, հուլիս, էջ 49-52:

1425. Մահ Արթուն Հատիտյանի: [Վազգեն Առաջինի ցավակցական խոսքով]: 1983, փետրվար-մարտ, էջ 77-79:

1426. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1983, հունվար, էջ 22-23:

1427. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1983, փետրվար-մարտ, էջ 23-26:

Բովանդ. փետրվարի 6 [Մայր Տաճարում ս. պատարագ է մատուցում Տ. Սմբիկ վրդ. Սարգսյանը: Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան կարգ նվիրված «էջմիածին» ամսագրի վաստակաշատ խմբագիր Արթուն Հատիտյանի հիշատակին]:

1428. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1983, ապրիլ, էջ 34-35:

Բովանդ. Ապրիլի 25: [Վեհափառ Հայրապետին է այցելում ԳԴՀ-ի եկեղեցական գործերի պետական քարտուղար Կլաուս Գիզին իր տիկնոջ հետ]:

1429. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1983, մայիս-հունիս, էջ 63-66:

1430. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1983, հուլիս, էջ 19-20:

1431. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1983, օգոստ., էջ 3-4:

Բովանդ. Օգոստոսի 10: [Վեհարանում Վեհափառ Հայրապետին է այցելում Կանադայի արտաքին գործերի եւ ազգային պաշտպանության մշտական կոմիտեի նախագահ Մարսել Պրյուդոմը]: - Օգոստոսի 20 [Վեհափառ Հայրապետին է այցելում Սովետական Միությունում Ռումինիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Տրայան Դուդարը տիկնոջ հետ]:

1432. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1983, սեպտ.-հոկտ., էջ 98-100:

1433. Մայր Աթոռում: [Եկեղեցական բեմ, լուրեր]: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 39-41:

Բովանդ. Նոյեմբերի 20: [Մայր Տաճարում ս. պատարագ է մատուցում Տ. Հովնան աբդ. Տերտերյանը: Հավարտ ս. պատարագի քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը Առնո Բաբաջանյանի մահվան առթիվ]: - Նոյեմբերի 28 [Վեհափառ Հայրապետին է այցելում Հալեպի նահանգապետ պրն. Մուհամեդ Նուր Մաուալիդին տիկնոջ հետ]: -

Դեկտեմբերի 17 [Վեհափառ Հայրապետը Բյուրականի «Հայկաշեն» հայրապետական ամառանոցում «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան է հանձնում Գրիգոր Խանջյանին]:

1434. Մանուկյան Թորգոմ արքեպիսկոպոս: - Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հեռագիրը Ամենայն Հայոց Կաթողիկոսին: 1983, մայիս-հունիս, էջ 49:

1435. Մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչություն: [Տ. Հայկազուն աբդ. Նաջարյանին եւ Տ. Արամայիս աբդ. Շլուկյանին]: 1983, ապրիլ-մայիս, էջ 27-30: Երեք լուսանկարով:

1436. [Մելքոնյան Երվանդ]: - Վերածնված հայրենիքն ու նրա խորհուրդը: [Խմբագրական]: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 8-9:

1437. Մկրտչյան Վարդգես սարկավագ: - Ամանորը Մայր Աթոռում: [Նաեւ Վազգեն Առաջինի խոսքը Ամանորի հանդեսին]: 1983, հունվար, էջ 16-19:

1438. Մկրտչյան Վարդգես սարկավագ: - Ամավերջի հանդիսություն հոգեւոր ճեմարանում: 1983, մայիս-հունիս, էջ 56-59:

1439. Մկրտչյան Վարդգես սարկավագ: - Հոբելյանական հանդիսություն՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 63-րդ տարեդարձին: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 10-15: Երկու լուսանկարով:

1440. Մկրտչյան Վարդգես սարկավագ: - Սրբոց Վարդանանց տոնակատարությունը եւ Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում: 1983, փետրվար-մարտ, էջ 13-18:

1441. Մնացականյան Ասատուր: - Սուտ էր, եղբայր: [Բանաստեղծություն]: 1983, օգոստ., էջ 52-53:

1442. Մուրադյան Միհրան Հովհաննեսի: - Հայ ժողովրդի ինքնապաշտպանության ճակատամարտերին մասնակցող հոգեւորականներ: (Տեր Սահակ քահանա Տեր-Սահակյան, Տեր Կոմիտաս քահանա Սարգսյան): 1983, օգոստ., էջ 30-33:

1443. Նագաշյան Գյուտ եպիսկոպոս: - Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը Պատգամ Լեգեոնի ասպետի շքանշանակիր: 1983, ապրիլ, էջ 23:

1444. Նաջարյան Հայկազուն աբեղա: - Եվստաթեոս Սեբաստացին, Բարսեղ Մեծը եւ Հայաստանում վանականության կազմավորումը: (Հայկազուն աբեղա Նաջարյանի վարդապետական թեզից մի հատված): 1983, մայիս-հունիս, էջ 77-86:

1445. Ներսիսյան Ներսես քահանա: - Նորընծա Տ. Ներսես քհն. Ներսիսյանի քարոզը Մայր Տաճարում: (24 հուլիսի 1983 թ.): 1983, հուլիս, էջ 7-10:

1446. Շաքարյան Նարեկ եպիսկոպոս: - Հոգեգալուստ: (Քարոզ՝ խոսված Շիրակի թեմի առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցում): 1983, մայիս-հունիս, էջ 5-6:

1447. Շտիկյան Սուրեն: - Վազգեն Ա Կաթողիկոս: [Կյանքի եւ գործունեության համառոտ տարեգրություն]: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 26-38:

1448. Ոսկանյան Նոնա: - Ֆրեդերիկ Մակլերը Կոմիտասի եւ

հայ երաժշտության մասին: 1983, ապրիլ, էջ 43-46:

1449. Չաքալյան Ստեփանոս վարդապետ: - Մելքոնյան կրթական հաստատության ուսանողների խումբը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: 1983, օգոստ., էջ 15-17: Մեկ լուսանկարով:

1450. Չաքալյան Ստեփանոս վարդապետ: - Սրտի խոսք բանաստեղծ ուսուցչիս: [Նվիրված Վահրամ Մավյանին]: 1983, հունվար, էջ 50-52:

1451. Չաքալյան Ստեփանոս վարդապետ: - Տ. Ստեփանոս վարդապետ Չաքալյանի քարոզը՝ արտասանված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում: 1983, փետրվար-մարտ, էջ 30-32:

1452. Չիլինգարյան Հրաչ·սարկավագ: - Լոնդոնահայ երիտասարդաց խմբի այցելությունը Մայր Հայրենիք եւ Սուրբ Էջմիածին: 1983, սեպտ.-հոկտ., էջ 103-105:

1453. Չիլինգարյան Հայկ սարկավագ: - Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոզապալյանի ուղեւորությունը Բաքու եւ այցելությունը Ադրբեջանի Հայոց թեմին: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 67-68:

1454. Պոզապալյան Ներսես եպիսկոպոս: - Սովետական Միությունում գործող եկեղեցիների պատվիրակության այցը Մեծ Բրիտանիա: 1983, փետրվար-մարտ, էջ 49-50:

1455. Սարգսյան Եղիշե ավագ քահանա: - Իրանա-Հնդկաստանի հայոց թեմի հիմնադրումը: (Պատմական ակնարկ): 1983, ապրիլ, էջ 47-54, մայիս-հունիս, էջ 87-92:

1456. Սարգսյան Եղիշե ավագ քահանա: - Հին Երեւանի հիշատակությունը հայ մատենագիրների մոտ: - 1983, հունվար, էջ 37-42:

1457. Սերայդարյան Գեւորգ եպիսկոպոս: - Ավանդություն հայոց մյուռոնի ծագման մասին: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 42-43:

1458. Սերայդարյան Գեւորգ եպիսկոպոս: - Վրաց եկեղեցու հոբելյանական հանդիսություններ Թբիլիսիում: 1983, հուլիս, էջ 15-16:

Նկ.՝ Մի պահ Մցխեթայի Սվեթիցխովելի Մայր Տաճարում տեղի ունեցած հանդիսավոր արարողությունից:

1459. Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո աթոռի միջեւ փոխանակված հեռագրեր, Անթիլիասի աթոռի գահակալ Խորեն Ա-ի մահվան առթիվ: 1983, փետրվար-մարտ, էջ 10-12:

1460. Սուրբ Ծննդյան հանդիսություններ Մայր Աթոռում: 1983, հունվար, էջ 14-15:

1461. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի տարեկան լիագումար ժողովը: 1983, փետրվար-մարտ, էջ 46-48:

1462. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում ի պաշտպանություն խաղաղության տեղի ունեցած ժողովի մասնակիցներ: - Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղար Խ. Պերես Դե Կուելյարին: [Ի խնդիր խաղաղության պահպանման եւ միջուկային զինաթափման]: 1983, մայիս-հունիս, էջ 50-51:

ՎԱՂԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

Հայրապետական կոնդակներ

1463. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ նշանակելու մասին: - Երեւան: 1983, փետրվար-մարտ, էջ 3-4:

1464. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Տ. Գրիգորիս վարդապետ Բունիաթյանի ընտրությունը հաստատելու մասին իբրեւ արքեպիսկոպոս թեմի առաջնորդ: - Բուենոս Այրես: 1983, փետրվար-մարտ, էջ 5-6:

1465. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի կոնդակը Լիբանանահայ կրթական մշակ եւ հասարակական գործիչ Տիար Երվանդ Պապայանին «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով պարգեւատրելու մասին: - Բեյրութ: 1983, ապրիլ, էջ 19-20:

1466. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը նկարիչ Գրիգոր Խանջյանին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգեւատրելու մասին: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 6-7:

1467. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը «Սուրբ էջմիածինի կրոնասեր տիկնանց համախմբում»-ի քսանհինգամյակի առթիվ: - Բեյրութ: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 5:

1468. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը Ֆրանսիացի հայագետ եւ գիտնական պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդիին «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով պարգեւատրելու մասին: - Փարիզ, 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 3-4:

1469. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակը «Դատերք Վարդանանց» կազմակերպության հիսնամյա գործունեության առթիվ: - Նյու Յորք: 1983, ապրիլ, էջ 17-18:

1470. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակը Մասսաչուսեթի Սփրինկֆիլտի հայոց «Սուրբ Մարկոս» եկեղեցու կառուցման առթիվ: - Սփրինֆիլտ: 1983, ապրիլ, էջ 21-22:

1471. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակը Տ. Տիրայր ծայրագույն վարդապետ Տերվեշյանին՝ նրա հիսնամյա ծառայության առթիվ: - Լոս Անժելես: 1983, ապրիլ, էջ 15-16:

Հեռագրեր, շնորհավորականներ, ուղերձներ, օրհնության գրեր

1472. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամանորի եւ Փրկչի Հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի եւ քույր եկեղեցիների հոգեւոր պետերի միջեւ փոխա-

նակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1983, հունվար, էջ 6-8:

1473. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Շնորհավորական գիրը Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոնների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին եւ եկեղեցական համայնքներին: 1983, հունվար, էջ 9-10:

1474. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եւ պետական բարձրաստիճան անձնավորությունների միջեւ փոխանակված հեռագրեր նոր տարվա առթիվ: 1983, հունվար, էջ 11-13:

1475. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ուղերձը (24 ապրիլ 1983 թ.): 1983, ապրիլ, էջ 11-12:

1476. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք աթոռներին: 1983, ապրիլ, էջ 9-10:

1477. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Փրկչի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի եւ քույր եկեղեցիների հոգեւոր պետերի միջեւ փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1983, ապրիլ, էջ 6-8:

Քարոզներ

1478. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա Հայրապետի Զատկական քարոզը՝ արտասանված Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում (3 ապրիլ 1983 թ.): 1983, ապրիլ, էջ 3-5:

1479. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Ամենայն Հայոց Հայրապետի քարոզը՝ արտասանված Մայր Տաճարում կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի առթիվ (5 հունիսի 1983 թ.): 1983, մայիս-հունիս, էջ 3-5:

1480. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Հայրապետական քարոզ Փրկչի Հրաշափառ Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր Տաճարում: (1983 թ. հունվար 6): 1983, հունվար, էջ 3-5:

Հայրապետական խոսք

1481. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի խոսքը՝ ուղղված Միացյալ Նահանգների Արեւելյան թեմի պատգամավորական ժողովին (3 մայիս 1983): 1983, ապրիլ, էջ 14:

1482. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Տ.Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի խոսքը արտասանված մեռոնօրհնության առթիվ: (25 սեպտ. 1983 թ.): 1983, սեպտ., էջ 11-12:

1483. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Տ.Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի խոսքը արտասանված Սուրբ Էջմիածնում հանդիսավոր նիստին: (27 սեպտ. 1983 թ.): 1983, սեպտ.-հոկտ., էջ 13-17:

1484. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Տ.Տ., Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի խոսքը Վեհարանում Վարդանանց տոնի հանդիսությանը: (10 փետրվար, 1983 թ.): 1983, փետրվար-մարտ, էջ 7-9:

1485. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Տ.Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը՝ ուղղյալ Միացյալ Նահանգաց Արեւելյան թեմի հոգեւորականաց համագումարին: (1 մայիս, 1984): 1983, ապրիլ, էջ 13:

1486. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ: - Տ.Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի խոսքը՝ ուղղված Նորին Սրբություն Իլիա Բ Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոսին: (3 հուլիս, 1983 թ.): 1983, հուլիս, էջ 3-4:

1487. Վեհափառ Հայրապետի ծննդյան 75-ամյակին, քահանայագործության 40-ամյակին եւ գահակալության 28-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր նիստը Վեհարանի հանդիսությանց դահլիճում: 1983, սեպտ.-հոկտ., էջ 31-70:

Բովանդ.՝ Տ. Ներսես եպիսկոպոսի զեկուցումը: - Տ. Շնորհք պատրիարքի ողջույն խոսքը: - ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանի խոսքը: [Միտրոպոլիտ Անտոնի խոսքը Պիմեն պատրիարքի կողմից]: - Ափյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանի ողջույնի խոսքը: - Ռումինիայի եկեղեցու պետ Տ. Ժուստին պատրիարքի ողջույնի ուղերձը: - Մաշտոցի անվան մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանի ողջույնի խոսքը: - [Վրաց եկեղեցու ներկայացուցիչ Մարգվեթի եպիսկոպոս Տ. Քրիստափորի խոսքը]: - Քենթրբերիի արքեպիսկոպոս Ռոբերտ Ռանսիի ողջույնի ուղերձը: - Հոգեւորական եւ աշխարհական պատգամավորները հրաժեշտ են տալիս Մայր Աթոռին: - Տ. Սերովբե արքեպս. Մանուկյանի շնորհավորական գիրը: - Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Ալեք Մանուկյանի շնորհավորական գիրը: - Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի շնորհավորական գիրը Վեհափառ Հայրապետին:

1488. Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սերայդարյանի այցը Դամասկոս:1983, փետրվար-մարտ, էջ 42-45:

Նկ.՝ Տ. Գեւորգ եւ Տ. Ոսկան սրբազանները Տ. Իգնատիոս Զաքքա Ա պատրիարքի հետ նրա ընդունարանում:

1489. Տ. Սնանիա եպիսկոպոս Արաբաջյան: 1983, սեպտ.-հոկտ., էջ 86:

1490. Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյան: 1983, սեպտ.-հոկտ., էջ 92:

1491. Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյան: 1983, սեպտ.-հոկտ., էջ 85:

1492. Տ. Գրիգորիս եպիսկոպոս Բունիաթյան: 1983, սեպտ.-հոկտ., էջ 84:

1493. Տ. Թորգոմ աբեղա Խարազյան: 1983, սեպտ.-հոկտ., էջ 91:

1494. Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանի այցը Լիբանան: 1983, ապրիլ-մայիս, էջ 37:

1495. Տ. Շնորհք աբեղա Բաղդասարյան: 1983, սեպտ.-հոկտ., էջ 93:

1496. Տեր-Ղեւոնդյան Արամ: - Ղեւոնդի պատմությունն անգլերեն: [Գրախոսություն Ղեւոնդի պատմության Զավեն Ծ. Վ. Արզումանյանի անգլերեն թարգմանության առթիվ]: 1983, ապրիլ-մայիս, էջ 55-57:

1497. Տեր-Միքայելյան Նուբար: - Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի: 1983, փետրվար-մարտ, էջ 84-88, հուլիս, էջ 56-60, օգոստ., էջ 56-60, սեպտ.-հոկտ., էջ 106-108:

1498. Տեր-Պետրոսյան Լ[եւոն] Հ[ակոբի]: Լրջմիտ պատմաբանը եւ հմայիչ մարդը - Հայկ Մելքոնյան: [Մահախոսական]:1983, հունվար, էջ 57-61:

1499. Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1983 թվականի ընթացքում տպագրված նյութերի: 1983, նոյեմբ.-հոկտ., էջ 80-108:

1500. Ումնով Ա.: - Ամենայն Հայոց Հայրապետ Մկրտիչ Ա Խրիմյանի հիշատակին: 1983, նոյեմբ.-դեկտ., էջ 16-25:

1501. Փրկչի Հրաշափառ Հարության տոնի առթիվ հանդիսավոր Ս. Պատարագ եւ Հայրապետական քարոզ Մայր Տաճարում:- 1983, ապրիլ-մայիս, էջ 24:

1502. Քահանայական ձեռնադրություն: [Հոկտ. 25-ին Ս. Գայանե եկեղեցում Տ. Գեւորգ եպս. Սերայդարյանը քահանա է ձեռնադրում Ալեքսան սրկ. Թազայանին վերանվանելով Տ. Եղիա քհն. Թազայան]: 1983, սեպտ.-հոկտ., էջ 94:

1503. Քահանայական ձեռնադրություն Երեւանի Ս. Սարգիս եկեղեցում: [Տ. Ներսես Պոզապալյանը քահանա է ձեռնադրում Վրեժ սրկ. Ներսիսյանին, Արծրուն սրկ. Ավետիսյանին եւ Համբարձում սրկ. Քաղքեջյանին՝ վերանվանելով Տեր Ներսես, Տեր Գրիգոր, Տեր Համբարձում]: 1983, մայիս-հունիս, էջ 52-55:

Նկ.՝ Մի պահ ձեռնադրությունից:

1504. Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռում: (Ձեռամբ Ներսես եպս. Պոզապալյանին հոկտեմբերի 15-ին եւ 16-ին քահանա են ձեռնադրվում Խաչիկ սրկ. Խարազյանը, Սմբատ սրկ. Արիստակեսյանը եւ Վարդան սրկ. Բաղդասարյանը, վերանվանվելով՝ Տ. Թորգոմ, Տ. Ասողիկ եւ Տ. Շնորհք):

1505. Քյոսեյան Հ[ակոբ] Հ.: - Բաբելաս Ալեքսանդրացու անվամբ Հովհան Ոսկեբերանի մի ճառը՝ նվիրված Հովհաննես Մկրտչին: [Ուսումնասիրություն եւ բնագիր]: Էջմիածին, 1983, հուլիս, էջ 43-48:

1506. Քոլանջյան Սուրեն: - Հայ ձեռագրագիտության մեծ նվիրյալը եւ երախտավորը: (Բազմավաստակ հայագետ դոկտ., պրոֆ. Ասատուր Մնացականյանի պայծառ հիշատակին): 1983, օգոստ., էջ 45-51:

"ЭЧМИАДЗИН"
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ОКТЯБРЬ-НОЯБРЬ 1998)

ОФИЦИАЛЬНЫЙ ОТДЕЛ

1. Патриаршее распоряжение о назначении архиепископа Гарегина Нерсисяна Генеральным Викарием Католикоса, 30 ноября 1998 г., Нью-Йорк (стр. 3).
2. Архиепископ Гарегин Нерсисян (биография) - (стр. 4).
3. Сообщение об избрании Католикоса Всех Армян Гарегина I почетным членом Национальной Академии Армении. Телеграмма благодарности Святейшего Католикоса Гарегина I председателю Национальной Академии Фаддею Саркисяну, 10 октября 1998 г. Поздравительное слово Вардана Деврикяна от имени редакции журнала "Эчмиадзин" (стр. 5-7).
4. Поздравительные послания Католикоса Всех Армян Гарегина I новоизбранному Патриарху Константинополя и председателям избирательного и национального Собраний.
Поздравительный адрес архиепископа Нерсеса Позапаляна новоизбранному Армянскому Патриарху Константинополя - (стр. 8-10).
5. Энциклика Святейшего Католикоса Всех Армян Гарегина I по случаю интронизации Армянского Патриарха Константинополя Блаженнейшего Месропа Мутафяна, 29 ноября 1998 г. (стр. 11-12).
6. Избран 84-й Армянский Патриарх Константинополя. Поздравления Католикоса Киликийского Домна Святейшего Арама I и Патриарха Армянского Иерусалима Блаженнейшего Торгома Манукяна (стр. 13-15).
7. Армянский Патриарх Константинополя Блаженнейший Месроп Мутафян (биография) - (стр. 16-17).
8. ИЕРОМОНАХ АРШЕН САНОСЯН. Интронизация Его Блаженства Блаженнейшего Патриарха Армянского Константинополя Месропа Мутафяна, 21 ноября 1998 г. (стр. 18-25).
9. Проповедь Блаженнейшего Патриарха Месропа Мутафяна на первой патриаршей Литургии, 22 ноября 1998 г. (стр. 26-27)
10. Энциклика Святейшего Католикоса Всех Армян Гарегина I о присвоении сана архиепископа предстоятелю Иорданской епархии Армянской Апостольской Церкви, 1 сентября 1998 г. (стр. 28).
11. Грамота благословения Святейшего Католикоса Всех Армян Гарегина I предстоятелю Российской и Ново-Нахичеваньской епархии Армянской Апостольской Церкви архиепископу Тирану Кюрегяну в связи с его 50-летия, 9 октября 1998 г. (стр. 29).
12. Грамота Благословения Святейшего Католикоса Всех Армян Гарегина I Оренбургской армянской общине и ктитору Сейрану Хачатряну по случаю сооружения армянской церкви в г. Оренбурге, 5 октября 1998 г. (стр. 30).
13. Грамота Благословения Святейшего Католикоса Всех Армян Гарегина I

армянской общине Майами по случаю освящения местной церкви во имя Прев. Богородицы Марии, 12 октября 1998 г. (стр. 31).

14. Признание заслуг ряда духовных и светских лиц и их награждение орденами "Св. Григор Лусаворич", "Св. Нерсес Шнорали" и Патриаршей грамотой благословения (стр. 32).

РЕЛИГИОЗНЫЙ ОТДЕЛ

15. Проповедь протоархимандрита Микаэла Ачапагяна в церкви Сурб Зоравор г. Еревана, 15 ноября 1998 г. (стр. 34-37).

16. Проповедь протоархимандрита Айказуна Наджаряна в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, 29 ноября 1998 г. (стр. 38-42).

17. Проповедь архимандрита Галуста Дарбиняна в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, 25 октября 1998 г. (стр. 43-46).

18. Проповедь архимандрита Вазгена Мирзаханина в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, 15 ноября 1998 г. (стр. 47-49).

19. Проповедь иеромонаха Аршака Хачатряна в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, 17 октября 1998 г. (стр. 50-53).

20. Проповедь иеромонаха Торгома Тоникяна в церкви Св. Саркиса г. Еревана, 17 октября 1998 г. (стр. 54-57).

21. Проповедь иеромонаха Махара Ованесяна в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, 1 ноября 1998 г. (стр. 58-59).

22. СВ. ФРАНЦИСК САЛЬСКИЙ. Руководство к благочестивой жизни. Часть III (перевод с русского Арпинэ Папаян) - (стр. 60-80).

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ОТДЕЛ

23. АННА АРЕВШАТЯН. Жанровая типология шараканов в системе восточно-христианских духовных гимнов (исследование) - (стр. 82-88).

24. ВАРАГ АРАКЕЛЯН. Возможности восстановленния значения индоевропейских слов на материале армянского языка (исследование) - (стр. 89-93).

25. АКОП КЕОСЕЯН. Символ в эклезиологической наследии Степаноса Сюнеци (исследование) - (стр. 94-102).

26. ВАРДАН ГРИГОРЯН. Переписка Католикоса Лукаса Карнеци с Шаамиром Шаамиряном (исследование) - (стр. 103-113).

27. ГЕОРГ ТЕР-ВАРДАНЯН. Научная переписка сопрестольного Католикоса Бабкена (рецензия) -(стр. 114-119).

28. АРПЕНИК КАЗАРОСЯН. Иследование, посвященное центру переписчиков Мецопаванк (рецензия) - (стр. 120-123).

ЛИТЕРАТУРНЫЙ ОТДЕЛ

29. МАРИАМ ВАРДАНЯН. "В жизни я не смотрел столь низко, чтоб увидеть так высоко" (посв. праздникам Армянской Церкви за октябрь-ноябрь) - (стр.

124-128).
30. ВОЛОДЯ АБРААМЯН. Необратимые потери в семье (стр. 129-137).
31. АНДРАНИК ТЕРТЕРЯН. Нахо Керы не должен быть забыт (предложение об установлении памятного надгробия на могиле известного сказителя эпоса "Сасунские безумцы" Нахапета) - (стр. 138-140).

В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВ. ЭЧМИАДЗИНЕ И ЕПАРХИЯХ

32. Архиепископ Нерсес Позапалян – действительный член Российской Академии гуманитарных наук. Вручение диплома в Духовной Академии Св. Эчмиадзина 28-го октября 1998 г. (стр. 142).
33. ЧТЕЦ ВАГЕ БЕГОЯН. Освящение церквей в Котайкской епархии (стр. 143-146).
34. Г. МКРТЧЯН. Открытие Духовной Семинарии им. Св. Месропа Маштоца в Ошакане, 18 октября 1998 г. (стр. 147-149).
35. Юбилейные торжества в Аммане (иордания). Епископ Ваан Топалян удостоен сана архиепископа (стр. 150).
36. Рукоположение во иеромонаха в армянской епархии Германии, 21 ноября 1998 г. Биография иеромонаха Армаша Налпантяна (стр. 151-154).
37. Открытие выставки "Сокровища Армянской Церкви" в Хельсинки. Выставка продлится до конца января 1999 г. (стр. 155).

МЕЖЦЕРКОВНЫЙ ОТДЕЛ

38. Конференция Европейских Церквей. Джин Мейленд, проф. Рейнхард Фрилинг, проф. Виорел Инита. Примирение в Европе: богословская, экуменическая и нравственная сферы, 16-21 сентября 1998 г. Ясси (Румыния) - (стр. 156-163).
39. Торжества, посвященные 900-летию Барийского Собора, 30 сентября–3 октября 1998 г. (стр. 164).
40. Общеевропейский симпозиум в Ватикане, 22-24 октября 1998 г. (стр. 165).
41. Панихида по Галине Старовойтовой в Кафедральном Соборе Св. Эчмиадзина, 23 ноября 1998 г. (стр. 166).
42. Хроника за октябрь-ноябрь месяцы (стр. 167-169).
43. ИЕРОМОНАХ ХОРЕН ОВАНЕСЯН. Библиография журнала "Эчмиадзин" (1974-1983) - (стр. 170-182).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(OCTOBER-NOVEMBER 1998)

OFFICIAL

1. Pontifical decision (to appoint Archbishop Karekin Nersissyan as Patriarchal General Vicar), 30 November, 1998, New-York (p. 3).
2. Archbishop Karekin Nersissyan (biography) - (p. 4).
3. His Holiness the Catholicos of All Armenians was elected Honorary Member of National Academy. The advertisement and the telegram of gratitude by His Holiness to the President of the National Academy Fadey Sargissyan, 10 October, 1998. With the word of congratulation by Vardan Devrikyan on behalf of "Etchmiadzin" monthly (pp. 5-7).
4. The letters of congratulation of His Holiness to the newly-elected Armenian Patriarch of Constantinople and to the moderators of electoral and national assemblies. With the letter of congratulation by Archbishop Nerses Bozabalyan (pp. 8-10).
5. The Encyclical of His Holiness KAREKIN I on the occasion of enthronization of the Armenian Patriarch of Constantinople His Beatitude Mesrop Mutafyan, 20 November 1998 (pp. 11-12).
6. The election of the 84th Armenian Patriarch of Constantinople. With the letters of congratulation by Catholicos of Cilicia Aram I and Armenian Patriarch of Jerusalem Torkom Manookyan (pp. 13-15).
7. Armenian Patriarch of Constantinople His Beatitude Mesrop Mutafyan (biography) - (pp. 16-17).
8. HIEROMONK ARSHEN SANOSSYAN - The enthronization of the Armenian Patriarch of Constantinople His Beatitude Mesrop Mutafyan, 21 November 1998 (pp. 18-25).
9. The Sermon of His Beatitude Patriarch Mesrop during his first patriarchal liturgy, 22 November 1998 (pp. 26-27).
10. The Encyclical of His Holiness KAREKIN I of granting the rank of Archbishop to the Primate of Jordan Vahan Topalyan, 1 September 1998 (p. 28).
11. The blessing letter of His Holiness KAREKIN I to the Armenian Archbishop of Russia and Nor-Nakhijevan Tiran Kyureghyan on the occasion of 50th anniversary, 9 October 1998 (p. 29).
12. The blessing letter of His Holiness KAREKIN I to the Armenian community of Orenburg and to the benefactor Seyran Khachatryan on the occasion of construction of the Armenian Church, 5 October 1998 (p. 30).
13. The blessing letter of His Holiness KAREKIN I to the Armenian community of Miami on the occasion of consecration of Holy Virgin Church, 12 October 1998 (p. 31).
14. Pontifical appreciation (some religious and lay persons received "S. Gregory the Illuminator" and "S. Nerses Shnorhali" Orders and Blessing Letters) - (p. 32).

RELIGIOUS

15. Sermon of Archimandrite Mikael Ajapahyan delivered in S. Zoravor Church of Yerevan, 15 November 1998 (pp. 34-37).
16. Sermon of Archimandrite Haykazoon Najaryan delivered in the Cathedral, 29 November 1998 (pp. 38-42).
17. Sermon of Vardabed Galust Darbinyan delivered in the Cathedral, 25 October 1998 (pp. 43-46).
18. Sermon of Vardabed Vasken Mirzakhanyan delivered in the Cathedral, 15 November 1998 (pp. 47-49).
19. Sermon of Hieromonk Arshak Khachatryan delivered in the Cathedral, 17 October 1998 (pp. 50-53).
20. Sermon of Hieromonk Torkom Tonikyan delivered in S. Sarkis Cathedral of Yerevan, 17 October 1998 (pp. 54-57).
21. Sermon of Hieromonk Makar Hovhanissyan delivered in the Cathedral, 1 November 1998 (pp. 58-59).
22. FRANCIS of SALES - Introduction to the Devout Life. part III (translation from Russian by Arpine Papayan) - (pp. 60-80).

ARMENOLOGICAL

23. ANNA AREVSHATYAN - Generic typology of Sharakans in the structure of Eastern Christian hymnology (pp. 82-88).
24. VARAG ARAKELYAN - It is possible to reconstruct the originary indo-european words by the internal evidence of the Armenian language (pp. 89-93).
25. HAGOP KYOSEYAN - Symbol in the ecclesiological heritage of Stepanos of Syunik (pp. 94-102).
26. VARDAN GRIGORYAN - The epistolary of the Catholicos Ghukas of Karin to Shahamir Shahamiryan (pp. 103-113).
27. GEVORG TER-VARDANYAN - The scientific epistolary of the Catholicos-Coadjutor Babken (pp. 114-119).
28. ARPENIK GHAZAROSSYAN - Research dedicated to the copying school of Mezopavank (pp. 120-123).

LITERARY

29. MARIAM VARDANYAN - "I've never looked so low in order to see so high" (dedicated to the feasts of the Armenian Church in October-November) - (pp. 124-128).
30. VOLODYA ABRAHAMYAN - Irrevocable losses in family (pp. 129-137).
31. ANDRANIK TERTERYAN - Uncle Nakho should not be forgotten (proposal to erect a memorial stone on the grave of the famous teller of "Sasna Tsrer") - (pp. 138-140).

IN THE MOTHER SEE & DIOCESES

32. Archbishop Nerses Bozabalyan full member of Russian Academy of Humanitarian Sciences (the Diploma was delivered in Kevorkyan Academy on 28 October 1998) - (p. 142).
33. VAHE BEGOYAN - Consecration of churches in Kotayk Diocese (pp. 143-146).
34. H. MKRTCHYAN - S. Mesrop Mashtots Center was opened in Oshakan, 18 October 1998 (pp. 147-149).
35. Jubilee celebrations in Amman (Jordan). Vahan Topalyan received the rank of Archbishop (p. 150).
36. Ordination of a hieromonk in the Armenian Diocese of Germany, 21-22 November 1998. With the biography of Hieromonk Armash Nalbandyan (pp. 151-154).
37. Exhibition of "Treasures of the Armenian Church" in Helsinki, 11 November 1998. The exhibition will be open unto the end of January 1999 (pp. 155).

ECUMENICAL

38. Reconciliation in Europe: Theological, Ecumenical and Moral aspects, 16-21 September 1998, Yassi (Romania) - (pp. 156-163).
39. Celebrations dedicated to the 900th Anniversary of the Council of Bari, 30 September-3 October 1998 (p. 164).
40. European Assembly in Vatican City, 22-24 October 1998 (p. 165).
41. Memorial service in the Cathedral to the memory of Galina Staravoytova, 23 November 1998 (p. 166).
42. Church pulpit: News - The description of celebrated Holy Liturgies and delivered sermons in the Cathedral and other ceremonies in the Mother See on October-November (pp. 167-169).
43. HIEROMONK KHOREN HOVHANNISYAN - Bibliography of "Etchmiadzin" monthly (1974-1983) - (pp. 170-182).

"ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(OCTOBRE-NOVEMBRE 1998)

INFORMATIONS OFFICIELLES

1. Par l'ordre de Sa Sainteté Karékine Ier, l'archevêque Garéguine Nersissian a été désigné vicaire patriarcal du Saint-Siège d'Etchmiadzine (30 novembre 1998, New York) - (p. 3).
2. Biographie de l'archevêque Garéguine Nersissian (p. 4).
3. L'élection du Catholicos de tous les Arméniens comme membre honoraire de l'Académie Nationale des Sciences de la République d'Arménie (Texte du télégramme de remerciements de Sa Sainteté Karékine Ier adressé le 10 octobre 1998 à M. Fadey Sarksian, président de l'Académie Nationale, et texte de félicitation de M. Vartan Dévrikian publié au nom de la Rédaction de la revue "Etchmiadzine") - (pp. 5-7).
4. Lettres de félicitation du Catholicos de tous les Arméniens adressés au Patriarche des Arméniens de Constantinople à l'occasion de son élection au trône patriarcal, ainsi qu'aux présidents du Collège électoral et de l'Assemblée nationale de délégués. Texte du télégramme de félicitation de l'archevêque Nersès Bozabalian adressé au Patriarche des Arméniens de Constantinople nouvellement élu (pp. 8-10).
5. Encyclique de Sa Sainteté Karékine Ier publiée le 20 novembre 1998 à l'occasion de l'intronisation de l'archevêque Mesrop Moutafian, Patriarche des Arméniens de Constantinople (pp. 11-12).
6. L'éléction du 84e Patriarche des Arméniens de Constantinople (Textes des lettres de félicitation de Sa Sainteté Aram Ier, Catholicos de la Grande Maison de Cilicie, et de Sa Béatitude Torgom Manoukian, Patriarche des Arméniens de Jérusalem, adressés au Patriarche élu) - (pp. 13-15).
7. Biographie de l'archevêque Mesrop Moutafian, Patriarche des Arméniens de Constantinople (pp. 116-17).
8. PERE ARCHENE SANOSSIAN - Description de l'intronisation du Patriarche Mesrop Moutafian (21 novembre 1998) - (pp. 18-25).
9. Sermon de Sa Béatitude Mesrop Moutafian prononcé à l'occasion de la célébration de sa première messe patriarchale (22 novembre 1998)- (pp. 26-27).
10. Encyclique de Sa Sainteté Karékine Ier publiée le 1er septembre 1998 à l'occasion de l'élévation de l'évêque Vahan Topalian, prélat des Arméniens de Jordanie, à la dignité d'archevêque (p. 28).
11. Texte de la lettre de bénédiction de Sa Sainteté adressée à l'archevêque Tiran Guréghian, prélat du diocèse des Arméniens de Russie et du Nouveau Nakhidjévan, à l'occasion du 50e anniversaire de sa naissance (9 octobre 1998) - (p. 29).
12. Texte de la lettre de bénédiction de Sa Sainteté adressée a la communauté arménienne d'Orenbourg et au bienfaiteur M. Seyran Khatchatrian à l'occasion de l'édification d'une église arménienne dans cette ville (5 octobre 1998) - (p. 30).

13. Texte de la lettre de bénédiction de Sa Sainteté adressée à la communauté arménienne de Miami à l'occasion de la consécration de l'église arménienne de cette ville, Sainte Marie, mère de Dieu (12 octobre 1998) - (p. 31).
14. Texte de la lettre de bénédiction de Sa Sainteté adressée à quelques presonnalités religieuses et laïques qui ont été décorées par l'Ordre de Saint Grégoire l'Illuminateur et l'Ordre de Saint Nersès Chenorhali (p. 32).

VIE RELIGIEUSE

15. Sermon du Père Mikaël Atchapahian prononcé le 15 septembre 1998 dans l'église Saint Zoravor à Erévan (pp. 34-37).
16. Sermon du Père Haïkazoun Nadjarian prononcé le 29 novembre 1998 dans la cathédrale de Sainte-Etchmiadzine (pp. 38-42).
17. Sermon du Père Galouste Darbinian prononcé le 25 octobre 1998 dans la cathédrale de Sainte-Etchmiadzine (pp. 43-46).
18. Sermon du Père Vazguène Mirzakhanian prononcé le 15 novembre 1998 dans la cathédrale de Sainte-Etchmiadzine (pp. 47-49).
19. Sermon du Père Archak Khatchatrian prononcé le 17 octobre 1998 dans la cathédrale de Sainte-Etchmiadzine (pp. 50-53).
20. Sermon du Père Torgom Tonikian prononcé le 17 octobre 1998 dans l'église Saint Sarkis à Erévan (pp. 54-57).
21. Sermon du Père Makar Hovhannissian prononcé le 1er novembre 1998 dans la cathédrale de Sainte-Etchmiadzine (pp. 58-59).
22. SAINT FRANÇOIS DE SALES - "Introduction à la vie dévote", 3e partie (Trad., du russe en arménien par Arpinée Papayan) - (pp. 60-80).
23. ANNA AREVCHATIAN - "La typologie de genre des cantiques chrétiens orientaux dans le système de l'exécution des hymnes religieuses" (étude) - (pp. 82-88).
24. VARAG ARAKELIAN - "Les mots d'origine indo-européenne peuvent aussi être reconstitués par les données internes de la langue arménienne" (étude) - (pp. 89-93).
25.HAKOB KEUSSEYAN - "Le symbole dans les œuvres ecclésiologiques de Stépanos Siunétsi" (étude) - (pp. 94-102).
26. VARTAN GRIGORIAN - "Correspondance du Catholicos Ghoukas Karnétsi avec Chahamir Chahamirian" (étude) - (pp. 103-113).
27. GUEVORG TER-VARTANIAN - "Les lettres scientifiques du Catholicos adjoint Babkène Gulessérian" (compte rendu) - (pp. 114-119).
28. ARPENIK GHAZAROSSIAN - "Etude consacrée au scriptorium du monastère Métzopavank" (compte rendu) - (pp. 120-123).

ARTICLES LITTERAIRES

29. MARIAME VARTANIAN - "Dans ma vie je n'avais point regardé si bas pour ne voir que ce qui est si haut" (Article consacré aux fêtes de l'Eglise arménienne célébrées au cours des mois octobre-novembre) - (pp. 124-128).
30. VOLODIA ABRAHAMIAN - "Pertes familiales irrévocables" (pp. 129-137).

31. ANDRANIK TERTERIAN - "L'oncle Nakho ne doit pas tomber dans l'oubli" (Proposition pour dresser une pierre commémorative sur la tombe de l'illustre trouvère Nahapet, deuxième conteur de l'épopée "David de Sassoun") - (pp. 138-140).

NOUVELLES DU SAINT-SIEGE ET DES DIOCESES
DE L'EGLISE ARMENIENNE

32. L'élection de l'archevêque Nersès Bozabalian comme membre d'honneur de l'Académie russe des sciences humanitaires (Célébration de la remise du diplôme dans la salle du séminaire théologique de Sainte-Etchmiadzine) - (p. 142).
33. VAHE BEGOYAN - Consécration des églises arméniennes dans le diocèse de Kotaik (pp. 143-146).
34. H. MEKERTCHIAN - Inauguration du séminaire Mesrop Mashtots à Ochakan (18 octobre 1998) - (pp. 147-149).
35. Festivités jubilaires à Amman (Jordanie) à l'occasion de l'élévation de l'évêque Vahan Topalian à la dignité d'archevêque (p. 150).
36. Ordination sacerdotale et cérémonie de la remise du capuce dans le diocèse des Arméniens d'Allemagne (21 novembre 1998). Biographie du Père Armache Nalbandian (pp. 151-154).
37. Inauguration de l'exposition "Les trésors de l'Eglise arménienne" à Helsinki (11 novembre 1998). Les stands de l'exposition seront présentés publiquement jusqu'à la fin du mois de janvier 1999 (p. 155).

VIE ŒCUMENIQUE

38. Conférence des Eglise Européennes
Thème de la Conférence: Réconciliation en Europe - Domaines théologiques, œcuméniques et moraux. La Conférence s'estenue à Iashi (Roumanie) du 16 au 21 septembre 1998 (pp. 156-163).
39. Festivités consacrées au 900e anniversaire du concile de Bari (du 30 septembre au 3 octobre 1998) - (p. 164).
40. Conférence paneuropéenne au Vatican (du 22 au 24 octobre 1998) - (p. 165).
41. Cérémonie de requiem à Sainte-Etchmiadzine à la mémoire de Galina Starovoïtova (23 novembre 1998) - (p. 166).
42. Brèves informations concernant la célébration de saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Sainte-Etchmiadzine et au Saint-Siège au cours des mois octobre-novembre 1998 (pp. 167-169).
43. PERE KHORENE HOVHANNISSIAN - Bibliographie de la revue "Etchmiadzine". (1974-1983) - (pp. 170-182).

ԽՄԲԱԳՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

ԳԱՍԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ